

69

6946

Հերքություն  
Հերքություն պահպանելու-  
թյուն հայաց  
Մեծամոբ 1930

281

Ch. - 3P

04 NOV 2000



Mr 69

ԱՐՏԱԼՈՅԱ

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՀՕՅՈՅ

1282

281  
Q-31

# ԱՐԵՎԱԼԻ ԱՅՆԻ



ԳՐԱԴԱՐԱՆԻ ԹԱՅ. Ե Հ. 043

9 P B 8

Հ. ԳԵՂԱՊՅԱ Մ. ԱԼԻՇԱՆ

## ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ



ՎԵՆԵՏԻԿ

## புதுப்புறை நுழைப்பு

1920

29.03.2013

6944  
№ 1087/55



Ա.Զ.Դ.



57159-66

Պարագայելերոց տեսակներադ բերմամբ այսօր  
միայն կարող կ'ըլլանք եռչիրել ազգիս, իւր  
ողբացեալ նահապետին հրատապ սրտին յետ-  
նազոյն կայմերէն մին Ուշալոյսը. զրբյկ մը,  
ուր իրեն յատուկ ձարտարութեամբ հիւսուած  
են սոսկ պատմութիւնն և բանատեղծական  
բաիքը. ուր մինչ հայ Հայրենեաց ևախանձայ  
խայրիք կը եռչիրուին երկնից՝ մարտիրոսական  
ևահատակութեամբ, Հեղինակին սիրտն աղ  
ևանեցնավառ իրաւուց կը վերանայ անոնց  
բարակոր նորոց հետ մինչև երկնից բարձութքը,  
իրեն հետ բարձրացնելով ևանց ընթերցողին  
սիրտն ոչ երեակայութիւնը:


Խաւարիե լուսոյ վիտին իշխի յաղրանակը,  
և հուսկ հերանութեան մեհեաններոց վիճա-  
տակաց վրայ, բրիստեական տաճարներոց  
հսկայագործ հիմնարկութիւնը, այնպիսի վառ

գոյներով կը ճկարուին Արշալոյսի մէջ, որ  
ընթերցողն այն ժամանակներու մէջ՝ ապրիլ կը  
կարծէ և դիզցազն նահատակներու կենդանի  
տեղեամբ, երկնային սիրոյ կայծ մ'ալ իշր  
սրտին մէջ կը վառի:

Այս եր Հանգուցերոյն միակ փափաքն՝  
Արշալոյսը նկարագրած միջոց, և մենք եր-  
չանիկ կը համարինք զմեզ երե այս հրա-  
տարակութեամբ կարենանք իր այդ միակ  
փափաքին իրազործման նպաստել:

ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ ՄԻՒԹՅ. ՏՊԱՐԱՆԻ

13 Մարտ 1902.



## Ա. Ր Շ Ա Լ Ո Յ Ս

Ք Ր Ի Ս Ո Ն Է Ո Ւ Թ Ե Ա Ն Հ Ա Յ Ո Յ

**Լ**ոյս. — Ո՞րքան զեղեցիկ, սիրելի,  
կարեւոր և զերազանց բան. անզբանիկ  
յարարածս Աստուծոյ, ըստ Ա. Գրոց, և  
ամենայն զգալի արարածոց երեցընող. իսկ  
աներեւոյթ բանական արարածոց՝ զրեթէ  
գոյութիւն իսկ. զի միայն լուսով երեւա-  
կայուին և բացատրուին։ Երեւելեաց և  
աներեւութից Արարիչն անզամ՝ վկայուի  
« Բնակեալ ի Լոյս անմատոյց » որ և  
ինքնին ի մարմնանալն և յերեւել ի վերայ  
երկրիս, վկայեց իրեն համար, « Ես Լոյս՝  
յաշխարհ եկի »։ Դարձեալ, ինքն որ  
աղբիւր էր կենաց և եկաւ ի մէջ մահկա-

նացուաց՝ նոր և անմահ կեանք մի տալու,  
զնոյն ևս Լոյս կոչեց, իր սիրաը շօշափող  
աշկերտին բերնով. « Նովաւ կեանք էր,  
և կեանքն էր Լոյս մարդկան » :

Զայս այսպէս ճանչնալով իր նախկին  
հաւատացեալըն, իր վարդապետութիւնը  
լուսով, ուսողը և ուսուցողը, Լոյս, Լուսա-  
շորուրիւն, Լուսաշոր կրօնք՝ անուանեցին  
զբրիստոնելուրիւն. որպէս և է իսկ, բան  
զամենայն գիտութիւն ստոյգ և պայծառ,  
մնայուն և յաւիտենական . որոյ առջեւ  
այլ ամենայն գիտութիւնը և գիւտք՝ որոց  
այնքան հետամուտ են մարդիկ, ոչ միայն  
փոքր ինչ են, այլ և չնչին, կամ շուր  
մի, որ և այն չըանայ. նախ, ի վախճանի  
իւրաքանչիւր անձին, ապա ի վախճանի  
առհասարակ մարդկութեան և այս աշ-  
խարհիս. և մնայ միայն Լոյսն կենդանի  
և կեանքն լուսաւոր, յաշխարհ իսկալոյս,  
ուր Արարիչն բնակի, իրեն լուսաւորեալ  
և սիրելի արարածովք:

Ա Մի՛ զարմանար, ընթերցող, եթէ ազգիդ  
ըրիստոնէական հաւատոց ծագումն և ա-  
ճումն ուզիլով յիշել՝ զԼոյս նախակար-  
գեցի, և Արշարոյս համարիմ անոր առաջին  
երեւոյթըն և սփոիլն յերկրի և յազգի  
մերում: Եթէ զարմանալու բան մի կայ՝  
այս է, որ՝ դարձեալ, ըստ ծանր և ահաւոր

բանի Գրիստոսի, ինքն Լոյսն իսկական  
եկաւ յաշխարհ, և « Աիրեցին մարդիկ  
զիստար՝ առաւել քան զլոյս » : Այսինքն,  
մարդիկ հասարակօրէն աւելի սիրեն երկ-  
րաւոր անցաւոր բաներ փնտուել ճանչնալ՝  
քան զկարևորագոյնն, զճշմարիտ Լոյսն,  
զկրօնքն, որ պիտի ըլլայ իրենց առիթ  
յաւիտենական կենաց: Վ

Եթէ պարզապէս այս գերազանց լուսոյ  
հանգամանքն և հետեւանքն յերկրիս վրայ՝  
ուզէինը ճառել, զա ըրիստոնէական հա-  
ւատոց վարդապետութիւն կ'ըլլար. ամե-  
նակարեւոր բան, բայց ոչ այս տեղ մեր  
քննելին և նպատակն. այլ զի, ինչպէս  
ոչ ամենայն մարդիկ և ազգը՝ ոչ ի մի  
ժամանակ և մի տեղ լուսաւորուած են  
ըրիստոնէութեամբ, և շատերուն երբն և  
սկիզբն՝ մութ և անստոյգ է, այսպէս և մեր  
Հայոց ազգին. զոր և ճանչնալ այնքան  
կարեւոր է՝ որքան որ այսպիսի լուսաւո-  
րութիւնն յերկրիս՝ անբաժան կամ հաղորդ  
է երկնաւոր լուսաւորութեանն. թող որ  
կարեւոր պատմական արժէք ունի գիտ-  
նալն:

Հասարակօրէն մեր ազգի լուսաւորու-  
թեան սկիզբն և շարունակութիւնն՝ զրեթէ  
Դ գարու սկիզբէն ճանչցուի. սակայն  
նախընթաց երեք դարուց մէջ այլ նշմա-

ըռուին նշոյլը ինչ լուսոյ քրիստոնէութեան  
ի Հայս, զոր ուզեցի կոչել Արշալոյս, և  
զհետեւեալն որ ի ձեռն Ա. Գրիգորի՝ արժան  
է կոչել Արեւելը, լոյս՝ համասփիւո ի Հայս.  
որք՝ թերեւս արդարագատ և երախտագէտ  
քան զայլ ազգս՝ զինքն իրենց Լուսաւորիչ  
անուանեցին և այնպէս ծանուցին օտարաց:  
Այդ աստուածաշնորհ անձին Շառաւիդին,  
մարմնաւոր և հոգեւոր Որդիքն և Թոռունք,  
ճառագայթելով անոր վառած լոյսը՝ քրիս-  
տոնէութեան հրաշալի պարագայ մի հաս-  
տատեցին. զոր՝ մտադրութեամբ քննելով՝  
ստիպումք ըսել, թէ « Ոչ այսպէս արար  
Տէր՝ ամենայն ազգաց »: Այս մտածու-  
թեամբ աւելի վերանալով՝ վայել և հարկ  
է մեզ ճանչնալ (օտար զիտունը և տգէտք  
ինչպէս կ'ուզեն դատեն), Վայել է մեզ  
ճանչնալ՝ աստուածային յատով նախախ-  
նամութիւն մի մեր սեփական հայրենեաց  
վրայ, յառաջ քան շատ և թերեւս ամե-  
նայն ազգաց :...»

Անշուշտ այս խօսքս վերացընէ տանի  
մեր միտքը մինչեւ ի սկիզբն մարդկութեան,  
ի դուռն դրախտին. այլ և յերկրորդ որրան  
մարդկութեան, յետ համայնաջինջ ջրհե-  
ղեղին, ի լերինս Արարատայ. ուր՝ յետ  
տարեկան ծփանացն՝ դադրեցաւ մարդա-  
կեցոյց տապանն: Բազմաքնին՝ և աւելի

քազմազրիչ զիտնականք ժամանակիս՝ ինչ  
այլ ճառեն և ճարեն ասոնց նկատմամբ,  
քանի որ Եփրատայ և Տիգրիսի ակունքն՝  
իրենց գետակցօքն ի Հայս են, և Արարատ  
հօն կանգնի բարձրագլուխ ի միջի լերանց  
արեւմտեան Ասիոյ, Հայն կընայ միշտ  
մարդկութեան առաջին և երկրորդ ծագման  
և աճման կենդրոն ճանչնալ իրեն սեփակա-  
նեալ աշխարհը և պարծիլ, ոչ աշխարհա-  
կան կամ ուամկական պարծանօք, այլ իրեկ  
կարեւոր մասն աստուածածանօթութեան  
և շնորհապարտութեան առ Աստուած, որ՝  
այնքան բաժանեալ խառնիխուռն ազգաց  
և այնքան կտրատեալ երկրի մասերէն,  
մեր յատով երկրի վըայ՝ կանխեր ցուցեր  
է իր անքնին կամաց նշանը: Զի եթէ  
ամենայն ազգի, ամեն խոհական մարդու  
վայել է քննել զիտնալ, թէ՝ այնքան  
ազգաց առասպելեալ կրօնից մէջ, ո՞ր կէտն  
էր՝ ուր նախ և յետոյ ճշմարիտ կրօնը  
ծագեր, երեւցեր և պահուեր է, մեզ եւս  
պարտը է, և առաւել եւս մեզ, վասն  
առաւել հաւանականութեան մեր երկրիս՝  
այն կէտն ըլլալու:

Ալդ, առանց երկարաբանութեան, որ  
թերեւս օտարոտի իմն երեւի ժամանակիս  
իմաստնոց և իմաստակաց, մենք կրօնական  
և պատմական զգացմամբ՝ համարձակիմք

ըսել, թէ՝ Աստուածածանօթութեան երեք  
կենդրոնք կամ կէտք՝ ըստ երից կրօնական  
յեղանակաց մարդկութեան, ( Բնական,  
Գրաւոր և Քրիստոնէական օրինաց ), եղեր  
են, որ և է տեսողութեամբ. Հայաստան,  
Հրեաստան և Հռոմեաստան : Առաջինն՝  
յայտնի է վերեւ ըստներէս. երկրորդն՝  
յայտնագոյն, Աբրահամու, Մովսիսի,  
մարգարէից, և յետոյ ինքնին Քրիստոսի  
Աստուածամարդոյն գալլստեամբն . իսկ  
երրորդն՝ իր երեսփոխան Առաքելոյն և  
անոր յաջորդ քահանայապետից աթոռն ի  
Հռովմ հաստատելէն, ուր՝ անընդհատ ի  
Քրիստոսէ մինչեւ հիմայ ճանչցուին գերա-  
գոյն Գլուխք և վարդապետք քրիստոնէու-  
թեան: Այսափս բաւական համարիմ մեր  
տեսութեանը բացատրութեան, բայց կա-  
րեւոր՝ նկատմամբ՝ առաջին կէտին, որ  
թէպէտ յետոյ մթնցեր է սնոտի պաշտա-  
մամբք, սակայն քրիստոնէութիւնն չէ ու-  
շացած անոնց վրայ կամ անոնց տեղ՝  
ծագել իր մշտափայլ լոյսը և ընծայել  
զԵկեղեցին Հայոց :

---

## Ա.

Առաջին նշոյլ կամ մուտք քրիստոնէու-  
թեան ի Հայս.

Ո՞ՉԱՓ այլ կարծիական է, սակայն  
իրրեւ լոկ աւանդութիւն եւս յիշելի է,  
թէ, քրիստոնէութեան գէթ համբաւն՝ շատ  
կանուխ՝ հասեր է ի Հայս, և նոյն իսկ  
դեռ Քրիստոսի տնօրէնութիւնըն բոլորովին  
չկատարուած, որ է ըսել յառաջ քան  
զիաչելութիւնն ., և այս՝ համարէ՛ ըլլայ  
աւանդեալ Աբգարու զեսպանութեամբ և  
թղթակցութեամբ ընդ Քրիստոսի, զոր բո-  
լորովին անհիմն և անհաւատալի չեն դա-  
տեր ոչ սակաւ հին և նոր զիտնականք,  
և մենք այլ Աբգար աւելի Ասորեսց թա-  
զաւոր համարիմք և ոչ Հայոց .՝ ըլլայ և  
այն աւանդութեամբ, թէ՝ Քրիստոսի վերջի  
օրերում հեթանոսը ոմանք ըսին առաքե-  
լոց, թէ « ԶՔրիստոս կամիմք տեսանել »՝  
որ ակնարկէ Աբգարու զեսպանութեան,  
թողլով զասոնք այլ, եթէ որ և է կերպով  
Քրիստոսի համբաւն յԱսորիս հասեր էր,  
անկէ ի Հայս՝ քայլ մի է. մանաւանդ թէ  
մեր ազգայնոց բազմաշընկ ըլլալն, գլխա-

ւրապէս վաճառականութեան առթիւ, և  
այն ատեն Հոռվմայեցւոց հետ յարութե-  
րութիւնն, անտարակոյս կ'ընէ այդպիսի  
համբաւոյ հնչեն ի Հայս: Թողունք ուրիշ  
ազգային մասնական աւանդութիւն մ'այլ,  
թէ Քրիստոսի երկրպագու և ընծայարեր  
Մոզք՝ բերին այդ համբաւը, և ոմանց  
համարին՝ թէ մի ի մոզուցն՝ Գասպար,  
էր ի Մոկաց զաւառէն, և թէ ոչ՝ սակայն  
ի Մոկս աւանի թաղուած կ'ըսեն և ցու-  
ցընէին զերեզմանը հին եկեղեցւոյ մի մէջ:  
Ասոնք որքան և աւանդութիւն և զրոյցը  
համարուին, ստոյգն է՝ ոչ միայն Հայոց  
երթեւեկն ի Պաղեստին և յԵզիպտոս՝ այն  
ատեներ և յառաջ և յետոյ, այլ և հա-  
ւանական՝ իրենց երկրին չորս կողմը  
տարածուիլն այսպիսի և նման համբաւոյ  
մեծ դիպաց. և այս՝ ըստ մէջերկրեայ  
զրից մեր երկրին. զոր՝ և Ասիոյ արե-  
ւելից և արեւմտից աշխարհաց և ճանա-  
պարհաց՝ միջավայր ճանչնան զլսաւոր  
աշխարհազերք ժամանակիս: ԶԱՐԳԱՐ հա-  
յացընողք՝ անունն այլ հայացընեն Աշագ  
այր կոչելով. զուցէ աւելի ստոյգ ըլլայ  
միւս աւանդութիւն մի, որ Արգարու բոյը  
կամ քեռ զուստը մի ճանչնայ Աշագուհի  
կամ Ոգուհի անուամբ ի Մեծ Հայս, հա-  
ւատացեալ ի Քրիստոս և նահատակեալ,  
զոր և յիշեմք յետոյ:



Ա. Թաղէոս եւ Աշակերտոց իւր:

Բ ԲՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱԾԱՆ համբաւը տարա-  
ծողք ի Հայս՝ անմիջապէս յետ յարութեան  
Քրիստոսի, համարուին ի Հայս և ի սահ-  
մանակիցս Հայոց բնակեալ կամ պան-  
դուխտ Հրեայք, որը ի Հոգեզալբանեան  
օրը գտուեցան յԵրուսաղէմ. յորս՝ թէ յա-  
նուանէ չի յիշեր Աւետարանիչն Ղուկաս  
(Բ, 9-11) և զՀայս, այսինքն զհայաբը-  
նակ Հրեայս, զուցէ քիչ առաջ մեր այն  
ատենուան Հայ թագաւորին զՀրեայս հա-  
լածելուն կամ նեղելուն համար ըլլայ,  
(Խոր. Բ. ԻԴ). սակայն յիշէ նախ զսահ-  
մանակիցս Հայոց, Մարս, Միջագետացիս,  
կապաղովկացիս, Փոխւզացիս. զուցէ և  
Պարթեւաց անուամբ իմանայ և զՀայս.  
զի այն ատեն համացեղ (Արշակունի) էին  
և Հայոց և Պարսից կամ Պարթեւաց  
թագաւորքն: Անկարելի էր որ այսքան  
Հայաստանի կպած աշխարհներում պան-  
դուխտացեալ Հրեայք՝ յետ զատկի տօնին  
դառնալով յԵրուսաղէմէ, սփռած չըլլան  
և ի Հայս՝ զհամբաւ Քրիստոսի և Առա-


քելոցն . յորոց լսեցին այն հրաշալի  
Ա. Հոգւոյ իջման օրը՝ իւրաքանչիւր իրենց  
պանդրխտած երկրին և ազգին և իրենց  
իսկ խօսած լեզուն :

Ումանք համարեցան՝ թէ Տերտուղիանոս,  
յեւ Բ դարու, (Ընդդէմ Հրէից, Ե) յի-  
շած է և զՀայս յանուանէ, Պուկասու միւս  
յիշելոց և գտուելոց հետ՝ այն հրաշափառ  
վերնատան մէջ . սակայն, հաւանօրէն, այս  
մեծ հեղինակս՝ իր ժամանակի Հայոց քրիս-  
տոնէութիւնը յիշեցընէ, խառնելով անոնց  
անունը ընդ մէջ Միջազգետացեաց և Փոխ-  
գացւոց, ուր որ մեր թարգմանութիւնն՝  
ըստ յոյն բնագրին ի Հրեաստանի զրած է,  
և նա զայս չի յիշեր, այլ ի Հայաստանի.  
զոր ըստ նմանութեան անուանցն՝ կրնար  
շփոթել հայերէն զրող մի . կրնար շփոթել  
և Տերտուղիանոս՝ եթէ հայերէն զիր ըւ-  
լար : Այս է Տերտուղիանոսի զրածն .  
« Ուրու՝ (բայց եթէ Քրիստոսի) հաւատա-  
ցին այլեւայլ ազգք . Պարթեւք, Մարք,  
Եւամացիք, և որք ի Միջազգետ և ի  
Հայաստան, ի Փոխգիտ »<sup>1</sup>, և այլն :

1. Cui enim et alii gentes crediderunt? Parthi, Medii, Elamitae, et qui inhabitant Mesopotamiam, Armeniam, Phrygiam, Cappadociam, et incolentes Pontum et Pamphyliam; immorantes Aegyptum et regionem Africæque et trans Cyrenem inhabitantes: Romani et incole; tunc

Մեզ և մեր պատմքաց՝ Արգարու և  
Թաղէսս առաքելոյ քարոզութեան պատ-  
մութեան ազրիւրն՝ եղած է Թուղր Արդարու-  
կոչուած հին ասորերէն զրուած մի, որոյ  
հեղինակը չի յիշեր Եւսերիոս . իսկ մեր  
Խորենացին կոչէ Գլուրքնա կամ Ղերուք-  
նեա (սխալմամբ զրուած Ղերուքնա), որդի  
Ափշաղարայ Դարի, որ զրած է, կ'ըսէ,  
և Սահնաւրկոյ ատեն եղած զիպաց պատ-  
մութիւնը, և զրած ի դիւանս Եղեսիոյ:  
Մինչեւ ցկէս նոր անցեալ կամ զեռ անցնող  
(ԺԹ) դարու՝ այսչափ զիտէինք . յամին  
1852 յաջողեցաւ մեզ զանել Բարիկու  
մեծ զրատան Հայերէն ձեռազրաց հին ձ'առ-  
ընտրի մի մէջ՝ այս Արգարու թուղթս,  
հին թարգմանութեամբ. յորմէ՝ մեր հնագոյն  
Տօնացոյցը կամ ձ'աշոցը այլեւայլ մաս  
կարգեր են եկեղեցւոյ մէջ կարդալ: Իրը  
տասն տարի մեզմէ վերջը՝ անգղիացի  
բանասէրն Գիւրլոն զտաւ ասորի բնա-  
գիրը, այլ ոչ ամրող, և հրատարակեց.  
մենք այլ մեր զտած երկարը, որ և փոան  
կերէն թարգմանեալ հրատարակեցաւ: Ասոր

et Hyerusalem, Indi, et cetere gentes; ut jam  
Getulorum varietates et Maurorum multi fines;  
Hispaniarum omnes termini, et Galliarum et  
diversæ nationes, et Britannorum inaccessa  
Romanorum loca, Christo vero subdita et Sar-  
matorum, Germanorum et Scytharum.



մէջ՝ Ղերուբնա ոչ որդի Ա.փշաղարայ, այլ  
թոռն նորա կ'ըսուի, իսկ հայրն Անակ  
կոչուի. քարոզիչ առաքեալն ոչ Թաղէսոս՝  
այլ Ադրե. որ յետ լուսաւորութեան Եղե-  
սիոյ՝ կ'ըսուի գնացեալ յԱրեւելս և նա-  
հատակեալ ի Սանատրկոյ. ասոր զատեր  
Սանդրխտոյ և իր նահատակութեան պատ-  
մութիւնն չկայ հիմայ գտնուած Դըբուբնայ  
գործոյն մէջ, զոր հայ թարգմանիչն՝ տեղ  
տեղ ազգային աւանդութեանց և ծանօ-  
թութեանց յարմարցուցեր է; Թաղէի կամ  
Աղդէի աշակերտ՝ Աբգարու խոյրարարն այլ  
նոյն անուամբ կոչելով՝ երկուքին ըրածն  
այլ կըրնայ իրարու խառնուած ըլլալ:  
Բայց մեզ ծանօթ Թաղէսոսի քարոզութիւնն  
յարեւելս՝ ի Մեծ Հայս, աշակերտելն  
զՍանդրխտ և երկուքին այլ նահատակու-  
թիւնն՝ ստոյգ երեւին, և առանձին գրուած  
գտնուի պատմութիւնն մեր հնագոյն ձե-  
ռագրաց մէջ. որոյ թարգմանողն Սամուել  
և պիտիոսոս որ պատուիրէ զայն ծաւալել  
և ծանօթացընել ամենայն Հայոց ազգին,  
թուի անոր կաթողիկոսն, թէ ոչ Շմուել  
հակաթոռն Մեծին Սահակայ՝ ապա Սա-  
մուել յաջորդն Բարգենի, իսկիզբն Զ գարու:  
Աստուածային նախախնամութեամբ այլ-  
եւայլ Առաքեալը և Աշակերտը եկած են  
ի Հայս, կենսարել Աւետարել Աւետարանը

քարոզելու. յորս առաջին յիշատակէ մեր  
եկեղեցին՝ ի պաշտաման պատարագի՝ զայս  
Ա. Թաղէոս, կանուխ քան զբարրողուեսու  
Առաքեալն՝ ի Հայս մտնելուն համար. զի  
սա յետինս՝ մի յերկոտասան ձեռասուն  
Առաքելոց Քրիստոսի է, իսկ Թաղէսոս  
համարի մի յԵօթանասուն և երկու աշա-  
կերտաց նորա. զոր՝ Հայք սիրեն անոնց  
ամենուն զլուխ կամ առաջին ըսել, որպէս  
զՊետրոս՝ Երկոտասանիցն : Դարձեալ,  
Թաղէսոս համարուի հարազատ եղբայր  
Թովմայի Առաքելոց, և ասոր թելազրու-  
թեամբ եկած առ Աբգար, իբրեւ կատա-  
րելու աւանդութեամբ հոչակեալ Քրիստոսի  
խոստումն առ նա, թէ, յետ համբառնալուս  
յերկինս՝ խաւրեմ քեզ բժշկող և լուսաւո-  
րող մի յաշակերտացս: Սայդ է Թաղէսոսի  
շուտով գալն իր քարոզութեան տեղը, որ  
չէր հեռի ի Պաղեստինէ. բայց ումանը  
կ'ըսեն, թէ նա նախ Ասորոց ծովեզերքէն  
ելած ըլլայ յեզերս Կիլիկիոյ, և աստի  
յառաջ անցած ի միջաշխարհս Փոքր Ասիոյ,  
և ասոր զլխաւոր քաղաքին՝ Կեսարիոյ մէջ  
յաջողութեամբ քարոզած, և հաստատած  
եկեղեցւոյ նախապատիւ աթոռոց մէկը,  
զոր և յանձներ է իրեն աշակերտեալ  
Թեոփիլոսի. և զսա համարին այն բա-  
րերադդ անձն կամ Քաջը, որոյ խնդրով

Ա. Հուկաս զրեց իր Աւետարանն և զԴործս  
Առաքելոց . բայց ասոր վրայօք յետոյ  
խօսինը, երբ մեր Լուսաւորչի ձեռնադրու-  
թիւնը յիշելու կարգն գայ:

Ժամանակին հնութիւնն և երկրին հե-  
ռաւորութիւնն , գուցէ և Ասորւոց և Հայոց  
մէջ հղած նախանձ և հակառակութիւն  
մի, որում վկայեն պատմիչը մեր, գուցէ  
կամաւ և ակամայ այլայլած ըլլան թա-  
դէսոի առաքելութեան պատմութիւնը :  
Ասորիք՝ յետ անոր քարոզութեանն յԵ-  
ղեսիա և Արգարու հաւատոցն՝ Նինուէի և  
Ասորեստանի սահմանակից կողմեր այլ  
քարոզած է՝ կ'ըսեն, թաղէսոս, և նորէն  
գառնալով յԵղեսիա՝ խաղաղական մա-  
հուամր հանգչած, ըստ Մարիսի պատմըչի  
նոցա, յետ 22 տարի քարոզութեան: Իսկ  
Հայք՝ յԵղեսիոյ ի Մեծ Հայս գնացեր է,  
կ'ըսեն, Արգարու յանձնարար թղթով՝ առ  
Սանաւորուկ թագաւոր: Երկու աւանդու-  
թիւնքն այլ թերեւս անստոյգ են. ստոյգն  
երեւի՝ թէ ոչ թաղէսոի՝ այլ իր մէկ  
աշկերտին (որ իր անուամբ ճանչցուած է)  
գալն ի Հայաստան և յարքունիսն, ուր  
թագաւորէք՝ ըստ մեր պատմչաց՝ Սանա-  
ւորուկ: Ըստ վերոյիշեալ հին պատմութեան  
թաղէի կամ վկայաբանութեան նորա և  
Սանզըթոոյ զստեր թագաւորին, թաղէսո՝

իր բանի մի աշակերտօք քարոզելով հրա-  
շագործութեամբ՝ շատերու ընդունել կու-  
տայ զքրիստոնէութիւն. կու գայ յԱրտազ  
գաւառ, ուր այն եղանակին որ ամառ էր,  
թագաւորն նստէր իր արքունեօք՝ ի Շա-  
տարշան քաղաքագիւղ, զօրքն այլ դաշտին  
մէջ բանակած: Ըստ ոմանց՝ Սանաւորուկ  
այլ նախ հաւատայ՝ ի Քրիստոս, յետոյ  
ուրանայ. հաւանելի է միշտ հեթանոս  
մնալն, այլ իր օրիորդ դուստրն Սանդրուխտ  
հաւատայ և մկրտուի ի թաղէսոէ, և սիրով  
փափազի ստէպ լսել առաքելոյն քարո-  
զութիւնը. որով՝ շատ ազնուատոհմ արք  
և կանայք եւս հաւատացին ի Քրիստոս,  
և անարգեցին իրենց սնոտի պաշտամունքը:  
Ասկէ զրդուած քուրմք բողոքեն առ «իստե-  
րախ և անօրէն » թագաւորն, և սա հրա-  
ման տայ ջարդել հաւատացեալները, և  
բանաւորկել զՍանդրուխտ, զոր՝ յետոյ ստոյգ  
հայրական սիրով ողոքելով զգուելով՝ ջա-  
նայ, բայց չի կըրնար մոլորցընել. գութն  
դառնայ ի կատաղութիւն, և հրամայէ  
սպաննել զնա:

Շատ հրաշքներ յիշէ պատմիչն, որոց  
մին էր, դահճաց՝ փոխանակ Սանդրուխտոյ՝  
զիրար զարնել և սպաննել. իսկ զկոյսն՝  
զորովական կերպով մի նահատակուած  
կ'ըսէ. դահճաց կոտորման շփոթին մէջ,

« Պատաճի ոմն էառ սուր և մօտ ի ստինսն  
 « եհար զկուրծսն երանելոյ կուսին, և ել  
 « արին, և բղխեաց հոտ անուշութեան.  
 « և աւանդեաց զոգին<sup>1</sup> » : Գեղեցիկ կատա-  
 րած, գեղեցիկ զրուցուած, գեղեցկագոյն  
 պսակ եկեղեցոյս Հայոց. որ կըրնայ պար-  
 ծիւ իր Ա. Օրիորդով, զուցէ առաջին  
 վկայուհի ունելով զԱ. Սանդուխտ։ Իր  
 պատճառաւ՝ առաջ և վերջը շատեր նա-  
 հատակեցան իր զառնացեալ հօր հրամա-  
 նաւ. յորոց յիշուին յանուանէ՝ իշխան մի,  
 զոր զրկեր էր թագաւորն զդուստրը յու-  
 րացութիւն յորդորելու համար, և նա՝  
 հրաշքներ տեսնելով՝ հաւատաց ի Քրիստոս,  
 և մկրտուելով կոչուեցաւ Սամուկ, և նա-  
 հատակեցաւ թագաւորին հրամանաւ, հրա-  
 ցեալ երկաթներ ոտներուն կամ ուսերուն  
 անցընելով. — ուրիշ մէկ մ'այլ Խորայէլ  
 կոչուած. — Զարմանդուխտ անուամբ թա-  
 գաւորական ցեղէ տիկին մի՝ նոյնպէս Սա-  
 նատրկոյ հրամանաւ սրով սպանուեցաւ:  
 Բատ պատմութեան՝ թաղէոս ինքնին օգնու-  
 թեամբ հաւատացելոց՝ թաղէ զՍանդուխտ  
 և ծածկէ զտեղին։ Խակ ինքն յետ վեց կամ  
 ութ աւուր՝ այն տեղոյն մօտ բարձրա-  
 ւանդակի մի վրայ տարուի սպանուելու.

1. Գեկտեմբեր ամսոյ 15ին, ըստ վկայաբանութեանն.

դահիճն՝ այս անգամ այլ փոխանակ անոր՝  
 իր Զեմենտ եղբայրը զարնէ և սպաննէ,  
 զոր յարուցանէ Առաքեալն և մկրտէ. ապա  
 հաւատացելոց առաջորդ դնելով իր Զա-  
 բարիա աշկերտը, նահատակուի սրով. և  
 մարմինն՝ սքանչելեօք պատռուած ժայռի  
 մի մէջ ծածկուի։ Մեր սրբապատումք  
 զրած են զպատմութիւն այս ամեն յիշեալ  
 նահատակաց, Ասաքելոյն, կուսին և այլոց,  
 և մարմնոց գտնուին՝ հրաշալի յայտնու-  
 թեամբ, Ե զարոն վերջերը, Յովհաննէս  
 Մանղակունի կաթողիկոսին և քաջ Դա-  
 հանայ Մամիկոնենի իշխանութեան ատեն,  
 Կիրակոս անուամբ ճգնաւորի մի ձեռօք.  
 որ՝ անշուշտ այն տեղ շատ անգամ կու-  
 նկատէր թիշ տասնեակ տարիներ առաջ  
 կատարուած Վարդանանց համախումբ նա-  
 հատակութիւնն և նշխարքները։ Վկա-  
 յաբանութիւնն թագէի և Սանդրխոոյ,  
 գերագոյն հօր և դստեր, անմահունակ  
 զորովանք մի ընծայէ, յար և նման աւան-  
 դեալ զորովանաց ժամանակակից Սրբունոյ  
 թեկղեայ ընդ Փօղոսի առաքելոյ։ Մեր  
 եկեղեցին այլ ի միասին տօնէ զաշակերտն  
 Քրիստոսի և զաշակերտեալ նորա կոյսն,

1. Մեր մէկ հին ժամանակագիր՝ թաղէի նահատա-  
 գութեան յատուկ տեղը՝ Բաղրու կոչ։

Երեք տուն հետեւակ շարական մի<sup>1</sup> եւս  
ընծայելով իր անզրանիկ վկայուհւոյն:

Թագէսոփ և Անդրխոռոյ նահատակու-  
թեան օրերում՝ եղած հրաշքները տեսնող  
հաւատացելոց թիւն, որ այլեւայլ անզամ  
մանրամասն նշանակուած է ի վկայարա-  
նութեանն, իբրեւ թիւր մի կ'ըլլայ. բայց  
աւանդութիւնն կ'ըսէ Առաքելոյն համար,  
որ առաջ շատ տեղ բալած բարոզած էր  
և թիւրաւորներ այլ մկրտած. որոց ոչ  
սակաւը նահատակուեցան՝ Անատրկոյ և  
իր նմանեաց հալածանօք. և ոմանց յիշա-  
տակն եւս մտած է ի Յայսմաւուրս մեր.  
ինչպէս, « Սամուելի իշխանի՝ աշակերտին  
թագէի », (յուլիս 20). — Զաքարիայի՝  
որ յաջորդ թագէսոփ կոչուի, թէ և չեմ  
հանդիպած յիշատակին ի Յայսմաւուրս,  
այլ վկայուի յայլոց՝ որ ըստ նախագու-  
շակութեան Առաքելոյն՝ ինքն այլ նահա-  
տակուած է Երուանդ քանաւոր թագաւորին  
հրամանաւ կամ իր ատեն, իբր 75-6

1. « Քեւ պարծի այսօր սուրբ եկեղեցի, ով վկայուէի  
Սուրբ Անդրեաս. որ գհայրականն ըս թողեր զպաշտօն,  
վասն Քրիստոսի հեղեր զարիւն ըս սուրբ:

Աշակերտեցար Առաքելոյն թագէսոփ, և ի հաւատո  
ճշմարիտս հաստատեցար, ոչ խառնակելով ընդ հեթանո-  
սական պաշտօնսն. արժանի եղեր վերանալ առ Հայր:

Որ զարիկնութեանն ըս թողեր զփառս, և աստուածային  
փառօն զարդարեցար. այսօր զասակցեալ ընդ զուար-  
թունս երկնից, վասն մեր առ Տէր բարեխօսիս »:

Յուականին Քրիստոսի: Առաքէլ զանձա-  
սաց բաղիշեցին՝ իր Ոսկեանց զանձին մէջ  
միշէ զսա.

« Եւ այլք բազումք աստ հաւատացին,  
« Զաքարիա եւ ըմկերք նորին »:

Մեր կանոնազրոց մէջ անմիջապէս յետ  
Առաքելական կանոնաց՝ զրուած են 32  
կանոնը յանուն Ա. Առաքելոյն Թատէի.  
թէ և անվաւեր համարուին, այլ հին են,  
և ի վերջն զրուած է. « Զայս Օրենսդրու-  
« րիւն՝ ևս Զաքարիա աշակերտ Ա. Առա-  
« քելոյն Թագէսոփ՝ զրեցի, որպէս լուայ  
« ի նմանէն, ամենայն հաւատացելոց ի  
« Քրիստոս »: Թէպէտ և կ'ըսուի եւս թէ  
յԵղեսիա զրած ըլլայ, որով ինքն այլ  
Եղեսիացի երեւի և ոչ ի Հայս աշակեր-  
տեալ թագէի:

Զաքարիայի յաջորդ զրեն մեր վերջին  
դարու ժամանակագիրք կամ եկեղեցական  
վիճակագիրք, ինչպէս Յովսէփի Վ. Զու-  
դայեցի, զՆեմենա կամ Զեմենիանիսու  
վերոյիշեալն, որ էր յառաջն « Խշան  
« ամենայն ձանապարհաց՝ և հաւատարիմ  
« ի զրան արքունի. և էր յոյժ ողորմած  
« բարուցն և աղքատասէր, դարմանիչ  
« օտարաց և կարօտելոց.. (նա և) հաւա-  
« տացելոցն, և ընդունող օտարաց »: Առ-

մուելէն երեք կամ չորս տարի վերջը նահատակուած կ'ըսուի Զեմնոտ՝ յերուազայ քրմապետէ Հայոց՝ որ բռնաւոր Երուանդայ եղայլն էր: — Զեմնոտի յաշորդք այլ հատարակուեցան նորերում, (բայց գեռ կարօտ ստուգութեան<sup>1</sup>), և են Ատրաներսին, Մոշէ, Շամին, Շաշարչ, Ղետնի. յետինս՝ որ միայն չէ հայանուն՝ որպէս առաջին չորքն (կամ հինգն՝ Զեմնոտի հետ), նահատակուած համարի յետ կիսոյ Բ դարու, Հայոց Վազարշ թագաւորի օրով կամ իր յաջորդին խոսրովու ասոր ատեն, վկայէ Փերմելիանոս կեսարիոյ եպիսկոպոսն, զոր յիշէ Խորենացի, (Բ. ՀԵ), « Բազում « վկայեալս և ի մերում աշխարհիս »:

Թէ մեր և թէ Ասորոց պատմիչք յիշեն Քանի մի ուրիշ աշկերտներ թաղէի՝ այլ-

1. Այս ստուգուելու փափազելի լուրն հրատարակեցաւ Եջմիածնի Արարատ օրգարին Ա. տարեհամարին (1868, նր. 41. 56. 102). իրը թէ, Ստեփանոս Սիւնեցին Եղարսու կիսում՝ զատ և թարգմանած ըլլայ, և Յովհաննէս վարդապետի մի ձեռօղ օրինակուած ի Պ. Ըստին Հայոց (659 Քրիստոսի), Թաղէսոսի և Բարթողիմէոսի յաջորդաց աւելի կամ պակաս ցուցակ կամ զաւագանգիր մի. և զայս զտեր է Զաքարիա արքեպիսկոպոս Առաջի մի. Առաջի վանաց, և օրինակիր է ի ԶՀԹ թուին (1339). Օրագիրն կ'ըսէ, թէ այս յիշատակո գրուած է երեք կտոր մաշուած մազաղաթի վրայ, զոր Գիորգ Դ կաթողիկոս առեր է ի Կ. Պոլիս՝ ի Միհրեր զատեան Թաղէսոս բանակիրէ, և հնտը սարած յլչմիածին. ուր ինդրելի և ստուգելի է. վասն զի, շարադրութեան շատ տեղ անվարժ է և կասկած տայ.

և այլ Հայոց զաւառներում բարողած . ինչպէս, Ակրեսու մի (եթէ ոչ Աղոէ), որ քարոզած ըլլայ ի կորմայս, որ են Մեծ Հայոց կորդուաց զաւառներն, և անոնց սահմանակիցքն կամ մասն՝ Մեծ և Փոքր Զատ զետոց լեռնահովիաներում, զորս Յոյնը և Լատինը Զարդիկեան կոչեն, Zabdicene. յետ բարոզութեանն՝ Ակրէսու կ'ըսուի դարձած յԵղեսիա և հօն վախճանած: — Այդէ, Արքարու խոյրարան այլ հօն նահատակուած կ'ըսուի, նա և ըստ Խորենացւոյ, Արքարու Ահան որդւոյ հրամանաւ, որ տարակուսական է և ոչ հայկական: — Ուրիշ Աղդէ մի եւս համարուի ի Բարեկըն բարոզած, և այն տեղ մեծ եպիսկոպոսական (յետոյ պատրիարքական) աթոռ հաստատած, իրը Ասորեստանեաց, Մարաց և Պարսից բահանայապետ: — Դարձեալ, ըիշ այլաձայնութեամբ անուան յիշի Դադիս աշկերտ մի եւս Թաղէսոսի (զուցէ ամենքն այլ իրենց հոգեւոր հօր անունն ուղած են կրել). որոյ համար կ'ըսէ մեր բազմահմուտ Վանական վարդապետն, թէ՝ « Գնաց հրամանաւ Թաղէսոսի « ի Մեծ Հայք և ի կողմանս հիւսիսոյ. և « լուեալ զմանն Արքարու՝ դարձեալ եմուտ

1. Մարիս պատմիչ առ Լըզիէնի, Բ. Le Quien, Oriens christianus.

« ի ՚Փոքր Աիւնիս, և կրօնաւորեալ անդէն  
 « ծածկաբար վախճանեցաւ, և տեղին շի-  
 « նեցաւ վանք և յանուն նորա կոչեցաւ ». +  
 և կոչուի ինչուան հիմայ Դադի վանք կամ  
 Խուրայ վանք, Արցախ նահանգի Աիսական  
 գաւառում, որ յայլազգեաց Ղայնախ կո-  
 չուի: — Մօտ է ասոր և Խաղայ կամ  
 Խրայ վանք, Թաղէոսի Խաղայ աշկերտին  
 անուամբ, որ և մի յԵօթանասուն աշա-  
 կերտաց Քրիստոսի համարուի: Այս երկու  
 աշակերտաց անուամբը պայծառ վանքեր  
 և եկեղեցիներ շինուած են, և շատ ծաղկած  
 ԺԲ, ԺԳ դարերում, և հիմայ այլ կանգուն  
 են: — Ոչ շատ հեռի տեղեաւ և անուամբ՝  
 և շատ աւելի հոչակուած է՝ Եշտարենս  
 կամ Ստարենս, նոյն Թաղէոսի վարժարա-  
 նէն, և բարոզելով նահատակուած ի Մեծ  
 Աիւնիս, և անոր անուամբ կանգնուած  
 հոչակաւոր Տարեւոյ վանքն, որ յետոյ  
 Աիւնեաց արքեպիսկոպոսական կամ մետ-  
 րապօլատական բարձրակարգ աթոռն եղաւ,  
 և մինչեւ հիմայ ծանօթ և շէն է. և որոյ  
 վրայ շատ երկար գրէ Օրպելեան Ստե-  
 փանոս մետրապօլիտն պատմիչ: Սակայն,  
 շատ երկարայական է այդ անձն, ոչ միայն  
 որ յօտարաց չի յիշուիր, այլ և ոչ ի  
 վանականէ, որ բոլոր Հայոց աւետարանի  
 Առաքեալներն և Աշկերտները նշանակած

է: 1 — Փոխանակ անոր յիշէ նա, որպէս  
 և Յայսմաւուրը (սեպտ. 29) զԵղիշէ, աշա-  
 կերտակից վերնոցն, որ յետ կատարման  
 Ա. Թաղէոսի զնացեր է յԵրուսաղէմ և  
 ձեռնազրուեր ի Տեառնեղբայր Յակովայ,  
 և դառնալով՝ բարոզեր է յԱղուանս, մինչեւ  
 ի Դուռն Դարրանտայ (կամ Պահակն Ճո-  
 րայ). Աղուանից Գիս աւանին մէջ զվարոր  
 եկեղեցին շինած է, որ ինչուան հիմայ  
 պատուի իր անուամբ, յետոյ Հայոց մեր-  
 ձաւոր Արցախոյ գաւառներում բարոզելով՝  
 Ամարաս աւանին մօտ՝ Զարդուեի կոչուած  
 դաշտի մի մէջ նահատակուեր է յանհաւա-  
 տից, և մարմինն ձգուեր է ցամաց Ջրհորի  
 մի մէջ. ուսկից հրաշալի յայտնութեամբ  
 հանուելով՝ յամի 488-9, Աղուանից Վա-  
 չագան բարեպաշտ թագաւորի օրով, մօտ  
 այն ջրհորին շինուեր է Ջրվշտիկ կոչուած  
 վանքն, վերոյիշելոց նման ուխտատեղի,  
 ծանօթ՝ այլ ոչ շէն: Բատ աւանդութեան  
 պատմչաց Աղուանից՝ Եղիշէի յաջորդեր է  
 Շուփիղաղիշոյ յԵրուսաղէմէ եկած:

Այսքան Ա. Թաղէոսի աշակերտաց  
 անուանց և տեղեաց մէջ՝ եթէ աւելի կամ

1. Մերձաւոր անուամբ ծանօթ է յեկեղեցական պատ-  
 մութեան Ստարենս ոմն, որոյ՝ Պօղոս առաքեալ զրէ  
 ողջոյն, « Ստարեայ սիրելոյ իմոյ ի Տէր ». (Հառլմ.  
 Ժ. 9), Կոյն սա թուի աշակերտ Անդրէի Առաքելոյ,  
 որ զրաւ զնա եպիսկոպոս Բիւզանդիոնի:

պակաս շփոթութիւն ինչ կայ, անկասկած  
է զոնէ անոնց ոմանց՝ Հայոց և Աղուանից  
միջոցներուն քարոզելն, և ոչ անպատճառ՝  
Թաղէոս նախակարգի յաւետարանիչս Հայոց  
աշխարհի. և ոչ նոյնալէս անպատճառ՝  
Հայոց առաջնակարգ եպիսկոպոսական  
աթոռք դրուած են Արտազուն և Աիւ-  
նեացն, որոց գտուիլն հարկ էր ի ժողովի  
եպիսկոպոսաց ի ճենապրութեան կաթո-  
ղիկոսի: Անտարակոյս է եւս, որ Թաղէոս  
և Թաղէոսնեանցը շատ եկեղեցիներ հաստա-  
տեր են իրենց քարոզութեան տեղերում,  
զոր սովորական ռամկօրէն ոճով հազար  
եկեղեցի կ'ըսեն:

+ Ա. Թաղէոսի գերազոյն յիշատակ մ'այլ  
համարուած է՝ Քրիստոսի սուրբ Կողը  
բացող հոչակաւոր Գեղարդն, զոր ընդունե-  
լով, կ'ըսուի, յառաքելապետէն Պետրոսէ,  
բերեր է ի Հայու. և հալածանաց առաջին  
զարուց ատեն՝ Գառնի աւանին մօտ քա-  
րալերանց այրերու մէկու մէջ պահուեր  
և պատւըւեր է. յետոյ՝ կէս այն ժայռե-  
րուն մասով կէս անոնցմէ զատ քարերով  
և պատերով՝ քանզակազարդ եկեղեցիներ  
և վանք շինուած են այն տեղ, և մինչեւ  
հիմայ իրեր ուխտատեղիք մէծահանդէս  
պատռին, և կոչուին Այրից վաեր կամ  
Գեղարդայ վաեր: Խակ Գեղարդն՝ իրեր մի-

և գերազոյն ի սրբազանից՝ պահուի յաթոռ  
կաթողիկոսին՝ յիշմիածին. անով կ'օրհնի  
միւռոնն. և մեծ վտանգաց և կարօտու-  
թեան ատեն՝ իրեր սքանչելազործ տարուի  
հանդիսիւ՝ ուր որ իմնզրուած է, ինչպէս  
երբեմն մինչեւ ի Վրաստան: Մեր նպա-  
տակէն գուրս համարիմք ըննել և վիճել՝  
թէ ի Հոռվմ այլ հոչակուած Գեղարդն  
ո՞րբան հաւանական է ինչպէս Հայոցն:

Միւս նման յիշատակ կամ պարգեւ  
մ'այլ բերած է ի Հայու՝ Առաքեալն թա-  
ղէոս. այն է Շիշն նարդեան (նարդոս ծաղկի-  
անուշանոտ իւղոյն), որով կին մի մեծա-  
հաւատ օծեց զաստուածային գլուխ Տեառն-  
մերոյ. զայս բերելով Առաքեալն ի կող-  
մանս Տարօն գաւառի, կ'աւանդի թէ վե-  
րոյիշեալ Գեղարդը զարկեր է ծառի մի՝  
և ջուր բղիեցուցեր. ապա նոյն ծառին  
փորուածին մէջ պահուեր է Շիշն, հեթա-  
նուաց ձեռք չընկնելու համար: Թէ՝ ծառն  
իւղոյն անուամբ Եղերդ կամ Եղրդուտ կո-  
չուած է թէ ոչ, աւելորդ է քննել, բայց  
կայ այդ անուամբ ծանօթ ծառ, տեսակ  
մի ուռենի: Աւանդուի դարձեալ, որ Լու-  
սաւորչի ատեն յայտնուեր է Շիշն և  
շինուեր է ուխտատեղի՝ Եղրդուտի վաեր:  
անուամբ, նուիրեալ Յովհ. Մկրտչի, պա-  
տռեալ և յիշեալ մինչեւ յաւուրս մեր:

Յիշատակագիր մի յամի 1676, կ'ըսէ.  
 « Ի հոչակաւոր սուրբ ուխտս Եղրդուտոյ,  
 « յերկրին Տարօնոյ, ի գաւառն Մամի-  
 « կոնեանց՝ կան բազում սքանչելազործ  
 « սրբութիւնը ի սա հաւաքեալ. նախ,  
 « սուրբ Շիշ իւղոյն անուշահոտ, զոր  
 « Մովսէս նախամարգարէն օրհնեաց՝ ի  
 « ծաղկանց հրաշազանից, և օծեաց զմար-  
 « գարէսն, զբահանայսն և զթազաւորսն,  
 « և Սամուէլ մարգարէն օծ զԴաւիթ և  
 « զայլ մարգարէսն. և կինն պոռնիկ հեղ  
 « ի վերայ զլիսոյն Քրիստոսի. և Քրիստոս  
 « յետ խաչելութեանն օրհնեաց և ետ յա-  
 « ռաբեալսն, և Ա. Թաղէսոս բերեալ աստ  
 « եղ ի ծառն Եղրդի, առ ստորոտով լե-  
 « րին Տօրոսի »:

## Գ.

Ա. Բարթողիմէոս Եւ Աշակերտն.

**Ե**րկուսսսն Առաքելոց մէկն էր սա.  
 և անունն թարգմանուի, ասորերէն կամ  
 երբայերէն, Որդի Թողիմեայ կամ Պըտղո-  
 մեայ. առ մեզ երբեմն Դ տափիւ զրուի,  
 բայց առ Յոյնս և Լատինս՝ սովորաբար

Թ տափիւ: Հայրենեօքն՝ Գալիլիոյ կանա-  
 քաղցէն էր, ուստի և Նարանային յիշեալ  
 յաւետարանս. և ըստ ոմանց ի նախնի  
 Հարց՝ նոյն մի անձն է երկու անուամբ:  
 Եարականը մեր հնչեն աւանդութիւն մի,  
 թէ ի Ննջման Տիրամօրն՝ երբ ամենայն  
 Առաքեալը իրենց քարոզութեան տեղերէն  
 ժողովեցան՝ զինքը յուղարկելու յերկինս,

« Բարթողիմէ յետոյ եկեալ,  
 « Եւ զբաղձալիմ իւր ոչ գըտեալ ».

այսինքն, մինչ արդէն թաղեր էին զկուսա-  
 կան մարմինը, նա շատ տրտմելով ցաւէր,  
 և փափագէր զոնէ թաղուածը տեսնել. և  
 երբ բացին զգերեզմանն և չգտան զբաղ-  
 ձալին, այլ աւելի եղաւ սուզն. ապա զինքը  
 միսիթարելու համար՝ տուին իրեն Տիրամօր  
 փայտեղէն պատկերը, զոր իր որդիացեալն  
 Յովհ. Աւետարանիչ՝ քանզակեր էր, և  
 ինքն Ա. Կոյսն զնելով իր հրեսաց վրայ՝  
 օրհներ էր: Այս արդարեւ Բաղձալի Պատ-  
 կերն՝ իրեն Բարթողիմեայ, և ապա իր  
 ձեռօք՝ զանձ եղաւ Հայոց: Վասն զի, այդ  
 Առաքեալդ նախ քարոզեր էր Արարիոյ և  
 Պարսից հարաւային կողմերը, և անկէ  
 մինչեւ ի Հնդկաստան գնացեր, Մատթէոսի  
 աւետարանին օրինակ մ'այլ հետը տա-

նելով<sup>1</sup>, (որ շատ ժամանակ վերջը հօնք գտնուեցաւ)։ յետ Ննջման կուսին և յետ նահատակութեան թագէոսի, յորդորանօք թովմայի իր Առաքելակցին, որպէս աւանդի, յանձն առաւ երթալ ի Հայս, և լրացընել անոր բարոզութիւնը։

Բարթողիմէոս ոչ միայն Հայոց աշխարհին արեւելեան և հարաւային կողմերում քարոզեր է, այլ և յարեւմտակողմն, ի Փոխոզիա և ի Լիկայոնիա, որը յետոյ աւելի մերձաւոր սահմանակից եղան Հայոց, Ռուբինեանց ժամանակ. բայց դարձեալ արեւելեան կողմէ մտաւ ի բնաշխարհին Հայոց, գալով ի Խորասանէ Պարսից. ուր՝ կրակապաշտ և արեւապաշտ մոգերու սնոտի պաշտամանց ատեն, (աւանդէ մեր Խորենացին եւա), թէ զԱ. Տիրամօր Պատկերն արեգական դէմ բըռնելով՝ խաւարեցուց. բայց մոգքն դարձեալ իրենց հին մթան մէջ մնացին, միայն ութ հոգի հաւատացին մկրտուեցան, և Առաքելոյն հետ եկան ի Հայս։ Նախ՝ վասպուրական աշխարհի Վանայ արեւմտեան հարաւակողմն, Ոճաւացեաց զաւառը մտան,

1. Առոյգ համարուի այս բանս, որով և փաստ մ'այլ ընծայէ, թէ ինքն Բարթողիմէոս չէր զրած իր կողմանէ Աւետարան մի, ինչպէս կարծեր են ոմանթ, և անվաւեր զբուած մ'այլ երեւցուցեր են, իւրեւ Աւետարան Բարթողիմէայ Առաքելոյ։

որ իր բարոտ երկրին անձաւներուն (Քարայր) համար՝ այսպէս կոչուած է։ Հօն կային Անահտայ և ուրիշ սնոտեաց պատկերը և պաշտօնեայք, որը ժողովուրով վախցընելու և մոլորցընելու համար, այդ անձաւաց միջոց բոցարձակ կրակ վառած՝ դարբնաց նման մնձամեծ կռաններով բարեր ու երկաթէ սալեր զարնելով, ահաւոր ձայներ հանէին. և ասոր համար տեղն այլ Դարբնաց քար կոչուած է։ Այս տեղ այլ Առաքեալն՝ Տիրամօր պատկերով լուցուց որոտմունքները, փշրեց Անահտայ և կրակի կուռքերն և բազինները, հալածեց անհաւան պաշտօնեանները (և զդիս, ըստ պատմչին), և փոքրիկ խաչ մի կանգնեց լերան մի վրայ. զոր յետոյ Ա. Գր. Լուսաւորիչ գտաւ և հետը կրէր, և վերջը դրուեցաւ Տրդատ թագաւորի գերեզմանի վրայ։ Իրմէ առաջ Ա. Հոփիսիմեանք այլ եկեր էին այս կողմերս, Տիրամօր պատկերը պատուելու։ Բարթողիմէոս փոքրիկ եկեղեցի մ'այլ շինեց բարուփոր տեղը. « Իւրովք իսկ ձեռօքն շինեալ եկեղեցի « փոքրագոյն, և անուանեաց զնա Ա. Աս « տուածածին, և եղ ի նմա զՊատկեր « Տիրուհւոյն. և տայ զնա ստրիկանեց » , ի պահել և պատուել զտեղին. որ յետոյ եղաւ հոչակաւոր Հոգեաց վանք կոչուածն, եղաւ հոչակաւոր Հոգեաց վանք կոչուածն,

և աթոռ բարձրագահ եպիսկոպոսի, և մեր  
աշխարհի ուխտատեղեաց մի նշանաւորն,  
և մինչեւ հիմայ պատուի թէ և շատ  
անշքացեալ : Իսկ Պատկեր Տիրունոյն  
տեղէ տեղ փոխադրեցաւ, երբեմն ծած-  
կուելով երբեմն յայտնուելով:

Զատ յուխտատեղոյն՝ զիտելի է Առա-  
քելոյն՝ զայն յանձնելը կանանց, որը և  
անուամբ յիշուին. զլխաւորն Մարիամ՝  
իբրեւ մայրապետ, որ Յուսիկ կամ Յուս-  
հատ անուամբ նշանաւոր մէկու՝ զուցէ և  
մոզի մի՝ բոյր էր. թերեւս և յիշեալ  
Մաքօր կամ Մաքովար և Որմղատ եղ-  
բարքն՝ նոյնպէս մոզք էին, հաւատացեալը.  
որոց քորքն Աննա և Մարրա ընկերացան  
Մարեմայ, հանգերծ այլովք, ի պահպա-  
նութիւն Պատկերին. և իբենց յաջորդեցին  
այլ կուսանք և հաւատաւոր կանայք,  
մինչեւ ի ժամանակս Լուսաւորչի: Անտա-  
րակոյս քահանայք այլ կային անոնց մօտ՝  
զիբենք հոգալու, և ծածկաբար պատարագ  
մատուցանելու. որչափ այլ ծածուկ էր՝ և  
իբրեւ նշոյլ փոքրիկ առկայծեալ ճրազի,  
սակայն վառ մնաց քրիստոնէութիւնն այդ  
մթին քարանձաւաց մէջ այն մթնշաղ երեք  
առաջին դարերում:

Ըստ ոմանց, յառաջ քան այս կողմերս  
գալու՝ յարեւելից զալով Բարթողիմէոս՝

անցեր էր Երասի գետէն զատ յայլոց ի  
Գողրն<sup>1</sup> զաւառ Ալինեաց. ուր՝ յաւանն  
Ազուլիս շատք հաւատացին ի Քրիստոս.  
և շինեց հօն եկեղեցի և անուանեց Տեռնե-  
լինդ-առաջ, ըստ աւանդութեան տեղացեաց.  
իբր թէ՝ առաջին եղած ըլլան ընդ առաջ  
ելնելու Քրիստոսի հաւատովք. անոնց մէջ  
էին և տեղույն զլխաւորն կամ իշխանն՝  
Շար կամ Շարիք անուն, կինն՝ Նշնա և  
որդին՝ Խորսով, և թռոն՝ Վահան:  
Նոյնպէս շատեր հաւատացին և ի Վահանդ  
զաւառի, ուր շինեց մեծ եկեղեցի մի, որ  
և յետոյ եղաւ անուանի վանք և ուխտ  
և եպիսկոպոսարան, յանուն Ա. Թովմայի:  
Այս տեղ յիշուի վախճանած Լուսիկ, մի  
յաշակերտաց Առաքելոյն, զուցէ մի ի մո-  
գուցն հաւատացելոց և եկելոց ի Խորասանէ.  
որպիսի էր և կումսի Պարսից Խուժաստան  
աշխարհէն եկածն ընդ Բարթողիմեայ, զոր  
վերակացու և հովիւ կարգեց նա բոլոր  
այս կողմանց, որ է ըսել եպիսկոպոս:  
Սա երկար տարիներ իր տեսչութիւնը  
կատարած կ'ըսուի. և իբեն յաջորդեր է  
Խուժիկն Բարելաս<sup>2</sup>. ասոր այլ՝ Մուշե.

1. Մեր հին Աւետարանաց յառաջարանը Մատթէոս  
Աւետարանչի համար կ'ըսեն ի Գողթն եւս քարոզած,  
բայց ոչ Ալինեաց զաւառը կ'իմանան, այլ Պարթեւաց  
կողմերուն, և շատն Գաղրեան զըն:

2. Ստեփան Օրպել. Ա. 2:

ասոր այլ (թուի ոչ անընդմէջ) Միսիրար,  
ի կէս Բ գարու:

Իսկ ինքն Առաքեալն Քարթողիմէոս՝  
երեւի անդադար երթալ ու զալ այս և  
ուրիշ կողմեր. և դառնալ անզամ մ' այլ,  
յԱղբագ գաւառ, Վանայ հարաւակողմն. և  
հօն, կ'ըսուի, աշակերտած ի Քրիստոս՝  
այն նախայիշեալ Աշազուհի կամ Ողուհի  
տիկինը, որ արքայազարմ ըլլալով՝ իր  
համբաւն հասեր էր, ըստ ոմանց, առ  
Սանարուկ, և սորա հրամանաւ նահատաւ  
կուած. հետն այլ Տերենտ հազարապետն,  
որ զտիկինը մոլորցընելու համար եկած  
էր, բայց ինքն հաւատաց ի Քրիստոս:  
Ըստ այլոց, որ աւելի հաւանական երեւի,  
այն զաւառի և նահանգի իշխողին հրա-  
մանաւ նահատակուեր է, ինչպէս և ինքն  
բազմարդիւն Առաքեալն:

Ամէն եկեղեցագիրը և վկայագիրը՝ պատ-  
մեն սորա կատարածը, բայց ոչ նմա-  
նապէս. սակայն ամենքն այլ հաւանին  
որ նահատակուած է ի Հայաստան. նա-  
հատակողն այլ ոմանը կոչեն օտարալուր  
կամ աւրուած անուամբ՝ Պողիմիս. Ասոր-  
ոց վկայաբանութեանց մէջ Աշարագարի  
այլ կոչուած է թագաւորն և եղբայր  
Ամդանակ թագաւորի: Նահատակութեան  
տեղն՝ որ Բարմա այլ կոչուած է, բաւական

յայտնի է, Ազրակայ կողմերում. թերեւս  
այս անուան մէկ տառը փոխելով՝ յոյն և  
լատին գրիչը Ալրանուպօլիս՝ գրեն, յորմէ  
առնելով և Խորենացի և այլք՝ մերձաւո-  
րապէս Արեւրանու կոչեն կամ Ուրբանու  
և Ուրբիանու, կամ Ուրբանուպօլիս. Ասո-  
րին՝ Արվոն գրած է, անշուշտ արեւ բառէն:  
Եատ հաւանութեամբ՝ տեղս Հայոց ծանօթ  
փոքր ի շատէ Արծրունեաց նախարարին  
ոստան կամ իշխանանիստ Հաղանկերտն  
է, հիմայ Պաշ զալէ. ուր շինեցաւ և  
ինչուան հիմայ պատուի ի Հայոց և ի  
Քաղղէացոց՝ ուխտատեղի եկեղեցի<sup>2</sup>: —  
Առաքելոյն նահատակութեան կերպն այլ-  
եւայլ օրինակաւ կ'ըսեն կամ կարծեն.  
ոմանը՝ խաչուած, ոմանը՝ մորթեզերծ  
եղած, այսինքն ողջ ողջ մարմնոյն մորթը  
քերթեր հաներ են. զոր Առաքեալն՝ լնծայ  
տուաւ Քրիստոսի, կ'ըսէ զովասանելով՝  
Ա. Օգոստինոս. այլ երկուքն այլ ստոյգ է,  
զի նախ մորթեզերծ ըրին ապա խաչեցին:  
Գանձասաց խաչատուր վարդապետն երգէ.

1. Ոմանը կորբանուպօլիս գրած են:
2. Այս ամեն աւանդութիւններն այլ յարմարապէս  
միացընեն Յայսմաւորը (ոմանը). «Բարթող. զնաց  
յԱղբակ, ուր մորթն հանաւ տիկ և ոչ մեռաւ. յետ  
«այսորիկ ի խաչ հանին, և ոչ այսու կատարեցաւ. և  
«ապա արք վեց՝ ըըթով հարթն զնա, և այսու կատարե-  
«ցաւ», Վասիլեան յոյն Յայսմաւորըն կ'ըսէ յԱրարատ  
հահատակուած, նետահար ըլլալով:

« Քարգողիմոս յԱղբակ ըմթանայ  
« Զմորթը նամեհալ՝ ի խաչ վերանայ » :

Ճառընտրաց վկայաբանութեան մէջ  
զրուի, թէ յետ չարչարանաց՝ արձակ  
թողուած ըլլայ և ազօթելով զհոգին աւան-  
դած : Նահատակութեան տեղին եղաւ իր  
թաղմանն այլ, ուսկից՝ երեք կամ չորս դար  
յիտոյ. Ա. Մարութա առեր և փոխադրեր  
է զմարմինն՝ իր Մարտիրոսաց քաղաքը,  
այն է Նիֆրերո (Միւֆարդին):

Օտարոտի իմն պատմեն արեւմտեացը,  
թէ, մարմինն տապանով նետեր են ի ծով.  
(ուսկից). և ալիք ծովուն քշեր տարեր են  
մինչեւ ի Լիվարեան կղզիս Սիկիլոյ.  
անտի՝ յթ դարու՝ փոխադրուեր է ի Բե-  
նեւենդ, աստի այլ ի Հռոմ, ուր պատուի  
մեծ եկեղեցեաւ<sup>1</sup>:

Վկայագիրը մեր՝ Աանատըրկոյ թա-  
գաւորութեան 29<sup>ր</sup> տարին եկած զրեն

1. Գանուեւ և մեր Յայսմաւուրաց (ոչ ամենուն) մէջ  
այլ, այս յիշատակու, և բաւական վայելուչ զրուած, (ի  
14 նաւասարդն, Օգոստոս 26). որը իբրև հատաքրքրա-  
կան՝ զնեմք. « Ո՞րպէս սբանչելի է Աստուած ի Առորս  
« իւր. յաջողակ ժամ է և ինձ վերազոչել, որ պատմել  
« նախ յօժարիմ զգարմանալի և զզարհուրելի նշանա-  
« գործութիւնն Ա. Առաքելոյն Բարդողոմէոսի, ի զանա-  
« զան քաղաքան և ի զաւասոս, յայտնապէտ զանուն Տեառն  
« մարդկան քարոզեաց. և խաչեցաւ ի Հայք՝ յարեւելու:  
« Զսա ստորեղին ի տապանի քարեղին՝ որը ի վախճանի  
« իւրում անդ հաւատացեալը գտան, ի յՈւրանուպօլիս.  
« և քանզի սուրբ տապանն այն մշտահոս բժշկութիւն

զբարթող. ի Մեծ Հայս. շատ ստոյգ չէ  
թուականն, բայց թուի Քրիստոսի 50-  
60ին: Այդ որպէս և ըլլայ, մեծ և փառա-  
ւոր է թէ իր անձին թէ մեր եկեղեցւոյ՝  
Ա. Բարթողիմէոսի առաքելութիւնն, նահա-  
տակութիւնն և երախտիքն, և արժանապէս  
յարգանօր տօնուի ի մերայոցս, այլ և յօտար  
ազգաց քրիստոնէից. և ինչպէս Ա. Թա-  
ղէոսի նահատակութեան տեղն նախապա-  
տիւ արքեպիսկոպոսական աթոռ եղած է

« բաշնէր, ընթանային ժողովուրդը բազումը՝ որը ի  
« ձևանդութիւնս էին, և ազատէին ի տրամացուցանող  
« իւրեանց ախտիցն, և հաւատային ի Քրիստոս Արդ,  
« զայս տեսանելով բանարկուեն սպասարքներ՝ մոլեզ-  
« նէին ընդդէմ աստուածային տապանին այնմիկ. որ և  
« առեալ ընկեցն քտապանն և զԱրքոյն մարմինն ի ծով  
« անզր, հանգերծ այլ չորս եւս տապանօր սուրբ մար-  
« տիրոսաց. որոց անուանըն են այսորիկ Պատիհանս,  
« Լուչիանոս, Գրիգորիոս և Ակակիոն. և բերեալ զտա-  
« պանսն՝ ծովուն՝ եկան ի կղզին որ կոչեւր Ախտարի,  
« և անդ յարմարեցաւ. իսկ սուրբ մարտիրոսն իւրեւ  
« զհեա թագաւորի երթային՝ ուր և հաճեցաւ հանգչել  
« մեծ Առաքեալն. և անդ զնս թողին, և առ ժաման  
« յետ զարձան՝ ուր և իւրաքանչեւր ուրուց ընակել  
« հաճեցաւ աստածային նախախնամութիւնն. Ցայն-  
« ժամ Աղարոնի եպիսկոպոսի՝ (անշոշա Բ Աղաթոն  
« եպիսկոպոսն է Լիպարենա, Զ դարու վերջին քառորդին,  
« որով կ'իմացով Ա. Բարթ. մարմոյ աւանդեալ զալըս-  
« տեան ժամանակն), որ զեպիսկոպոսարանն զուարթապէս  
« ուզզէր, աստուածային Առաքեալն զինքն յիշեցուցանէր  
« երեւամար. առ ժամայն փութացաւ ի տեղին. և իւրեւ  
« ետեւ զմեծ և զանաւոր նշանն՝ սքանչացմամբ լցեալ  
« և փոխանակ քարքանէր. Ուստի քեզ այսչափ զուարթ  
« հարստութիւնս եղեւ, ով Լիպարիա. բազում ստու-  
« զապէս ցնծացար, և առաւելապէս փառաւորեցար.  
« պարեալ և խայտա՛. ընկալ իւրական ձեռօթ, և կոչեաւ

Հայոց քահանայապետութեան, այսպէս և  
Ս. Բարթողիմէոսի, որ և իր անուամբ իսկ  
կոչուի, յԱղբագ (Զիմայ Ալպաղ) գաւառի,  
թէ և առաջինին պէս շատ չի յիշուիր:  
ԺԴ գարու սկիզբները (1321) Յովհաննէս  
իթ պապն Հռովմայ՝ զիր գրած է առ Յա-  
կովը, ժամանակին արքեպիսկոպոսն, մինչև  
ԺԶ գար յիշուին քանի մի եպիսկոպոսը  
ևս: Իսկ եկեղեցիք յանուն Բարթող. ոչ  
միայն ի Հայոց<sup>1</sup> այլ և յօտար աշխարհս

« առ նա, Բարի եկեր Տեսոն Առաքեալդ: Զայսոսիկ  
« և այլս ոչ սակաւս եպիսկոպոսն առ նա տասցեալ, և  
« զովեալ զԱռաքեալն և զկզպին, հանգոյց զրանն: Եւ  
« զի հարկ էր զատուածային տապանն կացուանել ի  
« նշանաւոր տեղուց, յորում և տաճար շինել հանդեր-  
« ժեալ էր ի փառս ամենազով Առաքելոյն. եղեալ անդ  
« զատպանն սուրբ, որ և առժամայն բազում և անչափ  
« բժշկութիւնն արար ի հիւանդու և ախտաժառ և ի  
« զիւհարս, հանապազօր: — Եւ յետ անցանելոյ բա-  
« զում ժամանակաց՝ յաւուր թէոփիլոսի թագաւորի,  
« վասն բազում մեղաց մերոց՝ տեսալ Հայութիւն  
« զամենայն կզզին Լիմպարիու, զի ոչ մեաց մարդ ոչ մի.  
« և իշխանն Պինսւենդոյ զիւէր և լոււեալ էր զրան-  
« չելիս Առաքելոյն, և վասն չերմ հաւատոցն զոր եւայր  
« առ սուրբն, առաքեաց արս նաւօր ի բազարն Մայքիան  
« (Ամալֆի), և ետ բազում ինչու, և աղաչեաց զի երթեալ  
« առցեն զմեծ զանձն անզին. զոր և արարին: Եւ իշխանս  
« այս իրեւ լոււաւ եթէ զայ տապանն հետ ի ծովին,  
« առ զեպիսկոպոս տեղւոյն և զամենայն կղերիկոսն և  
« զժողովուրդն. և զնացին ընդ առաջ մինչեւ ի բազարն  
« Պինիմնդ. և եղ ի զեղեցիկ տեղուց: Եւ առնէ միշտ  
« ողջութիւն հաւատացելոց. ի փառս Քրիստոսի Առ-  
« տուծոյ»:

1. Ի կէս ԺԷ գարու յիշուի Ս. Բարդողիմէոս եկեղեցի  
Հայոց ի Զմիւռնիա:

շինուած են ի Հայոց. նշանաւորն, ոչ  
մեծութեամբ, այլ հնութեամբ՝ Ճենովային  
է, 1308ին շինուած, կիլիկիայէն գաղթող  
միանձանց ձեռքով, և եղած է զլիսաւոր  
վանատանց Հայ Եղբարց Խտալիոյ. Սրբոյն  
նշխարբներէն այլ մաս մի ունենալով,  
հաւանօրէն հետերնին բերած իրենց երկրէն.  
ինչուան հիմայ շէն է այս եկեղեցին, և  
շատ հոչակուած, Քրիստոսի Դաստառակն  
հօն պահուելուն համար մեծ յարգութեամբ<sup>1</sup>:

1. Ծիծաղական և այլ աւելի նուաստ աւանդութիւն  
մի յիշէ Գուռնեբոր փանկ երեւելի ճանապարհազիւն  
մի դարու. Հայոց՝ Յիսուսի Մամեռքեան առասպել  
Աւետարանի մէջ զրուած. թէ, օր մի Յիսուս Թագէոսի  
և Բարթողիմէոսի հետ յրսի զնացեր են ի Հայս, և  
կաթաւներ որսացեր են, բայց տեղացից վրայ համնելով  
ինքն փախչի, Առաքեալցն բռնուին: Երկու Առաքելոց  
զուգութեան յիշատակին համար ի Հայոց յիշեցինը զայս:

## Դ.

Երկու եւս Առաքեալք հիմունք Եկեղեցւոյ Հայոց՝ Յուլիա Յակովեսոն եւ Սիմոն Կանանացի: Քարոզութիւն այլոց Առաքելոց եւ Աշակերտաց ի Հայս:

**Մ**եր երկու գլխաւոր քարոզիչ Առաքեալքն և իրենց աշակերտքն, ինչպէս տեսանք, Հայոց աշխարհին արեւելեան և հարաւային կողմերը լուսաւորեր են. այս յետին կողմս եկած են և այլ զոյգ մի Առաքելոց Քրիստոսի ձեռասուն սանուց, որը և ազգականք և եղբայրազիր Աստուածամարդոյն, Եղբայր Տեսան անուանեալք. որոց գլխաւորն է Յորդայն Յակովիթեան, Ա. Աստուածամօր քեռորդին, և մի ի հեղինակաց Նոր Լուակարանի, այսինքն կաթողիկեաց վերջին (Խօթներորդ) թուղթը գրողն. յորում ինքնին ծանուցանէ որ եղբայր էր Փոքր Յակովը կոչուած Առաքելոյն, վասն որոշելոյ ի Մեծէն՝ որ է եղբայրն Յովհաննու Աւետարանչի: Այս Յուղա երկու տարրեր անուններով այլ ճանչցուի, թաղէ և Ղերես, որոց պատ-

ճառն ծանօթ չէ ինձ. միայն առջի յիշուած Աղդէներն այլ նորէն յիշելով՝ կարծիք մի գայ, թէ այդ անունն՝ որոյ համաձայն ասորերէն բառ մի գովուրիւն նշանակէ, զուցէ իրենց իրբեւ գովելի պատուանուն մի տրուած ըլլայ: Յուղայի և Յակովայ միւս եղբայր մի էր Շմատն կամ Սիմոն, երկուքն այլ Երուսաղեմի եպիսկոպոսական աթոռը նստան, և փառաւորապէս նահատակուեցան: Իսկ մեր լուսաւորութեան գործակիցն՝ իր համանուն նախաքարոզ Թաղէոսի նման, նախ յԱսորիս և ի Միջագետս քարոզած է, և այն կողմերէն մտեր ի Հայս, ի մէջ կործայից նահանգին և Պարսկահայոց: Մեր պատմիչը, Յայսմաւուրը և Վկայագիրը միաբան և անտարակոյս կ'ըսեն, թէ, սա յիշեալ կողմերէն յառաջ գալով՝ եկեր է յԱղբագ գաւառ, և հօն հանդիպեր է Բարթողիմէոս Առաքելոյ՝ յԱրտաշ կամ Արտաշատ (ոչ մեծ մայրաքաղաքն) կոչուած տեղ մի, և շատուրախացեր են իրարու հանդիպման. որոյ յիշատակի համար մօտիկ բլոյ մի վըայ խաչ մի քանդակեն ի վիմի, թուի թէ և արձանազրեն. տեղին կոչուի Օրեաց խաչ, իբր թէ հօն օթեվաներ դաղբեր են օր մի կամ օրեր, և իրենց ուխտատեղի պատուած է: Այս դիալուածը նշանակեն Յայսմաւուրը

ի չորս քաղցոց ամսոյ (գեկտիմբերի 12)։ և պատահած է առաջին անգամ Բարթողիմէոսի զալուն յԱղբագ, և ոչ ի նահատակովեան ժամանակին։ — Յուղաքաժնուելով իրմէ եկեր է յԱրմի գլխաւոր քաղաք Պարսկահայոց, և անոր մօտերն ու համանուն ծովակին բոլորտիքը քարոզեր և լուսաւորեր է երկար տարիներ, շատ հալածանք կրելով. և եթէ աւելի հեռու այլ գնացեր է, բայց դարձեալ նոյն (Որմեայ) կողմերը զալով՝ հօն այլ նահատակուեր է. և այն տեղ մինչեւ հիմայ պատուի ի Հայոց և յԱսորւոց կամ Քաղղէացւոց։ Հայք՝ մի իրենց չորս առաքելական եկեղեցւոյ հիմանց համարին զնա և պատուեն, որպէս և յիշեալ սեմականքն. և շատ օտար երեւի ումանց կարծիքն, թէ՝ ի Ներիսու կոչուած տեղ մի նահատակուած ըլլայ, կամ ի Պերիրոս Փինիկիոյ, որ է այժմու ծանօթ Պէրութն<sup>1</sup>։ Հայոց համարման մեծ նշան մ'այլ է Բարթողիմէոսի հետ նշանակուած ըլլալն իր տօնն փերը։

1. Կողմբիա Վեհաբագի՛ Երիտոն կամ Երիկտոն քաղաք կոչէ տեղը իր բերդուածոյ մէջ, բայց ի Հայատան համարի. Et apud Armenos Ericone sub urbe sepultus: Illa sepulta mense novembris erat. Գրիգոր Անաւարզեցի իր Յայսմաւուրաց մէջ օտարանուն տեղ մի յիշէ, ի Ռեստիկ, ի Բողեսիոն? բայց յԱրտաս գաւառի.

16, և դեկտ. 12, կամ այս թուոց մօտօր մի։

Չորրորդ հիմն մեր եկեղեցւոյ կոչուածն է դարձեալ մին յերկոտասան Առաքելոց, Սիմովին կախանացի, քաղաքակից Բարթողիմեայ, և որ նախանձայոյզ մականուանի յաւետարանս։ Եթէ ստոյգ են այլեւայլ թուղթը Արգարու. զոր և Խորենացի ի մէջ բերէ, (Բ, 1.9) զած առ թագաւորս և իշխանս սահմանակիցս Հայոց, սա նախի կողմանս Ասորեստանի և Բարելոնի քարոզեր է, ապա ի Պարսս և ի Հայս։ Խորենացի տարակուսի անձին կամ տեղոյն վրայ. « ԶՈՒմովնէ՝ որ Պարսիցն վիճակն « ցաւ՝ ոչ զհաւաստին կարեմ պատմել, « եթէ զինչ զործեաց և կամ ուր կատա « բեցաւ. քանզի պատմի յումանց, Սիմովնի « ուրումն Առաքելոյ կատարիլ ի Վերիսու « փորայ. և թէ նա իցէ ճշմարտիւ և թէ « է՛ր աղազաւ զալուստ նորին անդր, ոչ « զիտեմ »։ Խորենացւոյ յիշեալ տեղը կ'իմանան կիմմերեան Վոսփոր կոչուածն, Սեւ ծովու եզերքն, ուր և թաղուած է՝ ըստ ոմանց՝ քարայրի մի մէջ։ Վաց պատմիչը այսպիսի անուն մի յիշեն (Պուտափոր) ի կողմանս Ալանաց, ուր քարոզեր է կ'ըսեն, Սիմոն, աւելի հաւանական է այլոց Նիկոփայա կամ Անաքովիսի կարծածն»

ի սահմանս Ավիխազաց և Եղերաց, մօտ  
ի հին Խօխումբալէ: Յիրաւի, շատ տարու-  
բերին կարծիք եկեղեցական պատմչաց՝  
Առաքելոց շրջազայութեան և վախճանած  
տեղեաց նկատմամբ. սակայն, զրեթէ ա-  
մենքն այլ ընդունին՝ որ Յուղա և Արմոն՝  
յարեւելս քարոզած են. իսկ Հայք՝ ինչպէս  
առաջնոյն հանգըստեան տեղը ցուցընեն,  
նոյնպէս երկրորդին համար այլ կ'աւան-  
դեն՝ որ նահատակուած և թաղուած է ի  
Ռուսաւան կամ Ռուսուդա քաղաքի՝ «ի  
«Թիկանց Որմեայ» . — որ կողմէն նայե-  
լով: Որմեայ արեւելեան կողմն չի յար-  
մարիր, զի մօտ է իր ծովն, այլ թուի  
յարեւմտակողմն կամ ի հարաւ: — Կանա-  
նացւոյն յիշատակն ի Յայսմաւուրս գրուի  
ի 17 ապրիլի. իսկ Լատինք թէ ասոր և  
թէ Յուղայի յիշատակը՝ զնեն ի 28 հոկ-  
տեմբերի:

Յիշուի դարձեալ, Յուղա անուամբ և  
Շապրիու կամ Շահրիու, Շապիու, մա-  
կանուամբ՝ Հայոց աւետարանիչ մ'այլ՝  
ի Յայսմաւուրս ոմանս և Միխայէլ պա-  
տրիարք ժամանակազրէն. նահատակու-  
թեան տեղն այլ՝ Խրար, ծանօթ և մեծ  
քաղաքն, Վանայ ծովուն արեւմտեան  
հիւսային եղերը. յԵօթանանից աշա-  
կերտաց Քրիստոսի համարին զսա յիշողըն.

բայց օտար ազգաց ծանօթ չէ. անունն  
կըրնայ շփոթել տուած ըլլալ, բայց նա-  
հատակութեան տեղն որոշուելով միւս  
Յուղայէ և Թաղէէ, ոչ է անհաւան՝ թէ  
որ և է անուամբ մէկն՝ վերոյիշելոց ատեն  
կամ քիչ վերջ եկած և քարոզած ըլլայ  
այդ նշանաւոր քաղաքին կողմերը:

Արդ, Հայք՝ ինչպէս տեսանք, իրենց  
եկեղեցւոյ չորս առաջին հիմունք ճանչնան  
զթաղես, Բարրողիմես, եռանունն Յուղա,  
(որ և Որդի Կղեռվայ կոչուի) և Այմես  
Կանանցի. երեքն Առաքեալք, միւսն հա-  
ւասարեալ և առաջնութեամբն նախաղաս:  
Ասոր և Բարթողիմեայ գովասան գանձա-  
սացն (Խաչատուր) երգին վերջին տան  
մէջ՝ առ Տիրամայրն ակնարկելով՝ յիշէ  
զասոնք, իրեն բարեխօսակից ընդունիւ՝  
ի պահպանութիւն Հայոց.

« Արքայուհի Դշխոյ անբծութեամբ,  
Հանճարասցանչ Հոգւոյն մաքրութեամբ,  
Ներջանունակ անբաժ միութեամբ.  
Ընդ քեզ առցես միջնորդ հաշտութեան  
Ըզթաղէսս պատուեալ Գեղարդեամբ,  
Զբարթողիմէսս զարմն ստուգութեամբ,  
Յուղա եղբայր Մեծին Յակոբայ,  
Եւ Շմաւոն՝ Բարի-նախանձ.

Հաղորդեալ վերին պարզեւաց.  
 Բայս չորս գետոց և չորս աթոռոց,  
 Նոյն և տարերց և չորից ծագաց:  
 Առօք մաղթեա զՈրդին բո զըթած՝  
 Խնամել զազզըս Հայաստանեայց.  
 Պահել զաթոռ սոցա պարագայց  
 Ի յաւիտեանս ժամանակաց »:

Ուրիշ քերդող մ'այլ (Ստեփանոս) յ'ձեւ  
 գարու, համառօտ կ'ըսէ.

« Այս չորեքումբք վիմօք հաստին  
 « Շինուածք մերոյ սուրբ հաւատըին »:

## Ե.

Այլ Առաքեալք եւ Աշակերտք աւետա-  
 րամիչք Հայոց.

Ա. Ս այս չորս զլիսաւոր Առաքելոց  
 և Աշակերտաց՝ որք քարոզած են ի Հայս,  
 և իրենց հօն վախճանելուն համար՝ սե-  
 փական համարուին մեր երկրին, կան  
 ուրիշ իրենց ընկերք այլ, որ մեր երկրին  
 սահմանաց մօտեցեր և կոխեր են: Ասոնց  
 զլիսաւորն է Առաքելոց զլիսոյն հարա-

զատն՝ Ա. Անդրեաս. որ՝ թէպէտ օտար  
 և հեռու երկրի մէջ նահատակուած է՝  
 խաչուելով, այլ արեւմտեան վախոյ հիւ-  
 սիսակողմն եղած է իր քարոզութեանց  
 ասպարէզն: Թորոքես վաեմական՝ որ  
 Առաքելոց քարոզութեանց տեղուանքը հե-  
 տարննութեամբ նշանակած է, կ'ըսէ Ան-  
 դրէի համար. « Բնդ ամենայն ծովեզրն  
 « Բիւթանացւոց և Պոնտացւոց և Թրա-  
 « կացւոց և Ակիթաց... յետոյ գնաց ի  
 « Սերաստացւոց քաղաք մեծ, ուր բնակ  
 « Արարացցոց և Փասիս գետ, ուր և  
 « ներքսագոյն Եթովպացւոց բնակեն »:  
 Ուրիշ եկեղեցական պատմիչք այլ վկա-  
 յեն, որպէս և մերայինք. այլ աւելի եւս  
 Վրացիք, որոց երկիրն աւելի մօտ է անոր  
 քարոզած տեղերուն: Բայց ոչ միայն  
 անոնց այցելութիւն ըրած է, այլ և մեր  
 թագաւորաց տիրած և Հայոց 15 աշխար-  
 հաց թուակից՝ Տայոց և Գուգարաց. ուր  
 և մինչեւ հիմայ իբրև իբրմէ տրուած յի-  
 շատակ մի՛ պատուի ի Գելաթի Վանս  
 Ա. Աստուածածնի հրաշագործ պատկերն.  
 նոյնպէս և ի Կողարչը գաւառ եկած է.  
 ուրիշ գաւառներէ եւս անցնելով՝ եկեր  
 գնացեր է յԵրուսաղէմ, և նորէն դարձեր,  
 կուր գետոյ աղքերավայր կող (հիմայ  
 կեօք) գաւառը մտեր, և անտի կովկասի

ընկալեալ՝ հաւանութեան՝ եթէ՝ Գլուխն  
Առաքելոց չէ մոտած ի բուն ի Մեծ Հայս,  
այլ մտեր և շրջեր է ի Փոքրն, ուր ոչ  
սակաւ էին այն ատեն եւս մերազգիք:

Չեմք յիշեր իրեն համապատիւ զլիսաւոր  
կոչուած՝ հեթանոսաց համատարած հայրն և  
Առաքեալն Պողոս, որոյ անզին Թուղթըն  
և Գործըն Առաքելոց՝ վկայեն իր քա-  
րոզութեանց անսահման սահմաններուն:  
Չմոռնանք և զԱյրոյն աշակերտ՝ զթով-  
հանենս, որ թէ և երկար տարիներ դազրեր  
է յԵփեսոս, այլ վկայուի մինչեւ ի Պար-  
թես գնացած և քարոզած ըլլալն, և նոյն  
իսկ իր սիրակաթ կաթողիկեայ Ա. թուղթն՝  
աւանդուի յոմանց հին եկեղեցազրաց՝ թէ  
ի սկզբան, կոչուէր Թուղը Պարրեւաց:  
Եթէ գնացեր է նա ի Պարթեւս, բնական  
և սովորական անցուղարձի ճամբայ մի  
չէր և Հայաստան:

Առաքելոց վիճակաւ ընտրուած Առա-  
քեալն Մատարիս այլ, ըստ վկայութեան  
Հարց ոմանց, և ըստ պատմչաց Վրաց՝ և  
իր աշակերտաց մէկն, Ա. Եւսիրիոս, Ասիոյ  
շատ կողմեր քարոզեր է և յետոյ ի Մե-  
լիաինէ Փոքր Հայոց նահատակուեր է,  
անցեր է ընդ կապազովկիա, կողքիս,  
Ճանէթ, ի գետահովիտ Ճորոխի, որ է  
ըսել մինչեւ ի սահմանս Հայոց: Ա. Հե-

Եռները կտրելով անցեր՝ բարեարոս ժո-  
ղովրդոց քարոզեր է. և վերադառնալով  
հուսկ յետոյ՝ Յունաց մէջ՝ յԱրայիս պը-  
սակուեր է ի խաչի և խաչը ներբողելով:

Ա. Թէոդորոսի Ամասիացւոց վկայաբա-  
նութեան մէջ, որ Խորենացւոյ զրչէն ելած  
ըսինք, կ'ըսուի, թէ յԱմասիա այլ քարո-  
զեր և իր տեղ Փիդիմոս անուամբ մէկն  
եպիսկոպոս դրեր է. ասկից ի Սինոպ  
անցնելով՝ այս տեղ այլ, ըստ Դորոթէոսի,  
եպիսկոպոս կարգեր է զՓիդիմոս, մի  
յԵփանամնիցն, աշակերտ Պողոսի Առա-  
քելոյ, որ և ողջունէ զսա ի թղթին առ  
Հոռոմայեցիս (ԺԶ, 15):

Աչ շատ հեռի այս կողմերէն՝ համարին  
շատ Ա. Հարք՝ եկած նա և զԱռաքելապետն  
Պիտրոս, մինչեւ ի Սինոպ, և քարոզած  
այն ամեն աշխարհաց և ազգաց՝ առ որս  
զրէ իր Ա. Կաթողիկեայ թուղթը, իրեւ  
իրեն ծանօթից. «Որ ի սփիւռս Պիտացւոց,  
« Գալատացւոց և Կապատովկիացւոց և  
« Ասիացւոց և Բիւրանացւոց»: Ասպեկտական  
անուանեալ կանոնաց վերջն այլ զրուած  
է. «Ընկալաւ ձեռնազրութիւն քահանայու-  
« թեան յԱռաքելոցն, Անտիոք և ամենայն  
« Արքիա և Կիւլիկիա և Գաղատիա մինչեւ  
« ցՊոնտոս, ի Սիմովին Վիմե, զի նա եղ  
« կանոնս եկեղեցւոյ», և այլն: ըստ այսմ

բոնիմոս կ'ըսէ (ի Յանկի Եկեղեցական  
մատենագրաց), թէ եկեր է նա ի միւս  
Երովայիս, ուր վիժեն Ապարոս և Հիւսիս  
գետը<sup>1</sup> (որ համարուեն Ճորոխի մէկ ճիւղն  
և Սիւրմէնէի գետն), և ասոնք Խաղաղեաց  
երկրում կու վիստան, որ մասամբ կամ  
բոլորովին կոչուէր և Հայախաղտիք:

Փոքր Հայոց կողմէրը լուսաւորողաց  
մէկն այլ համարուի հարիւրապետն այն՝  
որ զինուորական խիզախամամբ տիգախոց  
ըրաւ՝ մեր այն ինչ հոգին աւանդած ֆըր-  
կիչը. այն է Լոնգինոս կամ Պունիխանու,  
և Քրիստոսի կողին հետ իր հոգւոյն աչքը<sup>2</sup>  
բացաւ, և աշակերտաց կարգն անցաւ.  
Կեսարիոյ մայրաքաղաքին մէջ նահատա-  
կուած ճանչցուի:

Յետ այսքան աւետարանչաց ճշմարտու-  
թեան ի Հայոց, յիշենք և զնա՝ որ կերպով  
մի առաջինն եղաւ, զթաղէոս և Բարթո-  
ղիմէոս յորդումամբ հօն զրկելով. այն է  
Առաքեալն Թուվմաս. առ որ, ինքն Տէրն  
մեր զերազոյն կերպով բացաւ իր կողը,  
և անոր յանդիմանութեամբ պատուիրածը  
«Մի՛ լինիր անհաւատ, այլ հաւատա-  
«ցեալ», արդեամբ այլ կատարեց, թէ  
մեզ համար այդ առաքելակիցները զրկելով,

1. In altera Ethiopia ubi et irruptio Apsari  
et Hyssi.

և թէ ինքնին բարոզութեամբը մինչեւ ի  
Հնդկաստան, ուր և նահատակեցաւ. բայց  
նախ իրեն վիճակ ընկաւ կամ ընտրեց՝  
Պարթեւաց երկիրը, ըստ Եւսեբիոսի (Գ. Ա.).  
իսկ Որոգինէս՝ կորոշէ, զԱրեւմտեան Պար-  
թեւա ըսելով, Տիգրիսի և Եփրատայ միջոց,  
յորում են և Հայք. թէ և ինքն մտած  
չըլլայ ի Հայս, բայց Հայք զինքն այլ  
յարգեն վերոյիշելոց հետ, և յանուն նորա  
աւանդեն Բարթողիմէոսի շինած Գողթան  
Վանանդայ Եկեղեցին, որ և մեծ ուխտա-  
տեղեաց մէկն եղած է, և պատուաւոր  
եպիսկոպոսական աթոռ. իր նշխարաց մեծ  
մասն մի եւս բերուած է ի Միջազգետաց՝  
ի գաւառն Ուշտունեաց, Վանայ ծովուն  
եզերքն:

Վերոյիշեալ Առաքելական կանոնաց  
վիճակագրութիւնն՝ որբան և վաւերական  
չհամարուի, այլ հաւանականութեամբն և  
հնութեամբ պատուի, զՀայո՛ ուրիշ քանի  
մի աշխարհաց հետ թաղէոսի վիճակ զրէ,  
իսկ Բարթողիմէոսի և Յուղայի և Աղեէի՝  
արեւելեան և հարաւային աշխարհները.  
այսպէս ըսելով (ըստ Զեռազրաց). «Ուոհա  
«և որ շուրջ զնովաւ քաղաքը, Մծրին,  
«և Արարիա և սահմանակալը Միջազե-  
«տաց և Հայք և ամենայն Հիւսիսի և  
«որ շուրջ զնորօք, ի թաղէոսէ Առաքե-

« լոյ՝ որ է մի յ' 72 Առաքելոցն, ընկալաւ  
 « (զձեռնաղբութիւն) . . . Պարսք և Մարք  
 « և Պարթեւը և ամենայն խուժաստան,  
 « և ամենայն որ շուրջ զնովաւ, և Բա-  
 « քելոն և Գիւղը (Գելը)` մինչեւ ի սահ-  
 « մանս Հնդկաց և մինչև ցԳոգ և Մագոգ,  
 « և զայլ աշխարհն որ շուրջ զկողմամբս  
 « և ամենայն Ասորեստան, ի սուրբ յԱ-  
 « ռաքելոց յայս, ի Բարթողովմէսէ և  
 « Յուղայէ և յԱգդէ կերպասազործէ » :

Այսքան յիշատակութիւններ ըրիստո-  
 նէութիւնը քարոզող Առաքելոց և Աշակեր-  
 տաց ի Հայո՝ շատ համարելով, անկարելի  
 է (թէ և ամենըն այլ անհակառակ ստոյգ  
 չըլլան) չխորհրդածել և չզարմանալ.  
 նախ, այդ ի սկզբան ուամիկ և տգէտ  
 մարգկան՝ այդքան եռանդեամբ և սրբազան  
 յանդրգնութեամբ՝ այնքան շատ և հեռաւոր  
 և կէս անծանօթ աշխարհներ և քաղաքներ  
 մտնել տարածուիլ. և չլսուած լեզուներ  
 լսել հասկանալ և հասկցընել, և այնքան  
 ազգեր (եթէ քիչ, եթէ շատ թուով) բոլո-  
 րովին նոր և աննման և լուրջ անպաճոյն  
 կրօնքի մի հաւտացընել. յորում (ինչպէս  
 սովորաբար կ'ըսուի), յայտնի երեւի մատն  
 Աստուծոյ, և կատարում Քրիստոսի խոստ-  
 ման, թէ՝ « Առջիք զօրութիւն ի բարձանց » ,

այսինքն, Հոգեոյն Արբոյ շնորհը, որպէս  
 և առին ի Վերնատանն, զգալի հրածեւ  
 լեզուօք. և վերջին պատուիրանին, որ և  
 վերջին խօսք՝ յերկրիս վրայ՝ անմիջապէս  
 յերկինս վերանալու վայրկենին, « Գնա-  
 « ցէք այսուհետեւ, աշակերտեցէք զամե-  
 « նայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա (և  
 « այլն), և ահաւասիկ ես ընդ ձեզ եմ  
 « զամենայն աւուրս, մինչև ի կատարած  
 « աշխարհի » : Խօսք՝ անձնաւոր ձշմար-  
 տութեան, հրաշալի՝ ճշմարտութեամբ կա-  
 տարուած և շարունակուած և շարունակելի.  
 զի ինըն Քրիստոս կնքեց, « մինչեւ ի կա-  
 « տարած աշխարհի » : Որչափ այլ մեր  
 նպատակն էր սոսկ պատմական եղածը  
 յիշել, անկարելի էր գրչի տակ զարմանաց  
 բռնութիւնը ճնշել. թող ընթեցողը ամ-  
 փոփեն կամ ընդարձակեն զարմանըը. այն  
 զարմանը՝ զոր հազար տարի յառաջ քան  
 զմարդեղութիւն Քրիստոսի՝ հնչեցուցեր էր  
 Դաւիթ՝ մարգարէական քնարովը. « Ընդ  
 « ամենայն երկիր՝ ել բարբառ նոցա,  
 « մինչև ի ծագս աշխարհի են խօսք նոցա  
 « (Առաքելոց) » :

Երկրորդ խորհրդածութիւն մ'այլ նոյն-  
 պէս մեզ զժուար է արգելուլ, զի և յատուի-  
 է մեզ ազգայնոցս. և է, այսքան Առա-  
 քելոց՝ զրեթէ կէսին՝ և Աշակերտաց այլ

ոմանց, գալ մտնել քարոզել ի հայրենիս  
մեր և ի սահմանակից աշխարհս: կոստան-  
դին Ա. կաթողիկոս՝ առ Հեթում թագաւոր  
զրած թղթին մէջ (1247ին), չեշտելով մի  
մի յիշեցընէ, թէ՝ « Հինգ Առաքեալք ի  
« յԵրկոտասանիցն և երեք յԵօթանաս-  
նիցն՝ ի Հայք կան »:

Ասոր համար ոչ պարզապէս պէտք է  
պատկառանօք, այլ և խոնարհութեամբ և  
երախտագիտութեամբ գոհութիւն և փառք  
մատուցանել Աստուծոյ. որ՝ ինչպէս իր  
նախախնամութիւնն՝ ի սկզբան մարդկու-  
թեան երեւցոց մեր երկրին վրայ, այսպէս  
և ի վերանորոգման հոգեւոր մարդուն՝  
ըրիստոնէութեամբ, այսքան առատապէս  
աւետարանի լուսոյ ճառագայթները սփոցց  
հօն, և շուտով, և շատ դարերով յառաջ  
քան այժմու երրոպացի լուսաւոր կոչուած  
երկրի և ազգաց վրայ: — Այս բանս  
կ'առաջնորդէ երրորդ խորհըրդածութեան  
մի. այս ինքն, եթէ այդքան քարոզու-  
թիւնը եղան ի Հայս ի սկզբան ըրիստո-  
նէութեան, ինչո՞ւ Հայոց լուսաւորութեան  
իրը հեղինակ զԱ. Գրիգոր ճանչնանք,  
զրեթէ երեք դար յետ Քրիստոսի: Ի՞նչ  
եղաւ ի Հայս՝ այնքան վառ ի վառ առա-  
քելական ճարագներու Լոյսն. ի՞նչ եղաւ  
Հուրին այն՝ զոր եկաւ Քրիստոս արկանել

յերկիր, և արկ յերկիրս Հայոց, ի ձեռն  
իր Առաքելոցն և Աշակերտաց: — Հարկ  
է ցաւօք խոստովանիլ, որ՝ թշնամին լուսոյ,  
մոլորութիւնը, հնաւանդ սովորութիւնը,  
հալածանը ի կոապաշտ թագաւորաց ազգիս  
և ի Հոռվմայեցւոց, (երբեմն թշնամեաց և  
երբեմն բարեկամաց Հայոց), այնպէս ըրին,  
Աստուծոյ թոյլոտուութեամբ, ինչպէս ուրիշ  
աշխարհաց մէջ. սակայն ինչպէս այն տե-  
ղուանը՝ եթէ խափանեցաւ՝ այլ ոչ մա-  
րեցաւ Հուրին և Լոյսն Քրիստոսի, անհնար  
էր՝ (ստիպուիմք ըսելու) թէ մարեր և  
ի Հայս. և հճա, ինչպէս պիտի յիշենք  
ըիչ յետոյ, ոչ միայն երբեմն երբեմն  
երեւեցան նշոյլք լուսոյն և ջերմութիւն  
հրոյն ի սուրբ նահատակս՝ Մեծ և Փոքր  
Հայոց, և անոնց ազգային եպիսկոպոսք  
այլ յայտնուեցան, այլ նոյն ծածկեալ  
և առկայծեալ բայց արծարծեալ պըլ-  
պլուկը լուսոյն՝ փայլեցան մինչև Գրիգորի  
օրերն, յառաջ և յետ Լուսաւորութեան  
նորա, և' յարեւմտեան և' յարեւելեան  
Հայս: Ոչ ըրիստոնէութիւնն է պակսեր  
(թէ և նուազեր), այլ անոր յայտնութիւնն  
առ մեզ. պարզաբար ըսելով, պատմու-  
թիւնն: Եթէ հայ լեզուն իր զիրն այլ  
ունենար այն ատեն, կամ յունարէնն աւելի  
ծաւալած ըլլար ի Հայս. և մանաւանդ

այնքան հալածանք և աւերանք չըլլային  
ի Սասանեանց և անոնց համամիտ ուրացող  
ազգայնոց, շատ յուսավի էր որ պիտի  
գտուէին գեղեցիկ վկայաբանութիւնք՝ գե-  
ղեցկագոյն վկայից Հայոց: Գուցէ ժամա-  
նակաւ ինչ ինչ յայտնուի. չի յուսահա-  
տինք. այլ միմիթարուինք հիմայ քիչ շատ  
մեզի հասած ծանօթութեամբք:

Յետ այսմ ամենայնի, չորրորդ խոր-  
հըրդածութիւն մի եւս զրոէ զմիտս. թէ,  
միանգամայն աչքէ անցընելով ինչ որ  
տեսանք Առաքելոց գալլստեամբ և քարո-  
զութեամբ ի Հայո, կըրնայ մեր եկեղեցին  
այլ Առաքելական կոչուիլ: Այս բառս կամ  
իմաստն՝ կըրնայ աւելի կամ պակաս ըն-  
դարձակ իմացուիլ. ո՞ր չափն Հայոց եկե-  
ղեցւոյս պատշաճի: — Թողումք վճռել  
աստուածաբանից: Շատանամք առ այժմ  
Առաքելանորն ճանչնալով զայն, անգամ  
մի եւս խոստովանիլ, թէ, « Ոչ այսպէս  
« արար ամենայն ազգաց՝ Տէր », և ջերմ  
շնորհակալութեամբ երկըրպագել Քրիս-  
տոսի:

## Զ.

Նետք քրիստոնէութեան ի Հայս, յ'թ եւ  
յ'գ դարս. — Ուկեսնք եւ Սուքիսամնք եւ  
Այրարատեամն վկայք.

**Պ**րեթէ անտարակոյս է որ Աշակերտք  
Հայոց քարոզիչ Առաքելոց, մինչեւ ի վերջ  
Ա դարուն Քրիստոսի՝ շարունակէին զնոյն  
քարոզութիւն կամ զհովուութիւն բանաւոր  
հօտին Քրիստոսի: Որոշակի՝ Խուժիկ Բա-  
րելասայ համար ըսուած է թէ մինչեւ ի  
սկիզբն Բ դարու ապրեր է. բայց զեռ Ա  
դարու մէջ և նոյն իսկ Առաքելոց ատեն,  
մէկ քանի փառաւոր յիշատակը քրիստո-  
նէութեան և նահատակութեանց կան ի  
Հայս, զոր և տօնիւ հոչակէ եկեղեցի մեր  
տարուէ տարի, թէ և զիսուածոց ամեն  
պարագաներն բացայայտ չըլլան: Ասոնց  
գլխաւորք են, (աշխարհական բարեկենդա-  
նութեան եղանակին տօնուած և) վայելուչ  
քանի մի տուն շարականօք երգաբանեալ  
Առը վկայըն Ուկեանք և Առքիսաանք: —  
Առջինքն, ըստ պատմութեան Ճառընտ-  
րաց և Յայսմաւուրաց մերոց (որոց աղբերքն

յունարէն եղած են), ի կայսերաց չոռվմայ  
դեսպանը եկեր էին ի Հայս, հինգ անձինք՝  
զլիաւորն կոչուէր Խրիստի, որ յունարէն  
բառին նշանակութեամբ Ոսկի կոչուի հա-  
յերէն, բայց կարելի է համանշանակ լատին  
անունն ըլլար Ազրելիոս։ Յայսմաւուրաց  
մին՝ Խոսիկ զրէ անունը, և այր Գուհիկ,  
թուփ թէ Կրեք՝ յոյն անունը այնպէս լսեր  
է<sup>1</sup>։ Ասոնց կու հանդիպին Թաղէոսի աշա-  
կերտաց, և անոնց օտարոտի հագուստը  
տեսնելով՝ կասկածին և սկսին հարցընել  
ով և ուստի են. և լսելով ի Թաղէոսէ  
ստուգապէս՝ ով ըլլալն և Քրիստոսի վար-  
դապետութիւնը, երկբայելով՝ նշան մի  
կ'ուզեն. և մօտի լերան վրայ տեսնելով  
եղջերուներ, կ'ըսեն՝ որ կանչէ զանոնք  
կամ մէկ հատը. Թաղէոս կանչէ, կու գան.  
մէկը մորթեն և ուտեն. Թաղէոս՝ մորթը  
ոսկերաց վրայ ձգելով կ'ողջնցընէ և խաւոէ  
ընկերացը։ Եթէ ոչ այսպիսի հրաշքով մի՝  
սակայն Առաքելոյն որ և է քարոզութեամբը  
կու հաւատան ի Քրիստոս և մկրտուին.  
Խրիստի ձեռնադրուի քահանայ. ապա,

1. Աեր հին հեղինակ վկայարանութեան Առւբիառանց՝  
կ'ըսէ, Տատիանոս անուամբ մէկու մի զրուածէն առած,  
որ Յուստինիանոսի ժամանակն է եղեր, ի կողմանց  
Յունահայոց, որ թուփ Գ. Հայք։ Ուրիշ օրինակ մի փո-  
խանակ Յուստինիանոսի կայսեր զրէ, Վաղանդիանոս որ  
աւել յարմար էր ըլլալ Վաղիանոս, ի կէս Գ. դարու

փոխանակ զիրենը դեսպան խաւողաց  
դառնալու, կ'երթան յարցունիս մեր Ար-  
տաշէս Բ.ին. և յետ դեսպանութիւնը կա-  
տարելու, քրիստոնէութիւն այլ քարոզեն։  
Արտաշէս՝ կամ անոնց կայսեր կողմանէ  
գալուն պատկառելով, կամ իր անուշ ընա-  
ւորութեամբը՝ հանդարտորէն լսէ. բայց  
հիմայ զայդ ըննելու ատեն չունիմ, պա-  
տերազմի երթալու վրայ եմ, կ'ըսէ. անոնք  
այլ Սաթինիկ թագուհուց քարոզեն։ Ասոր  
քով գտուին իր Ալանաց ազգէն եկած  
պաշտօնեայք յարցունիս, յորոց 19 ան-  
ձինք կ'աշակերտին Ոսկեանց. զլիաւորնին  
Բահարդրաս կամ Բարաբար կոչուած է.  
որ յետ մկրտութեան կոչուի Սուրբիան,  
յորմէ և ընկերն Սուրբիասմէք։ Թագւոր-  
որդիքն՝ եռանդուն երիտասարդը՝ և իրենց  
հեթանոսական առասպելեաց սիրողը, մա-  
նաւանդ երկուքն՝ որ և դիմորոշ յօդիւ  
կոչուին վլոյց և Վեռյն, (և անշուշտ  
առաջինն է մեր հին բանաստեղծն Վլոյր  
կոչուած առ Խորենացւոյ), կու հալածեն  
զՈսկեանս։ Ասոնց երթալով՝ ինչուան  
հիմայ ծանօթ և ուխտական տեղ՝ Բա-  
գրեւանդ գաւառի սահմանները՝ Արածանի  
(Եփրատայ ճիւղին) աղբերականց մօտերը,  
երկար ատեն (ըստ ոմանց 43 տարի)  
ճգնաւորական կեանք կ'անցընեն։ իսկ

Առւրիասանք նեղուելով արքայորդուց յոր-  
դորանքէն՝ կու թողոն արքունիքը և զան  
Ոսկեանց քով, և հօն մկրտուին, « յակունս  
« Եփրատայ, ի ծաղկազարդ վայելչու-  
« թիւնսն », ըստ Շարականի մերոյ. որոց  
անուանքն յունարէն յիշուին՝ անշուշտ  
փոփոխելով, ինչպէս իրենց գլխաւորին՝  
Առւրիասայ<sup>1</sup>: Ատեն մի կենալով Ոսկեանց  
մօտ, յետոյ կ'երթան դէպ յարեւմուտք,  
իրենց գլխաւորին անուամբ Առւրաւիտ լերին  
ստորոտք, որ հիմայ յայլազգեաց կոչի  
Քեռու տաղ. տեղն՝ ջրոց առատութեան  
համար կոչուէր Զրարույիս կամ Զրարաշի.  
զի կ'աւանդուի թէ Ս. վկայըն երկար  
տարիներ (44-6) այն կողմեր կենան ըա-  
րայրներու մէջ՝ միայն խոտ ճարակելով,  
և կամ ասոր համար իրբե վայրի այծերու  
նմանելով՝ Քօյը կ'անուանին, կամ կիսա-  
մերկ մարմնին այծուց մազերու նման  
ծածկուելուն համար:

Անհանդարտ թագւորորդիքն կու զան  
նորէն նեղեն զՈսկեանս. և յորդորեն իրենց

1. Եւ են ըստ ճեռագրաց, երկրորդ գլխաւորն՝ Կու-  
տրափուս, Պօղոբառոս, Ղուկիսանսոս, Խդիսս, Սիւբերոն,  
այս երկու անուանն ի մի խառնած՝ ոմանց զրեն Դիոք-  
սիբերոն, Մեմաս կամ Մեմիսանսոս, կամ Մնաս, Փոկաս,  
Սերգիս կամ Ներզինոս, Գեմմար կամ Գոմես, Աղրիս-  
սոս, Յովսիմոս կամ Զոսիմոս, Բիկտոր, Թալելոս կամ  
Թալէսոս կամ Թալիսոս, Յորդանէս, Անաստաթէսոս, Թէզո-  
վասոս կամ Թէզողնիսոս, Յակովոսոս, Թէզոսոս.

ազգայինները՝ թողլու լեռները և դառնալու  
յարցունիս. և երբ ասոնք « անպարտելի  
« մնացին ի հրապուրանաց որդւոյ թա-  
« գաւորին », ըստ Շարականի, արքայոր-  
դիքն այլ սրակոտոր կ'ընեն զՈսկեանս,  
և չհամարձակելով Առւրիասանց այլ գոչիլ՝  
դառնան իրենց տեղ: Ոսկեանց նահատա-  
կութիւնն ի 19 սեպտեմբերի նշանակուած  
է: — Երկու կամ երեք տարի վերջը  
կ'ըլլայ իրենց աշկերտաց նահատակու-  
թիւնն, այս կերպով: Իրենց երկրէն ելած  
ատեն, կ'ըսուի, թէ՝ Ալանաց թագաւորն  
կոչուէր Շապուհ, որոյ յաջորդն Գիգիանոս  
կամ Գայիսանոս՝ յիշելով զբահաղբաս և  
ընկերները, շատ հարցոււփորձ կ'ընէ, զիտ-  
նալու թէ ուր զացեր, ի՞նչ եղեր են.  
պաշտօնէից մէկն՝ որ Սիոնէր կոչուի (միթէ  
Ոսկեհեր?), կ'իմացնէ՝ ի Հայաստան եր-  
թալինն՝ իրենց խնամի Աաթինկան քով.  
Գիգիան՝ խաւրէ Բառահանա անուամբ մէկը  
(որոյ անունն Գրախատ Աստուծոյ թարգմա-  
նուի, կ'ըսէ պատմիչն. ի՞նչ լեզուէ), որ  
յետ շատ որոնելու գտնէ Առւրերը, գոնէ  
անոնց մէկ քանին՝ նոր աշկերտներով.  
հարցընէ տեղեկանայ, որ անոնց գլխաւորն  
Բահաղբաս ողջ է հօն, այլ երկար ճգնա-  
ւորական վարուցն՝ այլակերպեալ անշը-  
քացեալ: կ'իմանայ անոնց կրօնը և

կեանքը, շատ յորդորէ որ դասնան իրենց հայրենիքը և հանգիստ ապրին, և երբ անոնք հաստատուն մնան ըրիստոնէութեան հաւատոց վրայ, բարկանալով՝ կզակնին սղմել տայ տանջանարանով, և յետ այլ և այլ չարչարանաց՝ սրակոտոր ընել, և մարմիննին այրել տայ, կամ, ըստ ոմանց՝ չորս չորս ցիցերու կապելով ողջ ողջ այրել։ Այս 19 վկայից հետ կան եղեր երկուք այլ՝ պատանիք, ի հարկէ նոր աշակերտը, որը վախնալով փախչին և պահուըտին. և յետ կատարման նահատակացն՝ կ'ելնեն ժողվեն անոնց ոսկորները, բարերով ծածկեն, և անուննին այլ գրեն։ — Զուտ անընդունելի աւանդութիւն մի՝ կ'ըսէ, թէ հրաշալի տեսլեամբ պատուէր կ'ըլլայ կոստանդիանոս կայսեր, որ կու գայ գոնէ անոնց նշխարները և պատուով թաղէ ի վկայարանի. և այս՝ կ'ըլլայ իրենց նահատակութենէն 230 տարի վերջը։ Եթէ կոստանդիանոսի ի Քրիստոս հաւատալէն 230 տարի առաջ երթըցուի՝ Քրիստոսի 80 թուականին մօտ կ'ըլլայ։

Ստուգագոյն է Ս. Գրիգոր Լուսաւորչի ձեռքով յայտնուիլն՝ թէ ասոնց նշխարաց և թէ Ոսկեանց, և երկուքին տեղն այլ վկայարաններ շինուիլն։ Սուբիսասանց տեղոյն առաջին վանահայր դնէ Լուսաւորիչն՝

Այսաւ անուամբ մէկը, ըստ ոմանց Աեաց, որ զուցէ մականունն ըլլայ։ Կ'աւանդէ Պատութիւնն, թէ Սուբիրըն նահատակութեան ատեն ինդրեցին յԱստուծոյ՝ որ այն տեղ առողջարար աղբիւր բղիէ, կամ եղած աղբերըն առողջարար ըլլան, և այնպէս եղան. իրենց ոռոգած կամ թրջած գետինն այլ պէս պայծառ գոյներով հողեր յերեւան հանեց, որ սովորական հանքային կաւոց և ջրոց պէս և այլ աւելի բժշկարար էին, մանաւանդ բորոտներու։ Այս աւանդութեանս համեմատ կ'երգէ մեր եկեղեցին անուշիկ շարական մի՝ ի տօնի Սրբոցն, Աւետարանի մէջ յիշուած Պրորատիկէ աւազանին նմանցընելով այս Առւկաւայ ջրերը. « Աստանօր նորոգեցաւ մեզ « աւազանն Սելովմայ, ի բանալ զաշս « սրտից, առ ի մերժել զախտս հոգւոց և « մարմնոց »։ — Այս տեղեացս մօտ իրը Գդարու սկզբան՝ վաղարշ թագաւոր Հայոց իր անուամբ քաղաք մի շինեց, որոյ վիճակն հիմայ կոչուի Աղաշկերտ, և որոյ մօտ շինուեցաւ մեր եկեղեցեաց և վանըրէից երեւելեաց մին, թագրեցանդայ Ա. Յովհաննեսան (Խոչ քիլիսէ ըստ այլազգեաց), և զուցէ ամենէն մեծագոյնն, Հերակլ կայսեր հարուստ և հզօր ձեռաց օգնութեամբ. եպիսկոպոսարանն այլ մին ի զիսաւորաց եղաւ։

ЧИТАЛИЩЕ  
„КРАСИРАЦ“

ի բաց թողլով եղանց և եղջերուաց հնազանդութեամբ մորթուիլն և յառնելն, և մանաւանդ լուստանդիանոսի գալն Առւրիասանց նշխարները զտնելու, անտարակուսելի է Ոսկեանց և Առւրիասանց իրականութիւնն. զոր ոչ միայն շատ Արրոց նման մեր Յայսմաւուրբ պատմեն, այլ Յայսմաւուրբաց աղքիւր եղած վկայաբանութիւնը ևս. որոց մին թուի Խորենացւոյ գրչէն ելած, որ իր Հայոց պատմութեան մէջ չի յիշեր այս Սուրբերս, և Թաղէոսի և Սանդղխառոյ նշանաւոր գէպքին հազիւթէ ակնարկէ, իրմէ առաջ գրողներ եղած ըլլալուն համար, և անշուշտ ինքն է Առւրիասանց և Ոսկեանց վկայաբանութիւններն առանձին գրողն, եթէ որպէս հաւանիմ, անոր յիշած աղքիւրն է հռչակաւորն Տատիանոս, ոչ Յուստինիանոս կայսեր ատեն, (որ շատ յետոյ է քան զինքն, և անոր ատեն այս անուամբ մէկ մի չի ճանչցուիր), այլ Ա. Յուստինոս վկային († 167), որոյ աշկերտեցաւ Տատիանոս, ազգաւ ասորի կամ միջազետացի, հեթանոս ծնընդեամբ, ապա բրիստոնեայ և յետոյ աղանդաւոր. մինչ յառաջ ընդդէմ Հելլենաց և Հըէից մոլորութեանց գրէր, և կան մնան այդ գրուածներն, և քանի մի ուրիշ այլ բայց դ. և դ. դարուց Հարբ և Եւսեբիոս՝

վկայեն, որ շատ կամ անբաւ բան զրած էր. ասոր համաձայնի և Խորենացին՝ իր Ոսկեանց « Բան և ասութիւն ճշմարիտ՝ « Արրոց Ոսկեանց քահանայից », վերնազրաւ վկայաբանութեան մէջ. թէ՝ « Այր « մի ընթերցասէր Տատիանոս անուն... », « բազում ինչ պատմեաց մեզ նա ի յու « նական մատենից, որոյ զրեալն անթիւ « շատաբանութեամբ զրոյցը՝ և այժմ ի « միջի մերում գտանի, զոր իմ իսկ բար « զում անզամ ընթերցեալ զտի », և այլն: Այս նշանաւոր անձին վախճանն յայտնի չէ, բայց համարովի Բ դարու կիսէն ետե. որով՝ անտարակոյս Կ'ըլլայ Առւրիասանց անկէ առաջ նահատակուիլն, զոր պահանջեն և դէպք պատմութեանն, թէ և ոմանք շատ յետաձգեն զայն. ինչպէս Յովհ. Կաթողիկոս Պատմիչն՝ ինչուան ի Խոսրով Աթազաւոր մեր. գուցէ Ոսկեանց ճգնութեան 43 տարւոյն վրայ աւելցուցեր են Առւրիասանց 46 տարին եւս, որով Բ դարու կիսէն այլ վերջ Կ'ըլլայ իրենց նահատակութիւնն: Հաւանական է յետ մահուան Բ Արտաշիսի եղած ըլլալ նահատակութեան

1. Այս աեղ մեր հին Ճառընարի օրինակողն զրած է. « յաւուրս Յուստինիանոսի կայսեր », փոխանակ զրելու Յուստինոսի իմաստասիրի կամ վկայի: Խոկ այս խօսք կըրնայ առած ըլլալ Խորենացին՝ յԵւսեբիոսէ:

Սուբիասանց, իսկ նա մեռած է ի սկիզբն  
կայսրութեան Աղբիանոսի (116-28):

Տատիանոսի յիշատակին յարմար հա-  
մարիմ կըցել՝ իրեն շատ մասամբ համանը-  
ման մէկուն մի եւս, թէ ժամանակաւ թէ  
ազգաւ (ասորի), թէ անհաստատ և աղան-  
դաւոր կրօնքով, թէ զիտութեամբ և զրու-  
թեամբ. և է Բարդածան, աւելի քան զմիւսն  
ծանօթ Եւսերիոսի և ուրիշ Հայոց: Ասոր  
համար կ'ըսէ Խորենացի, թէ յետ հերեւու  
վաղենտինեանց աղանդը, ինքն այլ նոր  
աղանդ հնարեց, և զայն ծաւալելու համար՝  
նկաւ նա և ի Հայս, « Որպէս զի աշա-  
« կերտել զոք կարասցէ ի խորդ հերան-  
« սացս, և ոչ ընկալեալ եղեւ »: Այս  
նուաստ բացատրութիւնն մեր այն ժամու  
ազգայնոց համար՝ համարիմ ըստ յունա-  
կան արհամարհութեան, որոց՝ (որպէս և  
Լատինաց առջեւ) ամեն արեւելեան ազգը  
խորդք էին, այսինքն բարբարոսը: Շատ  
դժար է հաւտալ թէ Բարդածան՝ կուապաշտ  
Հայերը աշակերտել ուզած ըլլայ, ինքն՝  
որ ընդունելի չըլլալով ի Հայոց՝ զնաց  
(անմիջապէս կ'ըսէ Խորեն.) Անի ամրոցին  
մեհենական զրքերը քննելու, և զրելու  
քրմաց պատմածը. այլ հաւանելի է՝ թէ  
քրիստոնեայ Հայոց մէջ ուզեց սերմանել  
իր մոլար վարդապետութիւնը. և բարե-

քաղղաբար մերժուելով գոնէ անոնց ժա-  
մանակին քաղաքական պատմութիւնը զրեց,  
ուսկից օգտուած է և մեր պատմիչն կամ  
Եւսերիոս<sup>1</sup>: Իսկ այն Բ դարու Հայոց քրիս-  
տոնէութեան վրայ՝ արդէն յիշեցինը մեր  
թագաւորաց այլ հալածանք համելը, երբ  
սորա երբեմն Պարթեւաց զաշնակից էին,  
երբեմն Հոռվմայեցւոց, և ըստ ախորժակի  
յետնոցս՝ հալածէին զքրիստոնեայս, որ-  
պէս յառաջ այլ յիշեցինը, Փիրմիլիանոսի  
(† 272) աւանդածն՝ առ Խորենացւոյ, թէ  
շատ նահատակներ եղած են այն ատեն և  
ի Հայս: ]

Անոնց մեծ և բազմաթիւ խումբ մի՝  
բոլորովին անծանօթ մեր պատմըչաց, այլ  
յօտարաց աւանդեալ և տօնակարգեալ (ի  
22 յունիս ամսոյ), ցոյց տան մեր աշ-  
խարհին ամենէն աչքի զարնող տեղույ  
վրայ, Արարատ լերին, վասն որոյ և Արա-  
րատեան վկայք կոչուին, բիւր մի (10,000).  
նահատակութեան տարին այլ նշանակեն  
(118): Վերոյիշեալ Աղբիանոս կայսեր  
յարեւելս ապստամբաց զէմ պատերազմի  
գնացած ատեն, ի կողմանն Հայոց, խումբ  
մի 9000 զօրականաց քրիստոնէից՝ քա-

1. Աքրիկանոս յիշած է (ըստ Ֆապրիկ.) Պարթե-  
քարդածան մի եւս, ըայց ոչ իրեւ զրել՝ այլ նկարիչ:

ջալերեալ ի հրեշտակէ՝ յաղթեն թշնամեաց, բայց չեն ուզեր դառնալ ի բանակն Հոռվմայեցւոց. կայսրն շատ յորդորէ և չի յաջողիր զանոնք յետ դարձնել իրենց կրօնքէն, աւելի մեծ գունդ մի զրկէ անոնց վրայ, յորոց հազար հոգի խառնին հաւատացելոց հետ և լրացընեն զթիւ բիւրուն. սորա չեն ուզեր կոռուլ կայսերականաց հետ, փափազելով նահատակուլ վասն Քրիստոսի, և այնպէս կ'ըլլան, շատերն խաչուելով ի լերինս անդ Արարատայ : Նշխարբնին այլեւայլ կողմեր սփռուի. մասն մի բերուած և պահուի ի վենետիկ. ուր՝ անուանի պատկերահան մի, Carpaccio, Ժե դարուն վերջերը ապրող († 1522), մեծ և նշանաւոր պատկեր մի նկարած է այս Սրբոց նահատակութեան, որ և ի կարգի ճարտար նկարուց հանդիսանայ՝ յակադիմիայն գեղարուեստից քաղաքին: Ոչ միայն պատմեն զայս Լատինք, այլ և բանաստեղծք քերդողութեամբ երգած են: Սրբոց առաջնորդն կոչուի Ակակ կամ Ակատ, պատուվ՝ տրիբուն, երկրորդն այլ Գարկեր? (Garcere)<sup>1</sup>: Այս Ա. Բիւրու

1. Ա՛ւանդեն պատմող վարուց հրաշալի և հոգիրնկալ Ա. Թերեգիայ կուսի, թէ ի ժամու մահուանն (Յ. Հոկտ. 1582) ուրիշ Սրբոց սմանց հետ տեսած ըլլայ և զԱրաւատեան վկայու՝ իր հոգին ընդունելու եկած, ինչպէս որ

նահատակութիւնն յառաջ է քան զհոչակաւոր Մելիտինեան զնդին († 174), որոց շատն Փ. Հայոց Մելիտինէ քաղքէն ըլլալով՝ այսպէս կոչեցան. կոչուին եւս Շանքածիդ Լեզեն, աղօթքով երկընքն որոտածայն անձրեւ իջեցընելնուն համար<sup>1</sup>: Այս Բիւրս Սրբոց պատուի և ի Ապանիա, ի Գերմանիա և յիտալիա, և յատկապէս ի Բիզա, ի Բիաչենցա, և յայլ քաղաքու:

## Է.

Հալածանք քրիստոնէութեան յ'թ եւ յ'Պ Դարս. — Նահատակը ի Փոքր Հայու. — Մենքութան Եպիսկոպոս Հայոց.

 ԱԱԱԾԵԱԼ քրիստոնէութեան հետքը փնտաել ի Մեծ ի բուն Հայու՝ կըրնար դիւրին ըլլալ, եթէ ասոնց քաղաքական պատմութիւնն այլ պայծառ ըլլար թ և Գ-

խոստացեր էին իրեն. անշուշա յատուկ սէր և յարգութիւն ունեցեր է անոնց: Իրմէ առաջ ուրիշ զարմանալի կոյս մի՛ Եր. Աղաւեհ Ովետիցի Colomba de Rieti B. կամ Ովերումիացի (ծ. 1567 † 1601) շատ չերմեռան դութեամբ իրեն պաշտպան բոներ էր այս Սուրբ Բիւրու:

1. Ըստ սմանց, առաջ այլ կայր Մելիտինեան անուամբ լեզոն մի, որուն խառնուեցան այս նահատակը:

դարուց մէջ. յորս՝ որչափ այլ խորենացի կարգաւ ազգաբանէ մեր Արշակունի թագաւորները՝ Սանատրուկէն մինչեւ ի Տրդատ (200 կամ աւելի տարի), սակայն յոյն և լատին ժամանակակից կամ մերձաժամանակ պատմիչը՝ ուրիշ հայ թագաւորներ այլ յիշեն: Սասանեան Պարսից ծագումն և հակառակութիւնն ընդ Հայոց՝ զրեթէ Գ դարու սկիզբներէն՝ մեծ վրդովման և շփնթութեան պատճառ եղաւ, և ոչ միայն քաղաքական գործք ի մթան մնացին, այլ և քրիստոնէութիւնն այլ ծածկուեցաւ, կամ լաւ եւս ըսենք՝ անծանօթացաւ. մինչդեռ Փոքր Հայք Հռովմայեցւոց հաստատ տէրութեան ներքեւ ըլլալով՝ տեղոյն դէպքերն այլ ծանօթագոյն են, նա և քրիստոնէութեան նկատմամբ՝ որ է այժմ մեր խնդիրն:

Փոքր Ասիոյ մէջ երեք ընդարձակ նահանգք կամ աշխարհն՝ զուտ Հայք կոչին, Ա, Բ, Գ, որոց բնակիչք մեծագոյն մասսամբ Հայք էին, ոչ փոքր մասամբ նա և ասոնցմէ զուրս եղած կապաղովկիոյ կամ Գամբաց մէջ, այլ և ի Պոնտոս և ի Փոփոգիա, ուր շատ Սուրբ նահատակք եղած են. և յատուկ Հայոց քաղաքք կոչուածք, ինչպէս՝ Կունաևա Հայոց, Մելիտիեկ Հայոց, Նիկոպոլիս Հայոց, Սատաղ,

և այլն. թէ անոնց մէջ թէ մերձաւորաց՝ աւելի կամ պակաս նշանաւորաց, որպակիք են կեսարիա (ի Հայքն Առաջին), Անդրատիա (յթ Հայոց), Արօրակ, Արարիսոս, Ամասիա, Եշխայիտոս, Նեկլեսարիա, և այլն, (որոց ոմանց անուանքն հայաձայն հնչեն), այն երկուց (Բ, Գ) դարուց մէջ, մանաւանդ ի կէս Գին և ի սկիզբն Գին, կըրնանը ըսել անթիւ վկայք եղած են, որոց ոմանց նոյնպէս յայտնի հնչեն հայ անուանքն. ոմանք այլ իրենց վկայակից Յունաց անուամբ այլայլած կամ բոլորովին յունացեալ: Քրիստոնէութիւնն մանաւանդ այն դարերուն՝ ազգ և լեզու չէր խարեր, այլ միայն հաւատք ի Քրիստոս. առ որ, ըստ Առաքելոյն (Պօղոսի) ամենքն այլ, յոյնն այլ՝ խուժդուժն այլ հաւասար են: Այդ վկայից բազմութիւնն և տեղեաց մօտաւորութիւնն ի Մեծ Հայութէ մեծ փաստ մի եւս ընծայեն, թէ մեր այս բնաշխարհիս մէջ այլ կար այն ատեն քրիստոնէութիւն, և հարկաւ եղած են և վկայք, որոց պատմութիւնը՝ զատ յայլոց, ինչպէս առաջ յիշեցինք, զրած է եղեր մեր զրացի կեսարիոյ եպիսկոպոսն Փիքմիլիանոս, ի կէս Բ. դարու: Ոչ միայն զժար է ճշդել այն Սրբոց վկայից ազգութիւնը և նահատակութեան հանգամանքը,

այլ և կըրնայ հեռացընել զմեզ մեր նպաւտակէն. սակայն և բոլորովին զանց առնել՝ գուցէ աւելի դժար է քրիստոսասէր և վկայասէր զրչի և ընթերցողի, երբ այնպիսի անձանց վրայ է խօսից կարգն, որք աշխարհիս կամ մարդկութեան գերազոյնցն եղած են. զի, ի՞նչ քան զմարտիրոսութիւն վեհագոյն և արիական գործ. և ով յոյս ունի զանոնք տեսնելու օր մի (օր յաւիտենական) յաստուածային փառս, վայլէ որ գոնէ քիչ մ'այլ ճանչնայ զանոնք այս կենաց կարճ օրուան մէջ, ընտանենայ անոնց, և ստոյգ պարծանք համարի իրեն՝ զհայրենակիցսն երկրի և զոչ հայրենակիցս, համահաւասար հոգեկիցս ունենալ յերկինս։ Այս զգացմամբ, որոյ հաղորդ ճանչնամ զազնուագութ ազգակիցս, արժան համարիմ գոնէ համառօտիւ և երբեմն անուամբ չափ՝ նշանակել ի հազարաց և ի բիւրուց՝ քանի մի յայն սուրբ նահատակելոցն ի վերոյիշեալ քաղաքս Հայոց և անոնց մերձաւորաց, սկսեալ այն ժամանակէն՝ ուր թողուցինք մեր պատմութիւնը, Սուբիստանց և Արարատեան վկայից յիշատակօք. թողլով սրբամիրաց՝ անոնց նուիրեալ յատուկ զրոց (Վարուց Սրբոց և Յայսմաւուրաց) մէջ աւելի ծանօթանալ իրենց սիրածնուն։

Քիչ մի վերը յիշուած վերջին վկայից ժամանակակից՝ Աղրիանոս կայսեր ատեն (177–8ին) ի կեսարիա՝ ազնուական մի՛ Եւպսիկ (Eupsichius) գուցէ Յուսիկ անուամբ, (որպէս էր և բնիկ անունն Ա. Եւստուատիոսի) քրիստոնէութեանն համար՝ բռնուած զատուած, և բանտուած, յետ համբերելու նեղութեանց, արձակուեցաւ. բայց մարտիրոսութեան փափաքն և պսակը նորէն ստացաւ. ունեցած ստացուածքն երկու բամնելով և մին աղբատաց բաժնելով, միւս մասը՝ զերազոյն առարինութեամբ՝ տուաւ զինքը մատնողներուն, որ նորէն մատնեցին Սապրիկ (Sapricius) զատաւորին կամ քաղաքապետին, (որոյ անունն այլ հայերէն հնչէ), բայց Հռովմայեցոց հաւատարիմ հալածիչ, շատ Քրիստոսի հաւատարիմներ չարաչար տանջանօք նահատակեր է. զայս սուրբ վկայս այլ յետ զրեթէ մարմինը պատառստելու՝ զլիստելով. ասոր յիշատակն կատարուի սեպտեմբ. 7: — Ուրիշ համանուն կեսարացի վկայ մի եւս կայ ի Գ դարու, ազնուական և նոր փեսայ երիտասարդ մի, որ՝ Բաղդի տաճարը կործանելուն համար՝ Ուրացող Յուլիանու հրամանաւ՝ ուրիշ շատ հաւատացելոց հետ չարչարուելով նահատակեցաւ. ուրացողն կու ստիպէր որ

նորէն կանգնեն զտաճարը, բայց քրիստոնեայք անոր տեղ եկեղեցի մի կանգնեցին, յորում՝ Մեծն թարսեղ ներբողեց զԱ. վկայն. որոյ յիշատակն դրուած է յ' 9 ապրիլի և 7 յուլիսի:

Բ դարուն կիսում հալածանք քրիստոնէից սաստկացեր են, Մարկ. Աւրելիանոս կայսեր ատեն, որ փիլիսոփայ և խոհեմ մարդ մի հոչակուէր, և իր երկիւղածութեամբ ի զից՝ թոյլ տուած է, կ'ըսեն ոմանք, այդ հալածանքը, յամօթ իր իմաստասիրական առածից: Զատ յայլոց՝ կոմանա Հայոց քաղաքն՝ ընծայած է Քրիստոսի՝ Հերմիաս անուամբ կորիճ զօրական մի, շատ տանջանօք և արեամբ չարչարեալ. որոյ քրիստոնէական արիութենէն յաղթուեցաւ իր դահիճն այլ և հաւատաց ի Քրիստոս. յիշատակն դրուած է յ' 13 մայիսի:

Այս ժամանակիս հետաքննական դէպք մի և հայանուն քրիստոնեայ ազնուական անձ մի յիշուի՝ Հայոց երկրէն քիչ հեռի. օտարաց ծանօթ, Ա. Աբերկիոս (Abercio, փո. Abrèce) եպիսկոպոսն Յերապոլսի ի Փ. Ասիա, քրիստոնէից պաշտպանութեան թուղթ մի զրելուն համար առ Մարկ. Աւել. բայց իր վարքը չեն գիտեր. ընդ հակառակն մեր Յայսմաւուրը երկար և

քիչ մ' այլ երկրայելիս պատմեն (22 հոկտ. – Սահմի ժԳ): Մէկ դէպքն է ի Հառմ երթաւ և կայսեր զուստը բժշկելն, գուցէ ասկէ համարձակած ըլլայ քրիստոնէից ջատագովութիւն զրելու: Մեզի վերաբերեալն է անոր յետ շատ տեղ երթալու գալու քարոզելով, հանդիպելն ի Մծրին քաղաք. «Եւ անդ էր, կ'ըսեն Յայսմաւուրը, «այր մի հաւատացեալ, որոյ անուն էր «Վահրամ... (որ) ժողովիաց զամենայն «քրիստոնեայն ի միասին, և միաբան «խորհուրդ արարեալ՝ անուանեցին զԱ. «բերկիոս՝ հաւասար Առաքելոցն»: Այս Առըքս դարձեր է իր երկիրը և հոն վախճաներ է:

Ի սկզբան Գ դարուն (204) ի կոմանա Հայոց՝ նահատակուած է քաղցին եպիսկոպոսն Զոտիկ, թերեւս և Զատիկ, ըստ լատինաց Zoticus, եռանդուն քաջահաւատ անձն. որ բանիւ և զրով կոռւեր և յաղթահարեր է զՄոնտանեան ցնորեալ աղանդաւորս, և արեամբն կնքեր է յաղթանակը: Գրուածներն զովուած՝ բայց չեն հասած մեզի: Իր յիշատակն դրուած է ի 21 յուլիսի<sup>1</sup>:

Այս յիշատակ Հայոց (կոմանայ) քա-

1. Եւսեբ. Ե. ԺԶ. ԺԹ.

դարի եպիսկոպոսին զըրէ զմիտու , թէ  
չկային և ի բուն Արեծ Հայո՝ եպիսկոպոսը,  
առաջնորդը եկեղեցեաց կամ քրիստոնէից,  
որչափ այլ ծածուկը էին: — Եթէ կային  
քահանայը՝ որ անտարակոյս է, (նա և  
միաբանակեաց կրօնաւորք ի կէս Բ դարու,  
ըստ վկայութեան Ատեփանոսի Օրպել, որ  
յարձանագրութեանց թանահոփ վանաց  
ստուգեր է զայս, և տեղւոյն վանահայրն  
այլ Միհրար կոչուած), շատ հաւանական  
է որ ըլլային տեղ տեղ և եպիսկոպոսը,  
մանաւանդ զի այն ժամանակ եպիսկոպոս  
և քահանայ շատ չէր որոշուեր մէկմէկէ:  
Աւելի հետաքննական է զիտնալ, թէ կա՞ր  
ի Հայո՝ զլուխ եպիսկոպոսաց, որ է ըսել  
յաջորդ Առաքելոց և Աշակերտացն . —  
յիշեցինք ի սկզբան՝ ասոնց քարոզութենին  
վերջ, նորայայտ քանի մի յաջորդներ  
երկրայական. այլ ստոյգ մի երեցընէ  
մեզ ստուգապատումն Եւսեբիոս (Զ. ԽԶ)  
ի կէս Գ դարու, զՄերուժան, ոչ լոկ Հայ  
եպիսկոպոս, այլ Հայոց եպիսկոպոս, առ  
որ զեր է Ա. Դիոնիսիոս հայրապետ  
Աղեքսանդրիոյ՝ վասն խնդրոյ Ապաշխա-  
րութեան, այսինքն, այն ժամանակ մեծ  
խնդիր կար եկեղեցւոյ մէջ, թէ արդեօք  
պէտք է ընդունիլ ի ժողովս հաւատացե-  
լոց՝ զանոնք, որ ուրացեր էին երբեմն

վախով, և նորէն զզջալով դառնային.  
այսպէս կ'ըսէ պատմիչն (Զ. ԽԶ) զրեց  
Դիոնիս « Եւ առ այնոսիկ՝ որ էին յԱրմե-  
« նիս, զի էր նոցա եպիսկոպոս Անհրու-  
« ժան »: Հայրապետ մի որ զրէ առ ազգի  
մի եպիսկոպոս ծանր խնդրոյ մի վրայ՝  
որոյ համար զրուեցաւ և առ եպիսկոպո-  
սապետն հասարակաց՝ ի Հռովմ, հարկ է  
թէ այդ եպիսկոպոսն այլ թղթագրողին  
հաւասար կամ համեմատ ըլլայ. և ուր որ  
եղած ըլլայ իր աթոռն՝ շատ է որ Հայոց  
ընդհանրութեան կամ ազգին կամ զոնէ  
մեծ մասին զլաւաւոր եպիսկոպոս էր: Ա.  
Հերոնիմոս այլ ի կազմի եկեղեցական  
մատենագրաց յիշէ Ա. Դիոնիսիոսի զրած  
թուղթն առ Հայո, առանց յիշելու զանուն  
եպիսկոպոսին: Լը Գիէն (Ա, 419) կար-  
ծեօք միայն համարի, թէ Մեհրուժան՝  
Աերաստիոյ եպիսկոպոս եղած ըլլայ. այս  
կարծեաց հետեւած են և այլք ոմանք.  
բայց հաստատութիւն չկայ: Դիոնիլի է որ  
Դիոնիսիոս ուրիշներու զըէ՝ առ եպիսկո-  
պոս այս կամ այն քաղաքի, իսկ մերոց՝  
ոչ քաղաքի եպիսկոպոսի՝ այլ ազգին,  
« Առ այնութի՝ որ էին յԱրմենիա ». Ար-  
մենիա՝ քաղաք չէ՝ Աշխարհ է. և խնդրոյն  
նիւթն այլ ցուցընէ որ բազմաթիւ ժողո-  
վըրդեան զլուխ էր այդ Մեհրուժանդ: Այս

եկեղեցական մեծ և շփոթիչ ինդրոյն մէջ՝  
մեզ ծանօթ կեսարիոյ մեծ եպիսկոպոսն  
Փիրմիլիանոս այլ հետեւելով Ս. Կիպրիա-  
նոսի՝ հակառակ կարծիք ունեցեր է քահա-  
նայապետին Հռովմայ, իսկ Ս. Դիոնիսիոս  
թղթագրութեամբ միջնորդ եղած է միա-  
բանութեան, և հաստատուած է ընդունել  
զԱպաշխարող կամ զդարձեալսն յուրա-  
ցութենէ՝ յեկեղեցի:

Այս ինդրոյս առթիւ կ'արժէ յիշել, որ  
նոյն ատեն ուրիշ կարեւոր ինդիրներ այլ  
կային, որոց մէկն էր Նովատիանոս հա-  
կապապի հերձուածն, և այս բանիս համար  
այլ գրած է Դիոնիս առ եպիսկոպոսունս  
Արեւելից. ընդ որս՝ և առ Հայս գրած  
ըլլալուն՝ հաւանին նոր եկեղեցապատումք:  
— Մէկ մեծ հակառակութեան ինդիր մ'այլ  
էր Զատկի տօնի օրն. զոր ոմանք, (ընդ  
որս և Փոքր Ասիոյ արեւմտեան կողմանք)  
Հրէից հետ նիսան ամսոյ 14ին կատա-  
րէն զայն, իսկ Եւրոպականք և Աղեքսան-  
դրեանք՝ ի կիւրակէի որ յետ 14 նիսանի.  
ասոնց միաբանէին և Պոնտոսի կողմանք,  
որոց շատ հաւանական է թէ միաբանէին  
և սահմանակիցքն Հայք: Այս ինդիրս շատ  
տարի առաջ այլ յուզուած էր, և յամի  
196-7, ի Պոնտոս 15 եպիսկոպոսաց  
ծողով մի, որոց զլխաւորն էր Պայմաս

կամ Պրամաս, սահմանէց Հռովմայ եկե-  
ղեցւոյն միաբանիլ: Կըրնայ կարծուիլ որ  
այս եպիսկոպոսաց մէջ զտուէր և Հայ  
կամ Հայոց եպիսկոպոս: — Այս յիշա-  
տակը հաւաստեն ոչ միայն այդ Բ և Գ  
դարուց մէջ Հայոց եպիսկոպոս ունենալը,  
այլ և եպիսկոպոսաց միաբանելն ընդ  
եպիսկոպոսունս Պոնտոսի, Աղեքսանդրիոյ,  
Պնտիոբայ և ընդ զլխաւորին Հռովմայ,  
յէկան մասունս վարդապետութեան ընդ-  
հանրական եկեղեցւոյ, եթէ և յատուկ ինչ  
աւանդութիւն ունէին իրենց Առաքեալնե-  
րէն (Թաղէսէ և Քարդողիմնեայ) ընդունած  
և պահած՝ մինչեւ ի ժամանակս Լուսա-  
ւորչին մերոյ: Եպիսկոպոսաց յիշատակս  
յայտնապէս հետեւանը է Հայոց քրիստո-  
նէութեան այս ժամանակիս, որոյ մեծ վկայ  
մի եւս է նախայիշեալ Տերտուղիմնոս, որ  
այն խօսքը չէր ըսեր՝ եթէ իր ատեն չտես-  
նէր ի Հայս ծաւալեալ զցըխատոնէութիւն:

Դառնանք հիմայ նորէն մեր քրիստո-  
նէութեան գունագոյն ծաղկանց, որ այս  
կիսամութ ժամանակ փայլփայլէին և ի  
Հայս, և Հայովք՝ յօտար աշխարհա. որոց  
անուանքն երաշխաւոր են բանիս, թէ և  
կըրնան օտարազգի այլ ըլլալ, ինչպէս  
պարսիկ, այդ անուամբք. սակայն հաւա-  
նական է մերազգի ըլլալն, ինչպէս աշ-

խարհածանօթ է Հայոց ամէն կողմ երթաւ  
գալն, եթէ վաճառականութեան և եթէ այլ  
պատճառաւ, նա և զինուորութեամբ ի  
գունդս Հոռվմայեցւոց: Ի սկիզբն Գ դարու  
(203) յիշուի Արտաշէս մի ընկերներով  
ողջակիզեալ վասն Քրիստոսի ի կողմանս  
Ափրիկիոյ. որոց յիշատակն կարգած յ'7  
մարտի: Աւրիշ Արտաշէս մ'այլ նահատա-  
կուած ի Ալբրիոն (ի Պաննոնիա) յ'2  
յանուարի, ժամանակն անյայտ: — Ներ-  
սկս մի նահատակեալ յԱղեցանդրիա (16  
յուլիս), ուրիշ Ներսկս մի (15 յունիս)  
վեսուչա անուամբ վկայուհւոյ հետ, զորս  
յիշեն Յոյնք: Կան և Արմենիոս անուամբ  
վկայը, որը կընան կարծուիլ իրենց ազ-  
գութեամբն այդպէս յիշուած, որպէս այն  
որ մօրը հետ նահատակուած է յԵզիպտոս  
(2 յունիս), և այլն:

Դառնանք աւելի ծանօթագոյն նահա-  
տակաց և աւելի ծանօթագոյն ժամանակի  
նահատակաց, որ է, Գ դարու կէսն, չարա-  
յիշատակ Դեկոս կայսեր ատեն (249-51),  
որուն լաւ յարմարի նախայիշեալ վկա-  
յութիւն Խորենացւոյ (Բ, ՀԵ): Ասոնց  
զլիսաւոր ճանչնալու է այն միակ յայտնի  
վկայեալ Հայոց եպիսկոպոսն Մեհրուժան,  
թէ և նահատակութեան պարագայք չեն  
ծանօթ:

Դաժան Դեկոսն ի Պարսից յաղթութեամբ  
դառնալու ատեն (251) մեր կորդուաց աշ-  
խարհին կողմերէն անցեր է, այն տեղ  
նահատակեր է Մաքսիմոս և Ուիմուս  
անուամբ երկու անձինք, չարաչար ծեծել  
տալով և յետոյ երկաթէ կոփիչներով  
զլուխնին ջախջախելով: Սուրբերն Պարսիկ  
կ'անուանին, բայց նահատակութեան տեղն  
Հայոց պատկանի. օտար պատմիչը երբեմն  
չեն որոշեր զհայ և պարսիկ. ասոնց  
անուանքն այլ յունացեալ և լատինացեալ  
լսուին, թէ և ծանօթ է մեզ Ուղիւալ Հայ  
քրմի անուն: Այս վկայիցս յիշատակն  
դրուած է ի 15 ապրիլի: — Նոյն կայսեր  
ատեն նահատակուած են ի կեսարիա՝  
Գերմանիոս և Թեոփիլոս երկու եւս ընկերօք  
(Յ կամ Զ նոյեմբ.): — Համանուն (Գեր-  
ման) սուրբ մ'այլ Ալերինա անուամբ վկա-  
յուհւոյ հետ յիշուի (Յ յուլիս) ի Տարսոն  
նահատակուած: — Լուինուիսն և Եսինն  
ի կեսարիա: — Այս մայրաքաղաքիս մէջ  
կարմիր վարդուկ մ'այլ ընծայուած է առ  
Քրիստոս, 17ամեայ մանուկն կիրեղ, որ  
լսելով միւս նահատակաց վկայութիւնը՝  
Ես այլ քրիստոնեայ եմ և կ'ուզեմ վկայ  
ըլլալ Քրիստոսի, ըսելով, կ'ուզէր երթալ  
յատեան. և որչափ այլ հայրն կ'արգիւէր  
տընէն ելնելու, նա հնարք գտաւ. և որչափ

շատակն ի 25 նոյեմբերի։ Այս Գ. Հայոց  
մայրաքաղաքիս մէջ նահատակուեցան և  
երկու կտրիճ զօրականցն Նիկանդրոս և  
Մարկիանոս, որը զզուելով անհաւատից  
քարեցն՝ թողուցին գէնքերնին, և չուզեցին  
իրենց թոշակն առնուլ, զոր դատաւորն  
կ'ուզէր շնորհել. ասոր և վկայից վիճելու  
ատեն՝ երեցաւ սքանչելի կին մի, Դարիա,  
կինն Նիկանդրի և քաջալերէր զնա՝ որ  
անվախ նահատակուի. և անոր դատա-  
պարտուելէն վերջը՝ ետեւէն կ'երթար,  
փոքրիկ տղեկն այլ բերելով. ընդ հակա-  
ռակն, Մարկիանոսի կինն անհաւատ՝  
յուրացութիւն յորդորէր զնա, մինչեւ  
ստիպուեցաւ Սուրբն վորնտել զնա և բա-  
րեկամի մի յանձնեց որ բռնէ և արգիլէ.  
բայց երբ հասան նահատակուելու տեղին,  
կանչել տուաւ համբուրեց. բայց, որով-  
հետեւ գու մոլորած ես, չես կը ընար  
տեսնել, ըստաւ, իմ նահատակութիւնս, գնա  
հեռացիր աստի. իր տղեկն այլ պազնելով՝  
Աստուծոյ յանձնեց. յետոյ մէկզմէկ համ-  
բուրեցին Սուրբքն։ Այն վայրկենին Դարիա  
բազմութեան մէջ կ'աշխատէր ճամբայ բա-  
նալ որ գայ էրկանը բով. Մարկիանոս  
քաշեց թեւէն՝ բերաւ Նիկանդրի բով. առ  
որ՝ « Աստուծած հետզ ըլլայ, կանչեց կինն.  
« տասն տարի է որ մէկմէկ հեռացած՝

դատաւորն կ'ողոքէր կամ վախցընէր, նա  
այլ աւելի արիութիւն ցուցընէր. և, Փո-  
խանակ իմ հօրս տան՝ շատ աւելի գեղեցիկ  
տեղ մի պիտի երթամ, կ'ըսէր։ Անգութ  
դատաւորն կապել տուաւ մանուկը անի-  
ծեալ կուռքի մի հետ և կրակ վառել,  
սպառնալով մէջը ձգել. նա միշտ նոյն  
խօսքերը կրկնէր մինչ տեսողըն զթալով  
սկսան լալ. նա ծիծաղէր անոնց վրայ. և  
խայտալով խնդարով մտաւ կրակին մէջ,  
ողջակիզեցաւ « ի հոտ անոյշ Քրիստոսի »։  
Յիշատակն կատարուի ի 29 մայիսի։ —  
Գրեթէ նոյն տարին նահատակուեցաւ ի  
Նէոկեսարիա (Նիքէնտար) ազնիւ երիտա-  
սարդ մ'այլ, Troadius կոչուած ի Լատի-  
նաց, որ կարծել տայ Տրդատ անունը. երբ  
կիւրեղի պէս արիաբար կու չարչարուէր,  
քաղքին աշխարհածանօթ եպիսկոպոսն Ա.  
Գր. Ացանչելազործ՝ որ զուրս տեղ պա-  
հուըտեր էր, սքանչելեօր երեւցաւ և բա-  
ջալերեց զնա։ Յիշատակուի ի 28 գեկտ:  
իսկ զինքը խրախուառ Ա. հայրապետն  
իրը 20 տարի վերջը (270-1) խաղաղու-  
թեամբ վախճանեցաւ։

Այս ժամանակիս և այս կողմերս եղած  
է՝ մեր եկեղեցւոյ տօնած Ակիւթացի Ա.  
Մերկեռիոս զօրականին նահատակութիւնն,  
որ առաջ ի Մելիտինէ չարչարեցաւ. յիւ-

« կարօտէ քաշէի, հիմայ որ լաւագոյն  
 « կենաց կ'երթաս՝ շատ ուրախ եմ մար-  
 « տիրոսի կին ըլլալու. զօրացիր, և ինդրէ  
 « Աստուծմէ որ զիս այլ ազատէ » : Հազիւ  
 խօսքը կատարեց, դահիճն նահատակաց  
 երեսը կտաւով մի ծածկելով, կտրեց ձգեց  
 զլուխնին: Ոմանք կարծեն թէ Դարիա ևս  
 նահատակուած է. և թէ երեքին այլ և  
 Նիկանդրի զաւկին մարմինըն այլ բերուած  
 են յիտալիա, և կապուա մեծ քաղաքի  
 մօտ վենափրոյ փոքր քաղաքի մէջ ամփո-  
 փուած: Ասոնց յիշատակն կատարուի ի  
 17 յունիսի: Ոմանք փոխանակ Դեկոսի՝  
 Դիոկղետիանոսի ատեն կարծեն ասոնց  
 նահատակութիւնը:

Մելիտինեցի կամ ի Մելիտինէ նահա-  
 տակեալ՝ բայց Հայ ճանչցուած և այսպէս  
 կոչուած մի, մինչեւ հիմայ պատուի և  
 տօնուի Նաբոլիի երկրին կաղանիա զաւառի՝  
 Աչի Ուկալէ քաղաքին մէջ. յատուկ եկե-  
 զեցի մի նուիրուած է իրեն. անունն  
 լատինաբար կոչուի Expeditus, որ ան-  
 շուշտ թարգմանուած է բնիկ լեզուէն. այլ  
 թէ ի՞նչ էր այն կամ մեր լեզուաւ, չէ  
 յայտ. որովհետեւ այդ բառդ կըրնայ նշա-  
 նակել Ազատ կամ Երագ, և յետինս յարմար  
 համարուի, իրեւ թեթեւազէն զօրական-  
 ներու, որը շուշտ բայլելով կ'երթային:

Աւանդութիւնն նոյն իսկ Մելիտինեան  
 Շանթաձիգ լեզէոնին գնդապետ կարծէ  
 զԱռըրբս նահատակութեան պարագայք և  
 ժամանակն այլ անծանօթ են: Ասկէ յիսուն  
 տարի առաջ յիշեալ իտալական քաղքին  
 եկեղեցականը՝ մեզի իրբեւ ազգայնոց  
 Սրբոյն՝ հարցուցին թէ արդեօք ծանօթ է.  
 այլ չէր: Յիշատակն կատարուի յ' 19  
 ապրիլի: Անունն կըրնայ եւս հայ բառէ  
 մի առնուած ըլլալ, ինչպէս Ապես, Սպետ:  
 Այս ետքի տարիներս Սրբոյն պաշտօնն  
 կամ պատիւն շատ արծարծեցաւ, մանաւանդ  
 ի Մարսիլիա. մեծ կամ դժուարին խնդրոց  
 լուծիչ և ազատիչ ճանչնալով և առ նա-  
 զիմելով ջերմեռանդութեամբ: — Մելի-  
 տինեայ նահատակաց հոչակագոյնը են Ա.  
 Պոլիկետիս և Նեարխոն (Նոր իշխան), նոյն  
 Դեկոս կայսեր հալածանաց ժամանակ.  
 ասոնց երկնաւոր փառքը՝ յերկրի կամ ի  
 դպրութեան այլ անմահացուց փոանկ բա-  
 նաստեղծն Գոռնէյլ՝ իր գերահոչակ թա-  
 տերական ողբերգութեամբն: Այս սրբոցս  
 յիշատակն կատարուի ի 13 փերր:

Թողլով հետաքննել այս Գ դարու կի-  
 սում Գեկոսեան մեծ հալածանաց յեղա-  
 նակին վկայեալըն ի սահմանս Հայոց,  
 իջնանք նոյն դարուն երրորդ քառորդին  
 միջոց՝ Աւրելիանոս կայսեր նորոգած հա-

լածանաց ատեն քանի մի վկայելոց՝ նոյն սահմանաց մէջ, և մանաւանդ զլսաւորին՝ որ ի կեսարիա, ուր ամեննէն հռչակաւորն ի ժամանակիս եղաւ Ա. Մամաս, սուրբ խոստովանողաց որդի, անոնց բանտարկութեան ատեն ծնած ի Գանգրա (Չանկըրը), և բարեպաշտ դայեկի մի ձեռօք սնած, զոր ստէպ Մամա կանչելուն համար՝ տըրուած կ'ըսուի իր անունն. տղայութեան ատեն բռնուած և նեղուած յանգութ դատաւորաց, բայց Աստուծոյ սքանչելի նախախնամութեամբն ազատած և կեսարիոյ կողմերը բերուած. ուր՝ շատ տարի հովութեամբ ապրեր է, ոչ միայն ընտանի անսասուններ դարմանելով, այլ և զագաներն ընտանեցընելով՝ իր անոյշ երգերովը. իսկ յետոյ դարձեալ հալածչաց ձեռք ընկնալով և շատ չարչարանօք և քարկոծուելով՝ իր ծնողաց պսակակից եղեր է: Ա. Բարսեղ, Ա. Գր. Աստուածաբան և այլք՝ շատ գուրգուրանօք զրուատեն զՄամաս. Յուլիանոս յառաջ քան զուրացութիւնն՝ իր եղբօր Գալլոսի հետ ուզեր են մեծ եկեղեցի մի շինել ի կեսարիա յանուն Արքոյս, կէս կէս բաժնելով, Յուլիանոսի շինել տուածն միշտ քակտուեր է: — Արքոյս յիշատակն զրուած է ի Յայսմաւուրս մեր յ' 2 սեպտեմբ. Լատինք տօնեն յ' 17 օգոստ:

Այս ժամանակիս հանդիպած է (275) և նահատակութիւն զգուելի Արքոյ մի ի կոմանայ Հայոց, որոյ ազնուականներէն մէկն էր, Աղեքսանդր անուամբ: Աւետարանի խրատուց հետեւիլ ուզելով՝ ստացուածը բաժնեց աղքատաց, և ինքն այլ աղքատորէն ապրիլ ուզելով՝ ընտրեց անարգ արուեստ մի. ածուղ գործել և ծախել, և դարձեալ ողորմութիւն տալով՝ սիրոն այլ Աստուծոյ ընծայել: Քաղքին եպիսկոպոսն ազատանականնելով՝ յաջորդին ընտրութեան համար հակառակութիւն կ'ըլլար. Ա. Գր. Սքանչելազործի յայտնեց Աստուածայս ածղագործ Առւրել, որ ստիպեց և ձեռնազրեց եպիսկոպոս. քիչ տարի վերջը նահատակեցաւ նոյն քաղքին մէջ: Յիշատակն ի 11 օգոստ. Գր. Նազիանզացի ներբողեր է զսա՝ արժանապէս:

Հայոց քրիստոնէութեան արշալուսոյն վերջերը և արեւածագին խառնուած՝ պայծառ և փափուկ կարմիր նշոյլ մ' ընծայած է Եկեղեց գաւառին սահմանն, Սալինուեաց կամ Սալահուեաց ցեղէն, զորովաշարժ սիրուն երիտասարդ նահատակ մի, « Ա. « չօքն թուխ, և գանզրահեր, և երեսօքն « խարտեաշ, և անձամբն երկայն ». որդի Առորէն իշխանի և Աղայիրի, որոյ յունական անունն երաշխաւորէ՝ նոյնպիսի արիւն

մ'այլ խառնելն ի հայկականն, և այնպիսի  
կրթութիւն մ'այլ տալ իր որդիկին, զոր  
և Արենաղորս անուանած էին, իբրեւ  
տուրք Աթենասայ, որ այլով անուամբ  
պաշտուէր ի Հայոց՝ այն կողմերը: Առւ-  
րէն անոր պաշտող էր, կինն քրիստոնեայ,  
որ իր հաւատքը՝ կաթին հետ տուեր էր  
որդիկին. և այնչափ աւելի գուրգուրար  
վրան՝ որչափ որ բաց ի շնորհաց զա-  
ւակին՝ նա և ասոր ցաւագարութիւնն իր  
սրտին խոց էր. այս տկարութեան պատ-  
ճառաւ Աթենաղորս անաշխատ կեանք  
կ'անցունէր, բաց օդու տակ և յառանձ-  
նովթեան բնութեան, ուր կային ծածուկ  
քրիստոնեայք, և Դասիկ անուամբ քահա-  
նայ մի հոգար զանոնք. պատանին այլ  
լսելով անոր խրատները և քրիստոնէից  
վարքը տեսնելով՝ անոնցմէ չէր բաժնուեր:  
Բայց հօրմէն վախնալով չէր համարձակեր  
յայտնել իր հաւատքը. և երբ հայրն ստի-  
պէր զնա կուրքերը պաշտելու, իր հի-  
ւանդութիւնը պատճառելով՝ հրաժարէր.  
մինչեւ շատ տարի վերջ իմացաւ հայրն,  
և յետ ողոքանաց մահ սպառնացաւ:

Այս ժամանակ հանդիպած է, ըստ  
աւանդութեան, մեր Լուսաւորչի այլ յայտ-  
նելն իր հաւատքը. և այս կողմերէն անցած  
առեն՝ իմանալով զայս Դասիկին՝ յորդորեց

զսա որ մկրտէ այդ երիտասարդը, (պի  
գեռ չէր մկրտուած). և աւազանին ջրով  
լուացուելէն ըիչ օր վերջը՝ գութով խե-  
լազարեալ կամ անգութ հայրն Սուրէն՝  
իր ձեռօք զորդին արեամբն այլ լուաց,  
Սեղեմուտ կոչուած հովտին մէջ. ինքն  
այն իսելազարութեամբ կամ դիւահարու-  
թեամբ կորաւ. իսկ կինն Աղութա որդւոյն  
գերեզմանէն չբաժնուելով՝ այն տեղ հանգ-  
չեցաւ, և հովով միացաւ ընդ որդւոյն,  
որ յետ մկրտութեանն թեկողորս կոչուե-  
ցաւ. արդարեւ Ասոռուածառուր. և նահա-  
տակութեան տեղն եղաւ արժանապէս  
ուխտատեղի, զոր և այլազգիք պատուէին  
մինչեւ ի վերջին ժամանակս, Արրաջը  
թորոս կոչելով: Այս վկայիս պատմու-  
թիւնն ամեն Յայսմաւուրաց մէջ չի զտուիր,  
բայց կայ և առանձին հաւաքմանց մէջ  
զրուած. յորոց նշանակուի իբր 269ին  
ծնած և 296ին նահատակուած. իր յիշա-  
տակն այլ զրուած ի 11 մայիսի. զոր և  
արժան էր տարուէ տարի տօնախմբել  
հանդիսապէս, իբրեւ անզրանիկ կամ մի  
յանդրանիկ հարազատ նահատակաց մերոց.  
թերեւս շատ ծանօթ չըլլալուն համար՝  
տօնացուցի մէջ չէ անցած. բայց ի պատ-  
մութենէն և մանրամասն դիպաց և տեղեաց  
յիշատակներէն՝ անտարակոյս է իրն. և

միանգամ ևս ստիպէ զմեզ կրկնել և յիշել,  
որ քրիստոնէութիւնն չէ իսպառ նուազած  
ի Հայոց՝ յԱռաքելոց անտի մինչեւ ի նոր  
առաքեալն մեր Ա. Գր. Լուսաւորիչ. և  
թէ, ոչ միայն քահանայք կային հաւա-  
տացելոց հոգացողք, այլ և զլուխը քահա-  
նայից՝ եպիսկոպոսը։ Այս բանիս յայտնի  
վկայէ Սիմեոն անուամբ սակաւածանօթ  
բայց բաւական հին զրիչ մի Լուսաւորչի  
վրայօք, թէ՝ և ի հալածանաց ժամանակին  
« Գոյին ի տեղիս տեղիս յԱռաքելոցն անտի  
« (յաջորդեալ) եպիսկոպոսը և քահանայք՝  
« գաղտնի »։

## Ը.

Տրդատ եւ Գրիգոր.

Ո՞րքԱն նախախնամական և զարմա-  
նալի երեցաւ ծագումն լուսոյ կրօնից  
յաշխարհս մեր, եթէ՝ ի սկզբան մարդկու-  
թեան և եթէ՝ ի սկզբան քրիստոնէութեան,  
կըրնամբ ըսել՝ թէ այլ աւելի, գոնէ՝  
զգալի, և բացայատ եղաւ ընդհանուր  
ծաւալումն քրիստոնէութեան յընդհանրու-  
թեան ազգիս, որպիսի թերեւս չէ եղած

յայլ ազգս. վասն որոյ և իրաւամբ այս  
նոր քարոզիչ և առաքեալն Հայոց՝ կոչուի  
Լուսաւորիչ։ Միանգամայն և շատ սբան-  
չելի հանգամանօք եղած է այս Լուսաւո-  
րութիւնս. թէ՝ քաղաքական տեսութեամբ  
և թէ՝ կրօնական. և հարկ էր որ այսպէս-  
ըլլայ՝ երբ ողջոյն ազգ մի կրօնափոխ-  
կ'ըլլայ՝ կարճ ժամանակի մէջ. մանաւանդ  
այնպիսի պնդակարծիք ազգ մի՝ ինչպէս  
Հայոցս. զորս՝ շարժելու և հնաւանդ կրօն-  
քէն ի նորն փոխելու համար՝ (մարդկօրէն  
խօսելով) արտաքին մղող ոյժ մ'այլ պէտք  
էր։ Այս ոյժն էր հսկայակերպ Տրդատայ  
հզօր բազուկն, Գրիգորի կակուղ ձեռաց  
աջակցեալ, բայց և Տրդատայ և հասարա-  
կաց յաջողութեան՝ ուրիշ արտաքին նը-  
պաստ մի եւս կար, զոր քաղաքական  
տեսութիւն կոչեցի. և հարկ է բացատրել։  
Հայոց բարեկարգ կամ կանոնաւոր ազգ  
և տէրութիւն մի զառնալէն վերջ՝ թա-  
գաւորութեամբ Արշակունեաց, 400 և  
աւելի տարի անցեր էր՝ մինչեւ ի սկզբան  
երեւնալու Տրդատայ ի պատմութեան. այս  
չորս դարուց մէջ՝ թէ և երբեմն երկու  
համացեղ տէրութիւնը՝ Հայք և Պարթեւը՝  
գտտութիւն կ'ունենային, բայց աւելի եր-  
կար ատեն բարեկամութեամբ և խնամու-  
թեամբ վարուէին. Հոռվմայեցւոց անյագ

աշխարհակալութիւնն և մասամբ աշխարհաւերութիւնն էր շատ հեղ երկպառակութիւն ձգող և տակն ու վրայ ընող զերկիլու և զժողովուրդս . ինչ որ ի Հայս և ի Պարթեւս ըրին նորա՝ այդ երեք կամ չորս զարուց միջոց՝ ծանօթ է ամենուն, եւս առաւել մեզ, ինչ որ մեր աշխարհակալ Տիգրանայ և Միհրդատայ օրերն՝ մինչեւ ի Վաղարշայ և Խոսրովու օրերն՝ ըրին. երբեմն պատերազմով երբեմն հաշտութեամբ ընդ Հայոց, քիչ կամ շատ ազատ թողլով զմերս : Երրորդ դարուն վերջերը և յատկապէս Դիոկետիանոսի կայսերութեան ատեն (284–305–11), փոխուեցաւ իրենց աշխարհավարութեան կերպն . փոխանակ մէկ կայսեր միահեծան հրամանատուութեան, երկու երեք և չորք միաժամանակ կայսերք կամ կեսարք և օգոստոսք երեւցան, և իրենց տիեզերածաւալ տէրութեան աշխարհները բաժնեցին քանի մի ընդարձակ վիճակ, որոց մէջ զտուած ազգային տէրութեանց այլ՝ սահման և իշխանութեան չափ որոշեցին : Այս միջոցին հանդիպեցաւ մեր աշխարհին սահմանն և բաղզն եւս. յետ Ա. Խոսրովու սպանման ի նորահատատ Պարսից Սասանեանց բոնաւրաց, մեր երկրին նուաճման, և Տրդատայ երկարամեայ պանդըմտութեան՝ երբեմն տիրելով

Հայրենի աթոռոյն և երբեմն զրկուելով, իր արիական զինուորութիւնն ի բանակս Հոռվմայեցւոց, ի մեծ վտանգէ ապրեցընելն զլիկինիոս՝ (որոյ զնդին մէջ զինուորած էր, և որ յետոյ թշնամացաւ կրօնից փոփոխութեան պատճառաւ), թողի ինչ որ կ'աւանդուի Գոթաց դէմ և Հռչէի վրայ քաջագործութիւններն, այս ամենն պատճառ և իրաւունք տուին Տրդատայ, ոչ միայն իր հայրենի գանը ժառանգելու, այլ և պաշտպան ունենալու զՀոռվմայեցիս՝ ընդդէմ Սասանեանց . և չափաւոր ազատութիւն մի տուին նորքա մեր թագաւորին, բայց տէրութեան սահմաններն ամփոփելով՝ որչափ էր բնիկ Մեծ Հայոց, ի բաց առնըլով Տիգրանայ տիրացած երկիրները և Փոքր Հայոց գաւառները : Շատ որոշ կերպով նշանակէ Ազաթանգեղոս (Ճի) այս իր ատենի Հայոց տէրութեան սահմանները, երբ Գր. Լուսաւորչի բարոզութեան սահմանները յիշէ . սկսեալ յարեւմտեան կողմէն՝ պատելով ի հիւսիս, և դառնալով յարեւմտեան հարաւ՝ պատելով զհարաւակողմն, և վերանալով յարեւելակողմն և հիւսիս . « ի Սատաղացւոց բաղարէն (Փ. և « Մ. Հայոց միջոց) մինչեւ առ աշխարհաւն « Խաղաղեաց, մինչեւ առ կաղարջօք (Վրաց « սահման), մինչեւ ի սպառ ի սահմանս

« Մասքթաց, մինչեւ ի Դըունս Ալանաց,  
 « մինչեւ ի սահմանս կասպից, ի Փայտ  
 « տակարան քաղաք արքայութեանն Հա-  
 « յոց. և յԱմդացւոց քաղաքէն մինչեւ առ  
 « Մ'ծրին քաղաքաւ, քերէր առ սահմա-  
 « նօքն Ասորւոց, առ Նորշիրական եր-  
 « կրաւն, և առ Կորդուոք, մինչեւ յամուր  
 « երկիրն Մարաց. մինչեւ առ տամրն  
 « Մահըրտան իշխանին, մինչեւ յԱմրպա-  
 « տական» : Այս սահմանաց մէջ բո-  
 վանդակին Մեծ Հայոց 15 աշխարհին՝  
 ընդարձակօրէն, որոց կ'իշխէր Տրդատ  
 ազատաբար, իբրեւ դաշնակից Հռովմա-  
 յեցւոց:

Այս դաշնակցութիւնս տեւեց իբրեւ 15  
 կամ 25 տարի, սկսեալ յամի 286,  
 յորում թագաւորեց Տրդատ, մինչեւ ի  
 սկիզբն հրովարտակի հալածանաց ըրիս-  
 տոնէից (303), յոր ստիպեցաւ Դիոկղե-  
 տիանոս՝ ի զրդելոյ իրմէ աւելի անզգամ  
 կայսերակիցներէն. որոցմէ քիչ տարի վերջ  
 (305) ինքն այլ զզուելով՝ հրաժարեցաւ ի  
 կայսրութենէ և քաշուեցաւ իր հայրենիքը,  
 Դալմատիա, բանջարներ մշակելու: Երբ  
 կայսերակիցքն սկսան աւելի բռնաւորաբար  
 տիրել և հալածել զրբիստոնեայս, Տրդատ  
 որ արդէն ազգովին ըրիստոնեայ էր,  
 կտրեց անոնց հետ դաշնակցութեան կապը,

իր երկրին ազատ տէր եղաւ, բայց հա-  
 կառակութիւն չէր ցուցըներ և որոշուած  
 սահմաններէն դուրս չէր ելներ. մինչեւ  
 որ այդ հալածիչ կայսերաց մօտագոյնն՝  
 միանգամայն և անմտագոյնն, չստիպեց  
 զինքն երեւնալու՝ միանգամայն պաշտպան  
 իր երկրին և իր նորընկալ սուրբ հաւատոց  
 ըրիստոնէութեան: Զայս հարկ է հիմայ յի-  
 շել՝ թէ ինչպէս եղաւ, ինչպէս Արշալոյն  
 ըրիստոնէութեան Հայոց՝ արեգակնապէս  
 սփոնզով եղաւ Աքեւելք Լուսաւորութեան  
 Հայոց:

Եթէ սոսկ ազգայնոցս՝ Հայոց համար՝  
 ուզէի շարել այս տողերս, զրեթէ ամաչե-  
 լով պիտի դազրէի. որոց՝ այնքան ծանօթ  
 համարիմ իրենց համօրէն լուսաւորութեան  
 սկիզբն և պարագաները, որ մեզ իրը  
 աւետարանի մի հարկ է ըլլալ, ինչպէս  
 որ Ս. Լուսաւորչի Վարդապետութիւնն  
 այլ՝ Ագաթանգեղոսի պատմազրութեան  
 կցած՝ Աւետարան Ս. Գրիգորի կոչուած է:  
 կ'ուզեմ այլ հաւատալ՝ թէ այնքան մեծ  
 երեցեր է և է այս Լուսաւորութիւնն  
 Հայոց, որ եկեղեցական պատմութեանց  
 սկզբնազրող Եւսեբեայ աչքը՝ կերպով մի  
 շլացուցեր է. եթէ օտարոտի իմն է ըսածո,  
 նոյնպէս և օտարոտի պէտք է համարիլ  
 իր պատմութեան մէջ բնաւ չյիշելն այս-

պիսի գերօրինակ զիպուածը։ Նոյնը պէտք  
է ըսել և իր հետեւող Զոսոմենոսի համար,  
որ և վրաց և ուրիշ ազգաց դարձն ի  
քրիստոնէութիւն յիշէ (Բ, 9)<sup>1</sup>, բայց  
զշայոց՝ ոչ սակայն ուրիշ տեղ մի յիշէ  
միայն՝ որ Հայք իրենց շրջաբնակ ազգերէն  
տուած ընդունեցան զքրիստոնէութիւն. և  
թէ յԵղեսացւոց և ի Հայոց աստուածային  
արանց մտաւ քրիստոնէութիւնն ի Պարս-  
կաստան. և զի՞ շատ հին է քրիստոնէու-  
թեան մուտքն ի Պարսս, ապա հնագոյն  
եւս ի Հայս խոստովանի լոելեայն կամ  
յայտնապէս՝ պատմիչն։ Միթէ, այդ պատ-  
միչը որ այլեւեայլ ազգաց քրիստոնէութիւնը  
պատմէին՝ ճանչնալով զանոնք հապատակ  
հոռմէական կայսերութեան, իսկ զշայս  
միայն ինքնագլուխ տէրութիւնն մի, այս  
պատճառաւ թողուցին յիշել. թէ արդեօք՝  
շատ զարմանալի և անժխտելի հանգա-  
մանաց հետ՝ մարդկօրէն զարմանալիք և  
երկրայելիք այլ լսելով՝ չուզեցին կամ  
չկրցան որոշել և աւանդել. այլ Հայոց  
քրիստոնէութեան վրայ բնաւ չէին տա-  
րակուսեր. և տեսանք արդէն՝ որ նոյն  
ինքն Եւսերիոս էր յիշող զՄեհրուժան  
հպիսկոպոս Հայոց՝ ի կէս Գ դարու։

1. Այս զլուի պատմութեանն այլ հարազատ չի հա-  
մարթւիր՝ այլ եկամուտ։

իրմէ ըիչ յետոյ ժամանակաւ երկու  
Ս. Հարք Լատինաց՝ զարմանալի կերպով  
յիշեն Հայոց քրիստոնէանալը։ Ս. Ամբրո-  
սիոս յիշելով Քրիստոսի ըսածը՝ ըստ  
Մատթ. աւետարանչի (Իթ, 14), « Քա-  
« բոզեցի աւետարանս արքայութեան ընդ  
« ամենայն տիեզերս։ Եւ զի սփոնցաւ,  
« կ'ըսէ, աւետարանի քարոզութիւնն ընդ  
« ծագս երկրի, և արդէն Գորք և Հայք  
« հաւատացին ի նա, վասն այնորիկ տե-  
« սանեմք զկատարած աշխարհի<sup>1</sup> ». Իսկ  
իրմէ յայտնի տեսողն Ս. Հերոնիմոս՝  
կարճ և վսեմ երկու բառով բացատրէ.  
« Իջոյց (կամ թափեաց) Հայկազն՝ զկա-  
« պարճան<sup>2</sup> »։ Այսինքն Հայք՝ (որոց յայ-  
տարար նշանն յաչս և յերգս յոյն և  
լատին քերթողաց՝ իրենց աղեղն ու կա-  
պարճն էր<sup>3</sup> ), Քրիստոսի առջեւ իրենց  
զէնքը բռնութիւնը վար դրին. և աղօթքն  
իսկ տեսնէր և վկայէր, Հերոնիմոս, երբ

1. Ս. Ամբրոս. Մեկն Կուկայ, Ժ. 14. Sicut autem  
precedit in orbe terrae Evangelii predicatio,  
cui jam et Gothi et Armenii crediderunt; et  
ideo mundi finem videmus.

2. Ս. Հերոն. Թուղթ ԾԵ. Deposuit pharetra  
Armenius.

3. Հայոց ճարտար աղեղնաւորութիւնը և բաջադի-  
պութիւնը, Հայկայ օրերէն սկսեալ՝ մինչեւ այդ յիշեալ  
Ս. Հօր ժամանակ, շատ բանաստեղծք և պատմէջը յի-  
շած են, և մեր յիշելու տեղ չէ հօս. բայց որովհետեւ

ինքն ճգնելով մօտ ի սուրբ Այրն Բեղդե-  
հեմի, ուրիշ ուժտառաց հետ զային և  
Հայք և կապարճին ուսերէն վար կ'առ-  
նուին:

Թողունք այս ոչ մեզ կարեոր ինզիրս,  
և անոր հետ մեր պատմչաց աւանդածին  
մէջ այլ քննադատութեան աւելի կամ  
պակաս ենթակայ նիւթերը. ինչպէս, Տըր-  
դատայ կերպարանաց այլափոխութիւնն  
միանգամայն և բարուց, մեհենաց կործան-  
ման ատեն դիւաց մարդակերպ փախուստն,  
Տըրդատայ գրեթէ գերահսկայ ոյժն, Գրի-  
գորի և Ս. Յակովբայ Մծրնացւոյ ազգա-  
գականութիւնն, Հոփիսիմեանց քանի մի  
գէպքերն, և այլն, որը որքան և կըրնան  
չափաւորապէս մեկնուիլ և ըստ այնմ  
հաւատալի ըլլալ, սակայն աւելի զարմա-  
նալի կ'ըլլայ՝ եթէ բոլոր Ագաթանզեղոսի  
(որ ի սկզբան՝ յունարէն զրուած է), և  
մեր Դ և Ե դարու պատմչաց ըսածներն,  
զոր Յոյնը և Ասորիք, մինչև Եզիդատացիք

այն քաղցրաբան Ամբրոսիոս Հայրն ընդ Գոթաց զուզեց  
զՀայոց, յիշենք միայն Լուկանոս բանաստեղծին այս  
տողը.

*Armeniosque arcus goticis intendite nervis.  
Պնդեցէք զՀայկական աղեղուսս ի լար զոթացի.*

Գովէ Հայոց շինած և վարած աղեղը, Գոթաց պա-  
տրաստած լարով կամ չիդով:

(Ղափիք) և Եթովպացիք անգամ իրենց  
Յայսմաւուրաց մէջ պատմեն, ասոնց անհա-  
ւատալի կամ զժուարահաւատալի երեւան:  
Արդարեւ հրաշալի են, և հրաշալեաց սահ-  
ման չկայ առ Աստուծոյ. բայց և խոհակա-  
նութիւնն կըրնայ ընտրել զհրաշալին ի  
հրէշալոյն: Եւ որքան աւելի կամ պակաս  
հրաշալի երեւի մեզ կամ օտարաց՝ մեր ազ-  
գին քրիստոնէութեան դարձն ի ձեռն Լու-  
սաւորչին, որ կերպով և է, հարկ իսկ է մեզ  
երկիւղածութեամբ գոհանալ զԱստուծոյ:

Եթէ Տըրդատայ անունն Արշակ եղած  
ըլլայ և Գրիգորի Անորէն, Հոփիսիմեայ  
այլ այլ կերպ ըստ օտարազգի Յայսմա-  
ւուրաց, չէ ինչ փոյթ. բայց իրական,  
պատմական և ստոյգ է՝ առջինին մարմով  
և մտօք զօրաւոր և զիւցազնական մէկն  
ըլլալն, երկրորդին Հայոց ազգին ընդհա-  
նրութեան լուսաւորիչ ըլլալն, երրորդին՝  
հիանալի փափուկ կապ մի ըլլալն այդ  
երկութին միջեւ. և որ և է նայուած զով  
սխրալի երեսակ մի աստուածային ներգոր-  
ծութեան՝ ի հաստատութեան հաւատոց և  
եկեղեցւոյ Հայաստանեայց. որոց բովան-  
դակ զործոց շարքն՝ արդարեւ զիւցազնական,  
վիպասանական, ողբերգական հանգուցա-  
ւոր բան մի է. սակայն բունն և կենդրոնն  
ստոյգ: Ո՞ւր թողունք որ գրեթէ ամէն երկրի

քրիստոնէութեան ընդունելութիւնն հրաշաւ-  
լեօք եղած է. և ուր հրաշք կայ ի կարեւոր  
դէպս սեփական պատմութեան, արժան է  
գոհանալ զհրաշագործողն, որ է ինքն Աս-  
տուած, որոյ և է իր արարածոյ ձեռօք:

Պարզօրէն իսկ պատմական, այլ սոսոյդ  
պատմական պատկերօք զննելով՝ այդ  
Հայոց Լուսաւորութեան առիթ երրեակը,  
և իրենց կապակցութիւնն ի լրումն մեծ  
և սուրբ գործոյն, շատ նշանաւոր և հե-  
տաքնին կ'երեւին, թէ դիմուածքն թէ  
անձինքն: Ասոնց առաջինն՝ ժամանակաւ,  
ոչ պակաս և արդեամբ՝ է ամենայն մա-  
սամբ Մեծ, ահեղ, երբեմն Դիւցազն և ապա-  
խոսովանող Քրիստոսի և Սուրբ, թա-  
գաւորն Տրդատ: Ի մանկութենէ վտանգաց  
և դժարութեանց մէջ ընկած, մտօք և  
մարմնով կռուելու յաղթելու ջանացող,  
հարկաւ և յօժարութեամբ: Եթէ լոկ մար-  
մոյ ուժով և յաջողութեամբ ըրածներն  
ըստ աւանդութեանց, նկատուին, հելլե-  
նական հսկայից և դիւցազանց դասակցելի-  
է. եթէ աննըկուն ոգին և ջանքն՝ իր հօր  
և իր ազգին տէրութիւնն և թագը կորպելու  
յօտարաց և պսակուելու, քաղաքակէտ և  
յաղթող թագաւորաց դասակցի. և եթէ  
յայսմ մասին կըուուի իր ըրած ծառայու-  
թիւնն և օգնականութիւնն հոռվմէական

ինքնակալութեան, այն՝ Ասսանեանց զօ-  
րաւոր դիմակալութեան, և կայսերաց բազ-  
մաւորութեամբ շփոթած ժամանակ, ոչ  
փոքր երախտաւոր պէտք է ճանչցուի այն  
զոռոզ տիեզերակալաց, որք իրենց կող-  
մանէ այլ՝ յայսմ զտուեցան երախտագէտ,  
և փոխադարձ օգնութիւն մատուցին և  
յաջողցուցին թագաւորութեանը: Իսկ երբ  
նկատուի իբրեւ քրիստոնէայ և առաջին  
հանդիսապէս թագաւոր քրիստոնէայ, և իր  
ազգը խմբովին քրիստոնէացընելու՝ ձեռըն-  
տու Լուսաւորչին, և յորդորով՝ թագաւորա-  
կան (կամ լաւ եւս ըսկելով արդատական):  
հեղինակութեամբ, յայսմ՝ անհամեմատ է  
իր արդիւնքն, և արժան է կրկնել մեր  
մեծ պատմչին (Խորենացւոյ, Բ, ՂԲ) ծան-  
րակշիռ տեսութեամբ խօսքը. որ՝ զԼուսա-  
ւորիչ նախակարգէ « միայն վկայութեան  
« և առաքելութեանն վիճակաւ » . անկէ  
զատ՝ յամենայնի « զուգաբան և հաւասա-  
« րագործ » զԾրդատ. նա և աւելի եւս  
քան զնա. « քանզի, խորհելն յաղագ «  
Աստուծոյ և ճգնազգեցիկ լինել՝ զոյզ (է)  
« երկոցունց (Գրիգորի և Տրդատայ). իսկ  
« նուաճել (զժողովուրդն համոզել) հաւա-  
« նեցուցողականաւ կամ բոնաւորականաւ  
« բանիւ՝ առաւել էր թագաւորին • շնորհ  
« (քան զբաղցը Գրիգորի). քանզի, ըստ

« հաւատոյն՝ ոչ ինչ կասեցուցանէր ըզ-  
« գործն. այնք աղազաւ կոչեմ և զսա  
« նախաշափիդ ճանապարհ, և լուսաւրու-  
« րեանց մերոց Հայր Երկրորդ »։ Նոյն  
դատաստանաւ վճռէ դարձեալ՝ « Բազմա-  
« փայլ ճառագայթ. - Երկրորդ նահատակ.՝  
« և մերոյ Լուսաւրութեանց՝ լուսաւր  
« վերակացու՝ - Ճշմարիտ բազաւոր », և  
այլն։ Եթէ, մարդկօրէն դատելով, Բար-  
դողիմէոսի և Թաղէոսի ատեն ըլլար այս-  
պէս Տրդատ մի՝ այն ատենէն կ'ըլլար  
Հայ ազգն այլ բրիտանեայ. իսկ եթէ  
Գրիգորի ատեն չըլլար Տրդատն՝ Գրիգոր  
այլ մասնական լուսատու մի կ'ըլլար  
Հայոց ոմանց՝ այլ ոչ համօրէն Հայոց։  
Ասկայն, « Ո՞ գիտաց զմիտո Ցեառն. կամ  
« ո՞ եղեւ նմա խորհրդատու »։

Տրդատ՝ մեր արշակունի թագաւորաց  
անընդհատ 400 տարուան ծանօթ պայա-  
զատն էր. իսկ Գրիգոր ո՞վ էր, որ այնպիսի  
մեծ և հզօր թագաւոր մի աւելի մեծագոյն  
գործոյ գործակից ըրաւ. Յանկարծօրէն և  
յօտար աշխարհէ՝ մայրենի ծածկութեանց  
մէջ կծկած, չի ծնած ճանապարհորդելով՝  
կ'արձակուի ի Հայս. կենաց լոյսը կու  
տեսնէ Հայոց հոգւոց առաջին լուսածագ  
Թաղէի հանգստարանին վրայ. իր հայրն  
Անակ՝ դաւաճանութեամբ սպաննելով զթա-

գաւոր Հայոց Խոսրով՝ խաւարցընէ զտէ-  
րութիւն և զազզ Հայոց, ի ժամանակի  
անոր յաղթող փայլմանց. արժանապէս  
ինքն այլ կու սպանուի բոլոր ընտանեօքն.  
իր գատապարտուած մարած կրակէն՝ կայ-  
ծակ մի միայն թռչի փախչի թաքչի յարեւ-  
մուտս. և յետ երկար տարիներու՝ պէսպէս  
զիպաց՝ զառնայ կ'ըլլայ Լուսաւրիչ իր հօրը  
խաւարցուցած աշխարհին. և անոր (Տրդա-  
տայ) որ իրաւունք ունէր զինքը չարաչար  
սպաննելու՝ կ'ըլլայ կենսատու յաւիտենից  
կենաց, յետ տարեսոր ժամանակաւ՝ առանց  
իմացըննելու ծառայելով իրեն՝ իրբեւ աշ-  
խարհիկ պաշտօնեայ. ինչ զարմանք է  
այս. ո՞վ մտածեց, ո՞վ հնարեց, ո՞վ կար-  
գաւորեց այս բաներս. - սա մարդկան  
գործ չէ. հրաշալի է, գործ է Աստուծոյ,  
անըննելի և ափշեցուցիչ, այլ և հոգե-  
զուարձ նախախնամութիւն. որոյ զար-  
մանալի օղակաւոր իմն յաջորդութիւն  
է՝ Տրդատայ բարեբաղդաբար թագավորուխ  
դարձին ատեն յօտարութենէ ի հայրենիս,  
զըտնելն զԳրիգոր անծանօթաբար, զորդի  
իր հօր սպանչին, և առնուլ իրեն հաւա-  
տարիմ և սիրելի պաշտօնեայ. իր ուրա-  
խութեանց միանգամայն և մոլորութեանց  
մեծահանդէս խրախճանին՝ անոր յանձ-  
նելն՝ որ զկարծեցեալ Մայրն Հայոց զԱնա-

հիս՝ ծիածան ծաղկօք պսակէ. հիացուցիչ գաղտնեաց յայտնուիլն. Անակայ որդի Սուրենի՝ (Գրիգորի) քրիստոնեայ հաւատով և դաւանութեամբ կանգնիլն իր ընտրած ահաւոր տիրոջ դիմաց. խոստովանիլն, վիճելն, տանջուիլն, և դարձեալ անկարծօրէն գաղտնեաց վերջին բողն այլ բացուելով՝ իմացուիլն ով և որու որդի ըլլալն. դատապարտուիլն ի վիրապընկեցութիւն՝ մօտ յԱրտաշատ մայրաքաղաք թագաւորութեան Հայոց և երկար տարիներ հօն մեռելատիպ մնալն, իբրեւ կայծ ընդ մոխրով, մինչև դարձեալ մեծասքանչ հրաշալեօք յայտնուելով լուսածագելն առ հասարակ ի Հայաստան<sup>1</sup>:

## թ.

Հովհանիմեանք.

**Մ**ԵՐ քաղաքական պատմութիւնն դարձեալ մթըննայ այս միջոցիս: Ագաթանգեղոսի պատմած Տրդատայ շարունակ

<sup>1</sup> Այս շղթայաշար իրաց մէջ պէտք չէ մոռնալ և ողակ մի: Աալահունի նահատակն թէողոր, զոր առաջ յիշեցինք:

յաջողաբար տէրութիւնն՝ թուի անգամ մ'այլ կոտրուած. Ներսէն՝ Սասանեանց թագաւորն աւելի յաջողած զանուի ընդդէմ Հռովմայեցւոց. որոց կեսարն Գալերիոս՝ ամօթապարտ կորակոր դարձած և մերժուած ի Դիոկլետիանոսէ, նորէն Տրդատայ նիզակակցութեամբ և քաջութեամբ՝ յաջողի իր կորանըը կանգնել. մեր երախտաւոր թագաւորն այլ այնուհետեւ (իբր 297) անընդհատ 40 տարիէ աւելի այլ թագաւորէ, ոչ միայն քաղաքական և յաղթական, այլ և զերագոյն լուսաւորութեան փառօք: — Ի՞նչպէս կ'ըլլայ այս լուսաւորութիւնն. և ինչ լուցկի է որ այն մոխրոյ տակ երկար ցուրտ տարիներ ծածկուած կայծը կ'արծարծէ և փայլեցնէ:...

Հարցընենք հին Երգողի մի և երգէ մեզ.

« ի յԵլս արեւու՝ (ի Հայս) արեւ ծագեցաւ մեզ յարեւմտից.

Զաման՝ արեգական ծածկոյթ՝ Պետրոս սեան հողմոյն հալածեալ.

Օրիորդ մաքուր հարսինն (Հովհան.) աւետիս տայր փեսաւերին.

Զարթիր Զուարբուն անուն (Գրիգոր). Եւ, զարթո՛ զթըմբրեալմն ի մեղաց.

Արք որ նընջեստ ի Գլորի, լուսատու  
լիցի քեզ՝ Քրիստոս:

Արքամբոս ոռոգեմ (ես Հոփի.) զերկեր  
(Հայոց, դու) սերմանեա, մըշակ հոգեւոր»:

Հրաւիրենց մենք այլ զհրաւիրող լու-  
սաւորութեան մերոյ՝ դարձեալ երգողի  
բերնով.

«Եկեալ ի դրախտէն կենաց՝ տոննկ  
«Խնկաքեր... հարսն Քրիստոսի, ընտրեալ  
«ի բիւրուց, ով Առորք Հոփիսիմէ : . .  
«Երեւեցար ծաղիկ զարնայնոյ, անու-  
«շահոտ վարդ կարմրերփեան, շուշան  
«ոսկէտիպ... դուստր արքայի, յոսկե-  
«հուռն պաճուճեա... Սաւառնեալ ըստ  
«աղաւնեաց՝ ելին ի յերկինս ընդ քեզ  
«Ընկերք քո. մտէք ի տաճար թագաւորի՝  
«ի հարսանիսն անապական, յուրախու-  
«թիւն յաւիտենից »:

Հրաշալի հրաւիրակն Գրիգորի և իր  
դաստիարակն Գայիսանէ՝ հռոմէական կայ-  
սերաց ցեղէն կ'ըսուին. Հոփիսիմէ՝ ըստ  
Ագաթանգեղոսի՝ էք դուստր «ուրումն յաս-  
«տուածապաշտ և ի թագակալ տոհմէ ».  
ըստ Խորենացւոյ՝ «ի ծիրանափառ օգոս-  
«տականացն ի կայսերական զարմէ »:  
Ասոնք հարիւրաւոր կուսանաց հետ՝ կէս  
ծածուկ կէս յայտնի՝ ի սահմանս մայրա-

քաղաքին Հռովմայ՝ Ա. Պօղոսի հանգստա-  
րանին քով, տեսակ մի միաբանակեաց  
կենօց ճգնէին « յարգելավանս մի կու-  
«սանաց », ըստ Ագաթանգ. : Յառաջ  
քան զմեծ հալածանս Դիոկետիանոսի,  
իբրեւ յամի 293, սկսան փնտոել զասոնք:  
ըլլայ Ագաթանգեղոսի աւանդած՝ Հոփիսի-  
մեայ գեղեցկութիւնը կայսերական թագով  
պսակելու համար<sup>1</sup>, ըլլայ պարզ իր և  
ընկերաց հաւատքն անհանգստելու համար.  
մայրն Գայիսանէ՝ իր տեղը և կուսանաց  
բազմութիւնը յանձնէ իր Զոյի կամ Եզոյի  
կամ Զիոն քրոջ, զորս՝ կայսրն ջարդել  
կու տայ, երբ իրենց ընկերաց փախուստը  
կ'իմացուի<sup>2</sup>: Գայիսանեայ և Հոփիսիմէի  
հետ հօթանասուն և աւելի ընկերք և քանի  
մի քահանայք երթան յօտար երկիրներ.  
իրենց հետ ընկերանան և արք հարիւրի

1. Որչափ այլ երկրայելի է Դիոկետիանոսի սիրա-  
հարիւն ի պատկեր Հոփիսիմէի և խնդրելն, օտարը այլ  
պատմէն նման բան մի. այդ կայսեր ի կողմանս Յունաց  
եղած տաեն՝ տեսնելն 13 տարուան գեղեցիկ աղջիկ մի,  
Ֆիլումենա անուն, խնդրելն հարսնացնել իրեն, և մեր-  
ժուելով՝ չարչարել և նահատակել զնա. ԺԹ դարու  
սկզբան (1802) Հռովմայ (Պրիսկիլլեան) Գետնագամբա-  
նաց մէջ գտնուեցան իր նշխարքն, հոչակուեցաւ անունն  
և պատմէն, տօնուի ի 10 կամ 13 օգոստով ամսոյ:

2. Գեղեցիկ խորհրդածութեամբ կ'ըսէ այս բանս՝ մեր  
պատմէն. « Զթոյնս զանութեանն ի նոսա թափեալ՝  
« արար վկայս Քրիստոսի, յորժամ ոչ եհաս բնրուելի ի  
« վարկ մանու զւր առաքելուեցոյն » (Հոփիսիմէայ):

չափ, և երկար տարիներ երկրէ երկիր  
թափառին: Ո՞ւր և ի՞նչպէս.. յայտնի չէ  
ամենն, և չէ հնար զիտնալ, բայց զայս՝  
որ յարեւելը կ'անցնին և Քրիստոսի տնօ-  
րէնութեանց տեղուանքը կ'ողջունեն իրրեւ  
ուխտաւորք: ապա ուրիշ ուխտի տե-  
ղուանք Ասորւոց կողմերը, ուր որ կամ  
Քրիստոսի սրբազն զգեստոց կամ չար-  
չարանաց գործեաց յիշատակ մի կար,  
կամ Առաքելոց հանգստարան և նշիւարք:  
այսպէս կու գան յԵղեսիա՝ Քրիստոսի  
դաստառակը կամ անձեռագործ նկարեալ  
պատկերը պատուելու: Բայ այսմ և եղը  
ի Գեթսեմանի Ա. Աստուածածնի գերեզ-  
մանին քով երկար ատեն կեցան, իրմէ,  
կ'ըսէ պատմիչն, պատուէր առին որ եր-  
թան ի կողմանս Հայոց, և գտնեն ու  
պատուեն հօն իր փայտեայ պատկերը,  
բանդակեալ յաւետարանչէն Յովհաննէ,  
զոր տեսանք ի Բարդողիմէոսէ Առաքելոյ  
զրուած ի Հոգեաց վանս: Այս այցելու-  
թիւնը կամ գալստեան գէպը՝ մեր բազ-  
մաքրքիր Խորենացին գտած և զրած է  
առանձինն, որ պէսպէս վերնագրի ի Ճա-  
ռնատիրս, որպէս այս. « Յաղագ Հոխի-  
« սիմեսեցն, ի ձշմարիտ պատմագրացն  
« Յունաց գտեալ Մովսիսի Խորենացոյ »:  
Պատմագրաց զլիստորն՝ յորմէ օգտուեր է

մեր պատմիչն՝ ինքնին յանուանէ կ'իմա-  
ցուի, (թէ և այլով մասամբ կենացն, ժա-  
մանակին և զրոցն անծանօթ է մնացեր  
յետոյ), և կ'ըսէ. « Զատենաբանութիւնս  
« իմաստնոց զրոց յԵլլադայ՝ յԱտահկէ՝  
« իմ ընթերցեալ բազում անզամ, գտի  
« զոճ զրոցս, որ ի ճահ գայր պատմու-  
« թեանս մերոյ հիւսման, յոյժ պիտանի  
« և յօգտութիւն մեզ լսի, որ անուն զրոցն  
« կոչի Դարքի Հովվմայեցոյ զիրս Եկիւ-  
« սիստես (Եկեղեցական պատմութիւն):  
« զոր կամեցեալ իմ թարգմանել և ոչ  
« ժամանեցի, մնաց այլում տեղւոյ կամ  
« իմաստնոյ »: հետեւեալ խօսքով մ'այլ  
կարծել տայ՝ թէ Ազաթանգեղոս եւս նոյն  
զիրքը տեսած և բննած ըլլայ. որով այն  
հեղինակն այլ հնագոյն կ'ըլլայ:

Տարիներով կ'երեւի այս կուսանաց յայլ  
և այլ կողմանս Հայոց գեգերին և ցրուիլն  
յարեւմտեան կողմն՝ թողլով զՄանի յԵ-  
կեղեաց գաւառի, ի հիւսիսակողմն՝ զՆունե,  
որ կ'ըլլայ բարոզիչ վրաց. այսպէս հարկ  
է որ ուրիշ կողմեր այլ թողուած ըլլան,  
և միայն իրենց կէսն միարան գտուին  
իրենց նահատակութեան տեղում՝ ի կեդրոն  
Այրարատայ: Միայն հարաւային Հայոց  
կողմերում կենալն և շրջիլն աւելի ծանօթ  
է. և թէ ոչ ոչ ուղղակի յԵղեսիոյ եկած են

հօն՝ այլ յարեւմտեան Հայոց. կամ Երկրորդ  
անգամ եկած են այս կողմու, ի գաւառն  
Բգնունեաց, ի սահմանս անուանի Խլար  
Քաղաքի, ուր յետոյ իրենց կեցած տեղին՝  
Ա. Գրիգոր վայելուչ եկեղեցեակ մի շինեց,  
և ըստ իր սովորութեան՝ Խաչ մի կանգ-  
նեց, և տեղն այլ կոչուեցաւ Ա. Խաչ: —  
Աստի՝ Վանայ ծովուն արեւմտեան եզրքը  
պատելով՝ եկան կեցան ի Թուխի, ինչուան  
հիմայ ծանօթ տեղ. — աստի՝ գէպ յարեւմ-  
տեան հարաւ կու գան՝ ի գաւառն Մոկաց,  
և կենան ատեն մի այն տեղ՝ ուր յետոյ  
Ա. Գրիգոր վանք մի հաստատեց, որ նոյն-  
պէս Ա. Խաչ Մոկաց կոչուի, և անուանի  
ուխտատեղի մի Կ'ըլլայ ի Ժ-ԺԱ. գարս,  
և Գր. Նարեկացւոյ ատեն պայծառ շինու-  
թեամբ զարդարեալ և հոչակեալ: Թէ այս  
տեղ և թէ ըիչ մ'այլ հեռու՝ կձաւ կամ  
կրամ կոչուած տեղ մի՝ շատ նեղութիւն  
և հալածանք կը են կուսանքն, քրմաց և  
զանոնք զբողութիւաց ազգմամբ. բայց  
Գայիանէ իր խաչով և իրեն հետ հոգցող  
Քահանային՝ Գանեիկ և Եսայի, աղօթիւք  
Քահանային՝ Օբհութեամբ՝ հալածեն զանոնք. որք  
և օբհութեամբ՝ հալածեն զանոնք. որք  
արգել կ'ըլլային մեր սուրբ ուղեւորաց  
ձիերուն կամ ճամբռւն. և « զայրագեկեալ  
զիւաց՝ զիմեալ ի վերայ՝ խեղէին, ծոէին,  
« պնչատէին զպաշտօնեայս իւրեանց. որ

« և անդ առաքելաւ նորին քահանայիցն հալա-  
« ծեալ զնոսա և քանդեալ զպաշտամունս  
« նոցա, բժշկէին զիսեղեալսն. վասն որոյ  
« տեղին կոչեցաւ կձաւ և կրամտ, թէ՝ ի  
« յայսմ տեղւոջ կատիին կամ կյանատիին.  
« զեւըն զմարզիկն. յորում տեղւոջ Ա.  
« Գայիանէ թողու զիսաչն իւր՝ ախոյեան (՞  
« զիւացն, որ էր Աւազակին (Քրիստոսի  
« հետ խաչուղին). որ և զտեղին յետոյ  
« հաստատէ վանս Ա.ն Գրիգոր »: — Այս  
գէպքս մեծ համբաւ հանէ. որոյ համար  
կուսանքն գաղտուկ կերպով զիրենք կոր-  
դուաց խորտուբորտ լերանց մէջ ձգեն, և  
անցնելով Սողոմիի լեռնէն՝ կու գան ի կողմ  
մի, որ ըստ տպագրի պատմութեանս գրուած  
է Բերկրացւոց զաւառ. այլ ծանօթն Բերկրի՝  
Առերանի զաւառին մէջ է, չանայ ծովուն  
արեւելեան կողմը, իսկ լաւագոյն օրինակի  
մէջ զրուի Բագրացւոց զաւառ. և հիմայ  
այլ ծանօթ է այդ Սողոմիի կոչուած լերին  
մօտերը Պիրոք կոչուած տեղն: Սողոմիին  
այլ ծանօթ է յաշխարհագրաց, Սողոմիիւա  
կոչմամբ, և ի տեղացեաց հիմայ այլ՝  
Սույիվա: Ասոր մօտ կուսանքն խրճիթներ  
շինելով՝ պահ մի բնակին<sup>1:</sup>

1. Այս տեղ մեր պատմիչն յիշէ աւանդութիւն մի,  
թէ երբ ջրհեղեղին տապանն կու հասնի այս լերանս,  
նոյ կանչէ. « Ո՛ Սողոմի, թէ՝ Աղոցածուկն զիպեցաւ

Առղոփէն կամ Թմմիսէն կու զան՝ այն  
Կորդուաց և իր սահմանակից Տմորեաց  
գաւառին միջեւ, յԱլիկ կամ Ալիկա կո-  
չուած աւանն, յանուն կնոջ մի Սմբատայ՝  
Այրաբազ կոչուած սպարապետին Արտա-  
շիսի թէ, ի վիպասանից Հայոց որք ան-  
շուշտ շատ առասպելներ հիւսած էին այս  
քաջին և իր այդ սիրած Ալիկա<sup>1</sup> ասորի  
կնոջ վրայօք, որոյ անուամբ կոչեց իր  
ձեռակերտն, որ հաւարակօրէն կոչուէր  
Այսն Մմբատայ: Այս կողմերս (Տմորեաց)  
այն ատեն այլ կան եղեր « ընկզուտ ծա-  
« ուաւէտ տեղիք »: ուր զետոյն վրայ  
ձգուած կամը ջին մօտ՝ ատեն մի բնակին  
կուսանըն: — Անկէց կ'անցնին Մշկեց  
կամ Մշկունեաց լերան խորին խորշ մի,  
որ այսպէս կոչուի՝ լերան վրայ արածող

նաւիս»: նոյն լեռը կամ մէկ մասն այլ Սարարադ կո-  
չին, և անոր ստորոտին եղած շին կամ քարաք մի՝  
Թմմենի կամ Թմմենի կամ Թմմիս, որ նշանակէ ութ, իրը  
թէ, « յայսմ տեղուղ ութ ողիք ելին և տապանէն »:  
Այս 1600 սարուատ աւանդութիւնն այլ զեռ լսուի այս  
կողմերում, և Թմմին՝ փոխանակ ութի՝ ոմանը 40 կ'ը-  
սնն. տերն այլ Տիգրիս զետոյ Շաղ և Պօզդան օժան-  
դակաց միջոց է: Մեր խոհական պատմէն՝ այս առթիս  
այլ մտերմարար խորհըրդածէ. « Այսորիկ թէ արդարը  
« կամ սուսը՝ ինձ ոչ է Փոյթ. ըայց միայն զի հաճե-  
« ցուցից զմանկազունի բո մտացդ զտարփանս. վասն  
« այսորիկ զրեմ քեզ զընաւն ի զիրս յայս»: Յայտ է  
որ երիտասարդ իշխանի մի զրէք խորենացի, ըլլան  
Սմբատն Բագրատունի և Արծունի, ըլլայ ուրիշ մէկն.  
1. Կոչուած է և Ովկի:

մշկապրտ այծեմանց համար, որ մեր եր-  
կրին յատուկ կենդանական բերք մի է.  
իսկ տեղազրութէն՝ այս կողմս այն ատեն  
կամ պատմէն զրած ատեն՝ Հայաստան  
դաշտ կոչուի եղեր, նշանաւոր անուամբ.  
որ Հայկայ և իր կազմոս որդւոյ աւան-  
դութեանց վերացընէ տանի՝ մեր միաբը:  
Այս տեղ գտան կուսանըն շատ բորոտներ,  
զոր ըստ հեթանոսական անզրթութեան՝  
հասարակաց բնակած գեղերէն վնատէին,  
և Սուրբն իրենց աղօթիւց և ցահանայիցն  
օրհնութեամբ բժշկեցին. և թէ ապագայից  
համար այլ բժշկարար աղբիւր մի բղիւե-  
ցին, և թէ իրենց պառաւ բնկերաց հա-  
մար, որ չուզեցին աւելի առաջ երթալ, և  
բնակեցան հօն մինչեւ իրենց մահը: Իսկ  
զօրաւորքն եկան թզնունեաց<sup>1</sup> (Վանայ)  
ծովուն եղերբը, յետոյ Ո. Թեկողրոս կո-  
չուած տեղ մի: — Աստից այլ զարձեալ  
դէպ ի հարաւակողմն, Տիգրիսի օժանդակ  
զետոյ մի եղերբ, որ կանգար և Ազու-  
արար կոչուած լերանց միջեւ անցնելով,  
թափի ի մեծ զետն: Այս տեղ աւելի եր-  
կար ատեն կեցան կուսանըն, անոր համար  
տեղն այլ կոչուեցաւ Ո. Տիկին: — Աստի  
կու զան իրենց մէկ նպատակեալ տեղն, ի

1. Ամանը զրեն թժունեաց.

Վանս Հոգեաց, ուր էր « Պատկեր Տիրամօրն, « որում երկրպագեցին՝ ուրախացեալը, և « տային գոհութիւն Սրբուհւոյն ». բայց իրենց փափազին համեմատ չկարցան երկար ատեն կենալ հօս. որովհետեւ տեղոյն քրիստոնեայքն՝ որ գաղտուկ կ'ապրէին, վախնալով յայտնուելու՝ բռնադատեցին զլլ. կուսանսն չուշանալ իրենց քով: — Կամայ ակամայ ստիպուեցան սորա վերջին երկրպագութիւն մ'այլ ընելով իրենց ամենասիրելի Տիրամօր՝ երթալ ենել ուրիշ մօտաւոր դժուարակոխ լերան մի զլուխ, Փաշամ կամ Պաշատոյզ կոչուած (և սիսամամբ Պաշատ զրուած և տպուած). ուր՝ Կ'ըսուէր թէ՛ շատ մեծ բազմութիւն դիւաց կայ, երկու բազնաց կամ կուստանց մէջ և շուրջ, Արամազդայ և Աստրդիման, Հայոց գլխաւոր դից և դիցուհւոյ. և այնքան խառնիխուռն աղաղակ և շփոթ Կ'ըլլար (անշուշտ քրմաց խարդախութեամբ), որ մարդիկ իրարու խօսք չէին հասկընար, և անկէ սովորութիւն կամ առակ եղած էր ըսել (և Կ'ըսուէր մինչեւ ի ժամանակ պատմըչին), թէ՝ « Թուիս ի Պաշատոյ « դիւացն գալ՝ գլուխ անլուր և անիմայ »: Այս լիոնէն խորածոր մի իջնելով դէպ յարեւելան հարաւ, ուրիշ լերան մի վրայ գտան մեծ կրականոց կամ « Տուն կրակի

« անյագ հրոյ, անդադար այրման առ « տուածոցն. և զմոխիրն<sup>1</sup> աստուածացու « ցեալ գոլով ի սեաւ բարին՝ հոսէին յակն « .յորդաբուղիս աղբերն՝ որ բղիսէ յոտս « լերանցն, որ է յառաջս Խորալիմին, որ « տեղին Բուր լսի, բանզի անուն քրմա « պետին Բութ կարդայր. և զի ասէին « զկրակն՝ քոյր, և զազրիւրն՝ եղրայր. « յերկիր ոչ արկանէին զմոխիրն, այլ « արտասուօք եղրօրն (Չըով աղբերն) ջըն « ջէին: Եւ յայրս բարին որջացեալ կային « վիշապը երկու՝ դիւացեալը և սեւա « ցեալը, որոց՝ աղջիկ կոյս և պատանիս « անմեղս զոհէին. յայնոսիկ ուրախացեալ « գեւըն՝ զուարճանային արեամբն և բագ « նօքն, հրով և աղբերբն, ահազին իմն « տեսիլս և փայլիւնս, ձայնս և թնդմունս « և կայթմունս զործէին. և ի մէջ խո « բաձորոցն օձք և կարիճք լի թունօք « մահարերին լցեալ էր »: Այս ամեն զարհուրելի և բստմելի սնոտիքը՝ Ո. կուսանքն իրենց լացով, աղօթքով և խաչին նշանով՝ ու բահանայիցն օրհնութեամբ փշրեցին փճացուցին, և դեւերը կամ զիւապաշտներն, այնպէս հալածեցին, որ՝ « Նման սաստիկ հողմոյ ի լեառնէ ի լեառն

1. Ուրիշ Օր. զբարինս:

« Փշելով փախչէին, (և) ոչ այլ ինչ լսիւր՝ « բայց վայ զվայիւ ճիշեալ »։ Մինչեւ ցայսօր, կ'ըսէ պատմիչն, այն խորածորոյն մէջ « օձք մարմնեղէնք քարացհալ « երեւին ի վերայ բազնացն »։ Բաղդաւոր եղան այս դժնղակ տեղւոյ մօտիկ զիւլի բնակիչըն, որք տեսնելով տեղւոյն սրան-չելի փոփոխութիւնը՝ հաւատացին ի Քրիստոս և մկրտուեցան ի քահանայից՝ ընկերաց կուսանացն։ Կ'աւելցընէ պատմիչն. թէ, « Եւ ոչ ոք ընդդիմացաւ նոցա. քանզի « տեղիս այս գոլով Անակայ՝ հօր Գրի- « գորի, ի լսել զրօթ մահու Անակայ և « Խոսրովու անցեալ զնացին փախստա- « կանք, և ոչ գոյր նոցա զիմամարտ »։ Այսինքն, Անակայ մարդիկն՝ տեղւոյն տեարքն՝ փախան զնացին, և հօն մնացին բնիկ ռամիկ գեղացիքն, որոց դէմ կեցող արգիլող մի չկար հիմայ, և անվախ քրիստոնեայ եղան, շնորհօք կուսանացն։

Իսկ ասոնք այն լեռնէն վար իջան գէպ ի հիւսիսակողմն, և եկան ի կորիր զիւղ, ուր նոյնական կառց, օձից և ջրոց պաշտամունք կային, և նոյնական այլ ջնջեցին, աղբիւրն այլ ցամքեցուցին. որոց վրայ յետոյ Լուսաւորիչն երկու եկեղեցի շինեց, իւաչ կանգնեց, և յիշատակ թողուց անոնց՝ իր գոտին և գաւազանը։ — Աստի ելան

կուսանքն մոտան ի Տոսր՝ գաւառ Վանայ, և ասոր լիրան հարաւակողմը իւաչ կանգ-նելով՝ շինեցին և բնակեցան, տեղն այլ Ա. Խաչ անուանելով. բայց լսելով որ իմացուեր է իրենց ով ըլլալը և փնտուիլը, թողուցին ելան ի Վարագ լեռ. ուր գետ-նափոր խորշեր շինելով պահուըտեցան, և երկար ժամանակ բնակեցան, և ոմանք միշտ հօն մնացին. նոյնական երկու քահանայից այլ, որք ամեն ուրբաթ օր այն քարայրից և խորոց մէջ պատարագ մատուցանելով՝ տեղն այլ յետոյ Ուրբար-այրը կոչուեցաւ. այս տեղ միայն հաց և ջուր ճաշակելով ճգնեցան մինչեւ իրենց երջանիկ մահը։ Իսկ միաբան գունդ կուսանացն՝ որոց թիւ՝ աստ անդ ցրուելուն պատճառաւ կէսին հասեր էր, նորէն իրենց խորշերէն դուրս ելան՝ յառաջ երթալու. բայց թէ ինչ ճամրով և ուր և ուր գաղուելով՝ ի Վարագայ մինչեւ ի Վաղարշապատ մայրաքաղաքն, մեր պատմիչն կ'ըսէ. « Անտի՝ զերթալն ի մարտիրոսական « տեղիսն՝ յաղագս որոյ մեզ փրկութեան « ճանապարհ, ուսցիս համառօտ յիգաւ. « թանգեղոսէ »։ Ազաթանգեղոս կուսանաց ճամրորդութիւնները չի պատմեր. այլ մէկ շունչով կամ զբչով՝ Հռովմէն հասցընէ « ի Վաղարշապատ, ի նիստ թագաւորացն

« Հայոց, այնուհետեւ մտանէին ի հնձաւ  
 « նայարկս այգեստանւոյն, որ կան շինեալ  
 « ի հիւսիսոյ յարեւելից կուսէ. և կերաւ  
 « կրէին ընչիւց իւրեանց՝ ի վաճառաց  
 « քաղաքին. և ոչ այլ ինչ զոյր թոշակ  
 « ընդ նոսա զոր ունէին. բայց մի ոմն ի  
 « նոցանէ ունէր արուեստ ապակագործու  
 « րեսն, առնել ուղունս ապակեղէնս, և  
 « տալ զինս՝ ընդ կերակրոյ՝ աւուրն պա-  
 « րենի ռոճիկ »:

Դաղրինը մենք այլ հօս այս Ա. կու-  
 սանաց երկար ճանապարհազրութենէն, որ  
 թերես ընթերցողին այլ երկար և աւելուղ  
 թուի. բայց, ոչ միայն գիտնօրէն հետաքըն-  
 նական է զա, այլ և մեր էական խնդրոյն  
 համար կարեւոր, ինչուան Գ. դարու վեր-  
 ջերը ըրիստոնէութեան հետքեր յայտնելով  
 ի Հայս, իրեւ վերջին նշոյլը Արշալուսոյ՝  
 յառաջ քան զելս համատարած լուսաւո-  
 րիչ արեգականն :

Ասկէ այլ աւելի՝ զարմանք մի ի զար-  
 մանալիս՝ ցուցընէ Նրախախնամութիւնն  
 Աստուծոյ, այնքան երկար ճամբաներով՝  
 յԵւրոպիոյ, յԱֆրիկէի (յԱղեքանդրիոյ)  
 և յայլեւայլ աշխարհաց Ասիոյ՝ առաջ-  
 նորդել բերել յայլազան այլակրօն ազգաց  
 միջեւ, երբեմն շիտակ և երբեմն խոտոր-  
 կտուր ճամբաներով՝ քանի մի տասնեակ

պառաւ և օրիորդ կուսանաց, հանդերձ  
 իրենց հոգեւոր պաշտօնէիւր. տեղ տեղ  
 ցրուելով և թողլով անոնցմէ, և զբազ-  
 մութիւնն՝ առանց հեթանոսաց զզուանաց  
 և հալածանաց մատնելու՝ հասցընել՝ ուր  
 որ սահմաններ էր իրենց փառաւոր և ան-  
 մահ յիշատակաց արժանի վկայութեամբ:  
 Դարձեալ, զարմանք մ'այլ, նման սպա-  
 նողի որդի Դրիգորին՝ առ որդի սպանելոյն  
 բերել յարեն, առ նոյն թագաւորն Հայոց՝  
 փնտող կուսանացն՝ զրդմամբ կայսերն,  
 բերելն ինչուան արցունեաց ազարակին  
 մէջ դաղրեցընել զԱյն, որոյ վրայ իթրեւ

« Ի վերայ միոյ պատուական մարգարտի՝  
 Խաղացին ցընծալով՝ ամենայն հեթանոսք.  
 Արեւելը, յԱրեւմուտս ընթացեալ հասին,  
 Քարոզել յայտնապէս ըզչընաղ տեսու-  
 թիւնն :

Լըւան թագաւորը և լըցան խնդութեամբ.  
 Որսալ յանձն առին ըզգաղտնի մեծու-  
 թիւնն .  
 Պարգեւել իրերաց խոստանային բանիւր,  
 Եւ ծածուկ հնարիւր՝ գողանալ ի մի-  
 մանց »:

Եթէ սոսկ քաղաքական դէպք մի ըլլար  
 այս կուսանաց այսպիսի ճամբորդութիւն

մի, արժան էր կանգ առնուլ և քննել զարմացմամբ. իսկ երբ այդ ղժուարակոյն խորտութորտ ճամբուն ծայրն՝ կու համնի ի բարձրութիւնս երկնից և յարքայութիւն Աստուծոյ, չարժեր այդ կուսանաց արեամբ գնուած անձին համբուրելով իսկ հետեւին՝ անոնց արիւնուած և պատըստած փափուկ ոտից կընթին. — Կնքեմք այս տեղ և և մենք մեր եկեղեցւոյ Արշալուսոյն պատմութիւնը, եթէ չենք կարող՝ ոչ այն կուսակոխ ճամբաներն և ոչ կոխող գարշապարները պագնելով համբուրել անոնց բիւր անգամ համբուրած և համբուրելով զօրացած՝ Խաչը. և զառնանք Քիչ մ'այլ աւելի մօտէն նկատել Հայոց ազգին հրաշալի քրիստոնէական լուսաւորութեան երրորդ միջնորդը. Հսիխսիմեն:

ՀՅԻՒՓՍԻՄԵԿ. մեծ խորհուրդ և ամուս ցամկալի. զթորեալ ի յերկրի և գասեալ ըմդ նրեշտակու. նղեր օրիմակ սրբութեամ կուսանաց. պարզապետութիւմ արանց արդարոց.

Յիշելով ինչով որ կնքեցինք մեր վերջին ըսածը, եթէ ոչ անկարելի՝ բայց շատ դժար է պարզաբար պատմել Հսիխսիմեանց նահատակութիւնը, այն առթիւ հետեւալ Տրդատայ դէպքն և բոլոր ազգին Հայոց, ապա Գրիգորի Եղի ի Վիրապէն և Լուսա-

ւորելն զաշխարհս մեր. մանաւանդ որ՝ արգէն երկարօրէն պատմուած և ծանօթէ մերայոց՝ յԱգաթանգեղոսէ և յայլոց, ի գեղեցիկ և յաշխոյժ ներողէ Խորենացւոյն իր երիտասարդութեան ատեն զրած, ի Պատմութեանց և ի ճառից Լուսաւորչի վրայօք. յարոց նշանաւոր են Գրիգորի և Յովհաննէս Սարկացագ վարդապետաց, յորս միշտ խառնուին յիշատակը Տըրդատայ և Հոփիսիմեայ, և ի պէսպէս Շարականցն և Երգոց ի պատիւ երիցս ևս Սրբոցս՝ գործակցաց Լուսաւորութեանս (Տըրդատայ, Գրիգորի և Հոփիսիմեայ), և մանաւանդ ի յետին տեսակէ յիշատակարանաց՝ կոմիտաս կաթողիկոսի՝ Անձինք Հսիխսիմեանց կոչուած ըստ թուոյ այբուրենից մերոց տուն տուն գեղեցիկ բաղցրանուագ քերդուածէն. որ որբան արժանի է պատուոյ



Ս. Հոփիսիմէ.

բարձրաստիճան երգողին և երախտեաց  
Երգուածին, գեռ փափազել տայ որ մեր  
այրութենքն (որ երբեմն բազմաթիւ թուին)  
այլ աւելի բազմաթիւ ըլլային, որպէս զի  
և այդ աննման երգն աւելի երկար ըլլալով  
անուշցընէր զլսելիս, զմայլեցընէր զմիտո  
և հիացընէր զնոփիս: Ալդ, յետ այսպիսի  
զրչաց և երգչաց՝ պատմութեանս կարգը<sup>1</sup>  
հետեւցընելու համար՝ ուրիշ յարմարագոյն  
մէկ մի չեմ կարող գտնել, բայց զնոյն  
ինքն Հոփիսիմէ. զայն՝ որ զԳրիգոր հրա-  
փելու ելնել. « Զարթիր զուարթուն անուն,  
Ել », կանչելով. թող հիմայ այլ նախ  
մենք կանչենք իրեն, « Ալի՛, Ել ի Հնձա-  
նէլ, Մո՛ւտ ի սենեակն արքունական » . և  
կանչէ կրածդ և ըրածդ, թողլով այն սև  
սենեկին սաղբանքը : ... Ահաւասիկ նա.  
ահաւասիկ ամենայաղթն Տրդատայ գերա-  
յաղթն Հոփիսիմէ. որ

« Ելանէր ի Աենեկէն՝ որպէս փեսայ յա-  
ռագաստէ.

Գայլ անցանէր առ հընձանաւն, ձայն ա-  
ւետեաց մատուցանէր,

Ուրախ լերուք, անփորձ կանայք, և ցըն-  
ծացէր, կոյսք իմաստունք.

Զի ես հարի ըզպատերազմն, և յաղթեցի  
ախոյենին :

Անդ՝ արեան հնձան հարեալ, նոր առա-  
գաստ զարդարեալ.

Աստ մահու հրաւէր հասեալ, զիս՝ սրոյ և  
հրոյ են հրաւիրեալ:

Փող հարէր ի Հռովմ քաղաք. տուք աւե-  
տիս Առաքելոցն.

Նո՞ր հարսանիք են ինձ այսօր. եկայր,  
տեսէր զիս հարսնացեալ:

Քող արկէր, յօրինեցէր, կարմիր արեամբ  
զարդարեցէր.

Յուղարկեցէր զիս յառագաստն, ի յերկնա-  
ճեմ հարսնարանն :

Փութացարուք ի Գողգոթա. անդ բեւե-  
ռեալ Տէրն ի խաչին,

Զի ըզմեզ ազատեսցէ ի կապանաց մեղաց  
մերոց : —

Եկայր և մեք խաչակցեսցուք: ըզփառ ի  
վեր առաքեսցուք,

Որ ընտրեաց և ընկալաւ զերանելի սուրբ  
Հոփիսիմեանսն<sup>1</sup> :

1. Երգողս հնագոյն երեւի քան զՇնորհալին. իսկ սա  
իր քաղցր ոճով թիզ մի փոփոխելով՝ հրապուրէ լսել իր  
ձայնն այլ ի հետեւեալն.

Երջամիկ հոգիահրաշ  
Կոյսըլմ մաքուր Սուրբ Հոփիսիմէ,  
Լոյս ծագեցալ ի Լատիթէ՝  
Հայոց միծաց՝ յարեւմըտէ,  
Կուսական փողըթ գոնէր,  
Տայր աւետիս Սուրբ Գրիգորի.

\*  
\*\*

Յայտնի է ամենուն ընդ Հոփիսիմէի՝  
իր դաստիարակն Գայիանէ, զոր Մայր  
զգաստորեւան կոչեն պատմիչք և ներբո-  
ղիչը մեր. յորոց՝ Խորենացին փափուկ  
կերպով խօսեցնել տայ զսանն առ սանա-  
մայրն, երբ յաղթաբար զարձաւ յարջունի  
սենեկէն՝ ի Հընծանն. « Զուարձացիր և  
« ուրախ լեր, Գայիանէ, մայր որդուցն  
« լուսոյ... ահա ծաղկեցար որպէս շուշան,  
« և զանթառամ վարդ իմոյ կուսութեանս՝  
« ի քո զրկացդ բուսեալ փթթեցեր, ի  
« փառս և ի զարդ Հայաստան աշխար-  
« հիս: Արդ, մայր իմ, յուղաբկեա զիս  
« յառագաստ՝ առ Բանն, ուր հրափրե-  
« ցայն. փութա, ես ճեպիմ. զի Եղբօրոր-  
« դին իմ էանց, և ոզի իմ ել ընդ բանի  
« նորա: Երթամ խնդրել զոր սիրեաց  
« անձն իմ... ընդ հովանեաւ նորա հան-

ՓՈՒԹԱ Ե'Լ ի Վիրապէդ,  
Լուսաւորիչ չայաստամի.  
Համակամ ընդ չոփիսիմէ.  
Վըկայութիդ Գայիամէ,  
Մեզ լուսաւուք յարեւմըտէ,  
Տանըս չայոց ի Լատիմէ,  
Ծովայիմ շուշամ ծաղիկ  
Բուսեալ ի տանըս թորգոմի,  
Ոռոգեալ արեամբ Սըրբոցը  
Գետրոսի և Պաւոսի.

« զեայց յանստուեր լոյսն: Ե'Լ, տե՛ս զկոյս  
« նահատակս. զհանդէսն կատարեցի, զա-  
« խոյեանն հարի, զպատերազմ վանեցի,  
« ի մարտի տապս պասքեալ՝ ծարաւիմ.  
« տենչամ մերձենալ ի հոգեւոր կենաց  
« աղբիւրն՝ որ ի խաչին վասն իմ ծա-  
« բաւեալ... Ե'Կ, տես զիս՝ մաքուր իմով  
« կուսութեամբս՝ ի խաչին զնովաւ արկեալ  
« զիրկս, արիւնաներկ իմով շբթամբս  
« զազբիւրն աստուածային ըմպելոյն յիս  
« ձգելով: — Եւ ձեզ աւետիք, կուսանք  
« իմաստունք. ելէք և տեսէք զդշոյն ձեր  
« զՀոփիսիմէ՝ պսակաւն որով պսակեաց  
« զնա տէրն իւր՝ յաւուր նորա հարսնու-  
« թեան... թողէք զՀնծանդ. սլացարուք  
« ի թեւս հոգւոյն, մաքուր պղաւնիք և

Ի վայելուչ զեղ պատկերիմ  
Ցիմարեցամ ազգըն չային.  
Գետք և իշխանք առ համարակ  
Նկն ի զուրըն չընծանին.  
Զայն աւետեաց մարմնակամիմ.  
Նորա տային չոփիսիմէին.  
Այլ այն բամբ ուրախալիմ.  
Կուսին ի բօթ համարէին.  
Աւետին քեզ, կիմ ազատ.  
Եղեր տիկին չայոց մեծաց,  
Արքայութի արեւելեաց,  
Տանս Արամայ զըշխոյ փառաց,  
Արի, ե'լ ի չընծամէդ,  
Մըւտ ի սենեկակ արքայակամ.  
Հարսն եղեր արեւելեամ,  
Եւ թագութի տամս թորգուեամ.

ЧИТАЛИЩЕ  
„КРАСИРАЦ“

« օրիորդք իմոյ հարսանեացս... ելէք ընդ  
 « առաջ արիւնաներկեալ իմոյ ֆեսային,  
 « զի և գուք ընդ իս փայլիցէք արքու-  
 « նական նորա ծիրանեօքն, ի փառ և  
 « ի զարդ հրեշտակաց և մարդկան... Ու-  
 « բախ լեր և ցնձա, Հռովմայեցւոց եկե-  
 « ղեցի, մայր Հոփիսիմեայ և հարսն անմահ  
 « փեսային, հարսն առաքելական, որ  
 « աւետարանին թեւք ի քէն սլացան յա-  
 « բեւելս... Բերկրեա, Այլրարատ, աս-  
 « տուածապարգեւ աւետեօքս. ահա ելանեմ  
 « ի քոյդ Գողգոթա, ըմպել զբաժակ չար-  
 « չարանաց Արարէին՝ իմոյ կուսութեան  
 « բաժակաւս, արբուցանել քեզ ծարաւոյդ՝  
 « զկենարար արեան բաժակ անմահութեան  
 « և լուսոյ: Եւ քեզ աւետիք, երկնաւոր

Յայթամ Սըրբոցը չոփիսիմեանց՝  
 ի ծայնս ողբոց աղաչանաց  
 Սղբիւրս ըթղիւալ յորդ արտասուաց,  
 չառաչէին առ տէր Աստուած.  
 « Փութացիր մեզ յօգմութիւն,  
 Տէր ապաւէն և փըրկութիւն.  
 Մի՛ թողուք զմեզ ի ծեռաց  
 Յօտար երկիրս խուժաստանեաց»:  
 Զայն անեղ նըթչեաց յիրկմից,  
 Բարբառ եղեւ ուրախութեամ.  
 Մի՛ երկըթչէք, ի՛մ սիրելիք,  
 Զի ես ընդ ձեզ եմ յաւիտեամ.  
 Զօրացաւ կոյսի ի ծայթէն,  
 Դիմեաց ի մարտ պատերազմին.  
 Ենար վանեաց զնըսկայ արքայն,  
 Կոխեաց զվեշապն անդըթդակամ.

« Նահատակ և քարոզ փրկութեան, բազ-  
 « մափայլ ճառագայթ, որ ծածկեալզ ես  
 « ի զրի. ահա հասի քեզ ի թիկուն»  
 « սլացեալս, թեթեւընթաց ամպով իմոյ  
 « կուսութեանն . . . Ծագեա, Լուսաւորդ  
 « մեծ, ի խորոց անդնդոց, քաղցրանուագ  
 « լուսովզ զաշնարհարձակ ճառագայթա-  
 « լոյս փայլումն աւետարանին՝ սրբոց  
 « հարցն թագէոսի և Բարթողիմէոսի. եր-  
 « կարանչիւրոցն լուսով փթթեցո՛ զիւսի-  
 « սի.. իմ և քո խաղաղութեան համբուրիւ՝  
 « հարցն մերոց ողջոյն և խաղաղութիւն՝  
 « զայս լցեալ աշխարհն »:

Այս քաղցր հրաւիրանաց չէր կըրնար  
 չլսել և ուշանալ հրաւիրեան Գրիգոր. և  
 ահա, « Ծագեաց ի խորոց անդնդոց արե-

Ելանէր ի դարպասէն  
 Որպէս փեսայ յառագաստէ.  
 Սո չըթձանաւն զայր անցամէր,  
 Զայն աւետեաց մատուցամէր.  
 Արէք, ելէ՛ք ի չռոմ քաղաք՝  
 Տուր աւետին Առաքելոցն.  
 Հարսամէք եմ իմձ այսօր.  
 Եկայր, տիսէ՛ք զիս հարսմացեալ.  
 Փող հարէք, յօրիմեցէք,  
 Կարմիր արեամբ պրսակեցէք.  
 Ի յառաջատ սուրբ հարսանեացն  
 Զի՞ս տօնելով յուղարկեցէք.  
 Զի անդ երթեալ բարեխօսնմ  
 Զեզ տօնողացն և աղաչեմ.  
 Զեզ իմ փառացըն կըցորդեմ,  
 Եւ հանգստեամըն հաղորդեմ,

« զակն՝ Լուսաւորիչն սուրբ, զջերմի ճա-  
 « ռագայթս աւետարանին լուսոյ՝ վառեալ  
 « բոբոբէր ի պաղս հիւսիսոյ... զհարաւ  
 « քաջցրուսոյց բանին ծաւալեցուցեալ...  
 « ծաղկեցուցանէ զՀայաստանս... քանզի  
 « հոգեւոր հարսանեացն կատարեալ իսոր-  
 « հուրդ և փրկութեան երկանցն հասեալ  
 « ժամ, ծնանէր Հոգին Սուրբ յորդիս կուսին՝  
 « ի միում վայրկենի՝ զբոլոր տէրութիւնն  
 « Պարթեւաց. և լնոյր զիրն, « Երկնեաց  
 « Սիովն և ծնաւ ազգ մի ողջոյն ». որպէս  
 « յայտնի է և ի չորեքարիւր բիւրուց  
 « բանակացն արքունի, որը ծնեալը ի  
 « Հոգւոյն զորդեզրութիւնն յԵփրատէս, ի  
 « միում ժամու առին զաւետիս, շողացեալ  
 « ի վերուսա լուսոյն ծագմամք: Նա և  
 « բոնաւորն մոլեզնեալ՝ որ զկոյսն ինքեան  
 « առթել փափաքէր՝ ի Քրիստոսէ առ-  
 « թեցաւ. և զախտիցն յինքն շիջուցեալ  
 « զրոց, ճշմարտութեանն վառեալ հուրբ՝  
 « զրեցաւ յորդիս կուսին. և բանին եղեալ  
 « քարոզ՝ լնոյր աւետարանական լուսով  
 « զհայրենեացն տէրութիւնն: Եւ ոչ միայն  
 « այս, այլ և զգանձս աստուածութեանն՝  
 « զծաղիկս կուսական մարմնոյն՝ որ սրոյն  
 « էր արկեալ տապաստ, ժողովեալ ամ-  
 « փոփէր գանձէր ինքեան մեծութիւն  
 « յաւիտենական . և զօրութիւն իւրոյ

« քաջութեանն քրտունս ի վկայարանս  
 « Արքոցն թողոյր յաւիտենական. և բա-  
 « րեաց օրինակ զինքն յարդարէր ամե-  
 « նեցուն. առաքելական հանդիսիւ լու-  
 « սաւորէր զարեւելս՝ Երրորդութեանն  
 « լուսով<sup>1</sup> »:

## Ճ.

Գրիգոր Լուսաւորիչ. Ազգովին Քրիս-  
տոնէութիւնն Հայոց.

**Ա**յս համարեցայ այս թուղթ մի տաք  
 սրտի և գրչի տողերով բացատրել Հոփի-  
 սիմեանց նահատակութենէն վերջը Տրդա-  
 տայ զգաստանալը, անոնց մարմնոց վրայ  
 վկայարաններ շինելը, Հայոց բազմութեանն  
 այլ հաւատալն ի Քրիստոս և մկրտուիլ  
 յԵփրատ զետ՝ Լուսաւորչի առաջնորդու-  
 թեամբ, քան հետեւակ ոճով և լեզուով

1. Թէ Յունաց և Լատինաց, և թէ արեւելեան ազգաց  
 չին Տօնացուցից և Յայսմաւուրաց մէջ կայ յիշատակն  
 Հոփիսիմեայ և Գայիսիանեայ, անոնմնին թիզ մի ծոած  
 կամ փոփած. Ղամեր զՀոփիսիմէ գրեն Արփիսիմա,  
 զԳայիսինէ՝ Աղարաւ: Նունէի անոնմն այլ ոչ բնիկ իր  
 անոնմ համարին, այլ լատին ոոռոն բառի նշանակու-  
 թեամբ՝ իր մայր կամ մամ, իսկ բնիկ անոնմը թուգու-  
 նուստա, որ աստուածատեակօր նշանակէ յունարէն:

կութեան անսւանն՝ Աստուածաւէր, կ'իմանան զբարեպաշտ քրիստոնեայս, որոց խնդրանօք զբեց Ղուկաս. սակայն աւելի շատը իսկական անձն համարին, բայց չեն զիտեր ով ըլլալը, ինչ ընելը, ինչ վախճան ունենալը. և մեր նախնեաց աւանդութենէն զատ՝ օտարք չեն ճանչնար զնա առաջին բահանայապետ կեսարիոյ, այլ իրեւ երկբայական՝ Լոնգինոսը կամ Ղուկիանոսը՝ զոր յիշեցի. անկէ վերջը Բ դարու մէջ Թէկոկրիտոս մի, յետ երկար միջոց ժամանակի ուրիշներ. որոց յաջորդ էր մեր խնդրած լուսաւորչի ժամանակ՝ ծանօթ սուրբ և մարգարէաշնորհ հայրապետն Ղետոնիոս. իրմէ ձեռնազրութիւն ուզելն մերայոց՝ կամ հին աւանդութենէն էր՝ Թաղէոսի ի կեսարիա իրեն փոխանորդ թողլուն, կամ Հայոց ամենէն մօտ բարձրաստիճան եափսկոպոսապետ՝ կեսարիոյն ըլլալն, որ և Փոքր Հայոց մայրաքաղաք էր ի զարուց հետէ, և մասն Հայոց երկրի համարեալ. Այս որ և է պատճառաւ ըլլայ, յայտնի և ստոյգ է՝ թէ Գրիգորի թէ իր առաջին յաջորդաց այն աթոռէն ձեռնարութիւն<sup>1</sup>:

1. Ոմանց ի նոր եւրոպացի զբողաց համարին, թէ Ղետոնիոս շատ ուշ կեսարիոյ եպիսկոպոսապետ եղած է, (Ց14-25). սակայն այդ բոլոր մեր ազգային հիմնական

երկարաբանել հասարակաց հայութեան ծանօթը: — Անցողաբար կ'ուզեմ չը- մոռանալ վերոյիշեալ նախախնամական զարմանալի և հակադէմ զիպուածոց, այն համաշխարհական և արքունական շփութութեան ատեն, յետ նահատակութեան Հոփիսիմեանց՝ ցնորեալ Տրդատայ Քրոջ Խորովիդիստոյ զգաստ մնալը, և աստուածային ազգեցութեամբ խորհուրդ տալը զԳրիգոր վիրապէն հանելու: ինչ որ անկէ վերջն եղաւ, իրեւ մի մի ճառագայթիւնը լուսաւորութեանն Հայոց ի ձեռն Ս. Գրի- գորի, գործակցութեամբ՝ նախ մարմով բժշկեալ Տրդատայ՝ ապա և հոգւով, ազգո- վին մկրտութեամբն. առաջին զիպուածոց հաւասար՝ սոքա այլ ծանօթ են հասարա- կաց. նոյնպէս և կանգնումն Եկեղեցւոյ Հայաստանեայց, և սկիզբն նորոյ բահա- նայապետութեան Գրիգորի ձեռնադրու- թեամբ ի բահանայապետէն կեսարիոյ կամ կապաղովկիոյ Եկեղեցւոյն. որոյ առա- քելական հիմնապիրն այլ յիշեցինք առաջ, որ նոյն մեր Թաղէոս Առաքեալն էր, զթեռփիրոս այն տեղ հաստատելով: Թէ և ոչ շատ կարեւոր խնդիր, այլ յիշելի- է, որ այդ Թէոփիրուն՝ առ որ զբեց Ղու- էր իր աւետարանը, ոմանը և ոչ անձն կաս իր աւետարանը, ոմանը և ոչ անձն կ'ընդունին, այլ ըստ յունական նշանա-

Զարմանալին այս է, թէ ի՞նչպէս այն  
տեսն՝ ի սկզբան Դ դարու, յամի Յ02,  
մինչդեռ հալածանաց վախն տիրեր էր,  
երկու ինքնակալաց կամ Օգոստոսից և  
երկու կեսարաց հոռվմէական լայնարձակ  
տէրութիւնը իրենց մէջ բաժնած՝ բայց  
իրարու կապուած ըլլալով, Տրդատ այն-  
պիսի մեծահանդէս փառօք և մեծագումար  
բանակով, իր տէրութեան ամենէն զլխաւոր  
16 նախարարօք և իր զօրաց սպա-  
րապետով, կառօք և երիվարօք՝ իրեւ  
յաղթանակաւ յուղարկեց զԳրիգոր՝ զեռ  
սոսկական անձն, և նոյնպէս ընդունեցաւ  
զնա Քահանայապիտ իր աշխարհին։ Յայսմ  
եւս արդարեւ զարմանալի և հակառէմ  
նախախնամութեան գործ կայ, գործեալ  
իրեւ ի վերջին ժամու այն ինքնակալու-  
թեան, ըստ մարդկային տեսութեան։ Ժամ  
մի, յետ որոյ շուտով պիտի փրթէր մեծ  
ալէկոծութիւն քաղաքական և եկեղեցա-  
կան, որ և մեծագոյն յեղափոխութիւն  
պիտի բերէր երկու վարչութեանց մէջ  
այլ՝ յընդհանուր աշխարհի։ և արդէն  
մըրկաց մըրուքն զիգուած էին տիեզերա-  
կան հորիզոնի վրայ։ Այս վայրկենիս, այս  
առթիս մէջ այլ՝ հրաշալի կերպով նա-  
ւանդութեան հակառակի, և զրեթէ անկարելի է յայսմ  
մեր պատմչաց սխալիւն։

Խախնամեալ գտաւ Հայաստան+ և անզամ  
մ'այլ իրբեւ համատարած հեղեղաց միջէն  
բարձրացուց իր հին տապանակիր և նոր  
խաչակիր փրկաւէտ զլուխը. զոր, եթէ  
բաղաբագէտ զբաղեալ աչք չկարենան  
նշամարել, եկեղեցականը կամ կրօնախօն-  
դիրք՝ կըրնան տեսնել յստակ, և պէտք է  
որ տեսնեն։

Ցիշեցինը քիչ առաջ հոռվմէական ինք-  
նակալութեան բաժմնեալ և միացեալ  
վիճակը, որոյ պատճառ մ'եղած է անկէ  
առաջ իրբեւ կէս դարու ատեն՝ Յ0 և  
աւելի կայսերութեան փափագողաց մըր-  
ցանքն, շփոթքն, կանգնիլն և կործանիլն.  
որոց զբաղելով այդ առօրեայ ինքնակալը  
և անոնցմէ բաղդաւորքն՝ այնքան չէին  
հոգար քրիստոնէութեան խնդիրը, որ հա-  
մեմատարար՝ Դեկոսի դառն հալածանքէն  
ետեւ (որոյ քանի մի նահատակները տե-  
սանք), բաւական խաղաղութեամբ վայլէր  
և աճէր, և երբ անոնցմէ վերջը յաջողե-  
ցաւ զաղմատացին Դիտկղէս՝ (անունն այլ  
երկընցընելով ի Դիտկղետիանէս)՝ հասնիլ  
կայսերութեան, կերպով մի աւելի համար-  
ձակութիւն տուաւ քրիստոնէից. մինչեւ  
ոչ միայն իր պալատան մէջ կային յայտնի  
քրիստոնեայ պաշտօնեայց, այլ և կինն՝  
Պրիսկիա և դուստրն Վաղերիա՝ քրիստո-

Նեայք էին. Ինքնակալութիւնն այլ ապահովելու համար՝ մտածեց և իրեն թագակից՝ բայց իրեւ երկրորդ կարգաւ՝ օգնական մի առաւ (զՄաքսիմինոս Հերակլէս). Քիչ վերջը աւելի դիւրաւ կառավարելու համար՝ իրենց մէկ մէկ ստորակարգեալ ընկեր այլ ընտրեցին, զանոնք կեսար անուանելով, իսկ զիրենը՝ Օգոստոս (Augustus): Այս կեսարաց մին էր լիւրիկեցի (Խոռութ) հովիւ մի՞ Գալերիոս, տիսմար չար մարդ մի, զոր՝ (ինչպէս վերը յիշեցինք) երբ յաղթուած ի Պարսից խայտառակարար դարձաւ առ զիստառը Օգոստոսն Դիոկլետիանոս, սա վորնտեց իր քովէն, մինչեւ որ նա Տրդատայ օգնութեամբ յաջողեցաւ հեռացընել զներսէն թագաւոր Պարսից՝ անոր անյատուկ սահմաններէն, և թողուց անոնցմէ Յայէնոյս Տիգրիսի (հարաւ) կոչուած հինգ նահանգները՝ մեր թագաւորին Տրդատայ: Այս յաղթութեամբ գոռոզացեալ Գալերն սկսաւ՝ առաջ քիչ քիչ՝ յետոյ ստէպ զրգուել զԴիոկլետ. ընդդէմ բրիստոնէից, որոց մեծ յանցանք և մատնութիւն համարէր ստութեամբ՝ Նիկոմիդոյ մէջ (ուր այն ատեն կենար սա) պալատան հրայրեաց ըլլալլ: Դիոկլ. ճանչնալով իր կեսարին չարութիւնը՝ շատ ծանր շարժեցաւ ի սկզբան. յետոյ քիչ մի տարիեցին

կամ աշխատանաց յոգնութենէն, քիչ մի ինքնակալութեան շփոթութեան և իր վրտանգուելու վախէն՝ կամայ ակամայ զիջաւ այդ խոռվարար Խոռութ բանսարկուին թելազրութեանց, որոյ հետեւանք եղաւ իր պալատան կրակէն շատ և անհամեմատ աւելի աշխարհածանօթ և աշխարհածաւալ հալածանաց հրդեն, սաստիկ և մարդածախ քան զառաջինսն: Առ այս գառնամք յետոյ աչք մի տալ. վասն զի գեռ չէ բռնկած կրակն, գեռ երրորդ նոր գարու 301-2 տարիներու մէջ եմք, յորս եղաւ Հայաստանեայց առ Քրիստոս դարձին հրաշալիքն, և յորում՝ ահա քիչ մի վերը լսեցինք Տրդատայ զզրդեցուցիչ և խրոխտար թափորով խաւրելն զԴիգորի ի կեսարիա՝ ի ձեռնազրութիւն: Պարսից վրայ յաղթութեանն և առաջուց այլ Հոռվմայցուց հետ բարեկամութեան պատճառաւ՝ Հայաստան իրեւ ազատ տէրութիւն մի էր. կեսարըն չէին համարձակեր անոր սահմանները կոխել, ինչպէս ինքն այլ անոնցը. և որովհետեւ գեռ խաղաղութեան (վերջին) ժամանակ էր ըրիստոնէից, այդպէս համարձակ եղաւ Գրիգորի հանդիսապէս երթուղարձն, որ թէ և անհաճոյ կեսարուց՝ այլ պատկառէին ի Տրդատայ՝ իրեւ ի բարեկամէ մեծի ինքնակալին, որ


իրենցմէ առաջ բարեկամ և երախտագէտ  
էր մեր թագաւորին. և ցուրտ աչօք դի-  
տէին այդ քրիստոնէական յաղթանակը,  
որ իրենց սնուտի հեթանոսական հեթե-  
թանըը կոխկատելով կ'երթար դառնար:

Հիմայ, եթէ ընթերցողն փափազի ու-  
րախ՝ գուցէ և քիչ մի հպարտ սրտով  
տեսնել այս հանդէսը, (որ և եկեղեցոյ  
ընդհանուր պանծալի հանդէս մ'է, և կեր-  
պով մի յափառենական հանդէս, որովհետե-  
երկու գլխաւորքն՝ հանդիսապիլն և հան-  
դիսացեալն՝ այն օրէն ի վեր միշտ ի  
հանդիսի են, երկուքն այլ տօնելի Սուրբը  
ըլլալով յեկեղեցիս մեր, մին միակ ստոյգ  
առաջին Սուրբ թագաւոր քրիստոնեայ և  
միակ Սուրբ թագաւոր ի Հայս, միւսն՝  
առաջին ի ծանօթ քահանայապետութեան  
Հայոց, որ տեւէ յաջորդութեամբ ահա  
ճիշդ 1600 տարի է). արդ, զայս հանդէսը  
տեսնել փափազողն՝ կ'ըսեմ, առնու ժա-  
մանակակից և ականատես պատմիչը, զԱ-  
գարանեղոս, որ արքունի դիւնապիր էր,  
և մեծ պաշտօնեայ Խաղաղապետորեան,  
գուցէ և ուղեկից Գրիգորի. բանայ և կար-  
դայ պատմութեան ձֆ. գլուխը, համրէ  
Հայոց մեծամեծ նախարարները՝ իրենց  
կարգաւ և անուամբը աշխարհացն, որոց  
էին « իշխանը ընտիրը, կուսակալը, կողմ-

« նակալը, հազարաւորք բիւրաւորք, ի մէջ  
« Հայաստան աշխարհի՝ տանն թորգոմայ.  
« զոր զումարեաց թագաւորն, և առարեաց  
« զնոսա ի կողմանս կապադովկացւոց, ի  
« քաղաքն կեսարացւոց, զոր ըստ հայերէն  
« լեզովին Մաժակ կոչեն. զի տարեալ  
« զԳրիգորն՝ քահանայապետ կացուացեն  
« իւրեանց աշխարհին: Եւ հանդերձեցան  
« դէտ ունել ճանապարհացն », ապահո-  
վութեան համար: Յանձնարարական հրո-  
վարտակ մ'այլ զրեց թագաւորն « առ  
« Ղետնդիոս արքեպիսկոպոս կեսարու, և  
« (առ) ամենայն ուխտ եկեղեցւոյ որ  
« այդր », խնդրելով՝ որ « զԳրիգորդ՝ տե-  
« սուչ և վարդապետ առաջնորդութեան  
« աստուածազնաց ճանապարհացն, հովիւ  
« և բժիշկ կացուածիք, որպէս և մեզ  
« յԱստոււծոյ հրամայեցաւ ». վասն զի  
Աստուած տեսլեամբ պատուիրեց Գրիգորի,  
երբ սա հրամարէր ի յորդորանաց թագա-  
ւորին, յանձն առնուլ զձեռնաղբութիւն  
քահանայապետութեան: Կարդա՛ և հետեւեալ  
գլուխն (ձֆԲ), թէ ի՞նչ պատրաստութեամբ  
և լնձաներով գնացին, հանելով « զԳրիգոր  
« յոսկիապատ կառսն արքունականս՝ սպի-  
« տակածիք ջորւոց .. ի վաղարշապատ  
« քաղաքէ .. ի սահմանս Յունաց. և  
« բազում պատիւս կազմութեան հիւրա-

« մեծարութեան գտանէին ի բաղաքաց  
 « բաղաքաց. և բազում խնդութիւնս և  
 « կայտիոս ցնծութեան, խնճոյս ուրա-  
 « խոլթեան կացուցանէին, իրեւ լսէին  
 « զԱստուծոյ արարեալ զսքանչելիսն ...  
 « Եւ զԱստուծոյ Գրիգոր պատուեալ ըստ ար-  
 « ժանի առաջինութեանցն, ճգնութեանցն  
 « վկայօրէն մարտին, կամթեղօք և սաղ-  
 « մոսիւք և երգովք հոգեւորօք փառա-  
 « ւորէին ... Եւ եղեալ ժողով բազում  
 « եպիսկոպոսաց՝ ի բաղաքն կեսարացւոց,  
 « զի ձեռնադրեսցեն զԱստուծոյ Գրիգորիոս,  
 « և աւանդել ինա զպատիւ խոնարհուրեան  
 « բահանայապետութեանն Քրիստոսի, և  
 « զբարձրութիւն եպիսկոպոսութեան փա-  
 « ռաւորութեան Աստուծոյ, զպատիւ մեծ,  
 « սրբով աւետարանաւն եղին ի վերայ  
 « զձեռս՝ ժողովք եպիսկոպոսացն սրբոց,  
 « և զիսաւորն Ղետոնդիոս, զի առցէ նա  
 « իշխանութիւն յերկինս և յերկրի, առնուլ  
 « զփականս արքայութեանն երկնից » :  
 Յայտ է որ նոյն հանդիմիւ դարձան, բայց  
 թուի թէ ոչ ճիշդ նոյն ճամբով. վասն զի  
 Գրիգոր կ'ուզէր այլեայլ կողմէ և բաղքէ՝  
 իր ժառանգեալ աշխարհին համար եկեղե-  
 ցական պաշտօնեաներ բերել, միանգամայն  
 և Արքոց նշխարներ. և ուստի որ կ'անց-  
 նէր, « կուտէին ժողովուրդը ի վերայ

« ժողովրդոց, տեսանել զսուրբ եպիսկո-  
 « պոսն Գրիգորիոս, զի օրհնեացին ինմանէ.  
 « և ասէին ընդ միմեանս. Եկայք, տեսցուք  
 « զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս. այս  
 « այն այր է, ասէին, որ վասն Քրիստոսի  
 « համբերեալ, չարչարեալ, վկայ հաւա-  
 « տարիմ զտեալ, զխոստովանողական ա-  
 « նուն ժառանգեաց » : Ոչ պատուեւելու  
 իրեւ սուրբ, այլ զԱստուծոս պատուելու  
 համար՝ Լուսաւորիչ դէպ ի Սերաստիա-  
 ուղեց զճամբան, և յարմար անձինքներ  
 « հաւանեցուցանէր ընդ իւր գալ, զի վի-  
 « ճակեցուցէ զնոսա ի քահանայութիւն՝  
 « յիւրում աշխարհին և բազում զունդս  
 « յաճախեալ առնոյր ընդ իւր, և մեծա-  
 « բանօք մեծարեալ յեպիսկոպոսաց աշ-  
 « խարհին և յիշխանաց և ի ժողովրդոց ...  
 « Եւ այսպէս բազում օթեկանօք անցեալ՝  
 « առողջութեամբ յաջողութեամբ և հոգե-  
 « ւից ուրախութեամբ եկեալ հասանէին ի  
 « Հայաստան աշխարհ... իրեւ զարձեալ  
 « գայր ի կողմանց Յունաց, բարձեալ  
 « բերէր ընդ իւր նշխարս ինչ յուկերացն  
 « մեծի մարգարէին երանեալ Մ'կրտչին  
 « Յովհաննու, և զԱ. վկայն Քրիստոսի  
 « զԱրանեագինեսն » : Այս Ս. Աթենովինէս՝  
 ըստ ոմանց էր քորեպիսկոպոսն Փիլարո-  
 վեայ բաղաքին Սերաստացւոց. սակայն



Ս. Գրիգոր Լուսաւորիչ մկրտէ զՏրդատ.

այն ատեն դեռ ողջ էր նա և տարի մի  
վերջը նահատակեցաւ. Գրիգորի բերածն  
էր ի կեսարիա Ա. Ղեւոնդէն առած՝ ի  
Պոնտոս նահատակուած Երգիչ Ա. Ո. թենու-  
զինէսն, զոր Ա. Բարսեղ ներբողած է: —  
Ի մտնելն ի Հայո՛ Ա. Գրիգոր ուղղակի չի  
գնաց առ թագաւորն, այլ Տարօնոյ կող-  
մերն եկաւ, որ կռապաշտութեան գլխաւոր  
կենդրոն մ'էր. աւրեց և կործանեց կոսց  
բագինները և մեհեանները, և անոնց տեղ  
զրաւ բերած Արքոց նշխարներէն, և յետոյ  
եկեղեցիներ և վանքեր հաստատեց, որք  
մինչեւ հիմայ ծանօթ և անուանի ուխտա-  
տեղիք են. ինչպէս Մշոյ Ա. Կարապետն,  
Առաքելոց վանքն, և այլն. ուրիշ անցած  
կողմերում այլ նշան և խաչ դնէր, յետոյ  
եկեղեցիներ շինելու համար, և 200,000ի  
չափ մարզ մկրտեց յառաջ քան զհասնիլն  
առ Տրդատ: Աա՛ լսելով անոր մօտենալը՝  
ելաւ արքունեօք, Աշխէն տիկնաւն և Խոս-  
րովիդիմսով, իշխանոք և զօրօք, նոր  
թափորով մի. եկաւ ի Բագուան, Աւաշ-  
կերտի կողմերը, ուր Հայաստանի ամէն  
կողմէն միլիոնաւոր մարդիկ ժողուցան:  
Գրիգոր մատուց առ թագաւորն Ա. Ղեւոնդի  
թուղթը, յորում սա յետ խնդակցութեան՝  
արժանաւոր խրատներ տայ. և ի մասնա-  
շորի խնդրէ՝ որ ինչպէս Հայոց այդ առա-

ջին քահանայապետն ի կեսարիոյ քահանայապետէն ձեռնազրեցաւ՝ նոյնպէս և անոր յաջորդքն ի կեսարիա ձեռնազրուին։

Մեծ եռանդեամբ երկար օրեր այն կողմերը շրջելով Ա. Գրիգոր՝ երբեմն մինակ իր պաշտօնէիւք, երբեմն թագաւորին հետ, կուստունները և սնոտի պաշտամունքը ջնջել ջանայր. ապա՝ պահօք և աղօթիւք և խրատներով պատրաստելով զարգունիսն և զժողովուրդն, նախ զժագաւորն և զընտանիսն և զօրաց բազմութիւնն՝ իբրեւ 150,000 ոզի մկրտեց յԵփրատ գետ, որոյ ջուրը՝ հրաշքով շրջան առած յետ ու յառաջ դառնային, և խաչանշան լոյս ծագեց. յետոյ եօթն օրուան մէջ 4,000,000 մարդ «ընդ այր և ընդ կին» մկրտուեցան, ըստ պատմութեան զրոց Ագաթանզեղոսի, եթէ թուահամարի մէջ աւելի կամ պակաս չկայ: Եւ զի այն տեղն ուր այս ընդհանրական վերածնուռեթիւնն Հայոց եղաւ, մինչեւ այն ատեն արդէն հեթանոս Հայոց աշխարհախումբ տօն կատարուէր՝ նոր տարւոյ Ամանորաբեր Նաշատարյի դից անուամբ, Ա. Գրիգոր հաստատեց՝ որ նոյն տեղ նոյն օրերում, «Ի յիշատակ մեծի «երանելոյն Յովհաննու և Ա. վկային «Աստուծոյ Աթանազինի՝ յայնմ աւուր «իմբեսցին՝ ի նմին աւանի»: Եւ ինչպէս

նոյն տեղ էր Հայոց հեթանոսական կրօնից ամենէն հոչակեալ պաշտօնարանն կամ մեհեանքն, Յաշտիշտ, նոյնպէս հոն հաստատեց նոր բրիստոնէական կրօնից գլւխաւոր կամ առաջին եկեղեցին եւս. «Նախ անդ արար սկիզբն շինելոյ եկեցեցեաց, կ'ըսէ Ագաթանզեղոս, և ուղղել «սեղան յանուն Ա. Երրորդութեան, կազմ «մել աւազան մկրտութեան»: Աւելի բացայայտէ Բուզանդ. (Դ. Գ.) «Ի մեծն «յառաջին, ի մայր եկեղեցեացն Հայոց, «որ էր յերկրին Տարօնու»: Ուրիշ տեղ այլ պարզաբար կոչէ զտեղին՝ «Աթոռ «իշխանութեան հայրապետացն» Հայոց: Նոյն ինքն և այլք և պատմութիւնն ինքն վկայէ, որ այս էր և «տեղի ժողովից «Սիւնհողոսին» (Դ. Գ) այսինքն ազգային եկեղեցական ժողովոց:

Այսպէս ամեն տեղ՝ ուր հեթանոսական նշան կար՝ զայն ջնջելով՝ վրայն Քրիստոսի տմենայազթ խաչն կանզնեցաւ. և ինչպէս պատմեն և ժամանակակիցքն Ագաթանզեղ և Զենովիր և յետագայր, Հայոց երկրի արեւմտեան կողմէն՝ յԵկեղեցեաց՝ մինչեւ ի հարաւային արեւելեան սահմանս Ատըրպատականի, շրջելով՝ ջնջէր զհետս հեթանոսականս և հաստատէր զբրիստոսին. ինչպէս յիշեցինք առաջ այլ իր այցելու-

թիմն Ա. Հափիսիմեանց կոխած տեղերուն,  
և ըրիստոնէութեան հետք զտնելով աւելի  
զարգացընելը: Համառօտ ըսելով, Ա. Գրի-  
գոր իր բոլոր քահանայապետութեան ՅՕ  
և աւելի տարիները՝ մինչեւ յառանձնա-  
նալն ճգնաւորապէս՝ ի լերինս և ի քարայրս,  
անդադար շրջէր՝ իր ոչ փոքր հովուութեան  
վիճակին մէջ՝ այս ջանքով. միանգամայն  
և քարոզելով, բազմացընելով եկեղեցիներ  
և մատուններ, անոնց համեմատ նա և  
պաշտօնեաներ, քահանայ և եպիսկոպոս.  
(յորոց մէջ և յիշեալն Զենովը) ի Յունաց  
և յԱսորոց, որք ունէին վթարգմանու-  
թիմս Ա. Գրոց և եկեղեցական պաշտա-  
մանց և պատարազի զիրքեր. և հայերէն  
զիր չըլլալուն համար, (որոյ հնարքն և  
զիւտը՝ Աստուած պահեր էր անոր վերջին  
մէծ Թոռան, Ա. Սահակայ) ջանաց ամէն  
կողմ ամէն մարդաշատ քաղքի և աւանի  
մէջ՝ այն երկու լեզուաց դպրոց և ուսմունք  
հաստատել. և ուր որ իմանար թէ կայ  
զիտնական և եռանդուն եկեղեցական՝ քա-  
հանայ կամ կրօնաւոր, եթէ կարելի էր  
տեղէն շարժել, կ'որսար բերէր, պաշտօ-  
նայ և ուսուցիչ կարգէր, ցրուէր իր  
վիճակին մէջ, որոյ ընդարձակ սահման-  
ները յիշեցինը Հայոց թագաւորութեան  
սահմաններն յիշած ատեննիս: Բայց Գրի-

գորի Լուսաւորութեան սահմաններն աւելի  
ընդարձակը էին. հիւսիսէն՝ անցաւ ի  
Վրաստան մինչեւ ի կովկաս. արեւելքէն  
յԱղուանս, և երկութին միջեւ ի հիւսիս  
արեւելք՝ այլեւայլ կովկասային և կազ-  
քիական բարբարոս ազգաց. ինչպէս Լիինք,  
Ճիզրք, Հոնք, Մազգութք, և այլն, ասոնց  
երիտասարդ եռանդուն հովիւ մի տուաւ,  
իր անուանակիր թոռնիկը, որդի անդրան-  
կան՝ Ա. Վրթանիսի, Ա. Գրիգորիսի, որ  
և անվախ քարոզութեամբ նահատակեցաւ  
(իբր յամի 348) անհաւան բարբարոսնե-  
րէն. բայց իր քարոզութեան կեղընն՝ եղաւ  
Աղուանից կաթողիկոսութեան աթոռ, որ  
և շարունակ յաջորդութեամբ տեւեց մին-  
չեւ մեր օրերը: Նախախնամական շնորհը  
մ'այլ եղաւ Տրդատայ երկարակեցութիւնն,  
ջանքն և զօրութիւնն (ինչպէս յիշեցինք  
առաջ), որ յամենայնի աջակից և երբեմն  
և առաջնորդ եղաւ Գրիգորի ի Լուսաւո-  
րութեան աշխարհին. և լուսոյ զիմամարտ  
խաւարասէրները վանեց նուաճեց ջախ-  
ջախեց յաջորդութեամբ, այլ և ոչ սակաւ  
աշխատութեամբ և պատերազմաց արկած-  
ներով, թէ իր տէրութեան մէջ անհաւան  
քրմաց և անոնց ոյժ տուողաց դէմ, թէ իր  
վրայ անոնց խորհրդակիցներէն զրգուած  
հիւսիսէն և արեւելքէն՝ ապա և յարեւմտից

(զոր պիտի յիշենք յետոյ) հօռս տուող-  
ներու դէմ, երբեմն նա և իր կենաց  
վտանգաւ. և հարկ է խոստավանիլ՝ որ  
Գրիգոր խաչով, Տրդատ թըրով աջակցե-  
ցան հաստատելու և բարձրացընելու Հայոց  
քրիստոնէութիւնը, մինչդեռ ընդհանուր  
քրիստոնէութիւնն, տագնապի մէջ էր գոնէ,  
10 կամ 15 տարի. և ի՞նչ տարիներ:

Այս ժամանակին Հայոց յատուկ ան-  
նման վիճակը լաւ ճանշնալու համար՝  
պէտք է յաջ ու ձախ նայիլ հասարակաց  
վիճակն այլ տեսնելու: Աջ կ'ըսեմ՝ մերոցս  
նկատմամբ, զոր լաւ ստորագրէ Ազաթանգ.  
իր պատմութեան վերջին (ձԻ=ձԻԳ) զը-  
լոււներում, մանաւանդ այս նշանական  
կնքիչ խօսքերով: «Յայնմ ժամանակի՝  
« երանելի ցանկալի և անպայման սրան-  
« չեկի լինէր երկիրս Հայոց, որպէս Մովսէս  
« յանկարծ ուրեմն օրէնսուսոյց հերայա-  
« կանին, ամենայն մարգարէական դասուն,  
« և կամ իրեւ յաւուջադէմն Փողոս, բռ-  
« վանդակ առաքելական գնդաւն հանդերձ  
« աշխարհակեցոյց աւետարանաւ Քրիստո-  
« սի, սոյնակէս և սա (Գրիգոր) եկեալ  
« հասեալ երեւեալ՝ հայրաբարբառ հայե-  
« րենախօս գտաւ»: (Ուրեմն, թէ և հայ  
զիր չկայր, կամ եղածն մեզի անծանօթ  
է, և թէ և յոյն և ասորի վարպետներ

բերաւ, այլ հայերէն թարգմանել լսել և  
խօսել տայլ):... «Եւ բազմացոյց կացոյց  
« տեսուչս եպիսկոպոս յամենայն գաւառոս  
« Հայոց իշխանութեանն իւրոյ. և որ  
« եպիսկոպոսացն յաշտիճան ձեռնազբե-  
« ցան ի եմանէ, աւելի քան զորեքիարիր  
« եպիսկոպոս, որը կացին տեսուչս տեղեաց  
« տեղեաց. իսկ զկարգս երիցանց և կամ  
« սարկաւազաց (և զպրաց) և որ այլ եւս  
« ի պաշտօն Տիառն կացին, աերիք էին  
« ի բազմուրենէն»: Վասն զի և աշխարհս  
Հայոց շատ բազմամարդ էր այն տունն.  
որոյ նշմար մի կըրնանը ունենալ՝ Զենով-  
բայ Տարօնոյ կողմի քրմաց կալուածոց  
տեղերու հարիւրաւոր տուներու և զինաւ  
կրաց թիւերը համբելով:

Պատմիչս զՄովսէս յիշելով՝ կըրնար  
յիշել անոր զործելու ատեն յԵղիպտոս՝  
նա և զԳեսեմ երկիրը, ուր Հերքայեցիքն  
ի հանզըստեան և պայծառութեան մէջ  
վայլէին, մինչ այն երկրին չորս զին՝ մթան,  
վախի և պէսպէս հարուածոց ներքեւ սար-  
սափած տարակուսած կիսամահ կ'ապրէր:  
Ի՞նչ սրուառուչ հակակերպ տեսարան.  
մինչ եկեղեցոյ վրայ վերջին և հզօրագոյն  
փոթորիկն փրթի, և երկրիս երից մասանց  
քահանայապետքն՝ (Մարկեղոս ի Հռովմ,  
Պետրոս յԱղեքսանդրիա, կիւրեղ յԱն-

տիոք), զոհեն զանձինս առ Քրիստոս, ի Հայո՛ նոր քահանայապետութիւն կանզ-նեալ կայ խաղաղ՝ ընդ պաշտպանութեամբ Տրդատայ, և քահանայապետն Գրիգոր գիտէ զանոնք. յիշէ և իր թափած արիւնն և քրտինքը, և զոհանայ զԱստուծոյ, որոյ շնորհօք, ըստ գեղեցիկ խորհրդածութեան Լաստիվերտցոյն (գլ. ԺԷ) «Երանելի այրն « Աստուծոյ՝ մեծն Գրիգորիոս, իջեալ ի « խորհրդիւն վիրապին՝ զչնգետասան ամ « փորձեաց, և ի վերայ առաքերական « արոռոյն՝ եղ զարո՞ իր» :

## ՃԱ.

Խլրտումն Հայոց որ ընդ իշխանութեամբ Հռովմայեցւոց: Քաղաքավարութիւնն սոցա եւ Տրդատայ:

**Պ**ԱՌԱՍՆՔ հիմայ գիտել պահ մի՛ մեր երկրին չորս բոլորը, տեսնել ի՞նչ վիճակի մէջ է աշխարհ. քրիստոնէութիւնն և քրիստոսամարտութիւնն: Յիշեցինք հոռվածական տէրութեան քառիշխանութիւնը, Գալերիոսի անդաղար նկրտիլն և գրդելն զԴիոկղետիանոս, մանաւանդ յիտ նիկո-

միղիոյ պալատան կրակին, որոյ փոխանակ վրէժինզըութեամբ՝ նոյն պալատան զիմաց քաղըին մեծ եկեղեցին Երկու բիշտ քրիստոնէիւր այրել տուաւ, զորս տարուէ տարի երբեւ վկայս Քրիստոսի՝ տօնէ մեր եկեղեցիս: Ասոր վրայ լսելով մեր ազգին մեծ գիպուածը, սկսաւ դարձեալ զրդել խթել զԴիոկղետ. թէ, Հայք ապստամբեր են և վտանգ է տէրութեանդ: Կարծեն ոմանք յիրաւի, թէ ոչ այս՝ այլ Գ Հայոց կողմերը քրիստոնէից շարժում մի եղած ըլլայ. զի և (հարկ է գիտնալ), որ թէ այդ նահանգի մէջ թէ բոլոր Փոքր Ասիոյ՝ զրեթէ բնակչաց կէսն քրիստոնեայք էին, նախայշեալ երկարամեայ խաղաղութեան ատենքազմացեալ: Անցողաբար յիշենք նա և այս վերջի ըսածիս պատշաճ գէպք մի՛ այսպիսի քրիստոնէից և ոչ քրիստոնէից հակառակութեան, և նահատակութեան շատերու, որոց Վկայաբանութիւնն շատ հետաքննական՝ կարծեմ անծանօթ է լատինաց, թէ և մեր մեծ Վկայասէր կաթողիկոսն ի յունարենէ թարգմաներ է զայն:

Մելիսինոյ սահմանները Եփրատայ և զերքը Լարսակ անուամբ քաղաք մի յիշուի, ուր և կարծուի քրիստոնէից շարժումն. Դիոկղետիանոս իր հաւատարիմ պաշտօնէից մէկը կու խաւը անոնց գէմ, լաւ-

րենու անուամբ, առանց զիտնալու թէ սա  
ըրխատոնեայ է . զօրականը զարմանան  
Լաւրենտի տնտնալուն ըրխատոնէից վրայ  
յարձակելու. կ'իմանան իր ըրխատոնէու-  
թիւնը, և իր յորդորանոք՝ տեղէ տեղ՝  
մանաւանդ լեռնոտ կողմեր փախազրուին,  
երեմն պատերազմելով 2000 հոգի ջարգեն  
ի հեթանոսաց, (որոց առաջնորդ խաւուի  
Ազրիպատ ոմն, երբ կ'իմացուի Լաւրենտի  
ըրխատոնէութիւնն). Երեմն այլ 5 կամ  
600 հոգի. բայց յետոյ չեն ուզեր կոուիլ,  
և նման Այրարատեան վկայից 9 կամ  
10000 անձինը մարտիրոսանան: Լաւ-  
րենտի այլ յայտնութիւն կ'ըլլայ յԱստու-  
ծոյ, թէ, « կատարելոց են ի կողման  
Հայոց »: Ի պատմութեանն կ'ըսուի, թէ  
փախչէին «մինչեւ ի սահմանս Հայոց՝ ի  
Մելտինի քաղաք մեծ»: Յետ այլեւայլ  
դիպաց՝ Ազրիպատ այլ հաւատայ ի Քրիս-  
տոս և նահատակուի ի Դուռնասայ, զոր երեն  
տեղ խաւուրեր էր կայսրն. իսկ զԼաւրենտ՝  
կապած զրկեն ի Հռովմ, ուր նահատա-  
կուի: Այս մանրամասն վկայաբանութիւնը,  
յորում շատ աշխարհազրական հետաքըն-  
նելի տեղեաց անուանը կան, զրեր է  
ականատես և զործակից մէկն, Զենովի-  
անուամբ, որ Դոմինասայ բանակին մէջ է  
եղեր, և ինքն զլիատեր է զԱզրիպատ.

բայց յետոյ ինքն այլ հաւատացեր է ի  
Քրիստոս, և իր պատմածներուն հաւա-  
սարեր է նահատակութեամբ: Գրեթէ ան-  
տարակոյս է այս գունդագունդ զօրական  
վկայից մէջ շատ կամ ըիչ Հայոց գտուիլն:

Ժամանակիս կայսերաց պատմութեան  
հին և նոր<sup>1</sup> զրողք՝ յիշեն՝ առանց զիպուա-  
ծոյ պարագաները զիտնալու, որ այս ատեն  
խլլուտում մի եղած է, ըստ ոմանց՝ ի սահ-  
մանս Հայոց, և ըստ այլոց՝ ի Մելտինէ<sup>2</sup>.

1. Ի նոր զրողս յիշեմք զՅելէր և զՄէհէր:

2. Յիշելէ և յիշելի նահատակաց ոմանց Վկայաբա-  
նութեանց մէջ՝ զոր հին հարբ մեր թարգմաներ և կարգեր  
են ի Ճառընալիս, զտուին յիշատակը այս խլլուտան  
Հայոց ինչպէս ի Վկայար. Ա. Եզէնիսոսի, Վաղերիո-  
սի, և այլն. « Համբաւ եհսա և լսելիս թագաւորացն՝ ի  
« դատարաց Ալեւելից քաղաքացն, զնեալ ամբաստա-  
« նութեան նամակ, իթէ, կապուազովկիս և ամենայն  
« կողմանք Հայոց Մեծաց՝ հակառակ կացին հրամանաց  
« ձերոց, զնորդորական տօնս աստուածոցն ոչ կատարեն,  
« և ոչ ի նութեական զոնցի նոցա ճաշակելով, իրեն լուան  
« զայս թագաւորան՝ վազվազակի փոխեցին զիշեանս  
« զաւառացն այնոցիկ մեծաւ ցամամը զայրացեալ  
« նոցա, վատուէրս և անպիտանս զնոսա համարելով.  
« և առաքեցին փոխական նոցա արս երկու հելենա-  
« ցիս ազգաւ և կրօնիւք. անուն միւսն Լուսիս և  
« երկրորդին Ազրիկողայս, վայրենամիստ և զազանա-  
« բարուս և խորազէստ և հանճարեղու... Եկին այնու-  
« հետեւ (մատնէք) ի քաղաքն Սատաղացւոց՝ ուր նստէր  
« զուբսն Լիւսիս, և պատմեցին վասն երանելոյն  
« Վաղերիոսի և Կանդիտասի և Ակիւզասայ և Եզի-  
« նիսի, որ քր ի քաղաքն Տրապիզոնացւոց. այլ և  
« բագումբ ի քրիստոնէք, վասն արձաթսիրութեան  
« ախան՝ նմանեալը Ցուգայի, զնացեալ ի քաղաքն  
« Սատաղացւոց, հանդիպէին զինուորացն կոմնատա-

որոյ հետ խառնուելով ի Միծ չայս եղած  
անակնկալ կրօնական յեղափոխութիւնն,  
անդադար փշմամբ Գալերիոսի՝ կամաց  
կամաց բորբոքի Դիոկլետիանոս. և մինչ  
Տրդատ և Գրիգոր քրիստոնէութիւնը հաս-  
տատելու հնարք ճարէին, կայսերը ի  
Նիկոմիդիա (ուր այն ատեն հանդիպեցաւ

« բիոսի (Commendator) որ էր զօրագլուխ դասու »:  
Ասոր նման կ'ըսէ և Ս. Եւստուաթիոսեանց վեայա-  
զիրն. « Ի սոյն իսկ ի ժամանակի համրաւ իմ հասա-  
« նէր ի լսելիս անօրէն իշխաննին իրրու թէ ամենայն  
« աշխարհն Տայատանեաց և Կապագովկիս՝ ընդի-  
« մամար եղն թագաւորական հրամաննին, և միարա-  
« նութեամբ յապսուաթբորքին իմ թեւակուսն, և զինի  
« զնալով ըրբառնէական հաւատոցն՝ անփոփի ունելով  
« զմիան իւրեանց ի Յիսուս ոմն, զոր և Աստուած  
« քարոզեն, Զայտոնիկ լուեալ կայսրն Դիոկլետիանոս՝  
« խոռվցաւ ի սրտի իւրում. և սրտմտեալ ցասմամբ  
« մեծաւ վարանէր հեծութեամբ առցենալ. և նոյն ժա-  
« մայն հրամայէր զամենայն մեծամեծու իւր առ ինքն  
« կոչէլ, հանդերձ իմաստնօնն Հելլենացւոց, և զերիս  
« աւորս յառաւոտէ մինչեւ ցերեկոյ՝ հանդերձ իմաստ-  
« նօքն Հելլենացւոց ի խորհուրդու մտեալ՝ հաստատէին.  
« ի միսու իւրեանց, փոխադրել զկողմակալսն զայնու-  
« սիկ՝ որք կարգեալ էին ի վերայ երկարանչիւրոց  
« ազգացն այնոցիկ, վատշուէրս և անարիս զնոսս կար-  
« զալավ. և փոխանակ նոցա առաջնաց երկուս՝ որք  
« եկեալ էին ի Հելլենացւոց զաւաէն, յոյժ իմաստնօք  
« և վարժք և կիրթ ամենայն հսեատորական և փելի-  
« սոփայական հանճարոյն, և խոհեմք խորագիտութեամբ  
« քան զամենայն սինկղիտոսացն. որ մին ի նոցանէ  
« Լիսիստ ճանաչիր, որ զամենայն Զեմենտացւոց  
« զաւառին ունէր զցսական իշխանութիւնն. և երկրորդն  
« որ կոչէր Ազրիկողայոս, որոյ զամենայն աշխարհաց  
« զգատաւորական իշխանութիւնն ընծենեալ էր, և  
« զգինուորութիւն ամենայն զնդիցն որ ի մէջերկրացն  
« և ի մերձակայ զաւառս բնակեալ էին »:

և կոստանդիանոս կեսար), մտածէին հնարք՝  
մարելու կամ նուաճելու զըզիստոնէութիւն.  
և իրենց քաջագործութեանց յաղթական  
հանդէս կատարէին իրենց այրած արցու-  
նեաց վրայ (յամառն, 302), և ապա աւելի  
մեծահանդէս ի Հոռվմ, ի յիշատակ քսան-  
ամեայ ինքնակալութեան Դիոկլետիանո-  
սի՝ իր աթոռակից Մաքսիմինոս օգոստոսի  
հետ (20 նոյեմբ. 303), չաստուածական  
անուններ առնըլով վրանին, Արամազդ  
և Հերակլէս, (մինչ Տրդատ նորակնունք՝  
խոնարհաբար կ'ուզէր Ցովհաննես կոչուիլ,  
և այն Քրիստոսի հեզ սննդակցին նուիրէր  
հոչակաւոր Բագրեւանդայ տաճարը, որ  
ուրիշէ մի ընդարձակուած՝ մինչեւ հիմայ  
կանգուն՝ քարոզէ իր զործը), իսկ Դիոկ-  
լետիանուսեանց յաղթանակն ուր միայ:  
Անոր չքոտած շուրջով շլացած՝ և Մաք-  
սիմինոսի թելագրութեամբը զրգոււած՝  
երբ դարձաւ ի Նիկոմիդիա, ի սկիզբն  
303 տարւոյ (23 փեր.) որ օր՝ ըստ  
իրենց սնոտի պաշտամանց, տօն էր Ասհ-  
մանաց (Terminalia), հրատարակեց զՀա-  
լածանս քրիստոնէից. շատ յարմար (ըստ  
ոչ կամաց նոցա) մեր հայրենեաց սահ-  
մանակցութեան վրայ հանդիպածին. որոյ  
շշուկն երթալով զօրանար. և նոյն իսկ  
օգոստափառ հանդիսից ատեն՝ հասաւ անոնց

լուր, եթէ «Ոմենայն աշխարհն Հայոց և  
« կապագովկիա ընդէմ անօրէն հրա-  
« մանաց գործեն»<sup>1</sup> :

Փութացան կասկածու կայսերքն զի-  
նուորական զօրութեամբ երկու սահմանա-  
կալ խաւրել այն կողմերը. մէկն՝ յանուն  
Հայոց երկրի, միւսն կապագովկիոյ:  
Առաջինն էր չարանունն Լիւսիաս<sup>2</sup>, ի  
սահմանակալ քաղաքն Հայոց Սատաղ, որ  
շատ և հոչակաւոր Սուրբեր նահատակած  
է, յորոց զոմանս յիշենք յետոյ. երկրորդն՝  
Ազրիկողայոս ի Սեբաստիա: Հալածչաց  
կասկածն կայծակի պէս ոկսաւ արծարծիւ+  
և երբ մէկ ազնուական քրիստոնեայ մի  
հօն ի Նիկոմիդիա՝ զովելի հաւատքով՝ այլ  
ոչ խոհեմութեամբ յանդրֆնեցաւ հրապա-  
րակի մէջ պատռել հալածանաց հրովար-  
տակն, որոյ համար և նահատակեցաւ,  
առաջ թմրածն և կակուղ Դիոկլ. հետ-  
զէտէս մի քան զմի սաստիկ հրովարտակ-  
ներ հրատարակեց, որոց չորրորդն ի սկիզբն  
304 տարւոյ, որ զօրաւոր համարուի քան

1. Omnis Armeniorum regio et Cappadocum  
facit praeter improbum eorum decretum — Սու-  
րբու ի վարս Ա. Հիերոնեայ, 7 նոյեմբ. 303. Hunziker  
von Bern. 273:

2. Իբր 20 տարի առաջ յիշուի Լիւսիաս դատաւոր  
կողմակալ կամ (præses) Լիւսիա նահանգի, որ նահա-  
տակեց զԱ. Աստերիոս:

զամենայն հրամանս հալածանաց, ամենէն  
ընդարձակ և ամենէն շատ արիւն թափող  
Ա. վկայից. որով Դիոկլետի անունն այլ  
քան զամենայն հալածչաց ատելի և անի-  
ծելի եղաւ. այս թերեւս նուազ կ'ըլլար,  
եթէ կանխէր նա՝ և ինչպէս խոստացեր  
էր՝ իր քսանամեկին լրացած ատեն հրա-  
ժարէր յինքնակալութենէն. բայց տարիէ  
մաւելի տնտնալով, մտքով և մարմնով  
այլ տկարանալով, իր իշխանակցացն՝  
մանաւանդ Գալերիոսի դաւաճանութենէն  
վախնալով, վերջապէս թողուց թագը (305  
մայիս 1), և փութացաւ դառնալ իր հայ-  
րենիքը՝ ի Սալոն քաղաք Գաղմատիոյ, իր  
պապական պարտիզին մէջ քանջարներ  
մշակելու, որը որ և մեռաւ (313). անշուշտ  
կոստանդիանոսի քրիստոնէութեան ազա-  
տութեան հրովարտակն՝ իր չորս հրովար-  
տակաց զէմ, կայծակ մ'եղաւ սրտին. որ  
եթէ իր առաջին զգոյշ և չափաւոր կերպով  
վարուէր, փոխանակ իր ջախջախիչ քան  
աջակից ընկերներ աւելցընելու, զուցէ  
(մարդկօրէն մտածմամբ) ինքն ըլլար կոս-  
տանդիանոսի գործը կատարող և փառքը  
ժառանգողն: — իր այդպէս անազան  
հրաժարին յաշխարհավար գործոց, հա-  
մարձակ սապարէզ բացաւ Գալերիոսի, որ  
օրէ օր սպասէր, և անուանեց զինքն անոր

տեղ ինքնակալ օգոստոս. իրեն արժանաւոր փոխանորդ կեսար մ'այլ կանգնեց, իր քեռորդին՝ Մարտիմինոս, Daza անուանեալ, որ տառագարձութեամբ այլ յարմարէ Դաման կոչուելու՝ ըստ մեզ, զոր և գործովքն հաստատեց. արուեստիւ ինքն այլ քեռույն պէս տաւարարած ըլլալով, և քան զայն անմիտ, անսիրտ, և սոսկ փառասէր. որ և առանց սպասելու ժամանակի և կարգի, բացարձակ իշխանութեամբ վարուէր, անուան վրան այլ աւելցընելով Յօνիս, արամագրական, չափազանց մակդիրը (որ ըստ մեր լեզուի յարմարի իր բնիկ արուեստին Հովիւ): Իսկ երբ քեռին (Գալերիոս) վերցուեցաւ յասպարիզէն և ի կենաց (լ մայիս, 311), այնուհետեւ առանց ինչ ակնածութեան հոչակեց զինքն ինքնակալ, և իրեն վիճակած երկրի կողմանց վրայ աւելցուց յափշտակութեամբ՝ և զՓոքր Ասիա, ուր յետոյ տեսնենք իր արժանաւոր թագն ընդունիլը՝ Տրդատայ արդարակշիռ և կորովի թաթով:

Անտարակոյս է՝ որ սա լսելով և տեսնելով Հոռվայեցոց տէրութեան խառնակութիւնը և խայտառակութիւնը, մանաւանդ յետ հրաժարման իր հին երախտաւոր և երախտապարտ բարեկամին՝ Դիոկղի,

ինքնին լուծուած համարէր անոնց հետ գործակցութիւնը, և երջանիկ՝ իր աշխարհը, որ ճիշդ յարմար ժամանակին մազապուրծ եղաւ և հաստատուեցաւ ի նոր կրօնս և ի նոր կեանս: Արդարեւ առանց մեծ սրտառութեան և սրտառութեան չէր կըրնար նայիլ Տրդատ դէպ յարեւմուտս իր երկրին, ուր՝ այդպիսի ինքնակոչ ինքնակալ մի և իրեն համամիտ համատիպ գտած Լիլիթուն (Լիկիանոս, որոյ երբեմն օգներէր ինքն Տրդատ և ի կենաց վտանգէ ազատեր), անգութ և անօրէն նեղէին մաշէին զըրիստոնեայս. բայց իր չափաւորութիւնն, և յարեւելից՝ ի Պարսից, և ի հիւսիսոյ՝ ի կովկասեանց յարձակման կասկածք՝ ստիպէին զինքն զգուշութեամբ վարուիլ, իր աէրութեան որոշեալ սահմանաց վրայ հսկել, այլ կոփելով անդին չանցնիլ, որ չվտանգէ իր աշխարհին քաշական և կրօնական խաղաղութիւնը, որ+էր պտուղ շնորհացն Աստուծոյ և իր քաջութեան և խոհեմութեան: Այն զգուշութիւնը նկատելով և կեսարքն և իրենց կուսակալը՝ Լիւսիասը և Ազրիկողայոսը, իրենք այլ չէին համարձակեր կոփել Տրդատայ սահմանները, եթէ և կերպով մի ապստամբ համարէին զնա իրենց տիեզերական իշխանութենէն, և մերժող

իրենց հրատարակած հրովարտակներուն։  
Վերոյիշեալ սրբագիր հեղինակն յայտնա-  
պէս կրկնէ առաջի ըսածը<sup>1</sup>, թէ, «Բո-  
վանդակ Մեծ Հայք և կապադովիխա՝  
մերժեցին անոնց հրովարտակը» կամ ընդ-  
դիմացան։ Իրեւ երկու հզօր գազանք դէմ  
առ դէմ դիտելով՝ մըմույին երկար ատեն,  
թագաւորն Հայոց և կեսարքն Հոռոմոց.  
մինչեւ որ յանկարծ ասոնց կողմէն եղաւ  
յարձակողն, մերոնց կողմանէ՝ հալածո-  
ղին հալածողն, ինչպէս տեսնենք բիշ  
յետոյ։

## ԺԲ.

Նահատակը ի Փոքր Հայ։

**Ա**'Արքէ հիմայ մեզ այլ ժամ մի  
թողլով մեր խաղաղեցեալ բնաշխարհը,  
դանաւ նայիլ անոր խոռվեալ և ծիեալ  
շուրջը՝ հալածանաց հովերէն, և սուրբ  
վկայից անպարտ արեամբ ներկեալ. յորոց  
անտարակոյս է որ ոչ սակաւը և ազգաւ  
Հայ էին, մանաւանդ մերձաւորքն կամ

1. Tota Magna Armenia et Cappadocia illorum  
edicta repugnarunt. — Առբեռ։

սահմանակիցը Փոքր և Մեծ Հայոց։ —  
Յիշեցինք որ անոնց սահմանակալ կամ  
միջասահման նշանաւոր և ամուր քաղաք  
մ'էր Սաստաղ, Բարձր Հայոց և Եփրատայ  
արեւմտակողմն, ուր և արքունի ճանա-  
պարհաց անցք և կայանք Ըլլաղով՝ հռով-  
մայեցիր ամրացուցեր էին զայն, և իրենց  
իշխանութեան ներքեւ էր, որպէս երբեմն  
մեր աշխարհակալ Արշակունեաց. որք և  
ի Յունաստանէ կողոպտած չաստուածոց  
արձաններէն՝ այս տեղ այլ կանգնած էին՝  
որպէս ի մերձաւոր բնիկ Եկեղեաց գաւա-  
ռին. և հօն՝ մեր օրերում գտնուեցաւ հողի  
տակ՝ Անահատայ կամ Արտեմեայ պղնձէ  
անդրոյ մի գլուխ և ձեռք, յունական  
արուեստիւ սքանչելի նրբութեամբ, որ  
հիմայ Լոնտոնի թանգարանին զարմանա-  
շարժ զարդ և գանձ են. ո՛ զիտէ թէ  
Տրդատայ աշն և Լուսաւորչիխաչն ջարդած  
Ըլլայ այն բնականի կրկին մեծութեամբ  
դիցուհին, որոյ կոտորքն հազարաւոր անզ-  
վիական ոսկովը գնուեցան։ Արդ, այս  
հայասահման քաղբէն ընծայուեցան հալա-  
ծանաց կրկին սաստկութեան ժամանակ  
(307ին), Եօթն եղարք, հաւանօրէն ըն-  
կերք՝ հայրենի հողէն և ոչ մի մօր ծոցէ.  
որոց ոմանց անուանքն հնչեն իսկ հայերէն,  
ինչպէս Փառնակ, և զլիսաւորն՝ զոր Յոյնք

Օքենուօչ զրեն նոյնպէս և Լատինք, հայ ա-  
կանջն Հրանտ լսէ, մէկն այլ էրոյէ զրուած՝  
Արայի կամ Հօրոյ անունները յիշեցընէ.  
միւսքն օտարաձայնք՝ Փիլմին, Փիրմոս,  
Կիրակոս, Լոնգինոս. Եօթն այլ զինուորեալք  
հռովմէական զընդից մէջ: Ժամանակն և  
կայսրն՝ քիչ մի այլայլեն Յունաց և  
Լատինաց Յայսմաւուրք. մերինն լոէ: Ըստ  
ոմանց՝ զեռ Գիոկղետի հրաժարելէն առաջ,  
բայց աւելի ստոյգ՝ վերոյնշանակեալ տա-  
քին եղած է ասոնց զլխաւոր գործն՝ օտար  
երկրի մէջ, յարեւելակողմն Եւրոպիոյ. ուր՝  
ի հիւսիսոյ՝ Ռուսաստանի կողմերէն արշա-  
ւեր էին բարբարոսք (Ակիւթացիք կամ  
Սկլաւք), և մեր պատմչաց՝ Տրդատայ և  
Հոչէի վրայ պատմածին նման՝ բարեա-  
րոսաց թափաւորն ուզեր է կայսեր հետ  
մենամարտիլ. որոյ տեղ Հրանտն ելեր և  
յաղթահարեր է զնա. կայսրն շնորհա-  
պարու՝ մեծ պատիւ տուեր է յաղթողին.  
բայց իմանալով անոր կրօնքը և չկարենա-  
լով ուրացընել, վեց ընկերօքն աքսորեր է  
յարեւելս, ոչ հեռի իրենց հայրենիքն,  
բայց զանազան կողմեր. և անդադար բշե-  
լով և նեղացընելով, մինչեւ բնական կամ  
բռնի մահուամբ վախճաներ են. Հրանտն  
այլ ի Տրապիզոն տարեր և նահատակեր  
են, ի ծով ձգելով: Ասոնց յիշատակն

կատարուի ի 24 յունիսի: Յոյնք ուրիշ  
Որենտ կամ Հրանտ մի եւս յիշեն յ'Յ  
նոյն յունիս ամսոյ:

Գրեթէ նոյն տարին (306) և մօտ Հրանտի  
նահատակութեան տեղւոյն, նահատակուած  
է՝ մեր եկեղեցւոյ այլ ծանօթ և Մեծ Պահոց  
առաջին շաբաթում տօնուած Թեոդորոս  
զինաւորն Ամասիացի, (ի Սարուէ գիւղէ),  
որ էր ի կարգէ երիտասարդ եռանդուն  
զօրականաց, որը յունարէն ութաց կո-  
չուէին, նոյն նշանակութեամբ: Աս՝ օր մի  
ձի հեծած՝ իր հայրեննեաց մօտ Եշիսայիսու  
կոչուած աւանը երթալով՝ ամառ ատեն,  
կ'իջնէ ծառոց ներքեւ հանգչելու. տեղւոյն  
տիկինն Երսերիա, տեսնելով կանչէ որ  
հեռանայ այն տեղէն, վասն զի մեծ վիշապ  
օծ մի կայ մօտերը: Թէոդոր անվախ  
կ'ելնէ և վիշապը կու շամփրէ իր նիզա-  
կովը. այսպէս նկարեն իր պատկերը:  
Քրիստոնէութիւնն հոչակուելով՝ կու դա-  
տուի. և երբ համարձակելով կ'այրէ Ուկա  
զիցուհոյ կուատունը, դատապարտուի, և  
ի կրակ ձգուելով նահատակուի. նշխարք-  
ները ժողվելով Եւսեբիա՝ թաղէ իր ազա-  
րակին մէջ, ուր յետոյ շինուի մեծ եկեղեցի:  
Ա. Գր. Նիւսացի պերճաբան ներբող մի  
զրած է ի պատիւ Սրբոյս, որոյ վկայու-  
թեան օրն զրուած է ի 17 փերբուարի:

իսկ հին վկայաբանութիւն Արքոյս՝ թուի  
յարմարեալ կամ թարգմանեալ շատ վա-  
զուց, և զոնէ սկիզբն՝ ուր Ամասիոյ  
քաղաքին նկարագրութիւնն կ'ըլլայ՝ զուտ  
Խորենացւոյ զրչէն թափուած է:

Քիչ ժամանակ վերջ սոյն Ամասիոյ մէջ  
նահատակուած են մեր զօրականին հօր-  
քեռորդիքն Ա. Եշտաուպիոս և Ա. Կղեռնաս  
կամ Կղեռնիկոս, և քեռորդին (ըստ ոմանց  
եղքօրորդի) Բասիլիսկոս: Ապ՝ ըստ ոմանց  
բանտին մէջ վախճանած է. բայց աւելի  
հաւանականն է՝ որ ըստ աղաչանացն  
յԱստուծոյ և ի մարդկանէ, բանտէն հա-  
նուելով քշուեր է ի Կոմանա Հայոց, և  
հօն նահատակուեր՝ զլիսատուելով: Յիշա-  
տակուի ի 22 մայիսի: Ոմանք զսա եկե-  
ղեցական կարծեն՝ շփոթելով համանուն  
Անկիւրիոյ եպիսկոպոսին հետ: իսկ միւսք՝  
իրենց հզօր ազգականին նման՝ կոոց բա-  
զինները կործանած են, երբ դատաւորն  
տարեր է զանոնք՝ կարծելով թէ խունկ  
մատուցանեն. շատ տեսակ տանջանքներ  
կրելով, երբեմն հրաշքով ազատելով և  
իրենց տեղ դահիճներն պատժուելով, յետոյ  
խաչերու վրայ զամուած պսակուած են:  
Երեքին մարմիններն Ամասիոյ մօտերը այլ-  
եւայլ տեղ թաղեր են քրիստոնեայք. յիշա-  
տակնին զրուած է ի մարտի Յ: — Միւս

քեռորդի մի մեր Ա. Ամասիացւոյն և իրեն  
պէս հոչակեալ նա և անուանակից և  
տեղակից, է Ա. Թէկոդորոս ստրատելատն,  
յառաջագէմ ի զինուորութեան պատուի.  
աս իրեւ 13 տարի իր քեռիէն վերջը  
(319) նահատակուեր է ի լկտի Լիկինիոսէ,  
Գամբաց Հերակլիս քաղաքում, որոյ հա-  
մար Արակլիացի կոչուի. ուր՝ կոոց ան-  
դրիները կոտրտելուն համար՝ բրոնաւորն  
ի խաչ հանել տուաւ զնա և նետահար  
ընել. բայց երբ լսեց ժողովրդեան շշուկն  
իրեն գէմ, իջեցընել տուաւ, և զաղտուկ  
զլիսատել ի բանտին: Ասոր յիշատակն  
այլ կատարուի յ'7 կամ 8 փերբուարի  
ի Յունաց և Լատինաց, ըստ մեր Յայս-  
մաւուրաց յ'8 յունիսի:

ՅԱմասիա վկայելոց մէջ խոստովանող  
մի եւս նշանաւոր և ողբերգական յիշա-  
տակ մի ունի, յիշեալ կայսեր պատճառաւ,  
զոր Խորենացին (Բ, 28) այս առժիւ՝ ցան-  
կաւեր զարշելի արևոր կ'անուանէ. վասն  
զի իր կինը Վալերիոս՝ Դիոկղետի դուստրն  
երեսէ թողած, (զոր յետոյ Պրիսկա մօրն  
հետ ծովախեղդ ըրաւ), անոր Գրափիշոս  
նաժիշտը կ'ուզէր առնուլ. նա ճար գտաւ  
փախչելու մինչեւ յԱմասիա. որոյ եպիս-  
կոպուն Բասիլիոս պաշտպանեց զնա, որոյ  
համար և նահատակեցաւ (319, մարտ 28).

յաջորդ տարին (13 յանուարի), մեռեր է  
Գլափիւռա:

Ի սկզբան հալածանաց համարուի եղած  
Ս. Արանազինեի նահատակութիւնն՝ ի Սեւ-  
բաստիա, յԱգրիկողայոսէ, ոմանք ի մերոցս՝  
քեռի կոչեն զսա մեր Ա. Գր. Լուսաւորչի.  
բայց, ինչպէս առաջ յիշեցինք երկու  
Աթանազինեանց անձինքն, գործքն և նա-  
հատակութիւնք շփոթուած են. ուզողն  
կընայ քննել նա և յԱւգերեան Վարս  
Սրբոց (Հատ. Դ. էջ 319–360). ծանօ-  
թագոյնն և մեզի մերձաւոր իր Թիւղիսոն  
աշակերտաւն նահատակուած է ի Փիրսե-  
րովէ, Փուլաշջնոց, որ ըստ վիճակազրու-  
թեան Լէոնի Խմաստասէր կայսեր՝ Հայոց  
կամ Հայկական գաւառի կամ եպարքոսու-  
թեան մէջ էր: Յիշատակ Սրբոյս զըռւած  
է ի 17 յուլիսի: — Ի Սեբաստիա նահա-  
տակելոց մէջ այդ Ագրիկողայոսի հալա-  
ծանաց տարիներում, մեծահոչակ է առ  
ամենայն եկեղեցիս Ա. Եպիսկոպոսն Վշաս.  
զոր՝ երբ տանջած և արիւթաթախ ի  
բանտ խաւրէր, եօթն զթալից կանայք՝  
արեան կաթիլները սրբէին, որոյ համար  
իրմէ առաջ նահատակուեցան կրակի մէջ.  
իսկ Սուրբն ձգուեցաւ Սեբաստիոյ անուանի  
լճին մէջ, ուսկից հրաշքով ջրոց վրայ  
քալելով գուրս ելաւ, և գլխատմամբ կա-

տարեցաւ: Տօնուի յ'Յ փերբուարի կամ  
քանի մի օր վերջը:

Սեբաստիոյ լճին անունն յափշտակէ  
զմիտու ի հանդէս աշխարհահոչակ նահա-  
տակութեան Քառասորն (Մանկանց) վկայիցն  
զօրականաց, որոց ամենուն այլ անուանքը  
նշանակած են պատմիչք և ներբողիչք,  
և ոչ սակաւ են գովաբանքն ի Յունաց,  
Լատինաց նա և ի մերոցս, թէ թարգմա-  
նութեամբ և թէ այլեւայլ յիշատակօք,  
որոց մէջ արժանի են յիշատակութեան  
և գովութեան և զարդի եկեղեցւոյ մերոյ՝  
իրենց նույիրեալ գեղեցիկ Շարակահրե:  
Հալածանաց երկրորդ և երրորդ անգամ  
բորբոքած ատեն եղած է ասոնց նահա-  
տակութիւնն, յամի 320. տօնուին յ'Գ  
մարտի, Քառասորն Մանկունք Սեբաստիոյ  
կոչմամբ. մինչեւ հիմայ տեղացի քրիս-  
տոնեայք ցուցընեն ցամքած յատակ մի ի  
դաշտի, ուր՝ նահատակըն «Ի Սեբաստիայ  
Ծովուն՝ զծովածուի կենցաղոյս լուծին  
« զվտանգ. (ուր և) Քրիստոսածիր երկւ  
« նառատ ճառագայթիւը տապանայը ծովն  
« սառնապատ լճիւն. վասն զի պատուա-  
« կան արեանցն հեղլով՝ զկապուտակ զծովն  
« վարդագոյն ներկէր ». երգէ մեր Շա-  
րականն:

Հոչակաւոր նահատակ մի եւս է ազնուա-

կամն Ա. Ալեքսերիանոս Ակրաստացի, (9 կամ 13 սեպտեմբ.) : — Զատ յայլոց վկայից՝ ի Սեբաստիա նահատակուած յիշուին մեծ հալածանաց ատեն և երկու ընկերք, որը իրենց անուանց նմանութեամբ (ըստ յոյն գրողաց) թուին Հայր. մին Տիգրոն՝ որ թուի Տիգրոսն, միւսն Արիոն։ Յիշատակուին ի 22 մարտի։

Լիկինիոսի ինքնակալութեան ատեն այլ ի Սեբաստիա նահատակուած են բազմաթիւ վկայիք ի կրակ ձգուելով, որոց զլաւառոքն կոչին կարուեր, Երդոքսիոս, Աստիկ, Ստիգրակ, Աղապիոս, և այլն. յորոց ոմանց անուանքն մօտ են հայերենի. յիշատակուին յ՛շ նոյեմբերի։ — Նոյնպէս այս քաղքիս մէջ հալածանաց սկզբում նահատակուած է Ակակ ոմն, և քուրմ մի (Herenarague), Խաղաղապետ կոչուած, որոց յիշատակն գրուած է ի 28 նոյեմբերի։

Ոչ պակաս քան ի Սեբաստիա, այլ գուցէ և աւելի նահատակ ընծայեր է Գ. Հայոց մայրաքաղաքն Անիտինէ՝ այս հալածանաց ատեն, Լիւսիասայ և իր արբանեկաց ձեռօք. և ի սկզբան անդ (304) հազարով. երբ Երդոքսիոս զօրավար հոռվամայեցի հօն աքսորեցաւ, իր ամբաստանողն՝ Հոռմիջոս այլ հաւատաց ի Քրիստոս. այն ատեն Զենոն կտրիճ զօրական մի եւս

համարձակ հոչակելով քրիստոնէական հաւատքը՝ իրեն հետեւցուց ամբողջ գունդ մի՝ ոչ պակաս քան 1104 անձինք, որք յետ պէսպէս տանջանաց սրով կոտորեցան, և յիշատակուին ի 6 կամ ի 11 սեպտեմբերի։

Քանի մի անգամ յիշուած ըլլալով հազարաւոր գունդ գունդ վկայից նահատակութիւն ի Մելիտինէ, կըընար կասկածուիլ որ շփոթութիւն մ'ըլլայ պատմութեան. սակայն պարագաներն և ժամանակն այլեւայլ են. կարեւոր զիտելի այլ է, որ այդ քաղաքն մեծ զինուրանիստ տեղ մ'էր, ուր միշտ բազմութիւն զօրաց կենար, և այս ատեններս շատ աւելցած էին քրիստոնեայք, մինչեւ ամբողջ խումբեր կազմէին։

Այս Փոքր Հայոց երկու մայրաքաղաքներէն վար չէր կըընար ըլլալ Ա. Հայոց աւելի նշանաւոր մայրաքաղաքն, Կեսարիա, որ և հին Գամրաց և Կապպաղովկիոյ, ինչպէս եկեղեցական բարձրագոյն գրեթէ ինգնազլուս աթոռոց մէկն էր, արեամբ վկայից այլ պայծառացաւ։ Ի սկզբան այս Դիոկղիտեան հալածանաց, սկսալի նահատակ մի ընծայեց (304 կամ 306) գկոյսն Դարտքեա. որոյ շատեր ցանկային, բայց ինքն իմաստուն կուսանաց նման զՔրիստոս

ընտրեց փեսայ։ Ապալրիկ անուամբ անգութ՝  
դատաւոր մի՝ յետ յորդորանաց՝ վախցընեւ-  
լու համար ի կախաղան հանել տուաւ։  
կոյսն փութացընէր զնա, որ ժամ մի առաջ  
երթամ, կ'ըսէր, ի զրախտն Աստուծոյ։  
Սապրիկ աւելի չար հնարք մի մտածեց  
կոյսը մոլորցընելու, երկու ուրացեալ կա-  
նանց յանձնեց ընելիքը. բայց անոնք ասոր  
խօսքերը լսելով՝ զղջացան իրենց ուրա-  
ցութեան վրայ, և դատապարտուեցան  
իրարու կապուած կռնակ կռնակի կրակ  
ձգուելով, ուր և կուսին բաջալերութեամբ  
զօրացած՝ ողջակիզեցան։ իսկ զատ՝ Ապ-  
րիկ շատ չարչարել տուաւ՝ կախուած  
ծեծելով, մարմինը պատրուելով և ջահե-  
րով այրելով, վերջապէս զլիստելով։  
կոյսն բարձր ձայնով փառք կուտար Քրիս-  
տոսի՝ որ պիտի ընդունէր զինքն ի զրախտն։  
Զայնը լսելով՝ դատաւորին պաշտօնէից  
մէկն՝ Թէկոփիլոս անուամբ, ծաղրելով ըսաւ  
կուսին. երբ երթաս ի զրախտն՝ անոր  
ծաղկըներէն և պտուղներէն խաւրէ ինծի.  
կոյսն այլ խոստացաւ, և անվախ ի ծունկ  
իջնալով զլիստեցաւ։ Երբ Թէկոփիլոս դեռ  
ծիծաղելով ըսածը և լսածը պատմէր,  
երիտասարդ մի եկաւ քովը, և ի կողմանէ  
Դորոթեայ ընծայեց անուշահոտ վարդեր  
և գեղեցիկ ինձորներ. զարմացաւ Թէկո-

իլոս, և հասկըցաւ որ հրաշք է այդ,  
վասն զի ծաղկանց և պտղոց եղանակ չէր  
(փերրուար ամսեան սկիզբն)։ հաւատաց  
ի Քրիստոս, դատեցաւ, ու տանջեցաւ՝  
կողերը երկաթի ճանկերով քերուելով, և  
զլիստութեամբ նահատակեցաւ։ Դորոթէա  
տօնուի ի 6 փերրուարի։ — Այս մեծ  
հալածանաց նորէն նորոգուած ատեն՝ Լի-  
կինիոսի զրգումամբ, նահատակուած է ի  
կեսարիա, (իբր յամի 320) մեր եկեղեցոյ  
մէջ այլ տօնուած զօրականն կամ զօրա-  
պետ Ա. Գորդիոս կամ Գորդիանոս. որ  
զգուելով ի կոսպաշտից և անոնց պաշտ-  
պաններէն, թողուց զինուորութիւնը և  
բաշուեցաւ յառանձնութիւն։ բայց երբ  
լսեց որ հեթանոսական մեծ հանդէս և  
խաղը կատարուին ի քաղաքին և թոյլ  
քրիստոնեայք այլ կ'երթան տեսնելու,  
իջաւ ի հրապարակ, յանդիմանեց զամէնքն  
այլ՝ հանդերձ դատաւորաւն, յորմէ և  
դատապարտուած՝ քրիստոնէական և զի-  
նուորական արիութեամբ նահատակեցաւ.  
և յիշատակն կատարի յ'Յ յանուարի. Ա.  
Բարսեղ եկեղեցի մի կանգնած է յանուն  
Աբրոյն և ճոխարան ճառիւ ներբողած։ —  
Այս ատեններս թուին նահատակուած ի  
կեսարիա երեք վկայըն Պոլիկտիոս, Վիկ-  
տոր և Գոնատ, ի 21 մայիսի։ Հոչակաւոր

Նահատակ մ'այլ կեսարիոյ է Ա. Զինաւրի  
Մերկիշոխոս. յիշատակն ի նոյեմբ. 25:

Յիշեալ մայրաքաղաքներէս զատ՝ բռն  
Մեծ Հայոց աւելի մօտիկ այլեւայլ քաղա-  
քաց մէջ այլ նահատակներ եղած են, որոց  
ոմանց հայ ըլլան անտարակոյս է, այս-  
պիսի են Ա. Եւստոնատիոս և ընկերքն, գոնէ  
ոմանք. ինքն՝ ըստ ազգայնոցս աւանդու-  
թեան Յուսիկ կոչուէր և ազնուական ցեղէ  
էր, հայրենեօք յԱրարակ<sup>1</sup> կամ Արօրակ  
քաղաքէ, Բարձր Հայոց սահմանակից գա-  
ւառի: Սա ինքնին յայտնեց իր քաջա-  
հաւատ ըրիստոնէութիւնը. և այն յառաջ  
յիշեալ երկու անգութ կուսակալներէն  
(Լիւսիաս և Ազրիկողայոս) դատուելով՝  
այլեւայլ տեղ, երկաթէ կօշիկներ յոտներն  
գամուած՝ քշուեցաւ, և ի կրակ ձգուելով՝  
ողջակիզեցաւ: Երթալու ատենն Մարտար  
անուամբ Արօրակցի գեղջուկ մի՝ որ այն  
ժամ իր Խրճիթին ծածքը կը շինէր, տես-  
նելով զնա, փութացաւ իջաւ, և ետեւէն  
վազելով, Ես այլ հետդ կու զամ, տէր իմ,  
կանչէր, ես այլ ըրիստոնեայ եմ. և չա-  
րաչար տանջուելով, կրակած շամփուրով  
խոցուելով, ոտուըներէն ծակուած և կա-  
խուած, նահատակեցաւ: Քահանայ մի եւս

1. Հինգ վեց դար առաջ զբուած Յայսմաւուրք՝ Կ'ըսեն  
թէ Արօրակն հիմայ Արզբեցիք կոչուի:

Օքսենտ անուն՝ զլիատմամբ ընկերացաւ  
Արբոցս. նոյնպէս և Երգենիոս անուամբ  
մէկն (գուցէ հայերէն Պատուական կամ  
Աղնիւ կոչուած ըլլայ), որ սիրով Եւստոնա-  
տիոսի ետեւէն զնաց, և ջարդուելով  
կտրատուելով նահատակեցաւ: Հինգերորդ  
ընկեր մ'այլ Արբոցս եղաւ երիտասարդն  
Ովրեստէս, որ նետաձգութեամբ խաղի  
ատեն՝ երբ ուժով արձակեց, կուրծքէն  
կախած խաչը զգեստէն դուրս ենելով՝  
իմացուեցաւ ըրիստոնէութիւնն, և կրակ  
կտրած տանջանարանի վրայ տարածուե-  
լով՝ նահատակեցաւ: Յանուն իրենց ազ-  
նուական տիրոջ՝ Եւստոնատիոսենք կո-  
չուելով տօնախմբին Սուրբքս, յ'13 դեկտ.  
ամսոյ. գեղեցիկ Վկայաբանութիւն մ'այլ  
թարգմանած են մեր նախնի հարք ի յու-  
նարենէ, յորում կ'ըսուի, որ թէ քահա-  
նայն Օքսենտ և թէ Եւստոնատիոս՝ կտա-  
կաւ պատուիրեցին՝ որ զիրենք թաղեն  
յԱրօրակ. յետինս նա և կտակեց որ իր  
ստացուածքն երեք մաս բաժնելով տան  
աղբատաց, եկեղեցւոյ և իր քրոջ: Վր-  
կայած են յամին 305: Մեր եկեղեցին  
այլ նուիրած է և երգէ ամէն տարի իրենց  
տօնին՝ հինգ տուն անուշիկ Շարականը<sup>1</sup>:

1. Որ բգնուր սիրոյ քո Քրիստոս ըորբոքեցեր յոզիս  
արդարոց. որով վառեալ իմաստութեամբ երանելին

Այն կողմերու հայաբնակ Արարիսոս  
անուամբ քաղաքն այլ յամի 309 ըն-  
ծայած է կեսար նահատակը, որոյ յիշա-  
տակն զրուած է ի 28 դեկտ: Ուրիշ է  
սա ի կեսարիս նահատակուած կեսարէն,  
որ յիշուի. յ' 3 նոյեմբ:

Եկիմականիս Հայոց քաղաքն այլ՝ ինչպէս  
առաջին հանձնանաց ատեն, այս ետքի  
մեծ հայութանաց այլ ընծայած է սուրբ  
նահատակներ: որպէս, Ղետոնդ և Մատրիկ,  
յամի 318 կամ 320, շատ ընկերներով,  
ծանօթ Լիւսիասին հրամանաւ. ասոնց  
յիշատակն զրուած է ի 10 յուլիսի: —  
Երկրորդ օրն այլ (11 յուլ.) յիշատակուին

Եւստատիոս, ընծայեաց զանձն ողջակէզ քեզ կամաւոր.  
քարեխօսութեամբ սորա չնորչեա մեզ տօնողաց ըզբա-  
ւոթիւն:

Որ զարբայութեան բոյ Քրիստոս տարածեցեր ըզյոյս  
յաշխարհի. որում տենչացեալ փափակեաց հոգով երա-  
նելին Արքանտիոս, քատակն արեան արքեալ ուրա-  
խութեամբ ընդ քեզ մըկերտելով. քարե:

Որ ըզյոյս փառաց բոյ Քրիստոս ծաւալեցեր ընդ  
տիեզերս. որով զլապտեր հաւատոյ լուցեալ երանելին  
Եւզենիոս, հետեւեաց լուսաշաւիդ քեզ ի յերկինս արեամբ  
մահու. քարե:

Որ զնըշան խաչի թու Քրիստոս ետուր մեզ զէն յաղ-  
թութեան. որով զինեալ ընդդէմ մահու երանելին սուրբն  
Ովքանտէս, բոցակէզ պատարազաւ քեզ խաչակեցեաւ.  
քարե:

Որ ըզբան կենաց բոյ Քրիստոս սերմանեցեր յերկիր  
քանաւոր. զոր ընկալեալ պատղարերեաց յինքեան երա-  
նելին Մարդարիոս. ի մարմին անմարմար չարչարելով  
պասակեցաւ. քարեխօսութեամբ:

Յանուար (Januarius) որ չորս օր չա-  
րաչար տանջուեցաւ, երկաթէ ճանկերով  
պատըռոտուելով և խարուկուելով, և Պե-  
տրագիա վկայուհի մի. ասոնք հալածանաց  
սկիզբներուն նահատակուած են այս յա-  
տուկ Հայոց քաղաք կոչուածն:

Ժ Գ.

Վախճան Հալածանաց եւ Համբաւաց  
Տրդատ կուփամարէ զմալածիչն Մարդի-  
վնոս:

**Յ**իշեսսեկի Սուրբ Նահատակացս կըր-  
նան զմեզ շատ հեռացընել մեր նպատակէն,  
եթէ ուզենք յերեւան հանել այլ եւս անսնց  
նմաններ. այլ բաւական համարուի այս-  
չափս իրբեւ փոքրիկ փունջ մի կարմրուկ  
ծաղկանց, նախ Քրիստոսի և ապա իրենց  
արեամբ ոսոգուած զրախտին. որ և հա-  
մեմատութեամբ իրենց բազմութեան՝ և ոչ  
իրբեւ մի ի հազարաց և երկու ի բիւրոց  
է. զի այդ բրիստոնէութեան առաջին երից  
դարուց տասն այլեւայլ անզամ կրկնուած  
հալածանաց ատեն, ի Ներոնէ մինչեւ ի

լիկինիոս, համարին քննիչ վկայաբանք իրեւ տասն ու մեկ միջոն մարտիրոս եղած . որպէս զի , հաշուէ Առւրը մի (Լիկուորի) տարւոյն ամէն մէկ օրուան 30,000 հոգի կ'ըլլայ . իսկ այս վերջին կամ Դիոկղետիանոսի կոչուած հալածանցն ամենէն արիւնահեղն ըլլալով, աւելի այլ բազմաթիւ պիտի ըլլան վկայքն : Նոյն համեմատութեամբ և մեր Հայոց աշխարհիս նահատակուողք, որք իրեւ բոլորտիքը նահատակուողք, որք իրեւ ոսկեփայլ մահիկ մի պատէին զսա՝ ի հիւսոյ արեւմտից մինչ յարեւմուս հասոյ . մինչ դեռ հեռուանց յարեւելից այլ բաւոյ . մինչ դեռ հեռուանց յարեւելից այլ Սասանեանք՝ ոչ սակաւ նահատակէին . այնպէս՝ որ մեր նախնեաց աչքով մեր այդ չորս բոլորը նայելով, կը ընամք՝ այդ չորս բոլորը նայելով, կը ընամք՝ (Երք. ԺԲ). «Այսուհետեւ և մեր որ այս՝ « չափ շոշրչ զմեօք մածեալ ունիմք զրազ՝ « մուրիւն վկայից, զհպարտութիւն զամե՝ « նայն ի բաց ընկեսցուք (չհպարտանանք « պարապ պարծանօք) և զմեզս կարեւորս. (այլ) համբերուրեամբ ընթասցուք ի պատ՝ « տերազմ որ առաջի կայ մեզ » : (Հիմկու ժամանակիս այլ, և այս տողերը զրելուս ատեն, միթէ այն սուրն՝ որ սկզբան չորրորդ դարու մեր չորս զին հնձեց և չորրորդ դարու մեր չորս զին հնձեց և մեզ ինայեց, հիմայ ընդհակառակին՝ չորս

ուի հանդաբար ըլլալով, զմեր ազգայինները չլի հնձեր ի Փ. և ի Մ. Հայս, ոչ սակաւ բարբարոսաբար և աւելի խարդախութեամբ) . . . Բայց ուր թոշի զրիչս . . . սանձենք զսա . այլ զսիրտ ով կը ընայ սանձել . ով անոր ներցին հառաչանքը խղզել՝ եթէ բերանք կարկին, և արտասուր ցամքին : Ով երկայնամիտ և ամենագէտ Աստուած :

Տարբեր տեսութեամբ այլ՝ ո՞րչափ խղճալի և տիսուր տեսարան յերկրի, այլ ինչ պայծառ և գերազոյն յերկինս, նա և յերկրաւոր եկեղեցւոջ, այս վկայից Քրիստոսի . յաղթողագոյն նահատակը և գերագոյնք ի Առւրբս . . .

Արդարութեան և պատմական օրինօք և կարգաւ՝ վայել է որ նայինք հիմայ, ուր յանգեցաւ այդ չորից և վեցից միաբանեալ կայսերաց վառած հալածանաց կրակն, և ինչ եղան բռնկցընողքն : — Յիշեցինք որ Դիոկղ. գուցէ կակղագոյնն ի զազանացեալն՝ այլ չարեացապարտն քան զամենեսին, հրձիգ ջահը թողլով աղմքին մէջ՝ վատ վատ քաշուեցաւ ի Դաղմատիա . իր աթոռակիցն Մաքսիմիանոս բռնադատեցաւ կամայ ակամայ նոյնպէս հրաժարելու . այլ թագին հետ թոյնը ժառանգութիւն թողլով գուցէ քան զինքն անգութ Մաքսենտ որդույն, զոր՝ յետ եօթն տարւոյ՝ երկրաւոր և

երկնաւոր զօրութեամբ ջախջախեց կոստանդիանոս (28 հոկտ. 312)։ բնութիւնն այլ կարծես չկարենալով կրել անոր փախըստական զօրաց ծանրութիւնը, կամուրջը կոտրելով ընկղմեց զինքն այլ անոնց հետ ի Տիբերիս գետ, Հռովմայ պարսպաց ներքեւ։ ուր՝ երկրորդ օր մտաւ յաղթողն՝ և ըրիստոնէական ազատութեան առաջին հրովարտակը հոչակեց։ — Մեւերս (Բ) արդէն սպանուած էր (307) այդ իր գետախեղդ թագակցէն։ Յիշեցինք Գալերիոսի մահն (1 մայիս, 311), Անտիոքոսի նման որդնահար զուր զղջանօք, և իր վատթարագոյն որդւոյն Մաքսիմինոսի՝ յաջորդելն չարագոյն եւս վարչութեամբ։ որոյ պսակ եղաւ՝ մեր ազգիս նկատմամբ պանծալի՝ իրեն համար ամօթալի գործն։ Գրեթէ նոյն կոստանդիանոսի ի Հռովմ Մաքսենտի վրայ յաղթանակելուն ատեն, (զոր թուի գեռ չլսած) Մաքսիմինոս՝ Տրդատայ զՀայաստան քրիստոնեայ ընելով՝ Հռովմէական քաղաքավարութեան հակառակ և արգելը կանգնելուն։ այլ եւս չկարենալով համբերել, յարձակեցաւ ի Հայս։ ոչ այնքան արեւելան գոռող մի նուաճելու համար, որքան անոր և ազգին ըրիստոնէութիւնը զսպելու։ որոց ազատութիւնն՝ իր և իր կայսերակցաց բանակաց մէջ գտնուող մեր

ազգայինները խլրտեցընէին։ Եկեղեցական պատմութեան մէջ այս առաջին անգամն է՝ որ ըրիստոնէութեան պաշտպանութեան համար՝ ըրիստոննեայ տէրութիւն մի և թագաւոր մի՝ պատերազմի անըրիստոննեայ տէրութեան, և հռովմէական տէրութեան լեզոնից հետ, և յաղրէ։ Յաղթողն այլ է 30 տարիէ վեր դաշնակիցն կայսերաց, Տրդատ։ զոր զրգուեցին՝ անոնց նախ անգըթութիւնն, և յետոյ այս Դամանին անմտութիւնն։ որ Տրդատայ հսկայազօր թաթով չարաչար կոփահարուած՝ զիւակոր մազապուրծ եղաւ կոտրտած բանակով։ Որոյ համար կըրնար Տրդատ՝ փոխանակ անոր հօր (Գալերիոսի) իր զրամոց վրայ զինքը նա և Armeniacus անուանելուն, անուանել զինքն՝ զատ յայլոց սև և յաղթանիշ մակղրաց՝ նա և զերագոյն պանծանօք՝ Romanicus. բայց Տրդատայ մնծագոյն պարծանքն էր Cristianus ըլլալն՝, և յետ լսելու կոստանդիանոսի կրկին տեսակ յաղթութիւնը, կրկին և հաստատելն անոր հետ նոր Դաշնակցութիւն մի։

Սակայն կոստանդիանոս գեռ չէր ըրիստոնեայ, և ոչ ի պաշտպանութիւն ըրիստոնէութեան ըրաւ իր յաղթութիւնն ի Հռովմ։ իսկ Տրդատ՝ տարբեր պարագայիւ.

զոր չգիտեմ ի՞նչ զըշով, ի՞նչ զունով  
զըելու է, թէ՛ եկեղեցական և թէ՛ մեր ազ-  
գային պատմութեանց մէջ: Եւսեբիոս՝ որուն  
լոռութիւնը տեսանց մեր ազգովին քրիստո-  
նէութեան դէպրի մէջ, յայսմ զիպուածի  
եւս համառօտ՝ բայց բաւական յիշէ (Թ. Ը)  
Դաժանին կորանըք. «Յարեաւ (կ'ըսէ) ի  
« վերայ նորա՝ անօրէն իշխանին Պատե-  
« րազմն որ առ Հայսն եղեւ. արք որ ի  
« սկզբանէ բարեկամք և օգնակամք չոսուց  
« եին. նոքա քրիստոնեայք էին, և զեր-  
« կըրպագութիւն Աստուծոյ՝ փութապէս  
« պնդութեամք կատարէին, իսկ սոյն սա  
« ատելի Աստուծոյ՝ կամէք նեղել զնոսա՝  
« զի զոհեսցեն կոոց և զիւաց թշնամեաց.  
« և փոխանակ բարեկամաց ի մարտ պա-  
« տերազմի յարոյց զնոսա ընդդէմ իւր...  
« Արդ նա հանդերձ զօրօք իւրովք՝ ի պա-  
« տերազմի անդ որ ընդ Հայսն եր՝ կոփեալ  
« յիներ »:

Եւսեբեայ հետեւող եկեղեցապատումք,  
Նիկեփոր Կալիստոս (Ե, ԵԲ) թիշ մ'աւելի  
լայն զրէ. իրմէ վերջ՝ Յայտնութեան զրոց  
մեկնիչն (զոր թարգմանած է Նիրս. Լամ-  
բանիանցի), Անդրեաս Կրեստոցի, ըստ ումանց  
Անդրեաս Կեսարացի, երկուըն եւս յ'Ը դա-  
րու, կ'ըսէ (Գլ. ԺԶ). «Բնդարձակ պատմէ  
րու, կ'ըսէ (Գլ. ԺԶ). «Բնդարձակ պատմէ

« Եւսեբի (երանի թէ) ի նոյն յՈւթերորդ

« բանն, թէ ի վերայ Հռովմայեցւոց յա-  
« րեան Հայք, և զրազումն սատակեցին, և  
« զսակաւ կերակուր՝ բազում ոսկոյ՝ ի  
« սաստկութենէ սովոյն՝ զնէին »: Ասկէ  
առաջ Եթովլացի եկեղեցական պատմիչ  
մի (Նիրիու) յիշած է այս զիպուածս,  
թէ Դաժան՝ նախ յաղթուեցաւ ի Հայոց.  
յետոյ պատճեցաւ յԱստուծոյ՝ ցաւօք:  
Աւելի ապշելի է մեր պատմըշաց լոռու-  
թիւնն, կամ ցաւալի՝ զրուածոց կորուստն.  
վասն զի, զիտնալու է որ, զրեթէ ապա-  
հովապէս այդ ժամանակ շատերն զրած են  
Հայոց երկրին հրաշալի և պէսպէս զի-  
պուածները. սակայն իւրաքանչիւր գրող  
մեր այն ընդարձակ երկրին մէջ՝ միայն  
իր յատուկ գաւառի կամ կողմի զիպուածը  
զրած է և Լուսաւորիչ այլ այսպէս ուզեր է  
որ ըլլայ, իր զգուշութեամք կամ խոհե-  
մութեամք, ինչպէս կ'իմացընէ ժամանակա-  
կիցն Զենովք. սա խնդրեց ընդարձակօրէն  
զրել այն բաները, բայց Լուսաւորիչ չհա-  
ւանեցաւ, և ինքն միայն իր վիճակին մէջ ի  
Տարօն եղածը զրեց: Այսկայն պարազայ մի  
իր սահմանաց մօտ հանդիպելով, անտարա-  
կոյս կ'երեւի որ այս մեր խնդրածը կ'ակ-  
նարկէ. երբ Յունաց յարձակումըց յիշէ  
ի հիւսիսոյ, նոյն ժամանակ և արեւմուտ-  
քէն երեւնալը զօրացե Յունաց. «Եւ իբրու

« տեղեկացաւ (Տրդատ) եթէ Յունաց զօրքն  
« էին, դարձաւ ի գաւառն Հաշտենից, և  
« եկն բանակեցաւ ի զլուխս Արձանին՝  
« վասն ընդարձակութեան վայրացն ». .  
այն տեղ՝ ուր տասն տարի առաջ՝ երբ նոր  
դարձաւ Ս. Գրիգոր ի Կեսարիոյ, մեծ  
պատերազմն եղաւ, քրմաց՝ իրենց Դե-  
մետրն և Գիսանէսը պաշտպանելու համար,  
Հայոց՝ իրենց նոր ճանչցած Քրիստոսը.  
որոյ համար իրենց պատերազմի արեամբ  
մկրտուեցան. և երբ երկու կողմէն այլ  
իրենց կէս քրիտոննեայ կէս հեթանոս կո-  
տրած մարմինները հաւաքելով միատեղ  
թաղեցին, և վրան. յիշատակի արձան  
կանգնելով՝ չորս զանազան լեզուով և գրով  
գրեցին. « Զայս պատերազմն արարաք  
« վասն Գիսանէի կոոց և վասն Քրիստոսի » :  
Յարմար գրուած՝ այն երկու կրօնից և մտաց  
դեռ խառնակութեան ժամանակին: Այս  
տեղէն սլացած իջած զարկած և հալածած  
է Տրդատ զԴաժանն Մաքսիմինոս. իսկ սա  
իր յազթուելուն վրէժն հաներ է իր քուր-  
մերէն, ջարդելով զանոնք, իբրեւ զինքը  
խարողներ՝ Փոխանակ զգաստանալու այս

1. Այս բանս յիշէ և եկեղեցական պատմիչն Հացմո  
(Բ, Գ), Եպիսկոպոս Հաւուշուատի ի կէս Թ դարուն.  
Rebellant Armeni, prius amici Romanorum,  
propter nefaria ejus (Maximini) dieta. Quorum  
in bello et ipse turpiter fugatur, et exercitus

հարուածէն, Մաքսիմինոս աւելի մեծ բանի  
ակնկալութեամբ՝ զամէնն այլ կորուս. երբ  
Լիկինիոս յարեւմուսս զբաղած էր կոս-  
տանդիանոսի քոյրը կին առնելով, Դաշտան  
ուղեց ասոր իշխած երկիրներն այլ զբաւել  
և միահեծան ինքնակալ ըլլալ. Լիկինիոս  
լսելով զայս՝ անկարծելի արագութեամբ  
հասաւ զարկաւ զնա, որ փախչելով ին-  
չուան ի Նիկոմիդիա (մայիս, 313) անկէ  
այլ ի Տարտոն, հօն մեռաւ (յօգոստոսի)  
չարաչար ցաւօք և անտիոքոսիան անօգուտ  
ստրջանօք՝ ըրած անգժութեանց և այնքան  
անմեղ քրիստոնէից արիւն թափելուն  
համար:

Մնաց ասպարէզն իրեն յազթող հակա-  
ռակորդին, որ անոր պէս փափագէր ինքնա-  
զլուխ կայսր ըլլալ Հռովմայեցւոց. բայց  
ի սկզբան կոստանդիանոսի հետ ըրած խը-  
նամութեանն, միանգամայն և վախուն  
պատճառաւ, ինքն այլ հրատարակեց ի  
Նիկոմիդիա (13 յունիսի, 313) ազատու-  
թիւն քրիստոնէից. այլ զիշ վերջը երբ  
տեսաւ որ կոստանդիանոս զբաղած է յի-  
տալիա, ուղեց անոր վիճակած երկիրներէն  
կորզել. կոստանդիանոս վրայ հասաւ, և

interiit ense. Tunc sacerdotes deorum suorum  
et divinos quorum responsis bella moverat,  
interfeci jubet, tanquam fallaces.

նախ Դանուբեան գաւառաց կողմերում  
յետոյ ի Թրակիա պատերազմելով՝ զսպեց  
զնա, և վեհանձնաբար ներեց, և նորէն  
իրենց տէրութեան սահմաններն որոշելով  
և հաստատելով (8 հոկտ. 314) իրարմէ  
զատուեցան։ Սակայն այն Խորենացւոյ  
կնքած սեւաներկ մօրուօք սեւասիրտ ա-  
լեւորն, որպէս « Ծնձու անկարելի է  
« զիայտուցն փոխել և Եթովպացւոյ  
« զթխութիւն, նոյնպէս մարդոյ ամպա-  
« բըշտի... զբարսն... ցրտացեալ ի սիրոյն  
« Տրդատայ մեր թագաւորի՝ ակն ածէր  
« որպէս արդարեւ ի թշնամւոյ »։ Իր նա-  
խորդ կայսերաց ճամբէն և գործէն յետ  
չկեցաւ, տարի մի վերջը (315) զՎալերիա  
Պրիսկա՝ դուստր Դիոկղետի՝ կին Գալե-  
րիոսի՝ մօրն հետ սպաննել և ծովընկէց  
ընել տուաւ. յետոյ գաղտնի և յայտնի  
հալածանը հանեց քրիստոնէից և շատեր  
նահատակեց, յորոց մի քանին քիչ առաջ  
յիշեցինք, և որոց կարգէն են բազմաթիւ  
զինուորական Հայք, որոց քրիստոնէու-  
թիւնն իրեն գէմ երկաթէ աւելի խոցոտիչ  
էր։ Վերջապէս այն խարէական գունով  
թեթեւամիտ զլուխը նորէն կանգնեց ընդդէմ  
յայտնի քրիստոնեայ հոչակուած կոստան-  
դիանոս կայսեր. և նախ յԱղքիանուալիս  
(3 յուլ. 323) հարուած մ'առաւ, յետոյ

նոյն տարին, (18 սեպտեմբ.) կոստանդնի  
նոր ընտրած քաղղին զիմաց՝ ի Խրիստի-  
պոլիս (Խւակիւտար) չարաչար զարնուելով  
և տեղէ տեղ փախչըտելով, բանի մի ամիս  
վերջը (16 ամիս, Յ24) ի Թիսաղոնիկէ  
յաղթողին զատաստանաւ և իր կամ օտար  
ձեռօք խեղգամահ կորաւ, ըստ ոմանց  
60ամեայ, այլ հաւանօրէն ըստ այլոց ծե-  
րագոյն եւս. և իրմով բոլորովին փշրեցաւ  
այդ քրիստոնէից ջնջուելուն կամ նուա-  
զելու վճիռ նետող վեցերես քուէն։

Լիկինիոսէն առաջ հալածող չորս կայ-  
սերքն՝ զրեթէ մէկ մէկ տարի իրացմէ ետև  
կորան, շատն զիրար սպաննելով զրեթէ.  
անոնց ամենուն խայտառակ խաղն ու  
կորուստը լսելով Դիոկղետիանոս իր կա-  
մայ ակամայ աքսորանաց մէջ, անոնց  
ետեկն անցաւ զնաց (մայիս, 313) իրը  
68 ամեայ։

Ի՞նչ եղաւ այդքան խրոխս ինքնակա-  
լաց՝ ամենայաղթ համարեալ Լեգէոնաց  
տէր, աշխարհիս չորս անկիւնները ուսից  
տակ առնողներու զօրութիւնն, սպառնա-  
լիքն, հարստութիւնը, յաղթանակը, փառք,  
վայելք, աւելցըննենք նա և անզթութիւնը  
և պղծութիւնը։

Դանիէլ մարգարէի տեսած բարձր ու  
լայն լերան պէս կանգնած ատեննին՝ փո-

Քըլիկ քար մի փրթաւ, զարկաւ կործանեց. Խաչն. զորոյ նշան՝ համեմատ ի տեսլեան իրեն երեւածին՝ կոստանդիանոս կարեց կապեց իր կապերտակին վրայ (Labarum), և բանակացն առջեւէն տանելով՝ միապետեց երկրի. որչափ որ երեք չորս դարերու աշխատանօք և անթիւ մարդկան կոտորածով՝ նուաճեր էին իր նախորդ կայսերը. և աւելի ստոյգ կերպով փակեց զտաճար (Հաշտութեան) Յանոսի, և համարձակ բացաւ զթիառախին: — Համաշխարհական մեծ իր մ'է այս ի պատմութեան և ի մարդկութեան. որոյ՝ ըստ չափու տարածութեան երկրին փոքրագոյն՝ բայց երիցագոյն նկարագիր և նախօրինակ եղած էր, անկէ տամն տարի առաջ, մեր Հայաստան Հայրենիքն:

Եթէ եկեղեցական կամ կրօնական մեծ և յայտնի զիպուած մ'է Հայոց քրիստոնէութիւնն նախ քան զազատութիւնն կոստանդինեան, ոչ սակաւ նշանաւոր քաղաքական դէպք մ'է և խլբառումն Հայոց՝ հոռվմէական ձեռաց տակ. և սոցա Համարձակելն կամ զգուշանալ ի զրգուելոյ զՀայս. մանաւանդ զի, ինչպէս յիշեցինք, կայսերաց զօրագնդից մէջ այլ կային քրիստոնեայ Հայք. և այս այլ ոչ փոքր առիթ մ'եղած է, մանաւանդ յետ կոփանաց Դամանին, հոռվմէական վարչութեան կերպ մի

յեղափոխութեան և ետ կենալու յաշխարհակալութենէ: Գուցէ այս ըսածս ոմանց ազգասիրական եռանդն և պարձենկոտութիւն երեւի. այլ դարձեալ պնդեմ, թէ, ոչ բաւական նկատուած այլ նկատելի կետ մ'է այս, յեկեղեցական և քաղաքական պատմութեան Հոռվմայեցոց ժամանակին. և թէ, Տրդատայ անկախ և ազատօրէն վարուին՝ անոնց վարչութեան կշիռը շեղեց շփոթեց. իսկ երբ կոստանդիանոս միապետեց և քաղաքավարութիւնը լծորդեց քրիստոնէական կրօնից՝ բոլորովին կերպարանափոխ եղաւ տիրապետութեան օրէնքն և կերպն:

---

## ՃԴ.

Տրդատայ երթան առ կոստանդիանոս եւ Ֆաշինքն. — Գրիգորի Եպիսկոպոսապետութիւնն, եւ Եպիսկոպոսներ ու վանքեր հաստատելու:

**ԻՄԱՅԻՆ** որ պատմութեան այս ամենանշանաւոր կէտին հասանք, և զջրդատ և կոստանդիանոս ի հրապարակի գործառնութեան տեսանք, ասոնց իրարու հետ տեսութիւնն՝ որ գրական և աւանդական դէպք մի է, հարկաւորէ զմեզ զիտել քննել, վասն զի և կրօնական մասն ունի խնդիրն և ոչ միայն քաղաքական։ Որչափ ինչ որ աւանդուած է նկատմամբ խնդրոյս՝ ոմանց բաւական չերեւիր ի սառուզութիւն. սակայն եթէ սոոյդ այլ չըլլար, այնքան յարմար և վայելուչ էր՝ որ գրէթէ անկարելի այլ կըրնար ըսուիլ չըլլալն։ Ժամանակն, այսինքն տարեթիւն, և պարագայքն (ինչ ճամբով, որոյ հետ և ո՞րքան զօրոք երթալն Տրդատայ, ինչ դաշինք դնելն իր հին ծանօթ բարեկամ և նոր աշ-

խարհակալին հետ), կըրնան այս կամ այն կերպով ըլլալ, բայց էտականն աներկրայ է. և եթէ օտարք չեն նշանակած զայդ, զարմանք չէ, վասն զի թագաւորաց երթալն ի Հռովմ՝ նոր բան մի չէր երեւեր այն ատեն. իսկ այնպէս մեծաւ հանդիսիւ երթալն Տրդատայ, հանդերձ իր երկրին Լուսաւորիչ Գրիգորիւ և անոր յաջորդ որդովն Արիստակիսիւ և աթոռակալ Աւրիանոսիւ, որոց հետ ի քաղաքական իշխանաց՝ հետեւէին չորս թղեշիքն, այսինքն կողմնակալը կամ սահմանակալը Հայաստանի, տասն մեծամեծ նախարարք և 70,000 այլ զօրականք, չափաւորապէս իմանալի է։ Նախ, որ հալածանքն դադրեր և քրիստոնէական ազատութիւնն հռչակուած էր, համարձակութիւն էր արեւելից մէկ հատիկ քրիստոնեայ թագաւորին՝ հանդիսապէս երթալն առ մեծազոյն թագաւորն. երկրորդ, հաւանելի է մեր թագաւորին բիւրաւորօք ճամբայ ելլելն, այլ տեղ տեղ թողուլ զօրաց գունդ, և ոչ թէ եօթն բիւրովք ի Վաղարշապատէ մինչեւ ի Հռովմ երթալ։ Այս իընդիրս պարզէ աւելի կարեւոր և վիճաբանեալ խնդիր մի ի մէջ զիտնոց. որ է թէողոսեան Օրինագրոց մէջ հըովարտակ մի կոստանդ. կայսեր առ Պրոկլիանոս պաշտօնեայ մի, վասն ապա-

հարկ ընելու զԱրշակ թագաւոր Հայոց՝  
այսինքն ազատ թողլու զնա ի հարկէ, և  
թոյլ տալու ազատորէն զալու երթալու,  
միայն կայսեր և անոր քանի մի առանձ-  
նաշնորհեալ անձանց կերպով։ Ոմանք ի  
զիտնոց համարին այս օրինազիրս՝ զԿոս-  
տանդ որդի մեծին կոստ. և թագաւոր  
Հայոց՝ զԱրշակ որդի Տիրանայ. սակայն  
զիտնագոյնք հաւանին՝ թէ ամեն Արշա-  
կունի թագաւորք և Տրդատ եւս Արշակ  
կ'անուանէր. հրովարտակին թուականն  
այլ՝ կոստանդիանոսի և Լիկինիոսի բղեշ-  
խութեան Դ տարին է, 315 թուականն  
Քրիստոսի, որ է նոյն կամ նախընթաց  
տարի Տրդատայ ուղեւորութեանն ի Հռովմ,  
և այս առթիւ կոստանդիանոսի յիշելն  
զնա Արշակ անուամբ յարմար է, և հաս-  
տատութիւն մեր խնդրոյն և պատմու-  
թեան։

Իսկ ժամանակ ուղեւորութեան Տրդա-  
տայ՝ ի սկզբան երեւի անմիջապէս ի լսելն  
կոստանդիանոսի հրատարակելն զազատու-  
թիւն քրիստոնէից, յամի 312-3, բայց  
Մաքսիմինոսի արշաւանքն արգելք եղած  
է. և յետ երկու տարւոյ 315ին կամ 316,  
երբ կոստանդիանոս իր տասնամեկին հան-  
գէսը կատարէր ի Հռովմ, ուր և գտուած  
է այս երկու տարիներուս ամառնային

Եղանակին<sup>1</sup>։ Առաջին պատմող այս կա-  
րեւոր տեսաւորութեան թագաւորաց և  
քահանայապետից՝ (զոր Խորենացին չի  
յիշեր), ինչպէս վայել էր ըլլալ, է Ագա-  
թանգեղոս, որոյ զրածն ի ՃիԶ զլուի  
պատմութեանն արժէ որ կարդայ մեր ըն-  
թերցողն. մենք զնեմք ի կարգի բանիցս  
զվերջին մասն. «Խաղայր գնայր (Տրդատ)  
« յԱյրարատ զաւառէ ի Վաղարշապատ  
« բաղաբէ, անցանել ի սահմանս Յունաց.  
« զանց առնէր զրազում օթեվանօք, մե-  
« ծաւ ուրախութեամբ, և բազում պատիւս  
« պատրաստութեան հպատակութեան՝ ըստ  
« բաղաբաց բաղաբաց զիպելոց, և իշխա-  
« նաց իշխանաց պատահելոց, գտանէին  
« մեծարանս ընդունելութեան. ընդ ցա-  
« մաք և ընդ ծով փութեցեալ աճապա-  
« րէին՝ մինչ երթային հասանէին... ի  
« թագաւորական բաղաբն Հռովմայեցւոց.  
« զորմէ իսկոյն պատմեալ յարքունական  
« պալատանն. զոր իբրեւ լուաւ աստուա-  
« ծակարգ թագաւորն պատուակալ աթո-  
« ռոցն՝ կոստանդիանոս, և հայրապետն  
« մեծ արքեպիսկոպոս աշխարհամուտ զը-  
« րանն, որում անուն կոչէր Անդրեասրոս<sup>2</sup>,

1. ինչպէս ընդունին հիմայ Հէֆէլէ, Ա. 187. – Լը  
Պոյ Ա., 166. – Պոոկւի Ա., 292. – Դիյլըմն, Դ., 165.

2. Հակառակ հասարակաց աւանդութեան մեր պատմը.

« որը մեծաւ սիրով պատիւ արարեալ՝ ընդ  
 « առաջ ելանէին և տուեալ հանգիստ՝  
 « շնորհս ունել ժամանակս ինչ անդէն ի  
 « տիեզերական քաղաքին... Ապա յետ  
 « այսորիկ մեծարեալ լինէին դարմանօք,  
 « մեծապատիւ շբեղութեանն կարգօք յար-  
 « քունեացն և եկեղեցեացն, և ի պատուա-  
 « կան իշխանաց քաղաքին, և մեծամեծ  
 « պատարագօք և երեւելի պարզեւօքն պա-  
 « տուեալ սիրով», և այլն:

Մեծ պատուով ընդունուած է, կ'ըսէ  
 Ազաթանգեղ, որպէս արժան էր և Ա. Լու-  
 սաւորիչ մեր, որոյ վրայ «զարմացեալ  
 « կայսրն կոստանդիանոս՝ խոնարհեցու-  
 « ցեալ զանձն՝ անկանէր առաջի Գրիգորի,  
 « զի օրհնեացի ի նմանէ. և բազում վա-  
 « յելուչ մեծարանօք պատիւ արարեալ  
 « նմա՝ իբրև Խոստովանողի Քրիստոսի,  
 « ըստ արժանաւորութեան նորա: Այսնպէս  
 « և արքային Տրդատայ իբրև եղոր սի-  
 « րելոյ՝ սէր ցուցեալ ուրախութեամբ  
 « մեծաւ, մանաւանդ վասն աստուածածաւ-

չաց, Ուխտանէո (Ա. ՀՊ) ոչ զԱնդքեստրոս՝ այլ զԵւսե-  
 րիոս պապն յիշէ, որ հազիւ երեցեր է թահանայապե-  
 տութեան զահուն վրայ, և այն յամին Յ11, հալածանաց  
 սաստկութեան ատեն. թէպէս կան որը աւելի փերջ  
 դնեն զնա, բայց չի յարմարիր, վասն զի Անդքեստրոսի  
 նախորդ եղած է Միւտիադէս, յետ զադարման հաւա-  
 ծանաց,

« նօթութեանն նորա առաւել, Դաշինս կոկր  
 « լինդ նմա, միջնորդ կալեալ զհաւատուն  
 « որ ի Տէր Քրիստոս էր. զի անշուշտ  
 « մինչ ի բուն զհաւատարիմ սէրն ի մէջ  
 « թագաւորութեանցն (երկոցուն) պահես-  
 « ցեն»: Այս իմաստովս և զրեթէ բառերով՝  
 Ներսէս Գ կաթողիկոս ի կէս ի զարու  
 զրէ առ կոստանդին կայսր. « իբրև տեսին  
 « զմիմեանս... միջնորդ կալան զհաւատուն  
 « որ ի Տէր Յիսուս Քրիստոս, և երդ-  
 « մամբ միաւորեցան երկոքին թագաւորքն,  
 « անշուշտ ունելով զխաղաղութիւն ընդ  
 « միմեանս մինչև յաւիտեան՝ ի մէջ թա-  
 « գաւորացն երկոցունց. և եւս հաստատե-  
 « ցին առ մեզ զհաւատոյն ճշմարտութիւնն,  
 « զոր հիմնազրեաց մեզ Ա. Հոգին»: Այս  
 խօսքերուս վրայ բարզած և բրդած է ան-  
 յայտ անձն անյայտ ժամանակի, բայց  
 թուի ԺԲ-ԺԳ գարու, մեծահոչակ Դաշանց  
 Թուղրը, որ ի յետին ժամանակս նա և ի  
 լատին և յիտալ լեզու թարգմանուած և  
 տպագրուած եւս է. յորում բաւական յար-  
 մար և աւելի անյարմար մեծաբանութեամբ  
 նա և փոանկ բառերով, Տրդատ կոստան-  
 դիանոսի կողմանէ իբրև իբեն երեսփոխան  
 կարգուի յարեւելս, Գրիգոր այլ ի դիմաց  
 Ա. Սեղբեստրոսի՝ զրեթէ նոյնպէս ընդար-  
 ձակ եկեղեցական իշխանութեամբ. և այս

դաշինքս երկու կողմանէ Քրիստոսի աշ-  
բեամբ (թաթիսելով զրիչը) կնքուած կ'ը-  
սուի: Աւելի հաւանականութեան ցոյց ունի  
Պարգևագիր կամ սահմանագիր մի Մշոյ  
Ա. Առաքելոց վանաց, յունարէն բնագրեալ  
հրամանաւ Ա. Լուսաւորչի և պահուած  
իր ձեռաց կնքով՝ մինչև ի վերջ ԺՈ.  
դարու, ըստ վկայութեան Զորտուանէլ  
Մամիկոնեան իշխանի, այն է Սամնոյ  
կողմերու, որ թարգմանել տուած է զայն  
յունարենէն ի հայ, և իր ձեռնազրով ընդ-  
օրինակեալ, (յամի 1079) որ և պահուէր  
նոյն վանաց մեծ ձառնտրի մի մէջ, իբր  
800 տարուն հնութեամբ, յորում կ'ըսէ  
Ա. Գրիգոր. «Խնամօքն Աստուծոյ և առաջ-  
« նորդութեամբ, կամ եղև ինձ և աս-  
« տուածասէր և քրիստոսապահ արքային  
« Հայոց Տրդատայ՝ գնալ ի տես, ի սէր  
« և ի միաբանութիւն մեծ քրիստոսասէր  
« և բարեկաշտ աշխարհակալ կայսերն  
« Հոռվմայեցւոց կոստանդիանոսի... մե-  
« ծամեծ պատուով և ամենաշատ սիրով  
« ընկալեալ եղաք յաստուածասէր և բա-  
« րեպաշտ արքայէն կոստանդիանոսէ և  
« ի սուրբ առաքելանման հայրապետէն.  
« Սեղբեստրոսէ. կացեալ ժամանակս ինչ  
« առ նոսին, Դաշն սիրոյ և միաբանորեան  
« եղաք առ միմեանս, Քրիստոսի արեամբն

« գրել և միջնորդել, զի անջրելի լիցի  
« ուխտ և միաբանութիւն Հայոց և Ջոսան-  
« կաց<sup>1</sup>, մինչեւ ի կատարած աշխարհի:  
« իսկ զկնի դառնալոյն մեր յաշխարհն  
« Հայոց, ի ժամանական՝ պատուեալը  
« եղաք ի նոցանէ փառօք, մեծամեծ և  
« անթուելի պարզեւօք, զոր (յամենայնի  
« կատարեալ հաւատով և ջերմեռանդ սի-  
« րով խնդրեցաք մեր ի նոցանէ, կապ  
« սիրոյ և հաստատութեան Գաշանց զոր  
« եղաք, ի Նշխարաց սուրբ գլխաւոր Առա-  
« քելոցն՝ Պետրոսի և Պաւլոսի »:

Թէ Զորտուանէլ և թէ մանաւանդ Ագա-  
թանգեղ յիշեցին՝ որ կոստանդիանոս մե-  
ծամեծ պարգեններ տուած է Տրդատայ. և  
վայելուչ էր այսպէս ըլլալն. այլ միթէ  
աւելի եւս վայելուչ չէ՞ր որ Տրդատ այլ  
իր մեծասրտութեան և իր բարեկամին  
փառաւորութեան համեմատ՝ ընծաներ բե-  
րած ըլլայ: – Ամենեւին տարակուսելի չէ,  
թէ և յիշուած չըլլայ. և ես կարծեմ թէ  
իր տարածին մէկն կամ մասն դեռ կան-  
գուն կայ փառաւոր տեղ մի շատ դարերէ  
վեր, աշխարհածանօթ և աշխարհատեսիլ,  
և զրեթէ ստէպ իմ աչացս առջեւ: Այն  
հին յունարուեստ ոսկէզօծ պղնձէ չորս

1. Հարկ է թէ ի ընազիրն Հոռվմայեցւոց էր, թարգ-  
մանիչն իր ժամանակի ոճով ֆրանգ զրերէ:

Երիվարքն, որի բաղաքիս (Վենետկոյ) մայր Եկեղեցւոյ ճակատում՝ իրեն օդաթռիչը՝ զարմացընեն զամեն մտացի տեսող, և զոր աւանդութիւն մի համարի՝ թէ Տիրեթ ոմն թագաւոր Հայոց բերած ըլլայ առ Ներոն կայսր. բայց շատ աւելի հաւանական է որ մերս Տրդատ բերած է առ Կոստանդիանոս:

Դառնալով առ Դաշնան, ստոյգ դաշնադրութեան մեծ վկայութիւն մի է և Բուզանդայ (Գ. ԽԱ) յիշածն, թէ նախարարք Հայոց յետ գերութեան և կուրութեան իրենց թագաւորին Տիրանայ, զիմեցին առ կայսրն Յունաց. «Մանաւանդ զի զուխտն « յիշեալ զԴաշնացն կրերց զերդմանցն հաս « տատուրեան, միջնորդութեամբ ի մէջ « կայսերն կոստանդիանոսի և ի մէջ բացա « տրին Տրդատայ եղեալ եր»: Ե զարու մեր Եկեղեցւոյ գլխաւորաց գրածն առ Թէոդոս Փոքր կայսր, ուր յետ յիշատակի դաշնադրութեան Տրդատայ և կոստանդիանոսի, կ'ըսուի. «Այսպէս և զՀաւատսն որ ի « Քրիստոս՝ ընկալաւ ի սուրբ եպիսկոպու « սապետէն Հոռվմայ, որ լուսաւորեաց « զիստարային կողմանս հիւսիսոյ»: Այս խօսքս Տրդատայ վերաբերի բան Գրիգորի, զի սա ի կեսարիոյ ընկալաւ զձեռնազրութիւնն. զրուածն այլ (առ Եղիշէի) կցկոռւր և տեղ տեղ անյարմար է. Հաւատք բառն

այլ կըբնայ իմացուիլ Հաւատամբն, զոր արդարեւ ի Նիկիոյ ժողովոյն ընդունեցան Հայք՝ Տրդատայ և Գրիգորի ատեն, և ժողովոյն գլուխն՝ ի ձեռն իրեն երեսփոխանացն՝ էր եպիսկոպոսապետն (Պապն) Հոռվմայ: Թէպէտ ոմանք, ինչպէս Գրիգոր (Գ) Տղայ կաթողիկոս՝ ի թղթին առ Վերին Հայս, հաւանօրէն թուի ըսել՝ Լուսաւորչին « առնուլ ձեռնազրութիւն ի Ա. Սեղբետրոսէ ». հարկ է զայդ՝ հաստատութիւն իշխանութեանն իմանալ. զի յետ ընդունելոյ մի անգամ ի Ա. Ղեւոնդեայ՝ կարելի չէր նորէն ընդունիլ, և նոյն իսկ Լուսաւորչի յաջորդքն եւս ի կեսարիոյ ընդունեցան. Նիկիոյ ժողովն այլ Զ և Ե կանոնովըն հաստատեց, որ նախնեացն կարգը և պատիւք աթոռոցն՝ պահեսցին որպէս էին ցայն ժամ: Այս բանս հաստատել երեւի և Բարգէն կաթողիկոս ի վերջ Ե դարու կամ ի սկիզբն Զին, ըսելով վասն Արիստակիսի. « Ընկալեալ ի սուրբ Հարցն յորորտվիմբ « զուրբ հաւատսն ձշմարտուրեան, երեր « յաշխարհն՝ ճշմարտութեամբ. զոր առեալ « ի նմանէ Հայոց, և նովին հաւատովք « լուսաւորիցաք, և ի նմանէն յաջորդեա « ցաւ մինչեւ ցայժմ ձեռնազրութիւն հայ « բացետութեան աշխարհիս Հայոց, և « կամբ հաստատուն ի նմին»: Վերոյիշեալ

Գրիգոր կաթողիկոսն այլ զրէ առ Մանուէլ կայսր. « Եր մի ի սուրբ ժողովոյն (Ներ « կիոյ Հարցն) արքեպիսկոպոսն Հայոց « մեծն Արքատակէս՝ որդի Ա. Գրիգորի. « յորմէ ընկալեալ զուղղափառ դաւանու « թիւնն նիկիական ժողովոյն՝ զգուշացաւ « եկեղեցի մեր » :

Այս տեղ (*թողլով առ ժամս մեր Տըրդատն ի գարձին*) արժան համարիմ մեր հայրապետաց ի կեսարիոյ ձեռնազրութիւր քիչ մի քրքրել: — Յայտ է որ յառաջին դարս եկեղեցւոյ՝ սորա աթոռոց դասակարգն այլ ըստ կարգի պատուոյ աշխարհաց և քաղաքաց էր. երից մասանց աշխարհի մէկ մէկ գլուխ եպիսկոպոսաց կար, Եւրոպիոյ՝ ի Հռովմ, որ և ամենուն գլուխ, Ասիոյ՝ յԱնտիոք, Ափրիկիոյ՝ յԱղեքսանդրիա, որք յետոյ պատրիարք կոչուեցան. և որոց գերագոյն իշխանութեան ներքեւ էին մայրաքաղաքացի եպիսկոպոսք (*մետրապօլիտք*), և ստորակարգեալ եպիսկոպոսունք. յետոյ Եփեսոսի մայրաքաղաքին փոխեցաւ ի պատրիարք կ. Պօլսի, Փիլիպպեայ կեսարեայն՝ ի պատրիարք Երուսաղեմի: Մայրաքաղաքացեաց ոմանք այլ աւելի բարձրապատիւ էին և ինքնազ գլուխ կոչուէին. այսպիսի էր կապատղովկիոյ կեսարեայն այլ. այս պատրիարք-

ներէն և մետրապօլիտներէն կ'առնուին ձեռնազրութիւն՝ իրենց աշխարհաց եպիսկոպոսն: Երբ Հայք աշխարհօրէն դարձան ի քրիստոնէութիւն Տրդատայ ժամանակ, եթէ և զտուէր եպիսկոպոս մի ի Հայոց, բայց զլիսաւոր եպիսկոպոս և իրը յաջորդ առաքելոյ չկայր, եղածքն այլ ըստ աւանդութեան՝ զոր նախ յիշեցինք՝ ի կեսարիոյ առնուին զձեռնազրութիւնն, որոյ առաջին եպիսկոպոս ի Թաղէսո առաքելոյ կարգեալ համարին զթէնոփիիրոյ՝ յիշեալն ի Ղուկայ աւետարանչէ. բայց ոմանք ի գիտնոց և ոչ անձն համարին զթէոփիլոսդ, այլ ըստ յունարէն լեզուի աստուածասէր նշանակութեամբ՝ աստուածասէր, բարեպաշտ անձինք, սակայն և շատք ընդունին զնա իրօք անձն, բայց չեն զիտեր վարքը, որով և չեն ընդունիր զնա առաջին եպիսկոպոս կեսարիոյ մայրաքաղաքի, այլ զԼոնգինոս Լուկիանոս, և զատ համարին հարիւրապետը՝ որ խոցեց զկողս Քրիստոսի<sup>1</sup>. սորա յաջորդեց Պրիմիանոս ոմն, և այլք հետզհետէ մինչեւ ի Ա. Ղեւոնդիոս, յորմէ ընկալաւ մեր Լուսաւորիչն զձեռնազրութիւն եպիսկոպոսապետութեան, իր յաջորդքն այլ

1. Ա. Գր. Նազիանզացի այլ առաջին եպիսկոպոս կեսարիոյ համարի հարիւրապետն, զոր Պրիմիանոս անուանէ:

անոր յաջորդներէն<sup>1</sup>: Այեր պատմիչն վարդան բացարձակօրէն կ'ըսէ լուսաւորչի համար. « Յերեսներորդ ամի լուսաւոր « չութեան իւրոյ Ս. Գրիգոր զԱրքստակէս « առաքէ ի կեսարիա ձեռնազրիլ՝ վասն « զառաջին ձեռնազրութիւնն անդ առնելոյ « Թաղէսի առաքելոյն և արկանելոյ հի « մունս եկեղեցւոյ»: Ի կեսարիա ձեռնազրութիւն կաթողիկոսաց կամ եպիսկոպոսապետաց Հայոց՝ տեւեց մինչեւ ի Ս. Ներսէս կամ ի Ս. Մահակ:

Ո՞րչափ ինչ իշխանութիւն ունէր եպիսկոպոսապետն կեսարիոյ՝ իր ձեռնազրեալ Հայոց եպիսկոպոսապետին վրայ: Թուփ թէ ոչինչ աւելի քան զձեռնազրելն, և մի իր մետրապօլտաց համարել զնա, և գուցէ իրեն զատաստանին վերաբերել՝ եթէ շփոթելութիւն ինչ ըլլար Հայոց եպիսկոպոսապետին և անոր եպիսկոպոսաց մէջ: Եւ զի Հայք առանձին թագաւորութիւն ունէին, վայել էր որ իրենց եպիսկոպոսապետն այլ իր կարգակցաց մէջ բարձրապատիւ ըլլար

1. Վերոյիշեալ կաթողիկոսն Ներսէս Գ, մեծացուցանելով իմ նախակարգէ խառնիխուռն զթէոփիլոս յեպիսկոպոսապետու. «Գլխաւոր առաջնորդաց եկեղեցւոյ» ի «քայլն թեռփիլոսէ մեծ հայրապետէն սկսեալ, արուեստաւոր բաղաբացն Եղիպատացւոց և Աղեքսանդրացւոց և Հառվայեցւոց և Կոստանդնուպօլսեցւոց, Անտիրացւոց և կեսարացւոց և Աթենացւոց և Կիւլիկեցւոց», և այլն:

և ընդհանրական կամ նահանգական ժողովոց մէջ՝ մի ի նախագահից: Արդէն տեսանք որ երբ Ղեւոնդիոս ձեռնազրեց զԼուսաւորիչ մեր՝ ուրիշ բան չպահանջնեց, բայց զի այնպիսի ձեռնազրութեամբ « Հաստատեալ « կայցէ վկայութիւն ի մէջ երկուց կող « մանցս. զի պարզեւարաշխութիւն նորոգ « ևալ բահանայապետուրեանդ ձերոյդ նա « հանգիդ՝ առ ի մէնջ, կայցէ անշարժ « յեկեղեցւոցս կեսարու, ուստի և հան « գերձեցաւ ձեզ պատրաստութիւն շինու « թեան՝ ձեռնազրութեամբ »: Եթէ սաոյգ այսպէս էր բնազիրն Ղեւոնդիոսի՝ շատ նշանական է նորոգեալ բահանայապետուրիւն ըսածն, և առյ հաստատել զկարծիս մեր՝ թէ ընդունի և Ս. Ղեւոնդիոս՝ որ առաջուց այլ եղած է բահանայապետութիւն ի Հայս, և որ և է կերպով խափանեալ կամ ընդհատեալ, և հիմայ լուսաւորչութեամբ Գրիգորի և ձեռնազրութեամբ Ղեւոնդեայ՝ նորոցեալ: Եւ եթէ եղած էր առաջ այլ բահանայապետութիւն՝ կըրնար այլ ուրիշ կերպով կամ ուրիշ աթուէ առած ըլլար այն հին բահանայապետաց Հայոց՝ իրենց ձեռնազրութիւնն. և արդէն տեսանք որ աշակերտ թաղէսի կամ յաջորդը՝ Փիլոտ և Եղիշէ՝ մէկն յԱնտիրայ աթուոյն առաւ զայն, միւսն՝ յԵրուսաղեմէ: Պէտք է յիշել

և զայս, զի Հայոց վիճակն կամ կացութիւնն այս ժամանակ՝ շատ նշանաւոր և աննման էր. ընդարձակ աշխարհ մի և բազմամարդ, իր յատուկ թագաւորի իշխանութեան տակ, երբ և ոչ մի ազգ այդպիսի պսակաւոր գլուխ մի ունէր, կամ առանձին օրէնք, սովորութիւն և լեզու, անկախ ի հոռվմէականէն, և ընդարձակ ազատութեամբ, ըստ Դաշանց կոստանդիանոսի և Տրդատայ: Եւ այս ամենայն ցուցընեն աննման գիրք մի Հայոց ազգին և եկեղեցւոյն, և ասոր գլխոյն գերազոյն պատիւ կամ բարձրագոյն աթոռ մի ի մէջ աթոռակցաց: Եթէ Գրիգորի հեզ և խոնարհ սիրտն զայս չէր պահանջեր, մեծհոգի Տրդատայ սէրն առ նա և երախտիքն՝ անշուշտ զաւելին այլ կըրնար, թէ և ոչ ըստ շաղփաղփութեան անուանեալ թղթոյն Դաշանց: — Բայց, եկեղեցականաց կարդերու գլխաւորն՝ էր և է սէրն և հոգին Քրիստոսի, որ շատ տաք էր այդ զարերում, որ և գարձեալ նշանաւոր նախախնամական շնորհըով սփոեցաւ ի Հայս, Լուսաւորչի արթուն և եռանդուն հոգով և ջանիւ:

Այս բանս էր տեսակ մի միաբանութիւն եկեղեցւոյս Հայոց, երբ Լուսաւորիչ իր ընդարձակ վիճակին համար՝ ամէն գլխա-

որ եկեղեցիներէ իրեն օգնականներ հովիւներ հրաւիրեց և հաւաքեց. նախ ի Յունաց, երբ կու դառնար ի կեսարիոյ, և մինչեւ յԱնտիոքայ եւս, ապա և յԱսորւոց՝ որք սահմանակից էին հարաւային նահանգաց մեր աշխարհին: Այսպիսի էին նոյն իսկ պատմիչ բանիս Զենովիր եպիսկոպոս և իր եղբայրն Եղիշագար, և Դանիել՝ որ և եղաւ զիւաւոր աթոռակալ մի Լուսաւորչին: Աղկբաներիոյ մեծ եկեղեցիէն այլ որսաց բազմահմուտ վարդապետ մի, Գլուխարիոս կամ Դիմասիոս կոչուած, զոր արքայաշուր Դուռնայ — զաշտ գաւառին եպիսկոպոս կարգեց. Եփեսոսի ինքնազլուկ եկեղեցիէն այլ՝ զԱռշտիենոս: Յիշուած չէ բայց և չէ անհաւանական՝ թէ Ա. Նշխարաց և սպասուց հետ՝ ի Հոռվմէ այլ բերած ըլլայ պաշտօնեաներ, յորս՝ թէ՝ յոյն լեզուաւ և թէ լատին պատրագողը կային այն դարում. և այսպէս իբրեւ յերից և չորից գլխաւոր աթոռոց՝ իր նորածին կամ վերածին եկեղեցւոյ տարերք խառնեց միացուց, և ըրաւ մի մարմին քրիստոնեայ, թէ և տարբեր լեզուօք պաշտէին զսուրը խորհուրդս, ըստ հասկացողութեան բնակչաց այլեւայլ գաւառաց աշխարհիս. բայց յայտ է՝ որ յունականն տիրէր յարեւմը-տակողմն և ի միջնաշխարհին, ասորին՝ ի

հարաւակողման, գլխաւորապէս ի Տարօն, ուր կանզնեցաւ առաջին՝ մայր եկեղեցին ի Յաշուիչատ, և մեծ վանորայքն Ա. Կարափետի և Առաքելոցն Պետրոսի և Պողոսի, յորս դրուեցան անոնց նշխարքն ի Կեսարիոյ և ի Հռովմէ բերուած, և ուր ասորելէն պաշտօնն՝ հայերէն դպրութեան կամ զրոց գիւտէն վերջ այլ զեռ ատեն մի տեւեց: Ոչ միայն զրերու, այլ և Ա. Գրոց թարգմանութեան պակասութիւնն հարկաւորեց զԱ. Գրիգոր՝ որ յոյն և ասոբի լեզուաց դպրոցներ և շատ դպրոցներ և վարպետներ կարգէ, այլ և Տըրատայ օգնութեամբ անոնց պէտքը լեցընէ:

Յայտ է՝ որ թէ այդ վարպետը և թէ եկեղեցւոյ վարդապետը, քահանայք և եպիսկոպոսունք, կամ հայագէտ էին կամ յոյն և ասորի լեզուաց հմուտ հայ թարգմաններ ունէին, որով եկեղեցւոյ ամէն վարդապետութիւն և խորհուրդը՝ գլխաւորաւն պատարազաւ՝ հասկանալի կ'ըւլային հասարակաց, և զուցէ այն ատենէն ոմանք փորձեցին ո՞ր և է ձեւով կամ կերպով՝ հայերէն կարդալու զրելու հնարք, կամ օտար լեզուաց տառերով զրել զհայերէնն՝ վասն զի անկարելի թուի՝ թէ ամբողջ դար մի ժամանակի, ի Լուսաւորչէն մինչեւ իր թոռան թոռն թարգմանիչ Ա.

Աահակ՝ մէկն մտածած չըլլայ այդպիսի բան մի՝ ուամիկ ժողովրդեան հոգեւոր օգտին համար, թող զուսումնականն: Եթէ պակասութիւն մի եղած է յայսմ՝ այն այլ ուրիշ կողմանէ առաւելութիւն մի ցուցընէ, այսինքն է յունարէն լեզուի բաւական ծաւալուած ըլլալն ի Հայս՝ մեր Արշակունի Տիգրաններէն ի վեր, նմանապէս և ասութերենին՝ ի հարաւային Հայս:

Սրատես աչօք ճանչնար Լուսաւորիչ մեր՝ որ իր ժողովրդեան կրթութիւնն տղայոց գաստիարակութենէն յուսալու է. անոր համար զրեթէ ամեն բանէ առաջ զայս հոգաց, և ժողվեց, ըստ ճոխարան վկայութեան Ագաթանգեղոսի (Ճի), «Բազե» «մութիւն մանկուոյ, կարգեալ ի վերայ «հաւատարիմ զպրապետս, առաւել զազգս «պղծագործ քրմացն:... Եւ անդէն յական «թօթափել՝ վայրենամիտքն և դատար- «կասունքն... մարգարէագէտք և առա- «քելածանօթք և աւետարանաժառանգք Ք լինէին, և ամենայն աւանդելոցն Աս- «տուծոյ՝ ոչ իւիք անտեղեակք»: Այս դպրապետաց զերափոյն մէկն էր վերոյիշեալ Դկլառիոսն՝ Աղեքսանդրիոյ հռչակաւոր Պանտենեան վարժարանէն, զոր հանդերձ ընկերոքն՝ հրաշազան պաշտօնեայս անուանէ Զենովը. մէկն այլ Տիմորենս՝

Ասպղեն կամ Արտն քաղաքի եպիսկոպոս, զոր զրով խնդրեց Լուսաւորիչն ի Դեռն- գեայ, ըսելով. « Զոր զու իսկ զովէիր « զհմտութիւն դարութեանն, որ յոյժ պի- « տանի է երկրիս այսմիկ » : Ճիմոթէոսի հետ էր և սարկաւագն Արիկոս կամ Ազզի- կոս, որոյ համար այլ կ'ըսուէր, թէ « յոյժ « հմուտ (էր) բազում դպրութեանց » : — Այսպիսի զիտնականաց վարպետութիւնն և բնատուր՝ մանաւանդ թէ աստուածատուր սրամտութիւն եռանգուն հայ մանկուոյն, հոգեշունչ խրախոյս Լուսաւորչին և առա- տարաշխութիւն Տրդատայ, անտարակոյս կ'ընեն չափաւորապէս Ազաթանգեղոսի նա- խայիշեալ վկայութիւնը :

Երկրորդ հնարք Լուսաւորչին՝ բրիստո- նէական հոգին ժողովը զեան հոգւոյն մէջ ծաւալիլու՝ եթէ քարոզութեամբ և եթէ վարուց լուր օրինակաւ, եղաւ Վանական կամ կրօնաշրական կեանք հաստատել, թէ միաբանակեցաց և թէ միայնակեցաց. և այսպիսի կենաց թէ և կային հետք ի Հայո, ինչպէս առաջ յիշած եմք, այլ նուազ, և աւելի ճգնաւորական կերպով, իւրաքան- չիր ոք ինքն իր հոգին, բան զուրիշը հոգալով: Ասոնցմէ աւելի բան պահանջէր նորադարձ Հայոց պէտքն, զոր նախատե-

սութեամբ հոգաց Գրիգոր՝ իր ձեռնազրուե- լու երթալու ատենէն, և տեղէն. ուսկից որ՝ « Ելեալք ի կեսարիայէ (կ'ըսէ Զենովը), « մնայր ժամանակս ինչ ի Սեբաստիա՝ « հաւաքել առ ինքն զդասս կրօնաշրաց» :

Ասոնց զլխաւորքն էին մեր եկեղեցւոյ երկու տօնելի և հոչակեալ սուրբ ճգնաւորք, Անոնի և կրօնիդէս, զորս ի կեսարիոյ գողցաւ, և անոնց աշակերտն Եպիփան, 40 աշակերտներով. ասոնք տեղաւորեց ի Տարօն, ուր հեթանոսական կրօնքն շատ արմատացեր էր, ի Հնդկաց գաղթեալ Դեմետրի և Գիսանէի հետեւողօք և յաջոր- դօք: Ասոնց քուրմքն շատ յամառեցան զէնքով և պատերազմով. բայց աւելի ի պաշտպանութիւն իրենց կոոց բան անձանց: Իրենց զլխաւոր կռատանց քրմարանաց տեղիքն իննակենեան և Յաշտիշատ՝ եղան կրօնաւորաց այլ զլխաւոր վանորայք, միանգամայն և վարժարանք և համալ- սարանք իմն հասարակաց ազգին, կամ տնկարանք, ուստի այլեւայլ կողմեր պիտի տարուէին նորատունկը՝ կենաց դրախտներ բանալու: « Բազում և անհամար գունդս « Վանականաց, կ'ըսէ Ազաթանգ. (ՃիԱ), « ի շէնս և յանշէնս զաշտականս, շինա- « կեացս և լեառնակեացս, անձաւամուտս « և արգելականս հաստատէր» : Թէպէտ

ըիշ մի ճապաղ են պատմը չիս խօսքն՝ այլ  
յայտնէ վերոյիշեալ տեսակ կրօնաւորաց  
վիճակը. միայն թէ շինակեաց ըսուածներն՝  
որ զեղ և մարդարնակ տեղ եղող վանա-  
կաններ նշանակէ, ամփոփելու է. վասն  
զի աւելի շինից մօտ բան շինից մէջ տե-  
ղուանք հաստատուէին վանորայք. և զայս  
յատկապէս յիշեցուց Ա. Ղեւոնդիոս իր  
ձեռնադրած հայրապետին մերոյ, գրելով.  
« Մի՛ ոք ի դասաւակերտս կամ ի գիւտ  
« զաքաղաքս՝ զօրէն Աղեքսանդրացւոց  
« (Եզիպտացւոց) զործեսցէ, շինելով իւ-  
« բաքանչիւր ումեք խրճիթս՝ զտէրունեան  
« տաճարաւն և առանձինն բնակել. այլ  
« ժողովեսցես ի մի տեղ հարիւր (կամ  
« 400) արանց չափ, և որոշեսցես նոցա  
« գեօդս և աւանս մեծամեծս. որպէս զի  
« պէտք վանացն ի նոցանէ վճարեսցի. և  
« ինքեանք միայն աղօթից և ճգնութեանց  
« պարապեսցին<sup>1</sup>»: Թէ և ժողովը դեմքեան  
հետ շատ վերաբերութիւն չունէին այս  
տեսակ կրօնաւորք, բայց ժողովուրդն  
անոնց աղօթքն և ճգնութիւնը մեծ օգուտ  
համարէր. Տրդատ այլ՝ ըստ խրատուկեսա-  
րիոյ հայրապետին՝ անոնց զեղեր, աւաններ  
սահմանէր, իրենց ապրուստը ճարելու՝

անոնց բնակչաց տուրքերով: Լուսաւորչին  
այլ սիրելի էր ասոնց կեանքը. և շատ  
հեղ փախուստ տալով յարքունեաց և ի  
հայրապետանոցէն, « Առեալ՝ զոմանս ոմանս  
« յաշակերտացն՝ յիւրաքանչիւր մենաս-  
« տանաց, երթեալ լեառնակեաց մենակեաց  
« սորամուտ ծակախիթ եղեալ... աւուրս  
« բազումս յանապատ տեղիսն, յակունս  
« Եփրատական գետոյն... բնակեալ լի-  
« նէր<sup>1</sup>»: Այս վանորէից զլիստոր տեսուչ  
զրաւ Լուսաւորիչ, ինչպէս յիշեցինք, զիա-  
նիէլ ասորին, որ յետ շատ տարիներու՝  
Տրդատայ անարժան թոռան Տիրանայ կը-  
րից զոհ եղաւ: — Որչափ այլ առանձնա-  
կեաց վանականք ժողովը դեմքեան հասարակ  
հոգացող չէին՝ ըսինք, սակայն անոնց յանձ-  
նուած էր ճամբորդները, պանդուխտները,  
կարօտները հոգալու. ասոր համար յետոյ  
Մեծն Ներսէս աւելի շատցուց այսպիսի  
վանքեր, մանաւանդ զժուար և վտանգաւոր  
ճամբաներու քովերը, աւելցընելով նա և  
անոնց ապրուստը:

1. Ազաթանգեղոս. ՃիԱ:

## ԺԵ.

Ուստ եւ Գասակարգութիւն Եկեղեցւոյ:

**Ե**ՐԿՐՈՐԴ ՀՆԱՐՔԻ՝ որ և ըստ պատուց, և իշխանութեան՝ առաջին, էր կարգաւորութիւնն նորընծայ քրիստոնէութեան Հայոց, անոնց հոգեւոր հովիւներ և հովուապետներ դնել, կամ եկեղեցական դասակարգութիւն, որոց զլուխն կամ բարձրագոյն աստիճանաւորն է Եպիսկոպոսն: Եթէ եկեղեցւոյ ստորին պաշտօնեայք այլ չկային կամ շատ քիչ զանուէին այն ատեն ի Հայաստան, յայտ է թէ և ոչ կամ հազիւքանի մի բնիկ եպիսկոպոսը. և հարկ էր որ Լուսաւորիչն Հայոց իր ընդարձակ վիճակին համար բազմաթիւ այլ եպիսկոպոս զանէր և կարգէր: Նոյնպէս և հարկ էր որ ի սկզբան՝ ինչպէս ուսուցիչ և կրօնաւոր՝ դուրսէն բերաւ, այսպէս և եպիսկոպոսներ, որը՝ տեսութեամբ մի աւելի եւս կարեւոր էին՝ իր ընդհանրական ծանր պաշտօնը թեթեւցընելու համար. և զայս այլ մեծ խնամքով և ճարտա-

րութեամբ հոգաց, հրաւիրելով ի զրացի աշխարհաց՝ ուր որ յուսար այն տեղաց եպիսկոպոսները շարժել և բերել: իր մէկ հրաւիրական թղթին մէջ գրէ, թէ Հայաստան 640 գաւառ է, ամենըն այլ կարօտին հովուաց. կըրնայ չափազանց կամ սիալ ըլլալ այդ թիւն, մանաւանդ Խորենացւոյ աշխարհազրութեան մէջ շարուած Մեծ Հայոց գաւառները համրելով, որը հազիւթէ 200 մի ըլլան. սակայն, նախ, այն ատենուան Լուսաւորչի վիճակին ընդարձակութիւնն՝ թերեւս այդ 200 գաւառաց անդին այլ կ'անցնէր. և երկրորդ, Խորենացւոյ յիշեալ գաւառներն՝ աւելի մանր բաժանմունքներ այլ ունէին. յիշեցինք տեղ մի յԱգաթանգեղոսէ թագաւորին տէրութեան սահմաններն. նոյն խնքն ուրիշ տեղ (գլ. Ճի) Լուսաւորչի վիճակին և քարոզութեան սահմաններն աւելի կ'ընդարձակէ. թողլով զմիջնաշխարհն՝ կ'ըսէ. « Քերէր առ սահմանօցն Ասորւց, առ « Նորշիրական երկրաւն և առ Կորդուօք « մինչեւ յամուր երկիրն Մարաց, մինչեւ « առ տամբն Մահբերան իշխանին, մինչեւ « յԱրպատական» . ասոնք Ասորեստանի և Հայաստանի միջոց, Որմեայ ծովուն հարաւային և արեւելեան կողմերն և Ատրպատականի մէկ մասն են. այս յետին

Երկրին (Ատրպատականի) աւելի արեւելեան մասին՝ Արտաշիլ քաղաքի եպիսկոպոսն այլ՝ ըստ Յայսմաւուրաց՝ ի Լուսաւորչէ ձեռնազրուած է:

Դարձեալ, Ազաթանգեղի ուրիշ տեղ ըսածէն երեւի՝ որ Ատրպատականին հիւսիսին վեր և հին Ազուանից երկրէն աւելի դէպ ի հիւսիս՝ մինչեւ Դարբանտայ և Ալանաց զըռներն՝ հասնէր Լուսաւորչի հովուական խնամքն. անկից այլ դէպ յարեւմուտս՝ ի սահմանս վրաց: Բստ մեր պատմըշաց նորադարձ վրաց այլ (ի ձեռն Ա. Նունէի) ձգուէր մեր Հօր հովանին. բայց Վիրք և հին եկեղեցապատումը կ'ըսեն, թէ իրենց թագաւորն ի Կոստանդիանոսէ խնդրած ըլլայ իր երկրին քարոզիչ խաւել. բայց եթէ իրենց դարձն առաջ էր քան զկայսերն, յարմար է որ նախ մեր Լուսաւորչէն և Տրդատէն խնդրած ըլլան. և մինչեւ ի սկիզբն ի դարու (Հայոց և Վրաց բաժանման՝ իրենց կիւրիոն և մեր Արքահամ կաթողիկոսաց ատեն՝ կրօնական խնդրոց պատճառաւ), եթէ ոչ գերիշխանութիւն՝ այլ գերակայութիւն մի երեւնայ Հայոց կաթողիկոսին ի վերայ Վրացն, և ինչպէս կիւրիոն ի նախորդէն Արքահամու՝ ի Մովսէս կաթողիկոսէ՝ առաւ ձեռնազրութիւն, հաւանական է որ իր նախորդըն

այլ Հայոց նախորդ կաթողիկոսներէն, ինչպէս և Աղուանից կաթողիկոսը: Բայց աւելորդ համարիմ այս քանս մանը քննել. բաւական է Լուսաւորչի համար Ազաթանց գեղոսի գծած վիճակն:

Շատ հաւանական է՝ որ Գրիգոր իր ՅՈ և աւելի տարի քահանայապետութեան ատեն՝ իր վիճակին ամեն գաւառաց եպիսկոպոս կամ քորեպիսկոպոս հասուցած ըլլայ, այն դարերու եկեղեցեաց սովորութեան համեմատ, որը քազմաթիւ ստորակարգեալ եպիսկոպոսներ ունէին. զըռսէն բերածներէն զատ՝ ինքն ձեռնազրած է, բստ իր պատմըշին (Ագաթ.), « Աւելի քան « զ' 400 եպիսկոպոս, որը կային տեսուչս « տեղեաց տեղեաց. իսկ զկարգս երիցանցն « և կամ սարկաւազաց կամ անազանոսաց, « և որ այլ եւս ի պաշտօն Աստուծոյ « կային, անթիւ էին ի քազմութիւնէ »: Եթէ և ոչ միաժամանակ գտնուէին 400 եպիսկոպոսը ձեռնազրեալը ի Լուսաւորչէն, այլ և յաջորդաբար, սակայն ընդունելի է՝ թէ և միաժամանակ հարիւրաւուք զըտնուած ըլլան. Յունաց վիճակագրութեանց մէջ այլ յիշուին մէկ նահանգի կամ մետրապոլութեան մէջ ինչուան ՅՈ կամ 40 եպիսկոպոսը. և նոյն իսկ Հայոց քանի մի նահանգաց մէջ՝ որը ի Ե, Զ դարս Բիւզան-

գիոյ կայսերութեան ներքեւ էին, յիշուին  
այդպէս բազմաթիւ եպիսկոպոսը՝ հայկա-  
կան տեղեաց անուամբը, որոց ոմանք չեն  
յիշուիր ի մեր պատմչաց։ Զարմանալի  
այս է, որ թէ և այդ մեր պատմչաց ըսած-  
ներն այլ վկայեն բազմութեան Հայ եպիս-  
կոպոսաց, այլ և ոչ մէկն 40է կամ 50է  
աւելի միաժամանակ եպիսկոպոսաց անուն-  
ները չէ շարած, թէ ժողովոց մէջ թէ  
ուրիշ առթիւ, հաւանորէն՝ աւելի զրուածքն  
կամ հին թեմազրութիւնքն կորած են, և  
միայն Ժ. ժ. գարուց մէջ զրուածքն  
յիշուին կամ մնան. ինչպէս Ոսկան վար-  
դապետին, 200ի չափ։ Բայց նոյն իսկ  
մեր պատմչաց ի Պ. գարէ մինչեւ ի Ժ.՝  
աստ անդ պատահաբար յիշեալ եպիսկո-  
պոսական թեմից անուանք կ'անցնին քան  
զ'400 թիւ, միանգամայն թէ գաւառաց,  
թէ քաղաքաց, թէ վանորէից, և թէ իշխա-  
նութեանց կամ նախարարութեանց. Վասն  
զի թէ քաղաքական թէ եկեղեցական  
տեսութեամբը՝ կային գաւառը՝ որք գոնէ  
երկու եպիսկոպոս ունէին, հին գարերում.  
ինչպէս նոյն իսկ Լուսաւորչի ատեն՝ Տարօն  
գաւառն աշխարհազրօնն ունէր իր եպիս-  
կոպոսը, նոյն գաւառին տէրն՝ Մամիկոնեան  
իշխան՝ ունէր յատուկ եպիսկոպոս. և ահա  
երկու Ասորի եղբայրքն Զենովի և Եղիա-

զար՝<sup>1</sup> այդ գաւառին զլիաւոր վանաց  
թեմերուն եպիսկոպոսը էին. նոյնպէս և  
Մեծին Ներսիսի ատեն, մինչ երրորդ  
եպիսկոպոս կամ քորեպիսկոպոս մ'այլ  
կար ի Յաշտիշատ. այն կողմերն էր և  
Դամիիկ ասորին։ ԺԱ. գարու պատմիչը և  
գրիչը մեր եւս յիշեն իրենց ներկայ  
ժամանակին 500 թեմակալ եպիսկոպոս.  
յորոց զէթ զոմանս հարկ է քորեպիսկո-  
պոս համարիլ։

Յայտ է ի կարգաց եկեղեցւոյ՝ որ այդ  
Քորեպիսկոպոս կոչուածքն՝ աւանաց և գիւ-  
ղից եպիսկոպոսը էին՝ քաղաքացի եպիս-  
կոպոսին իշխանութեան ներքեւ։ Մեր  
պատմութեան մէջ շատ չեն յիշուիր, բայց  
կան յիշուած ԺԱ. գարու մէջ, ինչպէս  
Արծն աւանին քորեպիսկոպոսն. ինչուան  
Ժ. և Ժ. գարուց մէջ եւս յիշուած են։  
Այս տարբերութենէն զատ՝ թէ եկեղեցա-  
կան թէ քաղաքական տեսութեամբ՝ աս-  
տիճանք կային եպիսկոպոսաց, բարձրագոյն  
և սուրբին. և ինչպէս ուրիշ աշխարհաց  
մէջ հարկ էր այդպէս ըլլալ և ի Հայու,  
որոց նախարարք և իշխանք շատ վրէժ-

1. Առաքելոց վանաց Ասմանազիրն՝ հօն ձեռնա-  
դրուած կ'ըսէ զՊաղար (Եղիազար), բայց Զէնովը՝  
առաջուց Նիւստրացւոց եպիսկոպոս ցուցնէ զնա և Ա.  
Գրիգորի հետ ի Հոռվի զնացող, և ի Պարձին հաստա-  
տուած յԱռաքելոց վանս։

ինզիր էին իրենց իրաւանց և դասաւութեանց. և ինչպէս աշխարհական իշխանաց բարձր և ցած, կամ առաջին, երկրորդ և այլն, դասակարգ կար՝ թագաւորական օրինօք սահմանեալ և փոփոխիսեալ, և երբեմն պատուոյ և երբեմն պատժոյ համար վերիվայրեալ, այսպէս և եպիսկոպոսաց դասակարգն՝ ըստ նախապատութեանց իշխանաց և տեղեաց վասն զի կան եպիսկոպոսք որը յանուն նահանգաց կամ աշխարհաց կոչուին, և ըստ այնմ և բարձրապատիւք. ինչպէս Այրարատայ, Միւնեաց՝ որ 12 եպիսկոպոս ունէր ընդ ձեռամբ, Աղձնեաց, և այլն:

Զատ ասկէ՝ նա և իրեւ պաշտօնեայք կաթողիկոսին և եկեղեցւոյ պիտոյից կամ վարչութեան այլեւայլ տեսուչը՝ կային զիխաւոր եպիսկոպոսք, նոյն իսկ Լուսաւորչի և Մեծին Ներսիսի ատենէն, մանաւանդ. առաջին գարերում աւելի որոշ, հաստատ և շատ էին այսպէս զանազանեալ դասքն և պաշտօնեայք: Ուստանէս պատմիչ (ՃԱ. գարու) այս յիշեալ Ա. Հայրապետներէն կարգեալ և դասաւորեալ կ'ըսէ 30 բարձրապատիւ եպիսկոպոս, յանուն ցեղից կամ տեղեաց կամ թագաւորութեան մեծամեծ պաշտօնից, Արուրնելալ կամ Արուակալ եպիսկոպոսներ կոչելով, որը

ի ժողովս կամ որ և է հանդիսական գումարմանց ատեն՝ քան զայլ եպիսկոպոս վերագոյն բազմէին՝ մօտ ի կաթողիկոսն, իսկ Օրպելեանն Ստեփանոս պատմիչ Արէնեաց՝ ՅԵ եպիսկոպոս կ'ըսէ, ոսկենեար բարձերոց վրայ նստող, իրեւ գահակիցը հայրապետին:

Ուստանէսի յիշած ՅԵ եպիսկոպոսաց վիճակըն են.

Ա. Հարթ	ՃԶ. Ապահովնիք
Բ. Ոստան	ՃԵ. Արշաբունիք
Գ. Տայք	ՃԸ. Գնունիք
Դ. Վարդաղի	ՃԹ. Գողթն
Ե. Աշմունիք	Ի. Գարդման
Զ. Արծրունիք	ԻԱ. ԱԿ
Կ. Սիւնիք	ԻԲ. Բաժունիք
Ղ. Ռշտունիք	ԻԳ. Երուսակ
Թ. Մոկի	ԻԴ. Ասորիք
Ժ. Ամատունիք	ԻԵ. Անձեւացիք
ՃԱ. Բասեն	ԻԶ. Պալունիք
ՃԲ. Մամիկոնեանիք	ԻԷ. Մեհմանիք
ՃԳ. Բագրեւանդ	ԻԾ. Ելոյ
ՃԴ. Խորիսունիք	ԻԹ. Զարեհաւան
ՃԵ. Վանանդ	Լ. Միւսաւորեաց ?

Այս եպիսկոպոսաց մէջ, ինչպէս և ժողովոց մէջ յիշուածներէն կ'երեւի՝ որ առաջնակարգն էր Հարդայ եպիսկոպոսն, կամ Հայոց նահապետի՝ Հայկայ՝ բնիկ ոստանն ըլլալուն համար, կամ (որ նոյն պատճառաւ թուի) Լուսաւորչէն ձեռնա-

զրուած 12 քրմորդի եպիսկոպոսաց առաջնոյն տրուած աթոռն ըլլալուն, որոյ աթոռակալն եղաւ Ալբիանոս, անշուշտ հեթանոսական անունը փոխուած. և զոր իրրեւ նախակարգ ամենայն եպիսկոպոսաց՝ իր յաջորդելի որդւոյ Արքատակիսի հետ՝ ուղեկից ըրաւ Ո. Գրիգոր ի Հռովմ երթալուն և գառնալուն. գուցէ քրմապետի կամ մեծիշխան մէկու մի որդի էր; Ասոր պէս տասնումէկ ընկերաց շատն այլ հեթանոսական անուննին թողած են. ինչպէս Երաղիոս, «որ ի Կողմանս վայրացն Բառ» «սենոյ կացեալ լինէր հովիւ». Բառու, Մովսէս, Երակիոս, Յովհաննէս, Ազափէս, Անտիոքէս, Կիրակոս, միայն երեքն հայանունը են, (թողլով յունական և մասնիկն). Արտիր, Արտոնկ և Տիրիկ, եթէ ասոնք այլ ծոմոկած չեն: Ասոնց առաջինն իրրեւ յատուկ տեղակալ կամ իր փոխանորդ զրուած ցուցընէ Լուսաւորիչն, իր՝ որ և է պատճառաւ՝ հայրապետական աթոռէն հեռացած ատեն. «զԱլբիանոս» «զայր ճշմարիտ և աստուածասէր՝ վերա» «կացու թողոյր արքունական դրանն ըառ «նակին», կ'ըսէ պատմիչն (Ագաթ. Ճի՛լ): Թուի թէ ասկէ զատ ինչպէս յաջորդ կաթողիկոսը՝ ունէր և Լուսաւորիչ իր Դրան եպիսկոպոսն. կային և արքունի Գրան

և զլիսաւոր իշխանաց և նախարարաց Գրան եպիսկոպոսը: Ալբիանու մեծապատուութիւնն յայտնուի իր ցեղին կամ ընտանեաց յաջորդներուն այլ եկեղեցական քարձրագոյն պատուոյ և աստիճանի հասնելէն. վասն զի երր Լուսաւորչի որդւոց և թոռանց յաջորդութեան ընդհատուութիւն եղաւ յետ Յուսական և Ներսիսի. Ալբիանու զաւկըներէն կարգեցան հայրապետը, Փառնէն, Աւանակ, և յետոյ Յուսիկ, Զաւեն և Ասպուրակէս:

Ասոնք են յիշեալ քրմորդի եպիսկոպոսը, թերեւս և զլիսաւորքն և արուակիցք քահանայապետին. այլ Մեծն Ներսէս նորոգող կարգաց իր ջոջ պապուն՝ սահմաներ էր իրեն 12 արուակից, խորհրդակից և գործակից, (Յուզանդ Զ. 6). և գուցէ զասոնք նշանակէ և Ազաթանգեղ՝ ըսելով վասն Լուսաւորչի (Ճի՛լ), «Ուշտակիսաւն «և ամենայն երեսնի օգնականօքն» զաշաւ «կերտելովքն ըրջէր և հաստատէր զնու «աս»: — Վերջի յիշատակս յայտնի կ'ընէ, որ Արքատակէս իր հեռաւոր ճըգնարանէն եկած ատենէն ի վեր ի Հայու, Տըգատայ ստիպմամբ քան Գրիգորի՝ ճեռնազրուելով հօրմէն եպիսկոպոս, միանգամյն և իրեն յաջորդ սահմանեցաւ և միւս ամէն եպիսկոպոսներէ վեր, և իրը ժա-

ունագ հայրապետութեան ճանաչուէր. այլ  
թէ ինչ յատուկ պատուանուամբ, չի յիշ-  
ուիր. իսկ հայրն՝ Լուսաւորիչն մեր,  
ամենայն պատուոյ արժանաւորն՝ վայե-  
լուչ էր որ Եպիսկոպոսապետ Հայոց կոչ-  
ուէր. թէ և կարողիկոս և հայրապետ եւս  
կոչուած է, նա և մեծ արքեպիսկոպոս  
յԱզարթանգեղոսէ (ՃիՊ). բայց պատուա-  
նուանք իրմէ վերջը որոշուեցան յեկեղե-  
ցիս, և թարգմանիչը հին գրոց (ընդ որս  
և Ազարթանգեղոսին՝) իրենց ժամանակին  
սովորութեամբ և օրինօք այզպէս կամ  
այնպէս կոչեն. մեծ և փոքր յառաջին  
դարս՝ հասարակօրէն սոսկ եպիսկոպոս  
կոչուէին, և զիսաւոր կամ մեծ, և ասոնց  
նման անուամբը որոշուէին ազգի կամ  
աշխարհի կամ մեծ գաւառաց եպիսկո-  
պոսունքն: Ասանկ համեմատական պա-  
տուոյ անուամբ մի միայն գանազանէին  
առհասարակ քանանայքն կամ երիցունք.  
և զի ի սկզբան յոյն և ասորի քահանայք  
շատ էին քան զՀայս, անոնց լիզուաւ այլ  
կոչուէին ի մերայոց թէ քահանայն և թէ  
ստորին աստիճանի պաշտօնեացք եկեղեց-  
ւոյ. ինչպէս քիչ առաջ լսեցինք յԱզա-  
րթանգեղոսէ՝ անազանոս կոչուիլն գրակար-  
դացի կամ ընթերցողի. և ինչպէս բար-  
ձրագոյն աստիճանաւորն ինչուան հիմայ

այլ մեր մէջ (նա և օտարաց) յոյն բառով՝  
եպիսկոպոս կոչուի, փոխանակ թարգմա-  
նելու Տեսուչ կամ Վերատեսուչ ըսելու, և  
ըստ ոմանց Դես կամ Դիտապետ. եկե-  
ղեցական կարգաց, աստիճանաց և խոր-  
հըրդոց վրայ զրող նախնիք մեր, սկսեալ  
ի Ա. Սահակայ մինչեւ յօրինազիրն կամ  
Դատաստանազիրն Միսիթար Գոշ և այլը  
յառաջ քան զսա և յետոյ, և մանաւանդ  
անոր ժամանակակիցն Ա. Ներսէս Լամ-  
բրոնացի (ի Մեկնութեան Պատարագի)  
բացայայտեր են այս բաներս, և աւելորդ  
համարիմ յիշել, զի որոշակի մեր Քըիս-  
տոնէութեան Արշալուսոյ յատուկ զիտելիք  
կամ նոր բան մի չեն: Ասոնց հետ իմա-  
նալու և թողլու է որ և է եկեղեցւոյ  
կարգաց, զրոց, ծիսից, և այն, խնզիր-  
ներ, որ եկեղեցական հնախօսութեան վե-  
րաբերին, և որք՝ յայտ է թէ այնպիսիք  
էին՝ որպիսիք զանոնք կատարող նախնի  
պաշտօնեացքն, այսինքն յունականք կամ  
ասորականք, և մինչեւ այսօր մեր Պատա-  
րագամատոյցն, Օրնեուրիւն զիրքն կամ  
Մաշտոց, մեծաւ մասամբ ի Յունաց առ-  
նուած են, մասն ինչ և յԱսորւոց, որպէս  
ի Ա. Եփրեմէ. և եթէ յանուն Ա. Սահա-  
կայ և Ա. Լուսաւորչի Պատարագամա-  
տոյցը այլ յիշուին՝ նոքա եւս կամ Քոլոր

կամ մեծաւ մասամբ այդ օտարաց նմանք  
կամ նոյնք են<sup>1</sup>:

Այս առթիւ յիշենք, որ մեզի ծանօթ  
Յանախապատում<sup>2</sup> կոչուած զըցէն զատ՝  
Լուսաւորչի անուամբ հայերէն զրուած չի  
գտուիր, բայց անվաւեր Տեսիլը կամ  
Հրեշտակի հետ խօսակցութիւն. սակայն  
եթովպացի և արաբացի (կարծեմ թէ և  
զփտի) հին ձեռազրաց մէջ գտուին իր  
անուամբ վարդապետական բանք. Ազա-  
թանգեղոսի մէջ եղածէն, Յաճախապա-  
տումէն, թէ ուրիշ զրուածէ առնուած,  
դեռ ստուգուած չէ. իսկ իր վարքն, ինչ-  
պէս և տօնն՝ թէ այդ յիշեալ ազգաց և  
թէ այլոց, յորս յայտնի են Ասորւոցն,  
Յունաց և Լատինաց, գտուին իրենց Յայսմ-  
աւուրաց և Տօնացուցից մէջ: Այս ամենն  
վկայեն՝ թէ մեր Լուսաւորիչն ինչ մեծ և  
հին համբաւ ունեցեր է, կրնամբ ըսել  
համաշխարհական. և թէ, այն՝ որ այսպէս  
յետ մահուանն հոչակուեր է, նա և ի  
կենդանութեանն ունեցեր է անոնց շատին:

1. Ասոնց վրայօք տեղեկանալ փափազողն կը բնայ՝  
զատ յայլոց զանել ճոխարար և լաւ թննութեամբ զըր-  
ուած գիրքը Գաթըրճեան չ. Յովսէփ վարդապետի Վե-  
նինայ Մնիթարեանց, Սրբազն Պատարագամատոյցք  
Հայոց անուանեալ, և տպագրեալ հոն յամին 1897:

2. Տեղւոյս պատշաճ չեմ համարիր թնելն՝ թէ ո՞րքան  
ստոյգ կամ հաւանական զրուած է սա մեր Լուսաւորչին:

հետ որ և է կերպով վերաբերութիւն կամ  
ծանօթութիւն մի. որուն արդէն հաւաստից  
տեսանք այլեւայլ գաւառներէ և թեմերէ  
օտարալեզու եկեղեցականներ և վարդա-  
պետներ բերելն ի Հայու: Այս ծանօթու-  
թիւնն և համբաւ Լուսաւորչին անտարա-  
կոյս աւելի հոչակեցաւ առթիւ Նիկիոյ Ա.  
Ժողովոյն. որ և կարեւոր գէպը մի ըլլալով  
մեր ազգին ըրիստոնէութեան արեգակնա-  
փայլութեան, վայելէ որ ըիչ մի կանգ  
առնունք այս կէտիս վրայ, առանց աս-  
տուածաբանական և եկեղեցական ինդրոց  
մէջ մտնելու, թեթեւակի շօշափելով ըզ-  
պատմականն. հասարակաց ծանօթ ըլլա-  
լով՝ որ այդ առաջին տիեզերական սիւն-  
հողոսին (ժողով) զլիսաւոր պատճառն էր՝  
Աղեքսանդրիոյ Արիոս երիցուն անտանելի  
հայոյական մոլար վարդապետութիւնն,  
զթիսուս Քրիստոս սոսկ մարդ. ըսելով և  
ոչ միացեալ ընդ Բանին Աստուծոյ՝ Աս-  
տուած և մարդ. մէկ մ'այլ ինդիրն Զատկի  
տօնին օրուան և եկեղեցական վիճակաց  
կամ աթոռոց կարգաւորութիւնքն:

## ԺԶ.

Ժողով Նիկիոյ. — Արիստակէս Եւ այլ Հայ  
Եպիսկոպոսք. — Յակովը Մծբնայ:

**Ե**ԿԵՂԵՑԻՈՅ ԷՌԱԹԵԱՆ ԿԱՄ ԿԵՆԱց  
ԸՆԹԱԳԻՑ ՄԵՂ՝ ԱՄԵՆԱՆՉԱՆԱԼՈՐ Է ԱՅՍ ԿԷՏԱ  
(Նիկիոյ Ժողով), ՆԱ և ՔԱՂՋԱՔԱԿԱՆ ՄԵ-  
ԱՌԱԹԵԱՄԲ: ՀԱՂԻւ ՄԱՐԻ Մ' ԱՆՑԵՐ ԷՐ ԱՆՈՐ  
ՎԵՐՋԻՆ ՀԱԼԱՁՃԻ (Լիկինիոսի) ԲՈՆԱՄԱՆ  
ԿՈՐԱՌԵԼՅԻՆ, ԵՐՐ ԻՐ և ՆՄԱՆԿԱՑՆ ԱՄԷՆՅՆ  
ՄԱՏԵԼԻ ԿԱՄ ՀԱԼԱՊԱԿ ԱՆՃԻՆՔ, ԵՊԻՍԿՈ-  
ՊՈՍՔ, ՔՐԻՍՏՈՆԵԱՅ Եղած աշխարհաց ամէն  
ԿՈՂՄԵՐՔ՝ հրաւիրանօք ԿԱՄ հրամանաւ այն  
աշխարհաց միապետ Խնքնակալին կոստան-  
դիանոսի, հաւաքուին ի Փոքր Ասիոյ հիւ-  
սիսային արեւմբտեան գաւառի (Յիւթա-  
նիոյ) Նիկիա քաղաք, իրբեւ ամէն կողմերք  
Ժողովուելու յարմար դիրք մի ունեցող  
տեղ: Եթէ կարելի ըլլար այդ յիշեալ  
ՀԱԼԱՁՃԻՆ և իրեն յառաջաղէմ զործակ-  
ցաց, Մաքսիմեանց, Գալերիոսեանց, Դի-  
ոկինեանց, կորած կոփած կնտացած  
գլուխինին՝ իրենց յոխորտաքար կոխած և  
զիրենք անարգաբար կոխող հողէն վայր-

կան մի վեր կանգնել, ի՞նչ ափշութիւն  
պիտի պատէր իրենց աչաց այլ մտաց այլ:  
Այդպէս իրենց սպառնալեօք հուր սուր  
մահ սփռելէն ի քրիստոնեայս չորս տարի  
վերջ, այդ հալածելոց, տանջելոց, նահա-  
տակաց գլխաւորքն, Եպիսկոպոսքն, գրեթէ  
նախախնամօրէն հաւաքուած մօտ այն քաղ-  
քին (Նիկոմիդիոյ), ուր իրենց՝ Խնքնակալին  
և կեսարք, գլուխ գլխի տուած՝ փսփսային,  
քրիստոնէութիւնը ջնջելու հնարք հնարել,  
հիմայ, դոքա իրբեւ թէ կոխեն կաքաւեն  
իրենց գլխոց վրայ Քրիստոսի յաղթու-  
թեան նշանաւ, ազատ համարձակ, և նոյն  
Քրիստոսի անարգուած մահառիթ այլ ան-  
մահունակ նշանը՝ Խաց՝ կանգնեն ի զա-  
գաթան իրենց կործանուած կամ կիսա-  
կանգուն կոստանց:

Եթէ դոքա՝ քրիստոսահալածքն՝ չեն կըր-  
նար գլուխնին վերցընել և ափշիլ, անհնար  
է և մեզ այսպիսի յիշատակաւ և տեսքով՝  
չզարմանալ չհիանալ հեզահոգի Յիսուսի  
հաւատոց՝ համբերատար, աննկուն և հրա-  
շափառ յաղթութեան, և իր այնքան  
միլիոնաւոր նահատակաց փառափայլու-  
թեան վրայ: Եւ չկարենալով այս կիտիս՝  
գոնէ այս փոքր չափով զսպել մեր զգա-  
ցումը և զրիչը, դառնանք՝ այդ յիշեալ  
մեծահանդէս ժողովին մէջ՝ մեր ունեցած

մասին կամ վիճակիալ աթոռին, մեր պատմչաց քանի մի խօսքը յիշելով. « չի լիազոյն և լաւագոյն զրուած են, այլ զի մերայինք են և սիրելիք:

Իրաց ժամանակակից մեր ստէպ յիշեալ պատմիչն, Ազաթանգել՝ համառօտիւ յիշէ (Ճիկ). « Հրաման ետ մեծ կայսրն՝ օգոս- « տականն կոստանդիանոս՝ ժողովել ամեն- « նայն եպիսկոպոսաց ի քաղաքն Նիկիաց- « ւոց: Յայնժամ մեծ արքայն Տըղատ և « Ա. կաթողիկոսն Գրիգորիոս՝ հանդերձե- « ցին և արձակեցին զիտսակես. որ եզթեալ « հասանէր ի ժողովն մեծ Նիկիոյ՝ ընդ « եպիսկոպոսան ամենայն ուր՝ ամենայն « տիեզերացն կարգեցաւ ընդունելութիւն « աւանդութեան հաւատք, կարգը լուսա- « ւորութեան, կանոնը պայմանաւորք, « աստուածատուր զօրութիւն հաճոյիցն « Աստուծոյ անչափ բարձրութեանցն: Ուր « և մեծ կայսրն կոստանդիանոս մտեալ՝ « խոստովան լինէր զհաւատսն, և օրհնու « թեամբ պսակեալ ի ժողովոյն, զանոն « ի յերկրի րոպոյր, և զարդարութիւն ի « յերկինս հաստատեր»: Գծեցինք յետին տողս, զի շատ գեղեցիկ և վսեմ ըսուած մ'է և հեղինակին ուրիշ տեղ ըրած երկարաբանութեանց՝ ներել և փոխարինել տայ: Ապա կ'ըսէ. « իսկ երանելին Ուրս-

« տակէս զայր (դառնալով ի Հայս) հասա- « նէր պայծառ ծագեալ Հաւատովին և « հաստատուն աստուածահաճոյ Նիկիական « կանոնօքն. երեւեալի Հայաստան երկրին, « առաջի գնէր թագաւորին և կաթողի- « կոսին սրբոյ՝ զբերեալ Աշանդուրիւնսն. « որով Արքոյն Գրիգորի ի նոյն լուսա- « ւորական կանոնսն յաւելեալ, առեալ « զիւր վիճակն Հայաստան երկրին՝ պայ- « ծառացուցեալ՝ հանդերձ արքայիւն Տըր- « դատայ՝ զամենայն աւուրս կենաց իւրոց « լուսաւորէր »:

Իսկ ամենախոյզ Խորենացի մեր՝ աւելի պատմաբար զրէ (Բ, 2թ) ժողովոյն պատ- ճառը (Արքոսի մոլար վարդապետութիւնը), և ժողովոյն նախագլուխ եպիսկոպոսապետ- ները. « Բիտոն (Βιτων) և Բիկենտ (Βικεντ- « նος, Vincentius) և երիցունք ի Հոռվմ « քաղաքէ՝ ձեռնարկութեամբ սրբոյն Աեղ- « բեստրոսի (իրբեւ երեսփոխանք այս « Պապիս): Աղեքանդրոս Աղեքսանդրիոյ, « Եւստարիոս Անտիոքայ, Մակարիոս Երու- « սաղեմի, Աղեքսանդրոս կ. Պոլսի: »: Ուրոց հետ պէտք էր յիշել զմսիոս եպիսկոպոս Կորդուքայ Ապանիոյ, որ նախազահ կամ առաջնորդ եղաւ ժողովոյն: « Յայնժամ « զայ հասանէ հրովարտակ ինքնակալին « կոստանդիանոսի՝ առ մեր արքայն Տըր-

« դատ, զի զԱ. Գրիգոր առեալ ընդ իւր՝  
« ի ժողովն երթիցէ »:

Այս հրաւէր՝ ոչ միայն վայելուչ էր,  
այլ և զբեթէ անհրաժեշտ ի կողմանէ  
կոստանդիանոսի և ժողովելոցն, որը մե-  
ղաղբելի կ'ըլլային՝ եթէ այնպիսի հոչակ-  
եալ կենդանի նահատակ մի չհրաւիրէին  
իրենց մէջ, ինչպէս հրաւիրեր և բերեր էին  
քանի մի խոստովանող և չարչարեալ  
եպիսկոպոսներ այլ. որոց մէկն՝ սուրբ  
հաւատոցն համար մէկ աչքէն զրկուեր  
էր<sup>1</sup>. միւս մի էր ձեռնատ կամ ոտնատ<sup>2</sup>,  
և այլը իրենց վէրքերը յայտնապէս երեւ-  
ցընէին կամայ ակամայ. — արդեօք մեր  
Լուսաւորիչն այլ այն տասն և չորս կերպ  
կրած չարչարանաց աչքի փուշ բայց մոտաց  
շնորհափայլ շառաւիղներ՝ զեռ չէր կրեր  
վրան. կամ թէ՛ Տրդատայ կրկին կերպա-  
րանափխութեամբ ապա առոյգ պատմնույ  
պէս պայծառ մարմնով նորոգուելուն նման,  
ինքն այլ նորոգուելը էր. — հաւանելի է  
որ ի նշան փառաւոր նահատակութեանցն՝  
կային և երեւէին վրան նիշը պանծալիք,  
որովք ի տիեզերական ժողովին՝ կը ընար  
քան զրագումս՝ գուցէ և քան զբնաւս՝  
սխրալի և պաշտելի երեւնալ. վասն այնո-

1. Ինչպէս Պոտինոս եպիսկոպոսն Հերակլեայ.  
2. Ինչպէս Ա. Պափնոտիոս.

րիկ « Եւ ոչ Առուբրն Գրիգոր հաւանեցաւ  
« երթալ, զի մի՛ զառաւել պատիճն՝ վասն  
« խոստովանողական անուանն՝ ի ժողո-  
« վոյն կրիցէ. որպէս զի (որովհեաեւ)  
« այսպէս փափազանօք և մեծաւ փութով  
« կոչեն»: Տրդատայ հրաւիրովիլն այլ շատ  
վայելուչ և փառաւոր էր. այն որ գնաց  
ի Հռովմ՝ յայցելութիւն դաշնակից կայ-  
սերն, զբեթէ հարկ էր որ անոր դիմաց  
բազմէր ի ժողովին աշխարհական պատուա-  
ւորաց մէջ, զերագոյն քան զայլս, և  
միակ թագաւոր քրիստոնեայ, և այնպիսի  
թագաւոր: Սակայն քաղաքական զգուշու-  
թիւնը չթողուցին նմա կատարել իրեն  
եկած հրաւէրքը. վասն զի իր և կայսեր  
դէմ մախացող և մխացող Պարսից թագա-  
ւորն (Եապուհ) ուրիշ թագաւորաց հետ  
դաշնակցեալ՝ լոելեայն իրեն (Տրդատայ)  
այլ սպառնայր. « Վասն այնորիկ ոչ եթող  
« առանց իւր զաշխարհս» (Հայոց)... « այլ  
« (ինքն և Գրիգոր) առաքեն փոխանորդ իւր-  
« եանց զիւրստակէս, հանդերձ ճշմարիտ  
« խոստովանութեամբ երկոցունց՝ զրով»:  
Այսինքն, հաւանութեան զիր զրած են,  
թէ ինչ որ ժողովն սահմանէ՝ իրենք այլ  
կ'ընդունին. — ուր էր թէ այդ թղթերն  
ունենայինք հիմայ: — « Որոյ (Արիստ.)  
« երթեալ հասանէր մեծին Ղեւոնդի. և

« հանդիպի յայնմ ժամու՝ զի մկրտէր  
 « (ի Սինոպ) զԳրիգոր՝ զՀայր Գրիգորի  
 « Աստուածաբանի... Երթեալ Որստակէս  
 « ընդ մեծին Ղեւոնդի՝ հասանէ ի քաղաքն  
 « Նիկիացոց, ուր եղեն ժողովեալ Հարք  
 « 318, ի քակտումն Արիանոսաց... Ապա  
 « դարձեալ Ռեստակեայ արժանահաւատ  
 « բանիւ և բան կանոնեալ զիխովք ժողո-  
 « վոյն, գայ հանդիպի հօրն և արքային ի  
 « Վաղարշապատ քաղաքի. ընդ որ ու-  
 « րախացեալ Սրբոյն Գրիգորի՝ սուղ ինչ  
 « զրուխս յինքնէն ի կանոնս ժողովոյն յա-  
 « ւելու, վասն առաւել զգուշութեան իւրոյ  
 « վիճակին» :

Մեր նախնիք կ'աւանդեն, թէ՛ Ս. Լու-  
 սաւորիչ մեր Նիկիական դաւանութեան  
 կամ Ա. Աթանասի կոչուած Հարատոյ հան-  
 գանակին ետև կցած ըլլայ՝ ինչուան հիմայ  
 մեր պատարագի ատեն ըսուած համառօտ  
 փառատրութիւնը, « իսկ մեջ փառաւո-  
 « րեսցուք որ յառաջ քան զյաւիտիանս»,  
 և այն. սակայն, բազմաց ստոյգ կամ  
 հարազատ չերեւիր այս. նոյնպէս և այն  
 յիշեալ Գրուիքն կամ կանոնքն՝ ՅՈ թուով,  
 համառօտ բանք, որ ի կանոնագիրս մեր  
 զրուած են՝ յետ Առաքելական և Նիկիական  
 կանոնաց, և չարժեր այս տեղ յիշել:

Տրդատայ և Գրիգորի երեւնալէն ի մեծի

ժողովին՝ զրկուած ըլլալով, նայինք անոր՝  
 զոր իրենց Փոխանորդ խաւրեցին, յՈրիս-  
 տակէս. որ այժմու սովորութեամբ այսպէս  
 կոչուի, բայց վերոյգրեալ պատմիչը (և  
 այլը՝ շատ հեղ) Որստակէս զրեն, որոյ  
 յունական մասնիկը թողլով՝ արեւելեան  
 անուն մի լսուի (Որստակ). սակայն հա-  
 ւանօրէն ամբողջ անունն այլ յունական  
 է, իրենց արիստ, արէտէ (Ճշմարիտ) բառէն  
 առեալ, որով շատ բարդեալ անուններ  
 ունին. ինչպէս Արիստոտէլ, Արիստարքոս,  
 Արիստիդէս, և այլն: Եւսեբիոսի զՀայոց  
 դարձն ի Քրիստոսն չյիշելու նման է և կոս-  
 տանդիանոսի Վարուց մէջ Նիկիոյ ժողովն և  
 շատ Հարս յիշած ատեն՝ զմեր աշխարհիս  
 ներկայացուցիչ Արիստակէսը չյիշելն.  
 զուցէ կեսարիոյ հայրապետին վիճակեալ  
 միւս եպիսկոպոսաց կարգին դնելով՝ լոէ.  
 իսկ հին յունական՝ յորմէ և լատին այդ  
 Ա. ժողովի եպիսկոպոսաց Յանկին մէջ՝  
 որ հայերէն փոխուած այլ գտնուի) կերպ  
 կերպ զրուած է անունն. յունարէն՝ Աթու-  
 շառակաց, Aristarces, Aristanes, Aristacius,  
 Արիստաչ, Aristaces, Acrites.

Քան զանունն աւելի հետաքրննելի էր  
 թէ՛ ո՞ր կարգի կամ աստիճանի դասուած է  
 մեր եկեղեցւոյ ներկայացուցիչն ի Նիկիա,  
 և թէ՛ ունէր ազգային եպիսկոպոսակից

ընկերներ այլ: — Անհնար կ'երեւի իր  
հետ ուրիշ Հայ եպիսկոպոսաց ըըլլալն,  
բայց թերեւ ոչ իրրեւ աթոռակալք. սակայն  
և այս շատ հաւանական չէ. վասն զի,  
նախ, ի թիւս աւելի քան 250<sup>1</sup> յանուանէ  
նշանակեալ եպիսկոպոսաց ժողովոյն՝ յիշին  
եպիսկոպոսք քաղաքաց Փոքր Հայոց ինչ-  
պէս, Եւիրիոս կամ Եւափիրիոս Աստաղա-  
ցոց միջասահման քաղաքին, Եշտադ կամ  
Եւրոգիոս՝ Սերաստիոյ, և երկու քորեպիս-  
կոպոսք. դարձեալ եպիսկոպոսք կոմահայ,  
Զեալայ<sup>2</sup>, և այլն. բայց զասոնք մեր Լու-  
սաւորչին վիճակէն դուքս համարելով:  
Երկրորդ, Մեծ Հայոց եպիսկոպոսք այլ  
նշանակուին այդ բազմաթիւ և բազմա-  
շփոթ անուանց մէջ. ինչպէս Արտափի կամ  
Արտափի եպիսկոպոս Ծոփիաց, որ Մեծ  
Հայոց մեծ նահանգ կամ աշխարհ մ'էր,  
և հարկաւ եպիսկոպոսն այլ մեծապատիւ.  
Հայերէն անուանագրութեանց մէջ զրուի  
«ի Մեծաց Հայոց», Արիստակիսէ անմիշ-  
ջապէս վերջը կամ քովը զրուած և Ատրի-

կս կամ Կրիտկս, Կրիտու, նման Տիրիկիս  
քրմորդի եպիսկոպոսին անուան, բայց իր  
աթոռն կամ թեմն զրուած է Պենոպոյիս,  
թէ և այս անուն Փոքր Հայոց կամ Պոն-  
տոսի յարմարի և հաւանօրէն է Diospon-  
tus կոչուածն, կամ Helenopontus. սա-  
կայն զրողն թէ զայս և թէ զԱմասիա և  
զկոմանա՝ ի Մեծ Հայս զրած է: Որպէս և  
ըլլայ՝ բիչ Հայ եպիսկոպոս երեւնայ ի վի-  
ճակէ Լուսաւորչին, և ընդհանրական երեւ-  
փոխան նորա և աշխարհին՝ Արիստակէս  
միայն, որպէս և Պարսից՝ միայն Յովհաննիւ  
քրուպիսկոպոս մի ներկայանայ: Շատ օրի-  
նակը անուանակարգութեանցն՝ զմերս ոչ  
ի Հայոց զրեն այլ Եպիսկոպոս Հայոց,  
(ինչպէս երբեմն Մեծըստանայ համար  
ըսուեցաւ<sup>1</sup>), իրբեւ զլուկի ամենայն եպիս-  
կոպոսաց գաւառին իւրոյ և ներկայացուցիչ  
եկեղեցւոյն: Յիշեցինք վերը՝ որ Արիստա-  
կէս բերաւ Հայոց կաթողիկոսին և թա-  
գաւորին՝ ճշմարիտ խոստվանուրեան զիր  
մի. որում հաւանօրէն ձեռք զարկեր էին

1. Կարծուի թէ աւելի աւանդութեամբ և Արրահամ  
նահապետի ընդունաց թուովն՝ 318 կ'ըսուին Հարք ժո-  
ղովոյս: Մեր մէկ Հայերէն կանոնազրբի մէջ 212 Հարց  
անուանք կան:

2. Որ չէ Ծղակից, որպէս կարծեր է ժողովոց Հայերէն  
պատմազրու պատուական Հայրն, այդպիսի անուամբ  
տեղ չկայ ի Հայս:

1. Եզիպտական ցանկին մէջ ի Մեծ Հայոց զրուին  
Արիստու և Արիկիս. Ասորուցն, Արիստակիսն և Արի-  
տէս. նշանաւոր է Արարացոց ցանկին յիշելն ի Մեծ  
Հայս միայն զԳրիգոր, Մեզի ծանօթ մէկ հատիկ Հայերէն  
Հայս միայն զԳրիգոր, Մեզի ծանօթ մէկ հատիկ Հայերէն  
Հայս միայն, «ի Փոքրէ Հայոց» Եւստաղիոս ի Մա-  
րամազէ, Եւթիս ի Սատաղէ, ի Մեծաց Հայոց, Արիս-  
տակէս» կամ Ակրիտէս:

և շատ կամ քիչ եպիսկոպոսը Հայոց-  
ապա հարկ չէր անոնց երթան այլ ի  
Նիկիա: Թէ այսպիսի խոստովանութեան  
կանխիկ զիր մի զրեցին և զրկեցին՝ ուրիշ  
վիճակաց եպիսկոպոսապետը կամ եպիս-  
կոպոսը, ինձ յայտնի չէ:

Քիչ մի վերը յիշուած Պարսից եպիս-  
կոպոսին հետ յիշէ Խորենացի նա և մեր  
ծանօթ և զրացի մեծ եպիսկոպոսն Մծրեայ,  
զԱ. Յակովը, իբրև Եղեսիոյ, Երադ կամ  
Եփրիոս եպիսկոպոսին հետ ուղեկից Որիս-  
տակիսի և Ղեւոնդիոսի<sup>1</sup>: Որբան մեծ են  
արժանիք Մծրնացւոյն և որբան մեծարեալ  
ի մերայոց յայտնէ իր տօնի յիշատակն և  
շարականն: Յայսմաւուրը և աւանդութիւնը  
աւելի մեցընեն՝ ըսելով, թէ այնքան Ս.  
հայրապետաց մէջ՝ կոստանդիանոս Ս. Յա-  
կովը քով տեսնէր հրեշտակ մի, Յակովը  
այլ կոստանդիանոսի քով: Մեր եկեղեցա-  
կան և քաղաքական պատմութեան մէջ  
այլ յիշատակներ ունի այս մեծ և ախ-  
տահալած հայրապետու, այլ և անվաւեր  
և ռամկական զրոյցը, որոց կարգին համարե-  
լու է և անոր ազգականութիւնն ընդ Գրի-  
գորի Լուսաւորչի, թէ և մի ի զգօնագոյն

1. Եւ միայն ասոնք տեսեր են կ'ըսէ զլոյմն փայլա-  
տակիալ ի վերայ հօր Գրիգորի Աստուածարանին՝ մկըր-  
տութեանն ատեն:

պատմչաց մերոց ըսած ըլլայ: — Ոչ պա-  
կաս քան զնա մեծացընեն Յայսմաւուրը  
զԱրիստակէս՝ ըսելով. «Մեծափառ և զար-  
« մանալի հրաշիւք փառազարդեալ ի մէջ  
« բազմախումբ Հարանցն Սրբոց՝ հանդի-  
« սաւոր երևեալ ». այլ և ումիկ կերպով  
մի հրաշագործութեան<sup>1</sup>:

Թողղլով այս գերահոչակ Ա. տիեզերա-  
կան ժողովոյն մէջ խօսուածն և եղածն, որ  
զեռ եւս կարոտ է լուսաբանութեան, քիչ  
շատ ժողովելոց անուան ստուգութեան  
նման, յիշենք որ անոնց մէջ իրեւ մի յ' 13  
զլիսաւոր վիճակապետաց՝ Ղեւոնդիոս՝ վե-  
ցերորդ կամ եօթներորդ է, և այսպէս  
ստորագրէ յանուն իւր և իր զլիսաւոր մե-  
տրապօտաց կամ վիճակաց, «Ղեւոնդիոս  
« կեսարու կապադովկեցւոց... (վկայեմ)  
« վասն ամենայն եկեղեցեաց՝ որը ի

1. Իբր թէ Արիստակէս փոքրահասակ տեսք ունենա-  
լով՝ խեղճուկ մէկ մի երեցեր և արհամարդունք է ի  
ժողովըրդէն. բաց նա իր ինչ ըլլալը ցուցընելու համար  
(որ Սրբոց չի վայլեր), ըստ ճարտասան և ճամարտակ  
զրովի մի, Նիկիոյ մօտ եղած (հիմայ ցամքած) Լճակի մի  
մօտ երբ հոգազործ զինքը ծաղրելով՝ արօն իր ժեղին  
կու տան, նա և ի վերայ կապուտակ ալեացն լայնա-  
« տարած լճին լիութեան վեհաւէտ և բատմածածան  
« կորովակի սիզաշըրծ թանձրութեան չուրցն ովկիս-  
« նոյն(!), սիզաքայլ ոտիւր սրբնթացութեամբ սիրացու-  
« ցեալ, անվէսեր դիտմամբ յիսուսաքար (ի) նկատեալ  
« տեղին հասանէ », և այլն, և ըրոց վրայ ոչ միայն քայլէ  
այլ և արօրովը հերկէ, և դառնայ. և առ յիշատակ՝ լճա-  
գին վրայ եկեղեցի մի կանգնեն:

« Կապապաղովկիա, ի Գաղատիա, ի Պոն-  
« տոս Գիոպոնտեան, ի Պափղագոնիա, ի  
« Պոնտոս Պոլիմոնական, ի Մեծ և Փաքր  
« Հայու<sup>1</sup>»: Գելասիոս Կիւզիկեցի եախսկո-  
պոսն, (ի վերջ Ե դարու) որ քան զուրիշ-  
ներն աւելի կըրցեր է թիչ շատ հաւաքել  
այս մեծ ժողովին մէջ Ս. Հարց բասած-  
ներէն, Ս. Ղեւոնդիոսի քանի մի խօսք եւս  
յիշէ՝ բայց ոչ բացայայտ և լիացուցիչ:

Միշտ ցանկալի եղած է այլ ոչ գոռուած՝  
ժողովոյն մէջ ամեն խօսուածքն և գը-  
րուածքն, որոց բովանդակութիւն անշուշտ  
և մերս Արիստակէս տարած էր ի Հայու,  
ուր նոյնպէս չեն գտուիր, բաց ի վերոյիշ-  
շեալ 20 կանոններէն և աւելի համառօտ  
կրկնութիւններէն. որ «Կանոնը Երկրորդ  
« Նիկիականը, զոր եղին 318 եպիսկո-  
« պոսքն, կրկնաբանելով կարճ ի կարճոյ,  
« զլուխը 114»: Ուրիշ զրող մի Արիս-  
տակիսի համար կ'ըսէ, թէ բերաւ «զԳիր  
« Կանոնաց թուեալ միահամար կարգաւ

1. Գիտելի է որ այն ժամանակ զրեթէ ըոլոր արեւմբա-  
նան Փափա Երկու եկեղեցական մեծ վիճակ կամ  
նահանգ էր բաժնուած, Ասիա և Պոնտոս, այս երկրորդին  
պատշաճին այդ յիշեալ շաւառը կամ աշխարհը և ստո-  
րակարգեալ վիճակը, որոց զլիաւոր եպիսկոպոսական էր  
Կենարիային, այն ատեն Ս. Ղեւոնդ Թերեւս արքէ զի-  
տել, որ այդ եպիսկոպոսաց վիճակաց՝ կան հին ցանկը որ  
չեն յիշեր զՄեծ Հայու, մոռացութեամբ, թէ այդ աշխար-  
հին եկեղեցւոյ աննման զրից համար:

« տունս 51»: Միսիթար Գոշ (Դատաստ-  
ձիԳ), 30 զլուխ կանոն կ'ըսէ Նի-  
կիոյ ժողովոյն<sup>1</sup>: Ներսէս Գ. կաթողիկոս  
(640-60) ի թղթին առ կոստանդին Գ.  
կայսր, զրէ. « Սուրբն Ռատակէս ընկալաւ  
« զհրամանս հաւատոյ ի Ս. ժողովոյն և  
« ի մեծ թագաւորէն կոստանդիանոսէ. բն-  
« րեալ մատոյց առաջի քրիստոսասէր  
« թագաւորին Տրդատայ և Ս. քահանա-  
« յապետին Գրիգորի, հանդերձ հրամանօք  
« երջանիկն կոստանդիանոսի»: Յետին  
խօսքն յայտնէ՝ որ բաց ի կանոնաց և  
կարգաց եկեղեցականաց՝ կայսրն այլ իր  
կողմէն զրեր էր պատասխան թղթոց մեր  
թագաւորին և քահանայապետին, ինչպէս  
որ վայելուչ էր, թէ և չի յիշեր Ագա-  
թանգել. այլ յետ յիշելու Արիստակիսի  
բերածները՝ այնուհետև Լուսաւորչի ջանքը՝  
բանիւ և զրով յիշեցնէ. որ և կնիք է իր  
Լուսաւորչութեան, և որով մենք այլ կըն-  
քենք, թողլով մանրամասնաբար իրեն հետ

1. Արժան համարիմ յիշել, որ թէպէս մեր նախնեաց  
զրոց մէջ չեմք զաներ Նիկիոյ ժողովոյն Պատմութիւն մի  
երկարորէն զրուած, բայց այսպիսի համբաւ մի լուսած  
է յօթաց Ժ. Պարուն վերջերը. մինչև ի պատրաս-  
տութիւն Բ սինէնորուսին Լիոնի, յամի 1274, Գրիգոր  
Ժ պապն Հոռովմայ՝ հոգով զրեր է առ Լիոն Բ թագաւոր  
մեր Հայոց և առ կաթողիկոսն, որ թարգմանեն զայն և  
շուտով իսաւրեն: Խնչ պատասխան տուած են մերայինը՝  
յիշուած չէ, և ոչ այլ ժողովոյն մէջ յիշուի:

ման գալն ի Հայաստան, հեթանոսութեան շէնքերը ջնջելու, որ մեծ մասամբ այլ բաղաքական և աշխարհագրական պատմութեան վերաբերին։

## ԺԷ.

Վերջին գործք Ս. Լուսաւորչին եւ փոխումն։

**Լ**ՈՒՍԱԽՈՐՉԻ քահանայապետական վիճակն կրկին հաստատուած պայծառացաւ Նիկիոյ ժողովոյն զումարմամբ և Արքատակիսի առաքմամբ. այնուհետև իր հայրն, որ և բոլոր Հայաստանեայց հոգեոր հայր, իր վերջին անխոնջ ջանքը քանի մի տարի այլ տարածեց, ըստ որում զրէ Ազաթանգեղոս, և արժան է կարդալ (Ճիկ գլուխը), յետ ընդունելութեան իր որդուոյն և յաջորդին բերածները. «Առեալ զիւր վիճակն՝ զՀայաստան երկիրն՝ պայծառաց» ցուցեալ հանդերձ արքայիւն Տրդատաւ, «զամենայն աւուրս կենաց իւրոց լու» սաւորէր։ Ապա յետ այսորիկ սկսեալ «երանելոյն Գրիգորի Ճառս յաձախազոյնս, դժուարապատումս, առակս խորիմացս

« զիւրալուրս յարմարեալ ի զօրութենէ և « ի հիւթոյ զրոց մարզարէականաց, լի « ամենայն ճաշակօք կարգեալս և յար « մարեալս աւետարանական հաւատոյն « ճշմարտութեան . . . Զաւետարանական « ընթացսն և զվերակացութիւն եկեղեցւոյ « սրբոյ՝ ջնորհօք Աստուծոյ առանց պա « կասութեան տանէր. և առաւել փութայր « գուն եղեալ զամենայն ոք յորդորելով « առ ի բարեացն բաջակերութիւն, զցայդ « և զցերեկ պահօք և աղօթիւը և ուժզին « խնդրուածովք, զգուշացուցանէր ամեն « նայն մարդոյ. . . Եւ այսպէս հանդերձ « թագաւորաւն և ամենայն աշակերտե « լովքն զամենայն ժամանակս իւրեանց « ընթերցուածոց զրոց ծախէին զտիւ և « զիշեր. և նովին ծաղկեալք և շահաւե « տեալք, և օրինակ բարեաց ուսումնասէր « առընթերակայից ցանկ լինէին»: — Ո՞վ են առլիրերակայրեն. — Գուցէ իր վիճակին Հայաստանի մերձաւոր օտար վիճակը կամ եկեղեցիք: — «Արդ այսու օրինակաւ զա « մենայն աւուրս կենաց առաքելարան « առաքելագործ վարեալ՝ զհետ երեւեալ « հրամանացն ընկալելոց, մինչեւ ի վախս « ճան կատարածին զայս առնէր ամ յամէ, « բաղեալ ի սկրի Քրիստոսի՝ լուսաւու « րեր»: — Գեղեցիկ և խոր վերջարան

Լուսաւորչի արդեանց. ոչ լոկ վառեալ բորբոքեալ ի սէրն՝ այլ և բաղեալ ի սէրն Քրիստոսի. արժանի մտածութեան և հիացման: Այսու և հեղինակն Ազաթանգեղոս՝ կնքէ իր բովանդակ պատմութիւնը. զրոց պարզ յիշատակարան մի յարելով ի նոյն, և ուղղելով առ Տրդատ, առ որ նոյնպէս նուիրած էր և իր յառաջաբանը. ոչ յիշելով ոչ ասոր և ոչ Գրիգորի, (իր պատմութեան երկու վեհագոյն գործող անձանց) կենաց վախճանը, գուցէ անոնցմէ առաջ ինքն վախճանած էր:

Ոչ պակաս քան զգործս կենացն՝ սխրալի է և նշանաւոր, մանաւանդ հոգեկիր անձանց՝ իրենց մահն և պատրաստութիւնն ի մահ: Լուսաւորչի համար շատ հեղ զրեր կրկներ էր Ագաթ. (ՃիԱ), և տեղ մի յիշեցինք ինչպէս «ընդ ժամանակս ժամանակս «ի լերինս ելնելն», այլեւայլ վանքերէ կրօնաւորներ հետը առնըլով, և անոնց հաւասար ճգնելով. և երբ ամէն կողմ եպիսկոպոսարաններ հաստատեց՝ այլեւայլ ազատութեամբ, կ'ըսէ (ՃիԲ). «Բստ զարաւաց գաւառաց երթեալ ընտրէր անձին «իւրում կայս համբաւեան յանապատ տես «դիս, և անդ բնակէր, և յանապատիցն «լուսաւորէր զամենեսեան»: Եւ Տրդատ

(ՃիԳ) շատ աղաչեաց զԳրիգոր՝ վասն « հանապազորդ առ նմա կալոյ, զի ընդ « ինքեան շըջեցուացէ, որում ոչ հաւա « նեալ չառնոյր ի յանձն. այլ յանապատ « տեղիսն հանեալ բնակութեամբ՝ պահովէն « կոխեալ զինքն, զի մի՛ տացէ հպար « տութիւնն բարձրանալ կոխել զինքն»: Գեղեցիկ է այս իմաստ Ազաթանգեղի. Լուսաւորիչ խոնարհութեամբ ինքզինքը կոխեր նուաստացընէր, որ չըլլայ թէ իր հրաշալի գործերն և ի հասարակաց հոչաւ կին և գովութեանն համելով՝ հպարտութիւնն յաղթէ կոխէ զինքը, և մեղանչել տայ: Այսպէս մտածէին և ուրիշ սուրբ հոգեկիր անձինք. ոչ եթէ Գրիգորի առաջինութեան ոյժը պակաս համարելով, այլ արժէնքն և շնորհքն չափազանց, եթէ կարելի է այսպէս ըսել, զի եթէ գերազոյնք քան զմարդիկ շնորհալից հրեշտակը հըպարտացան և անկան, աւելի եւս կըընայ մարդ դրդուիլ և կործանիլ: Այս բանէս սիրողաբար վախնալով Գրիգորի սրտակից բարեկամքն, (մանաւանդ հեթանոսութենէ դեռ նոր արթընցած ազգին՝ անոր վրայ ունեցած համարմունքն, որ գուցէ թէ և գերմարդկային և աստուածային անձ մի կարծէին զնա, ինչպէս և յետին դարուց մէջ անգամ զտուած են այսպէս մտածողք),

հոգեկիցքն ճգնաւորքն Անտոն և Կրօնիդէս, մտերմարար իրեն խորհուրդ տային, որ այնուչետեւ՝ մինչ ամեն բան կարգի զերէ էր և իր որդին այլ իրեն տեղ քահանա- յապեա, թողու քաշուի անծանօթ անշէն կողմ մի, և ծածկուի ի մարդկանէ:

Կ'արժէ ներկայացընել հոս՝ այս յի- շեալ երկու սուրբ ճգնաւորաց՝ (զոր ինքն Գրիգոր հաներ բերեր էր իրենց հայրենեաց ճգնարանէն) անզամ մի սիրալի և սիրալի կերպով իրարու հանդիպիլն Տարօնոյ վա- նորէից և անապատներու կողմերում, ինչ- պէս պատմէ ականատեսն Զենովը: Երբ Հռովմէն դառնալով Տրդատ զԳրիգոր հետն առած եկաւ այս կողմերս, փափագեցաւ տեսնել այն ճգնաւորները. Զենովը այլ հրափեց զԳրիգոր՝ որ զայ և իրեն յան- ձնած վանատեղոյն հիմնարկած եկեղեցին այլ կանգնէ: Թագաւորն և հայրապետն խաւրեցին զԱլբիանոս մեծ եպիսկոպոսն որ երթայ բերէ իրենց ճգնաւորները. Երբ եկաւ սա ասոնց ճգնարանը և չգտաւ զանոնք՝ հարցուց, և ըսին թէ շատոնց է որ անոնք իրենց խցիկները թողեր և չեն դարձեր. Երեք օր փնտուցին Ալբիանոսի հետ. չորրորդ առոտուն կանուխ բլրոց վը- րայէն և անտառի միջէն սաղմոսերգու- թեան ձայներ լսուեցան. Երբ աւելի

մօտեցան Ալբեւու բլուր կոչուած տեղոյ աղբիւրի մօտ, Անտոն և Կրօնիդէս իրենց քանի մի ընկերով այն արշալուսոյ և կա- նաչ երկրի պարզութեան մէջ երեւեցան երգելով. « Յոյց ինձ ճանապարհ՝ յոր « գնացից »: Ալբիանոս այլ իր կողմանէ փոխարէն երգել տուաւ. « Հոգի քո բարի « առաջնորդեսց ինձ »: Երբ հանդիպեցան իրարու՝ ճգնաւորքն ողջունեցին զեպիս- կոպոմն՝ ըսելով, « Բարի եկիր, ճանա- « պարհորդ խաղաղութեան ». նա պա- տասխանեց. « Բարի գտաք զձեզ, օթեվանք « Հոգւոյն Արրոյ ». կամ, « Բարի խաղա- ղութիւն ձեզ, մշակը Աստուծոյ ». ապա աւետիր տուաւ որ թագաւորն Տրդատ և Ս. Գրիգոր եկեր են զիրենք տեսնելու. անոնք այլ աւետիր ձեզ, ըսին, որ Աստուծ այսպիսի լաւ ժամանակ պարզեց մեզ, զսատանայ հալածեց, և սուրբ հաւատքը հաստատեց: Խսկոյն Ալբիանոս՝ սարկա- ւագներ զրկեց առ Ս. Գրիգոր և առ Տըր- դատ, որ Արձան քրմապետին յաղթուած տեղն էր. և երբ լսեց՝ ուրախանալով հրամմեց որ խաչարձան մի կանգնեն այն տեղ և կոչեն Աշետեաց խաչ: Ապա Ս. Գրիգոր իր հետ եղած բոլոր եկեղեցական- ներով թափոր կազմելով, խնկօր և ջահուք՝ երգելով և անտառները հնչեցընելով ելան

եկան ընդ առաջ ճգնաւորացն, զորս տես-  
նելով Ա. Գրիգոր, ողջունեց. « Բարիոք  
« գտաք զձեզ՝ առաւոտք բարեաց ». անոնք  
այլ պատասխանեցին, « Բարի եկիր արու-  
« սեակդ արդար խաղաղութեան՝ որ զտիե-  
« զերս լուսաւորես ». այս տեղս այլ  
կոչեցաւ Աշետեաց բրուր: Ապա եկաւ Տըր-  
դատ համբուրեց ճգնաւորները և օրհնու-  
թիւն խնդրեց. նորա այլ հոգեոր խօսքերով  
ուրախացուցին զնա և իրեն հետ եղողները.  
յետոյ ազօթք և պաշտօն կատարեցին, այլ  
և մարմնաւոր ուրախութիւն: Աւելի պակաս  
իրեւ 15 օր այն կողմերը պարտելով՝  
ուր որ առաջուց կործանած Դեմետրի և  
Գիսանէի տաճարն էր՝ հօն մեծամեծ քա-  
րերով բարձր խաչ մի կանգնել տուաւ  
թագաւորն և նաւակատիք ընել, այն  
հանդիսից եկած բազմութեան մարդկան  
թիւն այլ զրել անոր վրայ, որ եղաւ  
60,000, կամ զրոց ուրիշ օրինակի հա-  
մեմատ՝ 100,450, թագաւորին զօրցն և  
Գրիգորի հետ եղողներն այլ միանգամայն  
հաշուելով: Այս յիշատակն ապագայից  
թողլով՝ բաժնուեցան ի ճգնաւորաց և ի  
նոր սրբազնեալ տեղեաց՝ թագաւորն և  
Գրիգոր՝ իրենց պաշտօնէիւք, և զինուո-  
րական և եկեղեցական երգոց միախառ-  
նութեամբ, որոց ձայնը և արձագանքը

կարծեմ ոչ այնքան յանտառաց և ի բլրոց  
ճնչէին՝ որբան երկընքէն:

Զայս և նախընթաց ղիպուածներն այլ  
յիշելով՝ անկարելի թուի որ հոգի և սիրտ  
ունող ու ներկայ և հանդերձեալ հայրենիք  
յիշող անձ մի՝ չըզգայ իր մէջ նուրբ և  
սուրբ ձայն մի, հզօր ազդում մի: Այս-  
պիսիք էին իրք և կիրք յԱրշալուսի անդ  
և յԱրեւածագն Լուսաւորութեան Հայոց.  
որովք ոչ միայն կրօնական անձինքն  
զմայլեցան, այլ և զօրականը և արքունիք.  
որք թերեւս աւելի երկար օրեր փափա-  
գէին մնալ այն տեղ. բայց յանկարծ  
պատերազմական փողեր հնչեցին, իմացը-  
նելով՝ որ թէպէտ Տըրատայ ի Վրաց  
կողմ խաւրած գունդն յաղթեց վանեց  
հիւսիսային հըսուակները, սակայն անոնք  
նորէն զօրաժողով ընելով՝ առաջ կու զան.  
հարկ էր որ փութայ Տըրատ անոնց գէմ:

Իսկ Գրիգոր՝ ըստ միաբան վկայութեան  
Ազաթանգեղի և խորենացւոյ, յետ գարձի  
Արիստակիսի ի Նիկիոյ՝ ասոր յանձնելով  
իր աթոռն և հովուապետական զաւագանը,  
« այնուհետեւ ոչ եւս երեւեցաւ յայտնեալ  
« ումեր », ինչպէս կ'ըսէ երկրորդն (Բ.  
Պ.), կրկնելով իր առաջուց ըսածը (Ղ.)  
« Դարձեալ ի նոյն լերինս՝ ոչ ումեր յետ  
« այնը յաւելոյը երեւել, մինչեւ ցվախ-

ճան»: Ո՞ր են այդ լերինք. – շատ տարի առաջ այլեւայլ լերանց մէջ ճգնէր Գրիգոր, ուսկից երբեմն իջնելով այցելէր իր հօտին. բայց այս վերջին անգամ՝ եկեղեցոյն և աշխարհի բոլորովին հրաժարական բարեւ տալով, բաշուցաւ Եղբնկայ և Դարանաղեաց (Կամախայ) միջոց եղած Սեպուհ լերան բարայրի մի մէջ, ուր ըիչ առաջ Հոռվմէն եկած Հոփիսիմեանց մէկ ընկերն՝ Մաեի՝ առանձնացեալ ճգնելով վախճանէր էր, և նոյն ինքն Գրիգոր զինքը գտեր, հոգին հոգացեր, մարմինը թաղեր, և տեղը ժառանգեր էր, որ և անոր համար կոչուեցաւ Մաեւայ-այրի: Այս բանս այլ զարմանալի նախախնամութեամբ. Գրիգոր լուսաւորչական կեանքը սկսի Հոփիսիմէով, վերջանայ անոր ընկեր<sup>1</sup> Մանիով:

Խորենացւոյ ճիշդ հաշուով՝ իր Լուսաւորչութեան սկիզբն կ'ըլլայ Տրդատայ թագաւորութեան 17դ տարին, որ է Վրիստոսի 301–2, վերջինն՝ յետ 30 տարւոյ (332): Ո՞րբան ժամանակ այլ ապրած է յետին առանձնութեան մէջ. և ի՞նչպէս. – հարցընելու է իր պահապան հրեշտակին, որ ըստ աւանդութեան՝ հրեշտակաց ինն

1. Իրեն համանան Manne, ճգնակից և ժամանակակից կոյս մի եղած է ի կողմանս Գաղղիոյ, որ յիշաւակուի յ'Յ Հոկտեմբեր ամսոյ.

դասուց չորսորդէն էր: Հաւանօրէն քանի մի տարի ապրած է. բայց մեր ոճով տարիք ըսելով. այլ ըստ իրեն՝ կենաց և մահու մէջ վիճակ մ'էր, աւելի անմահութեան մօտ քան մահու. և այս այլ յարմար մեր Եղիշէի յիշած պղատոնական առածին, «Մահ ոչ իմացեալ՝ մահ է, մահ իմացեալ՝ «անմահութիւն է»: ըստ այսմ էր և Գրիգորին. և այն ըստ մեզ ապրած տարիներն՝ մանաւանդ թէ ամիսներն և օրերն՝ մէկ մէկ աստիճանը և ոտնփոխը էին երկնաչուսանդղոց, մօտէ մօտ առ Աստուած վերցընելու: Վերջապէս, ի՞նչպէս եղաւ վախճանն. – զայս այլ հրեշտակաց հարցընելու է: Մակայն ըիչ մ'այլ մարդկային մտաց ոյժ մը տալով՝ և մեզմէ զարերով առաջ մեր նախնեաց խորհրդածութիւնը քննելով՝ լաւագոյն համարիմ կարդալ մէկ հոգերգողի մի Շարականն՝ այս խնդրոյս նկատմամբ, հեղինակն ըլլայ Խորենացի, ըլլայ Եղնկայեցի, այն շարականն՝ որ իր առաջին բառին համար Լերինք կոչուի սովորաբար, և մի է մեր ընտիր խորազզած, ներշընչեալ շարականներէն. միանգամայն և Գրիգորի մահուան և մարմնոյն գտուելուն աւանդութիւնները շօշափէ, իր շատ անգամ լերանց մէջ ճգնելուն համար, ինչպէս տեսանք ըիչ առաջ: Իրաւամբ և յաջող

գիւտով՝ հեղինակն կուսկսի գովութեամբ  
լերին՝ որ ընդունեցաւ, ծածկեց և պահեց  
զԱռւրբն, այնպիսի Սուրբ, որով կըրնար  
լեռն գերազանցել ի մէջ լերանց, զորս  
համարձակ կանչելով՝ կ'ըսէ. « Լերինք  
« ամենայն, այսօր ցնծացէք ընդ մեծապաշտ  
« ծառ փառսն Անպուհոյ գերազանց լերին.  
« քանզի ի նմա բնակեցաւ Սուրբն Գրի-  
« գորիոս, սիւն լուսոյ Հայաստանեաց  
« սուրբ եկեղեցւոյ, որով ցնծան ի փառս  
« վերնոյն Սիովիլի: — Որ (Սեպուհ) առա-  
« ւել խորին խորհրդով ինձայ քան զԱրա-  
« բատեանն բարձր Մասիս. քանզի ի նմա  
« հանգեաւ Սուրբն Գրիգոր. տապանն ապ-  
« րեցոցիչ ի հոսանաց մեղաց Հայաստան  
« ազանց. որով քրիմք միշտ »: Գ. և Դ.  
տունք շարականին բաղդատեն զԱնպուհ  
ընդ Սինայ և ընդ կարմեղոս լերանց,  
փայլեցընելով զԳրիգոր՝ անոնց վրայ ելլուլ  
Մովսիսի և Եղիայի մէջ: — Ետ տունն  
ըստ աւանդութեան յիշեցընէ հրեշտակաց  
երեւնալն և այցելել առ Լուսաւորիչն, և  
յայսմ բաղդատէ ընդ Եսայի մարգարէի.  
« Համանմանեալ ամովսածնին Եսայեայ  
« կայծակնամաքուր սուրբ մարգարէին՝  
« Տէր Գրիգորիոս, վեցթեւեան Սերովքից  
« կիզիչ կենդանեաց՝ եղեւ տեսանող՝ հոգ-  
« ւով կենդանին. զանզընզախոր զՃորն՝

« երկնից կամար յօրենեաց »: Գեղեցիկ  
ճարտար համեմատութիւն՝ ձորոյ խորու-  
թիւնն երկնից բարձրութեան զուգելով:  
Գարձեալ Զ տամբ Սուրբ Գրոց մէջ սըր-  
բազնեալ Սանիր և Ահերմոն լերանց բաղ-  
դատէ զԱնպուհ, ուսկից՝ րասոյ աղբիրն  
Գրիգոր՝ այն կողմի երկիրը պարարտացը-  
նելու համար՝ բարեհամ ջրոց աղբիրը  
բղինեցուց: — Ետ տունն լերին գագաթէն  
վար կ'իջեցընէ ի Մանեայ — Այրն, բաղ-  
դատելով թեթեհեմի այլին, ուր յորդորե-  
ցան զատերքն Եւայի՝ կուսութեամբ ըլլալ  
մայր Քրիստոսի, իսկ հոս յորդորին մարդիկ  
մաքուր վարքով ազատանալ ի մեղաց: —  
Ը տունն զարձեալ լեռ մի դիտէ, անհա-  
մեմատ սուրբ և վեհ լեռ. Գողգոթա. յորոյ  
վրայ խաչն Քրիստոսի կանգնեալ զաշ-  
խարհ փրկեց. ասոր՝ անկարելի էր բան  
մի հաւասարել. սակայն մեր հեղինակն՝  
այն Ս. Խաչին զէմ հանէ աւանդութեամբ  
Տրդատայ սուրէն<sup>1</sup> ձեւացուցեալ Խաչ մի  
և նուիրուած խաչեցեալ կենարարին.

1. Աւանդութիւնն կ'ըսէ, թէ այս սուրս ի Մեծն  
կոստ. կայսերէ տրուած է առ Տրդատ, և կոչով հաւ-  
առառնի, իր թէ սրբյն մետաղեայ նիւթն հաւերու ստա-  
մոցանց մէջ իրբէ կուր կլլուած և հաւուած ըլլայ, և  
անոնց զուրս զգելէն վերջը՝ ժողված, հալեցուցած և  
կազմած սուր. և թէ այսպէս կ'ընեն ի կողման Պարսից,  
աելի հաւանական էր Պալմառչենի կոչել զուրս:

« Զէնն արքայական՝ սպանմանն զործի՝  
 « կենաց արքային (Քրիստոսի) ի կենաց  
 « գործիս նույիրեալ. որով փրկեացէ զմեզ  
 « յաւիտենից մահուանէ »: Երկու խաչե-  
 րով իրենց տեարբն այլ լոելեայն կամ  
 հեռուանց իրարու համեմատին, Քրիստոս  
 և Յրդատ: — Թի տամբ դարձեալ դառնայ  
 առ Լեառն Սեպուհ, և բարդատէ կամ  
 նմանցընէ՝ այն աննիւթ աստուածային  
 լերան, որոյ համար հարցընէր մարզարէն,  
 թէ ո՞վ կըրնայ ելնել հօն և բնակել ի խո-  
 րանն սուրբ. և համարձակ ի վերայ բերէ,  
 թէ կըրցաւ Գրիգոր. « Զոր և տեսաք առ  
 « Սուրբն Գրիգոր կատարեալ »: — Տաս-  
 ներորդ տունն յիշեցընէ զաւանդութիւնն՝  
 թէ Սերովքէր՝ գերազոյնք ի դասս հրեշտա-  
 կաց փափագելով իջնէին գային « Ի տես  
 « մարմնով ճգնողին. (անոր համար և)  
 « պատիւ տեղոյն անուամբն կոչի », այս-  
 ինքն լերան կամ այրին մօտ տեղ մ'այլ  
 Սերովքէր կոչուեցաւ և ուխտատեղի մ'ե-  
 ղաւ: — Վերջին (ԺԱ.) տունն ստուգագոյն  
 աւանդութիւնն է, թէ այն կողմերուն արա-  
 ծող հովիւր՝ դիպուածով գտեր են (ո՞րքան  
 ատենէ վերջ) Լուսաւորչի անշլնչացեալ  
 մարմինը՝ քարայրին ըով, կամ զիհի ծառի  
 մի խորցած փորուածին մէջ կոթընցած,  
 և չճանչնալով ով ըլլալը՝ հօն թաղեր են.

« Հովուին հակողի (Գրիգորի)՝ և Քաջ  
 « Հովուին (Քրիստոսի) պատկերի (նմա-  
 « նողի), հովիւրն եղեն հետեւողը. զոր  
 « ամփոփեցին՝ զմարմինն մաքուր, մերձ  
 « ի յԱյրն Մանեայ, մեզ դեղ ախտից  
 « մաքրութեան. որով սրբիմք հոգւով ի  
 « թիւնից վիշապին » (սատանայի): Այս  
 կերպ գտնուիլն աւելի հաւանական կ'երեւի  
 քան ուրիշ կերպով գրուածն յոմանս ի  
 Յայսմաւուրաց, որպէս թէ, հովիւրն գտած  
 ըլլան զմարմինն նստած « իբրեւ ողջ ընդ-  
 « դէմ արեւելից, խաչանման ի վեր ու-  
 « նելով զաջն առաքելական ի վերայ  
 « աստուածատիպ պատկերին, և սեղան  
 « սուրբ ի փայտէ պատուականէ, և սկին  
 « մալզմայ փայտեայ՝ պատեալ դիպակ  
 « հանդերձիւր սուրբ կտաւօք. և քող ոս-  
 « կեթել ծայրիւր ծալեալ վուշ դաստա-  
 « ռակաւ և եղեալ ի պահարան կտաւեայ.  
 « զաւազան ի ձախոյ ձեռին՝ հաստատելով  
 « ի վերայ ծնկացին:... Եւ առեալ բերին  
 « վէմս մեծամեծս, որպէս եղեն իմաստնա-  
 « ցեալը յԱստուծոյ, և շինեցին շուրջ զնո-  
 « վաւ զմբեթաձեւ և բարձրագոյն, զի մի  
 « (ո՞ր) հասցէ ի նա, և կապեցին զգմբէթն  
 « զայն օր. և երկրպագեալ զնացին ի  
 « խորանս իւրեանց, և պատմեցին ամենե-  
 « ցուն, և փառաւոր առնէին զԱստուած »:

Մեր եկեղեցասիրաց այլ զրասիրաց այլ  
ծանօթ են Լուսաւորչի վրայօք երգուած  
ուրիշ շարականք եւս, ինչպէս Յովհ. Եղբն-  
կայեցւոյ՝ այրուրենից թուով Յ6 տունք,  
զրեթէ բուրոք իր չարչարանքները յիշելով  
և պէս պէս գովելով, ուրիշ շարականք  
այլ՝ իր չորս անգամ տարւոյ մէջ տօ-  
նուելուն համար. զանազան գեղեցիկ տա-  
դեր այլ. նա և ներբողներ կամ ճառեր  
այլեւայլ վարդապետաց գործ, յորս նշա-  
նաւոր է Յովհ. Սարկաւագ վարդապետին.  
բայց մեր այժմեան պարագային կարեւորն  
և անոնց մէջ այլ վեհագոյն այս լերանց  
շարականն էր՝ որ և միակ յիշատակ  
անծանօթ կերպով մահուան Լուսաւորչին.  
որ ոչ միայն իր խոնարհութեան՝ գերա-  
զանց շնորհը մ'եղած է Աստուծոյ կող-  
մանէ, այլ և զգուշութիւն մի նոյն կողմանէ,  
որպէս Մովսիսի անծանօթաբար մեռնիլն  
Խորայելացւոց համար, որ թանձրամիտ  
կամ շատ սիրահար ժողովուրդն՝ երկութիւն  
այլ աստուածական պաշտօն և պատիւ  
չտան. նա ի կատար Նարաւ լերին ան-  
յայտացաւ՝ Միքայէլ հրեշտակապետի հո-  
վանաւորութեամբ, սա Երբովքից սպա-  
սաւորութեամբ ի Սիաուհ, որ և կոչուեցաւ  
իր անուամբ Լետոն Ա. Գրիգորի. Անա-  
պատներու մէջ, մանաւանդ յեզիպոս

և ուրիշ կողմերու առանձնութեանց մէջ  
շատ Առւրբը անյայտօրէն վախճանած  
են, և յետոյ ոմանք յայտնուեր են ոմանք  
միշտ անյայտ անծանօթ մնացեր, Աստուծոյ  
միայն զիտելիք. բայց մերս Լուսաւորիչ՝  
ինչ որ ըսինք՝ իր և Աստուծոյ կամօք  
առ ժամանակ մի այնպէս մնացեր է, և  
յետ հովուաց ձեռօք այնպէս թաղուելուն,  
ստոյգ համարելով զայն, զոր և խորենացին  
յիշէ (Բ, Ղ) գեղեցիկ խորհրդածութեամբ  
պարզելով շարականին վերջի տան և մեր  
վերի ըսածները. «Վայելէր իսկ նոցա  
«որք Փրկչին մերոյ ծննդեանն եղեն խոր-  
«հրդածուք, լինել և աշակերտի յըզարկ-  
«մանն սպասաւորք. Եւ ծածկեալ ամս  
«բազում՝ աստուածային իմն գոզցես  
«տեսչութեամբ, իրեւ զՄովսէսն զայն  
«ի հնումն, զի մի՛ ի պաշտօն առցի ի  
«դեռահաւատ բարբարոսացն ազգաց. իսկ  
«յորժամ սերտեալ հիմնեցան հաւատք  
«կողմանցս այսոցիկ, զկնի յետ բազում  
«ժամանակաց՝ յայտնեցաւ ճգնաւորի ու-  
«մեմն Գառնիկ անուն կոչեցելոյ, և բերեալ  
«եղաւ ի զիւղն Թորդան՝ նշխարք Արբոյն  
«Գրիգորի»: Յետ զայս ծանուցանելու՝  
արժանապէս Լուսաւորչի արժանեաց վրայ  
այլ խորհրդածելով կնքէ. «Աս՝ յարեւելից  
«կողմանց (Պարթեւաց) աշխարհիս մերոյ

« արեւելք ծագեալ մեզ, և իմանալի արեւ  
 « գական հոգեւոր ճառագայթ, ի խորին  
 « չարութենէ կոսպաշտութեան՝ ելք ճշմա-  
 « րիտ, բարի այսահալած. երանութեան  
 « և շինութեան հոգեւորի առիթ. աստուա-  
 « ծային արդարեւ արմաւենի տնկեալ ի  
 « տան Տեառն և ի գաւիթս Աստուծոյ  
 « մերոյ ծաղկեալ. և այսպիսեօք ժողո-  
 « վըրդովք բազմացեալ. զմեզ ժողովեաց  
 « ի փառ և ի գովեստ Աստուծոյ» :

Եթէ աստուածային յայտնութեամբ ե-  
 ղած է Լուսաւորչի մարմնոյ զիւտն և  
 փոխազրութիւնն ի թորդան, ուր պար-  
 տէզ մ'ունէր ստացուած, հարկ է որ մեծ  
 հանդիսիւ եղած ըլլայ, և այն նշխարաց  
 մասն մի առնուած ըլլայ յառաջնորդաց  
 եկեղեցւոյն. բայց ստոյգ պատմութիւն  
 չկայ այս բանիս. այլ յիշուի Ե զարուն  
 վերջերը Զենոն կայսեր հրամանաւ բոլոր  
 մարմնոյն կամ մեծ մասին տարուիլն ի  
 կ. պօլիս, միայն աջ բազուկը թողլով ի  
 Հայո. և յետ քանի մի գարուց ուրիշ  
 մասն եւս բերուած ի Հայո, թէ իննըրա-  
 նօք թէ ճարտարութեամբ. և ըստ Լատի-  
 նացւոց աւանդութեան՝ զլուխն և այլ մասն  
 նըշխարաց և չարչարանաց գործեացն՝  
 փոխազրեալ ի Նարոլի մեծ բաղաք իտա-  
 լիոյ, ի վանս կուսանաց, որը և յաջոր-

դաբար պահեն և պատուեն զանոնի՝  
 Արբոյն նուիրած եկեղեցւոյ ծուարանու-  
 թեամբ Ա. Լիկորիոյ կոչուի՝ փոխանակ  
 Գրիգորիոյ: Աստի այլ մանր մասունք  
 ցըռուեր են ուրիշ բաղաքներ, ինչպէս ի  
 Մեսինէ Սիկիլիոյ, Կալաբրիոյ՝ Հուկիովին  
 (Reggio) բաղաքում այլ եղած է և կայ  
 եկեղեցի մի յանուն մեր Ա. Գրիգորի, զոր  
 Փոքր կոչեն որոշելու համար Գրիգոր Ա.  
 պապէն որ Մեծն կոչուի: Այս մեր Գրիգորի  
 եկեղեցին երբ հիմնուած կամ նուիրուած  
 է հօն, ինձ չէ յայտ. բայց այսչափ որ  
 Ժ. գարուն վերջերում պապական և  
 եպիսկոպոսական կոնդակօք այդ եկեղեցին  
 տրուած է Գոմինիկեան կրօնաւորաց: —  
 Զուտ Հայոց ձեռօք և ծիսիւ կանգնուած  
 և կանգնուն կայ ի Լիվունոյ՝ Հայոց եկե-  
 ղեցի մեր Լուսաւորչին, ի սկիզբն Ժ.  
 գարու, և մինչեւ հիմայ հայերէն պատա-  
 րագուի հօն կաթոլիկ Հայոց քահանայէ,  
 և որոյ պահապանը են քանի մի Հայ  
 ընտանեաց սերունդը թէ և հայերէն զգի-  
 տեն: Ի Հռովմ այլ եղած է եկեղեցի յանուն  
 մեր Ա. Լուսաւորչի ասկէ վեց եօթն դար  
 առաջ. Խտալիոյ ուրիշ բաղաքաց Հայոց  
 եկեղեցին այլ զոնէ խորան մի նուիրած  
 են իրենց Լուսաւորչին, որպէս Վենետիկի  
 Հայոց Ա. Խտա եկեղեցին, ուր և քանի

մի դար է՝ մինչեւ այսօր պատուի, և  
առաւել եւս ի խորանին որ ի մեր Ա.  
Դազար կղզւոջ Միթարեանց:

Օտար տեղեաց և ազգաց մէջ առ Ա. Լու-  
սաւորիչ նուրբուած պաշտօնը կանխեցինք  
յիշել, որ հաւաստիք ըլլայ թէ որբան մեծ  
և ծաւալեալ էր և է անուն նորա՝ իր կեն-  
դանութեան ժամանակէն սկսեալ և ամէն  
հին եկեղեցւոյ տօնացուցից և Յայսմաւու-  
րաց մէջ նշանակեալ, ինչպէս առաջ այլ  
յիշեցինք. և թէ նոքա պարզ տնուամբ  
չափ յիշեն զմեր Սուրբս (բաց ի Լիվոռնոյի  
և Նարոլիի եկեղեցիներէն), մեր երախտա-  
գէտ Հարք և ազգ յայսմ մասին ինչպէս  
լաւ ճանչցեր լաւ այլ յարգեն և պաշտեն  
իրենց աննման Հայրն և Լուսաւորիչը.  
տարին չորս հինգ անգամ տօնելոց զնա  
իր այլեւայլ յիշատակօք. աւելի եւս նշա-  
նակեն Յայսմաւուրք մեր և կ'ըսեն, թէ  
և ամեն օր տօնէինք՝ շատ չէր. եթէ ոչ  
տօն՝ այլ յիշատակն զբեթէ ամեն օր  
կ'ըլլայ ի ժամերգութեան և ի պատարագի:  
իսկ նիւթականըն՝ եկեղեցիք, մատրունք,  
վանորայք, ուխտատեղիք Հայաստանի և  
Հայոց զաղթականաց յԱսիա և յԵւրոպա՝  
ամեն կողմ եղած են և կան, և կը նան  
անթիւ ըսուիլ. նոյնպէս կարելի է ըսել՝ թէ  
Հայոց ազգային և անմոռաց մտաց և սրտի

սկրելի զաղափարաց մէջ առաջինն է իրենց  
Ա. Լուսաւորիչն: Կարելի է դարձեալ ըսել,  
երկու ձայնարձակ զօրաւոր անուն իրենց  
յուշոյ տարերը եղած են, մին արտաքին  
և մթնշաղ, Հայկն, միւսն ներքին՝ Գրիգոր  
Լուսաւորիչ, ի վեր քան զայլ ամենայն  
ազգային՝ ոչ սակաւ սկրելի և պանծալի  
անուանս, այսինքն անձինս:

Ամփոփելով ինչ որ ըսինք այս գրուա-  
ծիս մէջ իր վրայօք և ինչ որ գրած և  
ըսած են բնիկը և օտարք, սկսեալ յԱգա-  
թանգեղոսի հայ և յոյն բնագրէն՝ մինչև  
ի յետին լատին և իտալացի վկայաբանս  
(յետինքս չորս հինգ գրող և տպագրող ու-  
նին Լուսաւորչի վարուց), ընթերցողին  
կամ խորհրդածողին մնայ երեւակայել կազ-  
մել Լուսաւորչի զաղափար մի, ո՛րքան մեծ  
բարձր հրաշալի ի միջի մեծաց և հրա-  
շալեաց. որբան լայն է միտքն, տաք է  
սիրտն, լուսաւոր է հոգին. — ասոր չափն  
իւրաքանչիւրի կարողութեան չափով է,  
եթէ կարելի է չափ դնել այսպիսի Լուսա-  
ւորչի մի:

## Ժ. Ը.

Վախճան Տրդատայ.

**Ո** ՈՊԼՈՎ, զամենքն, հանդերձ Գրիգորի ժամանակակից և ականատես զրիչներով, իր Որդւովք և Թոռամբը, իր աթոռոյն անընդհատ հարիւրաւոր յաջորդօք, ամէն հին և նոր Լուսաւորիչը քիչ շատ ճանչցողներով, կ'ուզեմ մէկ միայն անձի մի զգացումը քննել, եթէ հնար է. անձ մի՛ որոյ անունն և զործն, սիրտն և հոգին՝ զրեթէ անրաժանելի էր անկէ: Կ'իմանան ամենքն ո՞վ է այդ անձն: Բայց եթէ իր և Գրիգորի իրարու ծանօթութեան սկիզբն եկնենք, ո՞վ կրնար երեակայել անգամ, թէ այն անձն՝ ատողն, տանջողն, դատապարտողն, զըրի մի մէջ երկար տարիներ բանտողն զնա, Տրդատ, ըլլար յետոյ ամեն՝ անձէ աւելի յարկող, մեծարող, սիրող և զրեթէ սիրահար Գրիգորի: Որչափ այս զրուածիս մէջ այլ յիշուեցաւ՝ թէ և սակաւ, կըրնայ հաստատել ըսածն. ինչ ինամբով և փառօք յուղարկեց զնա ի կեսարիա. ինչպէս նոյն կերպով տարաւ

ի Հոռվմ և բերաւ. ինչպէս միշտ իր հետ տանէր և օգնէր՝ հեթանոս Հայաստանը գրիստոնեայ դարձընելու. ինչպէս անոր ձեռքով մկրտուելով յԵփրատ՝ մարմնով և հոգւով իրեն վերածնեալ որդի կ'ըլլար. և միշտ իրբև զնայր և զերագոյն քան զնայր ճամշնար, պատուէր և սիրէր. և զրեթէ ծնողասէր որգւոյ՝ տղու պէս՝ իր ետևէն կ'երթար, փնտուէր՝ եթէ քիչ մի ատեն չտեսնէր զնա իր քով, ըլլայ յարցունիսն, ըլլայ ի բանակի զօրացն, ըլլայ յեկեղեցիս, ի վանորայս և յանապատս. ինչ զժարութեամբ թողուց որ նա հրաժարի յաթոռոյն և յաշխարհէ, իր տեղ թողլով իր հոգւոյ և մարմնոյ ամենամօտ անձը (զԱրիստակէս). և ինչպէս անոր ի լերինս առանձնացեալ ատեններն այլ կ'երթար երբեմն գտնելու, և մէկտեղ աղօթաւոր և ճգնաւոր ըլլալու՝ գոնէ առ ժամանակ մի:

Իսկ ո՞վ կըրնար չափել այն հսկայ սրտին տրոփանքն՝ երբ հարկ եղաւ յետին անգամ բոլորովին իրմէ բաժնուիլ. երբ նա ծածկուեցաւ յԱյրս Մանեայ ի Սեպուհ. թէ և հաւանական է թէ երբեմն երբեմն փորձեց այն ծածկարաններն այլ յայտնելու, և իր ծերութեան և յումանց ումանց կրած հակառակութեան ցաւոց և ձանձրութեան միմիթարանք իննորելու, իր

վերջին տարիներում։ Բայց երբ այն ծառուկ ծակտիք ծերպից և այրից այլ փակուեցան, և Լուսաւորիչ յետ մահուանն անձանօթ մնաց յամննեցուն, և ոչ ևս երեւէր, ոչ ևս գտնուէր, ի՞նչ եղաւ, ի՞նչ զգաց և կրեց այն հսկայ սիրտն Տրդատայ։ — Խնըն միայն զիտէ։

Տրդատ շատակեաց եղաւ և շատատես։ Այլակերպ աշխարհը մի անցաւ իր առջեւէն։ Նոր աշխարհը մ'այլ բացուեցաւ իր դիմաց, շատ գործեց, շատ կրեց, երկար յոգնեցաւ այն մեծ հոգին, և հանգիստը գտնէր միայն իր հոգւոյն հայրացեալ Գրիգորի զիրէ։ որոյ հետ փափաքէր մնալ այնուհետեւ թողլով թագն ու ամեն բան, մինչեւ որ մէկն կամ մէկ այն իրարմէ առաջ մեռնէին, և եթէ Գրիգոր կանխէր ի մահ, անշուշտ փափաքէր Տրդատ որ ինըն այլ չապրի, ոչ յուսահատարար անձին վնասելով՝ այլ կենաց մէջ այնուհետեւ ցանկալի բան մի չգտնալով, բայց միայն իր Լուսաւորչին յիշատակը։

Թերեւս ոմանց անյարմար կամ վիպասանական ինչ երեւի՝ Գրիգորի և Տրդատայ նման մեծամեծ անձանց՝ այսպիսի բացարութիւն սիրելութեան։ — սակայն ով մտած է անոնց սուրբ սրտին խորը, իրենց այնքան իրարու հետ՝ թէ Լուսա-

ւորութենէն առաջ և թէ յետոյ՝ գործակցութիւնը քննելու. կամ, միթէ նուազ է ընտանեկան և բարեկամական սէր Արքոց մէջ՝ քան թէ աշխարհայինն և մարմնաւոր յաշխարհաւէրս։ Առջի յիշածներէս գուցէ աւելի զգալի պատմական նշմարք այլ կան մեր այս երկու վեճից իրենց արժանաւոր սիրելութեան։ Տրդատայ նոր թագաւորած ատեն՝ երբ Գրիգոր գերազոյն մուածութեամբ ուզեց անոր ծառայել, իրեւեւ իր սպանիչ հօր (Անակայ) պարտըն անոր սպանեալ հօր (Խոսրովու) հատուցանելու, առանց զնա ճանչնալու։ Տրդատ հաւած և սիրած է Գրիգորի գործունէութիւնը, և իրեն՝ իրեւեւ անդարձ տուրք ընծայեր էր Այրարատայ կոտայից զաւառին մէջ՝ Արամօնը կամ Արամօնս կոչուած զիւղը, որ ինչուան հիմայ ծանօթ է Արամօնս կոչուելով, և մեզմէ հազար տարի առաջ կաթողիկոս պատմիչն Յովհաննէս վկայէ՝ որ այդ տըրից վաւերական յետկարն այլ դեռ պահուէր։ ըստը ինչ լեզուով զրուած, այլ հաւանօրէն յունարէն։ իսկ յետ Լուսաւորութեանն՝ մկրտութեամբ ի ձեռաց Ա. Գրիգորի՝ ի՞նչ զանձեր նուրիած չէ կարծելի։ անշուշտ վերոյիշեալ թորդան գեղն՝ ուր թագուեցաւ Սուրբն և մերձաւոր սահմանըն՝ մասն են

Տրդատայ տըրից. բայց գերազոյն բան  
մ'այլ ուզելով ընծայել, եթէ չէր կըրնար  
արքունի թագը տալ, վկայէ տեսող պատ-  
միչ մի՛ որ տուեր է անոր իր թագա-  
ւորական ոսկեկապ մանաւանդ թէ ոսկեձոյլ  
պատմուճանը կամ վերարկուն, այնցան  
թանձը և խիստ ոսկենուռն՝ որ քզանցքը  
կամ փէշերը գետին դնելով՝ կանգուն կե-  
նայ եղեր, և այս արդարեւ Տրդատական  
յիշատակն երկար դարեր պահուեր է ի  
գանձարանի կաթողիկոսաց:

Գրիգորի կողմանէ այլ անտարակոյս է  
նոյն զգացումն, աւանդուի որ, ինչպէս ի  
պատիւ Ա. Հոփիսիմեանց (և յետոյ ամեն  
կուսանաց) նույրեալ՝ Ժամագրոց Աստուած  
մեծ և հզօր երգն՝ ինըն Լուսաւորիչ յօրի-  
նած է, երեք կարճ տուն նուագ մ'այտ  
«ի վերին օգևականուրեելեն» սկսելով, որ  
հին Տաղարանաց մէջ գտուի (և յումանց  
Խորենացոյ կարծուի՝ առ Գիւտ կաթո-  
ղիկոս), Լուսաւորչին ըլլայ առ Տրդատ,  
և զրուածին իմաստէն գուշակուի՝ որ թա-  
գաւորին անգամ մի հիւանդութեան առթիւ  
յօրինուած և նուիրուած է. և այս շատ  
աւելի յարմար է քան Խորենացոյն հա-  
մարին:

Այլ մեծագոյն եւս նշան, մանաւանդ

արձան և մահարձան սիրոյ Տրդատայ առ  
իւր յատուկ և մեր ընդհանրական Լուսա-  
ւորիչն՝ եղաւ իր Գերեզմանն առ Գերեզ-  
մանի նորա: Եթէ Գրիգորի մարմինն ի  
Գառնըկայ գտուած և ի թորդան տարուած  
այլ ըլլար, Տրդատ գիտէր որ այն տեղ  
պիտի թաղուէր նա և ինըն այլ կտակաւ  
(թէ զրով թէ անզիր) պատուիրած է՝ այդ  
ընդ մէջ մահու և անմահութեան կապով  
այլ կցուիլը Գրիգորի հետ: Գուցէ ի տա-  
նել Զենոնի կայսեր զմարմին Գրիգորի ի  
մայրացաղաք իւր՝ Տրդատայ մարմինն այլ  
(հաւանօրէն զմըսած) տարեր թաղեր են  
ի Հոգեաց վանս, որպէս աւանդուի. բայց  
ոմանց այլ զրած են՝ թէ Գրիգորի հետ  
անոր որդւոց և Տրդատայ մարմինն այլ  
ի կ. Պոլիս տարուած է: Այդ որպէս այլ  
ըլլայ, շատ է մեր ըստածն ի հաւաստիս  
սբանչելի և գերազանց սիրոյ ազգին՝ մեր  
երկու լուսաւորչացն, զի և զՏրդատ ինչ-  
պէս ի սկզբան յիշեցինք, Խորենացին՝  
խոր մտածելով՝ «մերոց լուսաւորութեանցն  
Լուսաւոր վերակացու» ճանչնայ և զիէ,  
որպէս և երկուքին համար այլ կ'ըսէ,  
«Խորհելն յաղագս Աստուածոյ և ճգնազգե-  
«ցիկ լինել՝ զոյգ երկոցունց»:

Այսքան երկարաբանելուս պատճառն է՝  
համարել որ արժանի է մտադրութեամբ

ճանչնալ Տրդատայ մեծ ոգին, որ ինչպէս  
մարմնոյ ուժով այնպէս և մտօք զօրաւոր  
էր ի բաղաբական տեսչութեան, ինչպէս  
յառաջ այլ յիշուեցաւ, իր ճարտար վար-  
մամբ ընդ հոռմէական ինքնակալութեան,  
և իր պատերազմական ճարտարութեամբ,  
անոնց համեմատ և վեհագոյն եւս էր հոգ-  
ւոյն եռանդն և աստուածասիրութիւնն,  
որով յաչս մարդկան այլ դասակից է  
տօնելի Արքոց. և միով բանիւ իր սեփա-  
կան կնիքն է յամենայնի մեծութիւն, ի  
խորհուրդս, ի գործս, ի զօրութեան և  
յառատաձեռնութեան:

Մէկ հատիկ նիւթական նշխար իր մեծո-  
գութեան մնայ կիսականգուն՝ Այրարատ  
աշխարհի արհեւելակողման քարալերանց  
գահաւանդի մի վրայ որ և կըքնայ ըսուիլ  
միակ մնացորդ հին Հայոց թագաւորական  
ճոխութեան և ճաշակի, բայց ամենչն աւելի  
Տրդատայ նուրբ և վսեմ զգացման: Գի-  
տեմբ որ մեր եկեղեցին իրեն հետ տօնէ  
իր կինն Աշխէն թագուհի և իրենց դուստրը,  
Խոսրավիդութուն: Սա մեր պատմութեան մէջ  
խորհըրդական կերպարանք մ'ունի. չը-  
սուիր թէ հարսնացեալ ըլլայ, այլ սիրել-  
լական կուսութիւն մի կարծեցընէ. և  
զերագոյն եւս, զի երբ հայրն և իր պաշ-  
տօնեայքն պատժուեցան յԱստուծոյ՝ յետ

նահատակութեան Հոփիսիմեանց, թուի  
իմն թէ ասոնց հոգին այլ արքայաշուը  
օրիորդին անցաւ, և ասոր յայտնուեցաւ  
յաստուածուստ՝ որ Գրիգոր զեռ ողջ է ի  
զըրին, թո՛ղ հանուի և ձեր ցաւոց ճար  
գոնէ: Յետ լուսաւորութեան ազգին, ուրիշ  
թան չի յիշուիր իր վրայ, բայց զի երբ  
Հոփիսիմեանց համար եկեղեցւոյ գետինն  
փորուէր. Խոսրովիդուխտն այլ իր գոգով  
կըէր հողը որպէս թէ իր երջանիկ քերց  
ծառայութիւն կամ փոխարէն մ'ընելու:  
Արքազան մելամաղձի կամ մենասիրու-  
թեան շուք մի երեւի իր վրայ. և Տրդատ  
թափանցելով իր քրոջ ախորժակաց և  
զգացմանց՝ այն յիշեալ լերանց սրացեալ  
լուսմուռ զագախտան վրայ՝ յունական նուրբ  
և ճոխ ճաշակով շէնք մի կանգնեց, որ  
թէ՝ իր անուամբ կոչուի Սարաւոյր Տրդա-  
տայ, և թէ՝ քրոջն՝ Հովկանց Խոսրովի-  
դիստոյ. և թուի իմն՝ թէ ինչպէս աւանդուի,  
Տրդատ ի յիշատակ Հոփիսիմեանց՝ Մա-  
սմասու բարձրէն ութ մեծամեծ քարեր փըր-  
թուց բերաւ մինչ ի Վաղարշապատ, այս  
տեղ այլ խորածորէն վերացուց կանգնեց  
այս վեցասիւն երեսրացը, զոր արժան  
համարած է ստորագրել սրատես Խորենա-  
ցին (Բ. Ղ.). և ինչպէս ըսածէն գուշակուի՝  
բաւական երկար ատեն աշխատանօր շի-

նուած է, և Նիկոյ ժողովոյն ժամանակի  
մօտ «Կատարէ Տրդատ զշնուած Ամրոցին  
« Գառնոյ, զոր որձաքար և կոփածոյ վի-  
« մօք, երկաթազամ և կապարով մածու-  
« ցեալ. յորում շինեալ և Ցուն հովանոց,  
« մահարձանօք, սրբանչելի դրօշուածովք,  
« բարձր քանդակաւ, ի համար քեռ իշրոյ  
« Խոսրովիշխատոյ. զրեալ ի նմա զյիշատակ  
« իշր հեղենացի գրով ». անշուշտ իր մեծո-  
գութեան և ըրոջն ազնուութեան պատշաճ  
զրուած մ'էր, և կըրնանք նոյնպէս անշուշտ  
համարիլ՝ թէ Խորենացւոյ ատեն դեռ կար-  
դացուէր այդ անմահանալի յիշատակն.  
զի հազարաւոր տարի վերջ, յ' ԺԵ դարու՝  
Երեւանայ մեծ շարժին ատեն կործանեցաւ.  
բայց այնչափ մեծամեծ նշխար թողուց  
քանդակներէն, որ հմուտ ճարտարագէտք  
վմտահացան ձեւազրել ինչ որ եղած գու-  
շակուէր: Գուցէ հեռանամ նպատակէս  
այսպիսի քաներ յիշելով, բայց ոչ յոգւոյ  
Տրդատայ. որոյ՝ այս ազգային լուսաւու-  
րութեան պարագային մէջ Գրիգորի հոգե-  
կից և զործակից ըլլալը շատ անզամ  
տեսնուեցաւ:

Հիմայ յետ տեսնելու այդ լուսաւորու-  
թեան արեգական ըստ մարդկային բնու-  
թեան՝ ի մայր մտնելը, ստիպուիմք տեսնել  
և երկրորդ լուսաւուին. որ և փափագէր

Գրիգորի նման յառանձնութեանս քարան-  
ձաւաց ծածկուելով՝ և միայն առ միայն՝  
իր մեծ հոգին աւանդել առ Աստուած:  
կըրցաւ մէկ երկու անզամ փորձել զայս՝  
իր պայծառ արքունիքն ի խաւարի թողլով,  
բայց ստիպուելով ի թախանձանաց բարե-  
կամացն և յ'օգտէ հպատակացն՝ նորէն  
դառնալ յաթոռն, այլ ոչ ի հանգիստ:  
Հասեր էր ի խոր այլ արի ծերուրիւն, ըստ  
պատմչին. իր հսկայական կազմուածն՝ գեռ  
առողջ և ուժով էր, և կարծես՝ մահն չէր  
համարձակեր մօտենալ իրեն բնական ճամ-  
քով... Եւ ինչպէս հասաւ, դպաւ, առաւ  
տարաւ... «Աստանօր ամաչեմ (և ես  
«ընդ Խորենացւոյ) ասել զճշմարտու-  
«թիւնն, մանաւանդ թէ զանօրէնութիւն և  
« զամբարշտութիւն (ապերախտից ոմանց)  
« ազգիս մերոյ, և զմեծի ողբոց և արտա-  
« սուաց արժանի սոցա զգործս: Քանզի,  
« հետ առաքեալ կոչեն զնա (յառանձնու-  
« թեան վայրացն, խոստանալով) լինել  
« ըստ կամաց նորա»: Ի՞նչ էին իր կամքն. —  
ինչ որ սովորեցուց Ո. Լուսաւորիչն. բրիս-  
տոնէ անուան արժանի կեանք. բայց,  
Գրիգորի հայրական ձայնին խառնէր Տըր-  
դատ և հրամայականն. գուցէ և իր հոգ-  
ւոյն եռանդեան համեմատ պահանջէր ի  
հպատակացն՝ աստուածամիրութիւն, հան-

գերձ խստակրօնութեամբ, որոյ պայման  
մի է և պահք պահելն, որ այն ատեն  
աւելի շատ և ծանը էր և ոչ մի՝ այլ  
քանի մի քառասուն օրերով. և այս անտա-  
նելի էր բազմաց, մանաւանդ զինուրա-  
կանաց: և կըրնայ յայսմ երկու կողմանէ  
եւս չափազանցութիւն ըլլալ՝ նկատմամբ  
նորագարձ ժողովրդեանն. ասոր կողմանէ  
թուլութեամբ, Տրդատայ՝ խստութեամբ:  
Բերնի պահոց հետ՝ անշուշտ ուրիշ իրա-  
ւացի պահքեր այլ պահանջէր Տրդատ՝  
իրեններէն. յորոց ազատիլ կամ թուլցընել  
փափաքէն պաղսիրտք, և սպասէին թա-  
գաւորին մահուան: Վերջապէս անհամ-  
բերութեամբ ուզեցին կանխել զայս. և  
բռնարար կտրել երկարած կենաց թելլ,  
դրդուած Սասանեանց Շապուհ թագաւորին  
թելազրութենէն: իմացաւ ծերն այլ զգաստ  
Տրդատ՝ որ շշուկ մի կայ իր վրայ. բռնա-  
դատեց իր սենեկապանը որ յայտնէ. նա,  
վատ և անարի, վախնալով գուցէ և կաշա-  
ռուած՝ առ ժամն ջանաց ծածկել դաւա-  
ճանութիւնը, և իմաց տուաւ բանսարկուաց,  
որք նոյնպէս վախով և այլ աւելի վա-  
տութեամբ, նախ, օր մի որսի հրաւիրելով  
զթագաւորը, իբրեւ սխալմամբ նետը իրեն  
հասուցին և վիրաւորեցին, որ զարձաւ  
յանկողին ընկաւ. իսկ այն սատանայա-

պետն քան սենեկապետ՝ իբրեւ վէրքը պա-  
տել կ'ուզէր. բայց տեսնելով որ երկար  
պիտի զիմանայ հիւանդն և կամ առողջա-  
նայ, «արբուցանէ դեղ մահու և վախճանէ.  
« որ յայտնի իսկ եղեւ ի նորին խորհրդակ-  
« ցացն: Եւ զայս արարեալ՝ (դաւաճա-  
« նացն) շիջուցին յինքեանց զրագմախայլ  
« ձառագայրէ աստուածապաշտութեան ».  
որ առաջ և յետ լուսաւորութեանն՝ միան-  
գամայն երկար քան զամենայն ազգապետս  
« մեր՝ թագաւորեաց ամս յիսուն և վեց»  
կամ եօթն:

Զայս բռնադատօրէն պատմելով Խորե-  
նացի՝ սրտին զառնութիւնը արժանապէս  
թափէ այն մատնըչաց և խաւարասիրաց  
վրայ, Տրդատայ հետ իր և իրեն ընկերաց  
վրայ հասած հալածանքն այլ ողբալով  
սրտառուչ և հոգեհառաչ, զոր՝ թողում  
թէ ամուր թէ զգայուն սիրտ ունողաց  
կարդալ ի վերջ ի գրոց պատմըչին (պ.՝  
ՂԲ). զոր և թուփ թէ սրտին վրդովմանէն  
չէ կըրցած աւելի առաջ տանիլ, և կնքէ՝  
նշանակելով, թէ «բովանդակեցան զիրք  
« Բ, Յառաջադիմուրեան Հայոց Մեծաց»:  
Եւ արգարեւ, Տրդատաւ դազրի յառաջա-  
զիմութիւն Հայոց. որք այնուհետեւ քաղա-  
քականօրէն չհասան երբէք այն զերագոյն  
կատարը՝ յոր հասուց ամենայն սարօք և

փառօք՝ անհամեմատն աննմանն և միակն,  
Մեծն և Սուրբն Տրդատ:

Եթ խոր հառաջանաց շունչն առնելու  
և տալու, որպէս թուի տարիներով վերջը,  
դարձած է պատմիչ մեր անգամ մ'այլ  
նայելու ուր որ թողուց զջրդատ, ի մահինս  
մահուն. և անկէ իջեցընէ ի դագաղոն և  
յիշէ զյուղարկաւորութիւնն. զոր՝ համե-  
մատ կամ փոխարէն իմն ապերախտից  
ըրածին՝ արժանապէս և փառաւորապէս  
կատարեր են երախտագէտք՝ որք քան  
զվատսն շատ և շատ աւելի էին: Քանի  
մ'անգամ հրատարակած ենք այս կարճ  
բայց նշանաւոր յուղարկաւորութեաննկա-  
րագիրը, որ և է առթիւ. իսկ այս տեղ  
իբրև Սրբոյ մի մեծի՝ չեմք ուզեր զլանալ՝  
կրկնելու. թերեւս և ոմանց առաջին ան-  
գամ ըլլայ կարդալն և հաւնիլն: Յետ  
կատարելու եկեղեցւոյ օրինաւոր հան-  
գըստեան կարգն և օծութիւնը, «Բարձեալ  
« տարան զնա (թաղել) ի Թորդան, ար-  
« ծարապատ զիակիր դագաղօք. յորում  
« լծեալք չորիք ոսկեսանձք (անտարակոյս  
« ճերմակք, որ պատուական համարուէին  
« քան զերիվարս). գունակ գունակ հան-  
« գերձիւք զգագաղոն զարդարելով. և  
« վաշտք զօրացն աստի և անտի՝ վառեալք  
« զինուք և նշանակօք: Իսկ առաջին դա-

« գաղացն՝ ձայն աստուածօրհնութեան և  
« բուրմունք խնկոց. իսկ աստի և անտի  
« բարեկամք և ընտանիք. և բազումք յորդ-  
« ոցին նորա՝ հետևակ անկեալ. (պատմու-  
« թիւն միայն իր յաջորդ խոսրովն յիշէ  
« և ոչ այլ որդիս). — և զկնի դագաղացն  
« փողք և տաւիդք ովրոց, և կուսանք ողրա-  
« սացք (զեռ հեթանոսական սովորոյթ).  
« թողք զայլ ամենայն ուամիկան, որ եր-  
« թային զետ, անրիւ բազմուրեամբ: Եւ  
« այսպէս հասեալք ի տեղին, արարեալ  
« տապան բագանդրական ի քարանց կձեաց,  
« և ի վերայ ապակի արկեալ (թուի թա-  
« փանցիկ բարակ քար մի, ալաբաստր՝  
« եթէ ոչ ստոյգ ապակի): Յորում եղեալ  
« զգանձն պատուական, զանուշահոտ զպատա-  
« րագն, զմենծ վաստակաւորն. և տարեալ  
« թաղեցին զնա ի տեղուոջ զրօսանաց Մե-  
« ծին Գրիգորի, զոր պարսպեալ (չորս  
« զին պատ քաշելով) անուանեաց իւր  
« պարտէզ: Եւ կանոնեցին զօր կատար-  
« ման նորա (ըստ Յայսմաւուրաց նոյեմբ.  
« 29) տօնել ամ յամէ: Զոր յանձն արա-

1. Այս ամեոյ եղանակն յարմար չէ սովորական որ-  
սոց, որոց առթիւ † է Տրդատ, բայց Հայաստան ունի  
ժմենուան որսեր այլ թեւաւոր կամ անթեւ, Յայտնի է  
որ հիմայ յամարան կատարուի տան Տրդատայ և Կնոջն  
և բռնու Գարձեալ, յիշեալ որսորդութենէն մինչև ի  
մահն՝ կըրնան ամիսներ անցած ըլլալ:

« բեալ եպիսկոպոսի գեղջ՝ գնացին » . — Ըստ ծանօթութեան կամ կանոնաց եկեղեցւոյ՝ այդպիսի մահուամբ վախճանողն Տրդատ՝ Խոստովանորդաց կարգէն համարուի , և արժանի տօնուելու։ Այն հին դարերում սովորութիւն էր տօնել զՍուրբա՝ ուր որ վախճանած և թաղուած էին , զոնէ հանդիսաւոր տօնը հօն կատարել . ըստ այսմ յանձնուեցաւ Տրդատ՝ տեղւոյն զվասւոր եկեղեցականին , որոյ եպիսկոպոս ըլլալն գեղի մի ինչպէս էր Թորդան՝ թէ և բազմաբնակ , վկայութիւն մի աւելցնէ բազմութեան եպիսկոպոսաց ի Հայաստան յաւուրց Լուսաւորչի և յետոյ : Յիշեցինք վերը որ Տրդատայ մարմինն յետոյ ուրիշ տեղ փոխադրուեր է . կ'ըսուի թէ և ի Հոգեաց վանս , ոչ հեռի ի Վանայ :

Կնքելով այս մեր Լուսաւորութեան պատմութեան մէջ Տրդատայ յիշատակը , թողում ընթերցողաց՝ ըստ չափու իրենց կարողութեան և դատողութեան՝ անոր մեծութիւնը չափել , թէ մեր և թէ ընդհանուր քաղաքական պատմութեան մէջ , և մանաւանդ եկեղեցական , բաղդատելով առաջինն իր ժամանակի կէս դարու հոռմէական ինքնակալութեան հետ , երկրորդն՝ իր Մեծ Հայոց երկրին և ասոր շրջակայ երկիրներու վիճակին հետ . և թէ ո՞րբան

յառաջնումն մեծ էր յիշեցողս աշխարհի կամ յազգապետս , ի բաց առեալ զկոստան՝ դիանոս , և որբան զօրաւոր և արդիւնաւոր ի քրիստոնեայ պահել և պահպանել զՀայս . յոր՝ մարդկօրէն տեսութեամբ՝ եթէ ինքն չէր բաւական առանց Գրիգորի , միթէ և սա կ'ըլլար առանց Տրդատայ այնպէս րասաւոր : — Ո՞րբան մեծ և մեծատարած եղած է համբաւ մեր Լուսաւորչին , զայն յիշեցինք . կերպով մի և ոչ պակաս է Տրդատայն . նա՝ երկնաւոր շնորհօք , սա երկրաւոր և երկնաւոր . յառաջ քան զլուստութիւնն՝ իրեւ հսկայ և դիցազն հոչակուիլը՝ զանազան օրինակաւ , երգօք , առակօք և առասպելեօք , յիշեն յԱգաթան՝ գեղոսէ սկսեալ՝ շատ պատմիչք մեր և գրիչք . իսկ յետ լուսաւորութեան՝ առաջին և վերջին կեանքն յիրար խառնելով՝ ինչուան հեռաւոր աշխարհներ զրոյցք և աւանդութիւնը եղած են իր վրայ : Անշուշտ իր ուժին և մեծութեան նկատմամբ՝ յօտարաց ոմն հնարեր է ըսել , թէ հսկայն Տրդատ նախ ովկիանոսի հսկայ ձուկը՝ կէտը (պալենա) կերեր կամ ուտել սովորեցներ է : Ուրիշ մի , որոյ խառնակ աւանդութեամբը զրածն գտնուի յեթիովպիարէն լեզուի և ուրիշ օտար լեզուէ թարգմանուած համարի , մօտ տարիներումս թարգմանուած

և ծանօթազրուած անզղիարէն, գերմաներէն  
և փռանկերէն<sup>1</sup>, վիպասանութիւն մի ծըր-  
դատայ՝ ինչուան Հոռվմայեցւոց հետ բա-  
րեկամութեանն աւրուիլն. Ծրդակ անուա-  
նելով զվիպասանեալն, իր թագաւորական  
քաղաքն այլ համարելով զԴավրէմ, Ա.  
Սարգսի յիշատակն այլ մէջ խառնելով.  
Երբեմէ իր մէկ զօրավարն ըլլար: Աւելորդ  
էր արդեօք յիշել զայսպիսիս, եթէ չըլ-  
լային ազգակցացս նոր առիթ և խրախոյս  
մի աւելի ճանչնալու յարգելու պարծելու  
և պաշտելու զՄեծն այն, որ երբեմն  
ստուգագոյնն եղաւ դիցազանց Հայոց,  
յետոյ սրբազնագոյն ի վեհազունս նոցա,  
և փառաւորեալն յերկինս ի գասակարգի  
սուրբ և խոստովանող թագաւորաց. որոց՝  
ընդ Քրիստոսին՝ «ոչ զոյ թագաւորութեանն  
վախճան»: Զարժեր արդեօք և յերկրի  
աւելի կերպով մի հռչակել և փառաւորել  
զնա<sup>2</sup>:

1. Յետինս ճանօթազրոյն. René Basset. Les Apocryphes Ethiopiens. IV, La légende de S. Terttag.

2. Արդ ի վերջանալ այս յիշատակա Արյալուսոյ մերոյ  
ներուե արդեօք յիշել իրեւ երազ մի 60 անցեալ ամաց,  
կամ իրեւ զցնորս մանկութեան և անզիտութեան, եթէ  
այն կենաց գալար և եռանդուն երիտասարդութեան պա-  
հում՝ մտածէր ոմն դիցազներզութեամբ կամ վիպասա-  
նութեամբ հռչակել զՏրդատ: Արդէն ողջաձեւն կամ  
ատազ կազմուած էր, և այն ժամանակի հասուն ըերթողի  
մի ցուցուած՝ նորա զատաստանն իմանալու, յորմէ չառաւ  
խրախոյս բայց ինքն աւելի իր երկու մտմտուցով ետ

կեցաւ վափազն: Մի, որ զժար երեւնար իրէն՝ Տրդատայ  
երկու կենաց (նախ հեթանոսութեան հրապոյրըն և ապա  
քրիստոնէութեան շնորհը) համահաւասար վայլեցընել,  
առանց ոչնչացընելու առաջնոյն իստուափիկ տեսիլո՛  
երկրորդին լուրջ կերպարանօթ: Երկրորդ, որ ինքն ինքնին  
վախցաւ իր երեւակայութենէն. զոր շատ զժուար է սահա-  
մանաւորել այն կանաչ տարիներում, Ցնղեցաւ երազն.  
Ցնղեցաւ ատազն: Բայց, եթէ հիմայ կամ երբ և է ազգային  
որ հանձարեղ՝ եռանդուն և խոհական, համարձակի հո-  
մերուօրբն իրագործել զայսպիսի երազ, զուց չի գտներ  
լաւագոյն նիւթ կամ անծն՝ թան զՏրդատ: միայն թէ  
իր բանաստեհծութիւնն այլ արժանաւոր ըլլայ այդ մեր  
ամենարժան Տրդատայ:

---


## Յ Ա. Ն Կ

	էջ
Աղդ	5
Արշարոյս, Քրիստոնէութեան Հայոց	7
Ա. — Առաջին նշոյլ կամ մուսք քրիստոնէութեան ի Հայու	13
Բ. — Ա. Թաղէոս և Աշակերտք իւր	15
Գ. — Ա. Բարթողիմէոս և Աշակերտքն	32
Դ. — Երկու ևս Առաքեալք հիմոնք Եկեղեցւոյ Հայոց՝ Յուղա Յակովեան և Սիմոն Կանանացի, Քարոզութիւն այլոց Առաքելոց և Աշակերտաց ի Հայու	44
Ե. — Այլ Առաքեալք և Աշակերտք աւետարանիւք Հայոց	50
Զ. — Հետք քրիստոնէութեան ի Հայու, յ'թ և յ'գ դարս. — Ոսկեանք և Սուրբիանք և Այրարատեան վկայք	61
Ը. — Հալածանք քրիստոնէութեան յ'թ և յ'գ Դարս. — Կահատակք ի Փոքր Հայու. — Մեհրուժան Եպիսկոպոս Հայոց	73
Ծ. — Տրդատ և Գրիգոր	94
Թ. — Հոփսիմեանք	108
Ժ. — Գրիգոր Լուսաւորիչ. Աղդովին Քրիստոնէութիւն Հայոց	133
Ժ.Ա. — Խլոտութեան Հայոց որ ընդ իշխանութեամբ Հոռվմայեցւոց, Քաղաքավարութիւն սոցա և Տրդատայ	152

	Էջ
ԺԲ. — Նահատակք և Փոքր Հայս . . . . .	162
ԺԳ. — Վախճան Հալածանաց և Հալածչաց .	
Տրդատ կոփանարէ գնալածին Մաքսիմինս .	177
ԺԴ. — Տրդատայ երթան առ Կոստանդիանոս և Վահանին . — Գրիգորի Եպիսկոպոսապե- տութիւնն և Ապիսկոպոսներ ու վանքեր հաս- տանելու . . . . .	190
ԺԵ. — ԱՌիազ և Դասակարգութիւն Եկեղեցւոյ .	212
ԺԶ. — Փաղոնք Երեղիոյ . — Արիստակէս և այլ Հայ Եպիսկոպոսոք . — Յակովը Մծբնայ .	226
ԺԷ. — Վերջին գործք Ս. Լուսաւորչին և փո- քութիւն . . . . .	240
ԺԸ. — Վախճան Տրդատայ . . . . .	260



**ԾՆՆԴԵԱՆ ԽԹՈՒՄԸ**



ՀՀ Ազգային գրադարան



NL0163186

ՀՀ Ազգային գրադարան



NL0163182

ՀՀ Ազգային գրադարան



NL0163181

